

ԹԱՄԱՐԱ ՄԻՆԱՍՅԱՆ

ՈՒՇՔԻ ԴՐԱՀԱ-ՀԱՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԵՐԸ



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this book

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
Երախտագիտություն են
հայտնում «ԶԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն զրքի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

TAMARA MINASYAN

**SCRIPTORIA
OF UTIK PROVINCE**

Yerevan – 2020

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ТАМАРА МИНАСЯН

**СКРИПТОРИИ
ОБЛАСТИ УТИКА**

Ереван – 2020

ՄԱՏԵՆԱԴՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱԴՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՏ

ԹԱՇԱՐԱ ՄԻՆԱՅԱՆ

ՈՒՏԻՔԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

ՀՏ 93/94:09

ԳՄԴ 63.2/3

Մ 710

Տպագրվում է
Սաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

*Խոմքագիր՝ Կարեն Մայծևոսյան
պատմական գիտությունների դոկտոր*

Թամարա Մինասյան. Ուստիքի գրչության կենտրոնները:

Ալբոմ-ուսումնասիրություն: Եր. «Մատենադարան» հրատ.,

Մ 710 2020.- 288 էջ (ներդիր 24):

Հայ գրավոր մշակույթի հնագույն կենտրոններից է Մեծ Հայքի Ուստիք նահանգը, որտեղից մեզ հասած ձեռագրական ժառանգությանն է Նվիրված ուսումնասիրությունը: Ձեռագրական, վիմագրական ու մատենագրական աղբյուրների հիման վրա ներկայացվում են նահանգի գրչության կենտրոնները՝ հիշատակարանային բազմաթիվ տվյալների հրապարակմամբ, որոնք լուսաբանում են նահանգի պատմությանը վերաբերող շատ հարցեր:

Գիրքը նախատեսված է Արցախ-Ուստիք նահանգների պատմությամբ ու մշակույթով գրադիւն մասնագետների, միջնադարագետների, աղբյուրագետների, ձեռագրագետների, ինչպես նաև պատմությամբ, մշակույթով և արվեստով հետաքրքրվող լայն հասարակության համար:

ՀՏ 93/94:09

ԳՄԴ 63.2/3

ISBN 978-9939-9237-8-9

© Մինասյան Թ., 2020

© Սաշտոցյան Մատենադարան, 2020

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայկական գրչության կենտրոնների պատմության ուսումնասիրությունը, որպես հայագիտության ուրույն ուղղություն, սկզբնավորվել է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանում։ Արտաշես Մաթևոսյանի «Մեծոփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ-ԺԵ դր.)» ուսումնասիրությամբ (1970 թ.) հիմք դրվեց այս ուղղությանը, որին հաջորդեցին Մշո Առաքելոց վանքի (<. Մանուչարյան), Անի քաղաքի (Կ. Մաթևոսյան), Գեղամա երկրի (Ա. Ղազարոսյան, անտիկ), Սկևոռա վանքի (<. Բաղալյան), Արցախի նահանգի (Թ. Մինասյան), Վանա լճի կղզիների վանքերի (Լ. Թումանյան) գրչության կենտրոնների մասին լույս տեսած ուսումնասիրությունները¹։

Հայ գրավոր մշակույթի հնագույն կենտրոններից են Հայոց Արևելից կողմանց Արցախ և Ուտիք նահանգները։ 2015 թվականին հրատարակված մեր «Արցախի գրչության կենտրոնները» գրքում անդրադարձել ենք Արցախի և նրա հետ ձեռագրական մշակույթի տեսանկյունից մերձավոր որոշ հարակից շրջանների գրչության կենտրոնների պատմությանը։ Ներկա ուսումնասիրությունը որոշ իմաստով նախորդի շարունակությունը կարելի է համարել, քանի որ խոսքը հարևան տարածքների մասին է, որոնցում մեծ են պատմամշակութային ընդհանրությունները։ «Ուտիքի գրչության կենտ-

¹ **Հ. Մանուչարյան**, Պողոս Տարոնացի, Երևան, 1982, **Կ. Մաթևոսյան**, Անի, Ս. Էջմիածին, 1997, **Հ. Բաղալյան**, Սկևոռայի գրչության կենտրոնը, Երևան, 2013; **Թ. Մինասյան**, Արցախի գրչության կենտրոնները, Երևան, 2015; **Լ. Թումանյան**, Վանա լճի կղզիների վանքերի գրչության կենտրոնները, Երևան, 2019։

րոնները» գրքում նահանգի գավառների պատմությունը և մշակութային, ձեռագրական ժառանգության խնդիրները ներկայացվում են ըստ «Աշխարհացույցի» մեջ նրանց գրաղեցրած տարածքների, որոնք հետագա դարերում վարչաքաղաքական փոփոխությունների հետևանքով ունեցել են նոր սահմաններ և անուններ: Ընդ որում՝ դրանք երբեմն կցվել են հարևան Գուգարքին կամ Արցախին:

Աշխատության մեջ ներկայացված են Ռոտիքի գրչության կենտրոնները և դրանցից մեզ հասած ձեռագրերը: Վյո կենտրոններում նաև պահվել են այլ վայրերում գրված և այստեղ բերված ձեռագիր մատյաններ, որոնցով ամբողջանում է նահանգի ձեռագրական ժառանգության պատկերը (ամբողջական ցանկը ներկայացված է աշխատության վերջում):

Գրքի հավելվածում առաջին անգամ ամբողջական ներկայացվում է Միսիթար Գոշի հայսմավուրբային վարքը (Մ. Սմբատյանցը 1896 թ. հրատարակել է որոշ հատվածներ), որը մեզ է հասել Զակամ գավառում գրված 1709 թվականի Հայսմավուրբով և կրում է տեղի ավանդույթների ազդեցությունը (ՍՍ ձեռ. 3813, թ. 262թ-265թ):

Վերջում ուզում ենք մեր երախտիքի խոսքն ասել գրքի խմբագիր, պ. գ. դ., պրոֆեսոր Կարեն Մաթևոսյանին, Մատենադարանի Ձեռագրագիտության բաժնի վարիչ և գիլսավոր ավանդապահ, պ. գ. դ. Գևորգ Տեր-Վարդանյանին, Արվեստի պատմության և գրչության կենտրոնների ուսումնասիրության, Ձեռագրագիտության, թվայնացման և հրատարակչական բաժինների մեր գործընկերներին:

ՊԱՏՄԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ուտիքը Մեծ Հայքի տասներկուերորդ նահանգն է, որի սահմանները տարածվում էին Կուր գետի աջափնյա մասում և Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան լեռնային շրջաններում զբաղեցնելով Աղստև գետից մինչև Կուրի և Երասխի ջրկիցն ընկած տարածքը: Ըստ «Աշխարհացույցի»՝ նահանգը հյուսիս-արևելքում Կուր գետով սահմանակից էր Բուն Աղվանքին, արևմուտքում՝ Դեբեդի և Աղստևի ջրբաժանով՝ Գուգարք, հյուսիս-արևմուտքում՝ Սրդուղի և Սևանի լեռնաշղթաներով՝ Այրարատ և Սյունիք, հարավ-արևմուտքում՝ Արցախ, իսկ հարավում՝ Երասխ գետով՝ Փայտակարան նահանգներին:

Հունահռոմեական գրավոր աղբյուրներում Ուտիքը Մեծ Հայքի հյուսիսարևելյան նահանգների շարքում հիշատակվում է Ք. ա. I դարից: Այդ աղբյուրների հաղորդած տեղեկությունների հիման վրա կազմված աշխարհի հնագույն քարտեզներում Ուտիքը նշվում է Մեծ Հայքի սահմաններում²: Ստրաբոնը (Ք. ա. 63 - Ք. հ. 23)³, Կլավլիոս Պտղոմեոսը (II դար)⁴, Եվսեբիոս Կեսարացին (IV դար), Ասինիոս Քվադրատոսը (IV դար), Ստեփանոս Բյուզանդացին (V

² Ուտիքը հայոց պետության կազմի մեջ է եղել Երվանդունիների (Ք. ա. VI-III դդ.), Արտաշիսյանների (Ք. ա. II-I դդ.), Արշակունիների (I-IV դդ.), Բագրատունիների (IX-XI դդ.) և Զաքարյանների ժամանակ (XII-XIII դդ.): Սակայն նահանգը հաճախ է անշատվել Հայաստանից և կցվել այլ պետությունների: 428 թ. մտել է Արվանքի մարզպանության կազմի մեջ: Վարչական այս փոփոխություններից հետո տեղի եկեղեցին կոչվել է Աղվանից կաթողիկոսություն՝ մնալով Հայոց եկեղեցու ենթակայության տակ: Տես Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 301: **Բ. Ուղուբարյան,** Դրվագներ հայոց արևելյան կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 37-38:

³ **Ա. Տերյան,** Պատմություն Հայոց արևելյան կողմի. Աղվանք, Գարդման, Ուտիք, Երևան, 2015, էջ 83-85:

⁴ Օսար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հունական աղբյուրներ, Ստրաբոն, XI, 14, 4-6, Երևան, 1940:

⁴ **Կլավլիոս Պտղոմեոս,** Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 2, Երևան, 2011, էջ 10-12:

դար)⁵ «Ուտիք» երկրանունը նշում են հունարեն «Օտենե» (Օտենի), իսկ Պլինիուս Ավագը (I դար)⁶ լատիներեն «Օտենա» (Otena, Otene) ձևով⁷:

Նահանգը վաղ հայկական աղբյուրներում հիշատակվում է V դարից և պատմության մեջ հայտնի է նաև Գարդման, Շակաշեն (արանք նաև Ուտիք նահանգի գավառների անուններն են), Մովսես Կաղանկատվացու մոտ՝ նաև Արշակաշեն անուններով⁸: Ուրեմն՝ Ուտիք, Գարդման, Շակաշեն, Արշակաշեն անունները նույն նահանգի անուններն են եղել, որոնք գործածվել են նահանգի պատմության տարբեր ժամանակներում կախված այն բանից, թե տվյալ ժամանակաշրջանում որ գավառի տերերն են իշխող դիրք գրավել:

Նահանգն «Աշխարհացոյցում» հիշատակված է Ուտիք անունով. «Ուտիք առ մտից կայ Երասխայ ընդ մէջ Արցախայ և Կուր գետոյ, ունի գաւառս զոր Աղուանք⁹ ունին՝ եւթն՝ Առան-ռոտ, Տոի, Ոտսպացեան, Աղուէ, Տուչքատակ, Գարդման, Շիկաշեն, Ուտիք Առանձնակ՝ յորում Պարտաւ քաղաք: Լինի ի նմա ծիթենի, վարընկենի և ի հաւուց կատակ»¹⁰:

⁵ Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 783:

⁶ Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկոնդոս, Բնական պատմություն, տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոնատիա, հ. 1, Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, Երևան, 1981, էջ 343-348:

⁷ Ա. Յակոբեան, Պատմա-աշխարհագրական և վիմագրագիտական հետազոտություններ, Վիեննա, 2009, էջ 405-410: Ա. Յակոբեան, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արևելից կողմանըում անտիկից մինչև ԺԳ դար, էջ 59-61, Երևան, 2020:

⁸ Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, առաջարանը՝ Պ. Հովհաննիսեանի, բնագիրը՝ Գ. Գասպարեանի, տե՛ս Մատենագիրը Հայոց, հ. ԺԵ, գիրը Բ, Երևան, 2011, էջ 409:

⁹ Սասանյանները երկու հայկական աշխարհները՝ Արցախը և Ուտիքը 428-ից հետո միացրեցին Աղվանից մարզպանությանը, որով էլ բացատրվում են հիշյալ նահանգների ու նրանց գավառների որպես «Աղվանից» հիշատակումը 5-րդ դարից սկսած:

¹⁰ Մովսեսի Խորենացի, Աշխարհացոյց, տե՛ս Մատենագիրը Հայոց, հ. Բ, առաջարանը՝ Պ. Մուրադեանի և Կ. Բոգրաշեանի, Անթիլիաս, 2003, էջ 2172: Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 110:

Ի սկզբանե նկատված է, որ «Աշխարհացույցում» Ուտիքին վերագրված յոթ գավառների փոխարեն նշված է ութ գավառ¹¹: Բանն այն է, որ ութերորդ՝ Ուտի Առանձնակ գավառանունն ավելացել է «Աշխարհացույցը» գրվելուց հետո՝ մարզպանության շրջանում¹²: Գավառի ստեղծումը կապված էր այն բանի հետ, որ Պարտավ քաղաքն իր շրջակայքի հետ անջատվում է Առան-ռոտ գավառից, և ստեղծվում է առանձին գավառ՝ Ուտի Առանձնակ կամ Ուտի Ոռտաստակ անունով, իսկ մայրաքաղաքը Պարտավը դառնում է վարչական նոր միավորման՝ մարզպանության կենտրոնը: Ուսումնասիրողները համակարծիք են այս հարցում: Հստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության»՝ մյուս գավառների հաջորդականությունը պայմանավորված է աշխարհացույցան Ուտիքի տարածքում երկու առանձին աշխարհների՝ Ծակաշեն-Սակասենեի և Ուտիք-Օսենեի գոյությամբ¹³:

¹¹ Թ. Հակոբյանը Ուտիքին վերագրում է ինը գավառ՝ եղած ութ գավառներին ավելացներով նաև Տավուշը: Մինչդեռ Տավուշը Տուչկատակ գավառի կենտրոնն էր, իսկ ավելի ուշ շրջանում համապատասխանում էր Տուչկատակ գավառի արևմտյան հատվածին: **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 254:

¹² Աղվանք մարզպանության ստեղծման ժամանակի հարցի շուրջ կան տարակարծիքներ: Ս. Երևանք կարծում է, որ այն ստեղծվել է 387 թվականին, Բ. Ուլուրաբյանն ընդունում է 425 թվականը, Կ. Տրևերը, նրան հետևելով նաև Գ. Ավագյանը՝ 461 թ., երբ վերացվեց Աղվանից թագավորությունը: Ա. Հակոբյանի կարծիքով Աղվանք մարզպանությունը ստեղծվել է 428 թվականին Հազկերտ Ի-ի կողմից կատարված վարչական փոփոխությունների ժամանակ, երբ Հայաստանում վերացվեց Վրշակունիների թագավորությունը: Տե՛ս **С. Еремян**, Политическая история Албании III-VII вв., Москва, 1958, с. 310-311, **Բ. Ուլուրաբյան**, Աղվանից թագավորական տան հարցի շուրջը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, թ. 4, էջ 53, 60, **Կ. Тревер**, Очерки по истории и культуре Кавказской Албании, IV век до х. э.- VII век н. э., М-Л, 1959, с. 225. **Գ. Ավագյան**, Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջ, «Պատմա-բանափական հանդես», 1979, թ. 4, էջ 210-218: **Ա. Акопян**, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, с. 115-118.

¹³ **Բ. Հարությունյան**, Հայոց Արևելից կողմերի և Աղվանից պատմության ու պատմական աշխարհագրության հարցեր, հոդվածների ժողովածու, Երևան, 2016, էջ 66:

Առան-ռոտ, Տրի և Ռոտ-Պացեան գավառները գրադեցնում էին նախկին Ուտիք-Օտենեի տարածքը, այսինքն՝ Կուր գետի ափով ձգվում էին հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝ սկսած Առան-ռոտից, որը գտնվում էր Ուտի Առանձնակի հարևանությամբ, մինչև Ռոտ-Պացեան, որը տեղադրվում էր Արաքս և Կուր գետերի միախառնման շրջանում, իսկ երկու գավառների կենտրոնում տարածվում էր Տրի գավառը:

Առան-ռոտ գավառի կենտրոնն էր Տիգրանակերտ քաղաքը¹⁴, որը Խաչեն գետի աջ ափին Ք. ա. I դարում կառուցել էր Հայոց Տիգրան Մեծ արքան:

Տրի գավառի կենտրոնն էր Բայյական քաղաքը, որն, ըստ արաբական աղբյուրների, կառուցել կամ վերակառուցել էր Սասանյան Կավաստ Առաջին արքան VI դարում¹⁵: Ռոտ-Պացյան գավառի մասին հիշատակություն է պահպանվել միայն «Աշխարհացույցում»:

¹⁴ Հայտնի է, որ Տիգրան Մեծ արքայի հիմնադրած հինգ Տիգրանակերտներից երկուսը գտնվել են Հայոց Արևելից կողմում Ուտիքում և Արցախում: Ենթադրվում է, որ Ուտիք նահանգի Տիգրանակերտ քաղաքը գտնվել է Գարդմանում՝ Բարսում և Գանճակեր գյուղերի մոտակայքում: Ժողովրդի մեջ տարածված է եղել «Տիգրակերտ» անվանաձևով: Արցախ նահանգի Տիգրանակերտը գտնվում է Վանքասարի ստորոտում: Ուշ միջնադարում որպես բնակավայր մտնում էր Խաչենի հիշանության կազմի մեջ, իսկ խորհրդային շրջանում՝ Աղդամի շրջանի մեջ: 2006 թ. այստեղ հնագիտական ուսումնավորություններ և ծավալուն պեղումներ են իրականացվում (դեկապար՝ Համետ Պետրոսյան): Գտնվել և ուսումնասիրվել են քաղաքի միջնադարյան պարիսպները, քաղաքի կենտրոնական մասը և վաղ միջնադարյան քաղաքի եկեղեցին:

¹⁵ Տեղանունը Կիրակոս Գանձակեցին հիշատակում է Բեյուկան ձևով: IX – XIII դարերում Բայյականը մտնում էր պատմական Արցախի Դիզակի գավառի մեջ: Ըստ արաբական աղբյուրների՝ 1221 թ. քաղաքը գրավել են թաթարները, իսկ մեկ տարի հետո՝ վրացական զորքերը: Թալանված ու ավերակների վերածված քաղաքը կրկին շենացել է: 1246 թ. մի արձանագրության մեջ «Բեյուկան» ձևով հիշվում է որպես Գտշավանքի թեմի մեջ մտնող բնակավայր: Այժմ մտնում է Աղբբեշանի Հանրապետության կազմի մեջ, Բաղական շրջանի կենտրոնն է: **Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատափրութեամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի,** Երևան, 1961, էջ 202-203: Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 11, Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկների մասին, հ. 4, կազմեց՝ **Հ. Նալբանդյան**, Երևան, 1965, էջ 40: Դիվան հայ վիմագրության, Արցախ, պրակ V, կազմեց՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1982, էջ 183:

Աղվե, Տուչքատակ, Գարդման, Շակաշեն զավառները զբաղեցնում էին նախկին Շակաշեն-Սակասենեի տարածքը, որը հայտնի է եղել նաև Գարդմանացիք անունով¹⁶: Այս զավառները նոյյնպես ձգվում էին հյուսիս-արևմուտքից հարավ-արևելքը ուղղությամբ՝ սկսած Աղվեից, որը գտնվում էր Աղստև գետի ավազանում և սահմանակից էր Գուգարք և Վյրարատ աշխարհներին: Գավառի կենտրոնը Կայան ամրոցն էր¹⁷:

Աղվեից հարավ-արևելք՝ Տավուշ գետի ավազանում, տարածվում էր Տուչքատակ զավառը՝ Տավուշ կենտրոնով¹⁸:

-
- ¹⁶ **Սովոր Խորենացի**, Պատմութին Հայոց, գիրք Բ, գլ. Ը: Տես Սատենագիրք Հայոց, հ. Բ, առաջաբանը՝ **Պ. Մուրադեանի**, **Կ. Բագրաշեանի**, Անթիլիաս, 2003, էջ 1859:
- ¹⁷ Ենթադրվում է, որ ամրոցը X դարում կառուցել է Աշոտ Երկաթ թագավորը: Առաջին անգամ հիշատակում է Հովհաննես Դրասխանակերպցին: Ամրոցը Բագրատունյաց, իսկ X դարի երրորդ կեսից Լոռվա թագավորության ստրատեգիական կարևոր կենտրոններից էր: 1001 թ. Գագիկ Ա թագավորը Կայանը Աղստևի հովտի հետ հանձնում է Պահապունիներին, իսկ Գրիգոր Մագիստրոսը դրանք իր տիրույթների հետ 1045 թ. հանձնում է Բյուզանդիային, վերջինս էլ այն նվիրաբերում է Տաշիր-Զորագետի թագավոր Կյուրեկե Ա-ին: XII դարում Մահկանաբերդի Արծրունիների սեփականությունն էր: 1191 թ. Կայանի տեր են դառնում Զաքարյանները, իսկ Զաքարյանների իշխանության բայրայումից հետո՝ XIV դարավերջին ամրոցը կորցնում է իր նշանակությունը: Կայան ամրոցը երբեմն շփոթվել է Հաղբատի Կայանաբերդի հետ (ամրոց Հաղպատա Սուրբ Նշանի), որը 1223 թվականին կառուցել է Հաղբատի առաջնորդ Հովհաննես եափսկոպոսը: **Թ. Հակոբյան**, **Ստ. Մելիք-Բախչյան**, **Հ. Քարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 928:
- ¹⁸ Գավառի արևելյան մասը համապատասխանում էր Վղրեշանի Ղազախի և Թովուզի շրջաններին, իսկ արևմտյանը՝ Հայաստանի Տավուշի (Շամշադին) շրջանին: Աղբյուրներում զավառը կոչվում էր նաև Տուչքատակ, Տուչքատակ, Տուչքուստակ, Տուչ Կատակ, Տուզ Ջուստակ, Տուզ Քստակ, Տուհաց զավառ կամ Տավուշ: Մինչև VIII դարը պատկանում էր Ուտիքի նախարարներին, IX դարում միացվում է Բագրատունիների թագավորությանը, XI- XII դդ. դարնում է Կահրամյանների սեփականությունը: Գավառի նշանավոր քաղաքներից էր Խոտիսադ արքունի ծմեռոցը: Գավառում են գտնվում Խորանաշատի վանքը, Նոր Վարագավանքը, Երգեվանքը, Տավուշի բերդը: **Կիրակոս Գանձակեցի**, էջ 163: **Պ. Մուրադյան**, Տուհաց զավառի տեղորոշման հարցի շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1979, թ.

Գարդմանն Ուտիքի ամենախոշոր գավառն էր, տարածվում էր Զակամ և Շամբոր գետերի ավազանում՝ բացառությամբ Շամբորի վերին հոսանքի, որտեղ գտնվում էր Արցախի Քուստ-ի-Փառնես գավառը։ Գարդման գավառի կենտրոնն էր նույնանուն ամրոցը, որը VII դարում հիմնադրել էր Միհրանյան տոհմից Վարդան իշխանը։ Ըստ աղյուրների՝ այս դարում Միհրանյանները տիրում են նախ Գարդմանին, ապա Ուտիքի մյուս գավառներին, իսկ նահանգը նրանց տիրապետության շրջանում կոչվում էր Գարդմանք անունով¹⁹:

Ծակաշեն գավառը սահմանակից էր Գարդման գավառին և զրադեցնում էր Գարդմանի և Ուտի Առանձնակի միջև ընկած տարածությունը, այսինքն՝ ներկայիս Գանձակ և Կուրակ գետերի միջին և ստորին հոսանքները²⁰։ Գավառի կենտրոնը IX դարում դարձավ Գանձակ քաղաքը։

1. Էջ 245-250, **Ա. Ծահնազարյան**, Վահրամյանների իշխանության պատմությունից, «Լաքեր հասարակական գիտությունների», 1974, թ. 4, էջ 105-106; **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, 2001, էջ 48:

¹⁹ Գարդման գավառն աղյուրներում հայտնի է նաև Գարդմանանոր, Գարդմանք, Գարդմանիկ, Քարթմանիկ, Քրթմանիկ անվանաձևերով։ Գավառը համապատասխանում է ներկայիս Տափուշի (Շամշադինի շրջան) հյուսիսային, Շամբորի արևմտյան և Աղբերեջանի Ղազախի շրջաններին։ I-V դարերում Արշակունիների թագավորության շրջանում, Գարդմանը Ուտիք աշխարհի նախարարների աթոռանիստն էր և հայտնի էր որպես «Գարդմանացց իշխանություն»։ IX-XI դարերում գավառին տիրում են Բագրատունիները, իսկ XII-XIII դարերում Զաքարյանները։ Գավառը երբեմն նոյնացվել է սահմանակից Փափասոսի հետ և կոչվել Քուստ-ի-Փառնես։ Գավառի նշանագործ վայրերից էր Գետարակ ամրոցը։ Տես **Մովսես Խորենացի**, «Պատմութիւն Հայոց, գիրք Բ, գլ. Ը»; **Բ. Ովուրաբյան**, Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության, էջ 37-38; **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 809։ Ըստ Հ. Ռևյանի՝ գավառն ուշ շրջանում կոչվել է նաև Գանձակ։ Տես **Հ. Ռևյանի**, Վարչակի վաճքերը, Վիճննապ, 1953, էջ 131։

²⁰ Աղյուրներում գավառը հիշատակվում է Շիկաշեն, Ծակաշեն, Շիկաշեն ձևերով։ Մովսես Խորենացին և Անանիա Շիրակացին անվանում են Շիկաշեն, Փալստոս Բուզանդի մոտ՝ Ծակաշեն, իսկ Մովսես Կաղանկատվա-

Ուսի Առանձնակը նահանգի ամենանշանավոր զավառն էր և տարածվում էր Թարթառ գետի հովտում, նրա միջին և ստորին հոսանքների շրջանում²¹: Գավառի կենտրոնը շահնշահ Պարտավ (Պերողապատ) քաղաքն էր, որը 462 թվականին հիմնադրել է Վաչե Բ Առանշահիկ արքան պարսից Պերող թագավորի հրամանով: Պարտավը դարձավ Աղվանից մարզպանության մայրաքաղաքը և արևելքի նշանավոր քաղաքներից մեկը, իսկ 562 թվականից այստեղ տեղափոխվեց Աղվանից կաթողիկոսության աթոռանիստը²²: VIII-IX դարերում Ուսիքը եղել է Արաբական խալիֆայության Արմինիա ոստիկանության երկու կենտրոններից մեկը (Նվինի հետ միասին)²³:

ցու մոտ՝ Շակաշեն և Արշակաշեն: Ստրաբոնն անվանում է Սակասեն: Անտիկ հեղինակների երկերում հիշատակվում է Սակասենե անունով: Ենթադրվում է, որ գավառի անվանումը ծագել է այստեղ ապրող սակ ցեղի անունից: V դարում Սասանյան Իրանը Շակաշենը անշատեց Մեծ Հայքից և կցեց Աղվանից մարզպանությանը: Դ. Ալշանը, Մ. Բարիսուդարյանցը և Ե. Լալյանը նույնացնում են հետագայի Գանձակի զավառի հետ: **Մովսէս Խորենացի**, էջ 2153, 2172, **Փավստոս Բուլգանդ**, Պատմութիւն Հայոց, տես Մատենագիրը Հայոց, հ. Ա, առաջարան՝ Կ. Խորաչեանի, **Պ. Մուրադեանի**, Անդիլիսս, 2003, էջ 390, Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979, էջ 291, **Ստրաբոն**, XI, 8, 4, Դ. Ալիշան, Արցախ, փոխ. գրաբարից՝ Պ. Թոսումյանի, Երևան, 1993, էջ 28-29: **Մ. Բարիսուդարյանց**, Արցախ, Բագու, 1895, էջ 35: **Ե. Լալյան**, Գանձակի զավառ, Թիֆլիս, 1901, էջ 5: **Թ. Հակոբյան**, Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 255:

²¹ Գավառը համապատասխանում է ներկայիս Աղբեջանի Բարդայի շրջանի տարածքին: Գավառի նշանավոր բնակավայրերից էին Կաղանկատույք, Դասխուրան և Ռուտակ գյուղերը: **Թ. Հակոբյան**, **Մտ. Մելիք-Բախչյան**, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, էջ 206:

²² **Կիրակոս Գանձակեցի**, էջ 116:

²³ 701 թ. արար ոստիկանի գիլսավորությամբ ստեղծվեց Արմինիա ոստիկանությունը: Այն ընդգրկում էր Մեծ Հայքը (քաջայալ Ծոփքը, Սպերը, Բարձր Հայքի արևմտյան մասը, Աղճիքը և Կորրուքը), Վիրքը և Աղվանքը: Ոստիկանի նստավայրը Դվինն էր: Տե՛ս Վ. Վարդանյան, Հայաստանի պետական համակարգը Օմայանների օրոք (640-750թթ.), «Պատմա-բանափական հանդես», 2015, թ. 2, էջ 229-240:

Քանի որ Շակաշեն-Սակասենե և Ուտիք-Օտենե աշխարհների միավորումից հետո վարչական նոր տարածքը պահպանում է վերջինիս անունը, ուստի «Աշխարհացույցի» հեղինակը սկզբում թվարկել է Ուտիքի գավառների անունները, ապա Շակաշենինը: «Աշխարհացույցան» Ուտիք նահանգը համապատասխանում էր 591 թվականից հետո Միհրանյանների տոհմի ժառանգական տարածքներին, երբ Աղվանքի առաջին իշխան է ճանաչվում Վարագ Գրիգորը²⁴:

Ժամանակի ընթացքում վարչական փոփոխությունների հետևանքով փոփոխվում են Ուտիքի գավառների ոչ միայն սահմանները, այլև անունները: Մի կողմից՝ Գարդմանը, աստիճանաբար ընդլայնելով իր սահմանները, ընդգրկում է գրեթե ամբողջ նահանգը: Մյուս կողմից՝ հարևան Վրցախ և Գուգարք նահանգները մեծանում են Ուտիքի տարածքների հաշվին: Դավիթ Անհողինը հորից՝ Կյուրիկյան Գուրգեն Ա-ից ժառանգություն ստացած Գուգարքի թագավորությունը մեծապես ընդլայնել էր ի հաշիվ Ուտիքի, որի մասին Լեռն գրում է: «Կյուրիկյան թագավորությունը այնքան առաջ էր մեխավում Աղվանից Երկիրը կազմող այդ նահանգի մեջ, որ նրան նույնիսկ սկսում են անվանել Աղվանից թագավորություն»²⁵:

Ուտիքի բնաշխարհը հարուստ է անտառներով ու լեռներով, ալպիական մարգագետիններով ու բարերեր դաշտերով, օգտակար հանածոնների (Երկաթ, պղինձ, ոսկի, կորալտ, նավթ, այումին) հանքավայրերով ու հանքային ջրերի հսկայական պաշարներով, բազմազան և բազմատեսակ բուսական ու կենդանական աշխարհով: Ստրաբոնը գրում է, որ Կուր գետին սահմանակից Սակասենե գավառը բարերեր հովիտներ ուներ, բերքատու, ընտանի և մշտադալար ծառեր, աճում էր նաև ձիթենի²⁶:

Պատմական Ուտիքի տարածքով են հոսում Աղսու, Տափուշ, Հախում, Զակամ, Շամքոր, Բանանց, Գանձակ, Կուրակ, Տրտու, Գարդման, Խաչեն գետերն ու գետակները: Նահանգի նշանավոր

²⁴ Ա. Երեմյան, «Հյաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 75-76:

²⁵ Լեռ, Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1984, էջ 612:

²⁶ Ստրաբոն, XI, 14, 4:

քաղաքներն էին Պարտավը, Գանձակը, Շամքորը, Բայլականը, Տիգրանակերտը, Խաղխաղը: Ըստ հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների՝ Խաղխաղը քաղաքը եղել է Հայոց Արշակունի, ապա Աղվանից թագավորների ճմեռոցը²⁷:



²⁷ Պատմական Խաղխաղ քաղաքը նահանգի հնագույն բնակավայրերից է: Վյստեղ 450 թվականին ճակատամարտ է տեղի ունեցել Վարդան Մամիկոնյանի և պարսից զորքի միջև, որն ավարտվել է հայերի հաղթանակով: **Ազարթանգեղոս**, Պատմութիւն Հայոց, տե՛ս Մատենագիրը Հայոց, հ. Բ, առաջարանը՝ **Կ. Իւզբաշեանի**, **Պ. Մուրադեանի**, Անթիիաս, 2003, Էջ 1320: **Եղիշե**, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Մատենագիրը Հայոց, հ. Ա, առաջարանը **Պ. Մուրադեանի**, **Կ. Իւզբաշեանի**, Անթիիաս, 2003, Էջ 607: **Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց, Մատենագիրը Հայոց, հ. Բ, առաջարանը **Կ. Իւզբաշեանի**, **Պ. Մուրադեանի**, Անթիիաս, 2003, Էջ 2261:

ՈՒՏԻՔԻ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՎԱՂ ՇՐՋԱՆՈՒՄ

Պատմական Ուտիք նահանգը, որտեղ հայ գրավոր մշակույթը դպրերի ընթացքում զարգացել է ողջ Երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին ներդաշնակ, նաև իր ուրույն տեղն ունի հայկական գրչության կենտրոնների պատմության մեջ:

Մշակութային առումով Ուտիքի համար հատկապես ճակատագրական եղան IV-V դարերը: Դա քրիստոնեական կրոնի և հայագիր դպրության հիմնադրման ու տարածման ժամանակաշրջան էր, երկու դարակազմիկ կարևոր իրադարձություն, որոնց հետագա ընթացքը հայոց երկրի այս հատվածում պահպանեց ազգային և մշակութային ինքնությունն ու դիմագիծը: Դա որակական փոփոխություն էր, երբ գրչության արվեստը, գրականությունը, ողջ մշակույթը ձեռք բերեցին նոր որակ ու բովանդակություն, դա հեղաշրջող երևույթ էր, որն ուներ ոչ միայն հոգևոր-լուսավորական, այլև քաղաքական նշանակություն:

Ազաթանգեղոսք գրում է, որ Տրդատ Գ արքան իր մոտ է իրավիրում երկրի գլխավոր տասնվեց նախարարներին ու կուսակալներին, որպեսզի նրանց հայտնի նոր կրոնն ընդունելու իր որոշման մասին: Ազաթանգեղոսք ներկայացնում է նախարարների ցուցակը, որտեղ Ծավոյաց (Արցախի) իշխանը տասներկուերորդն էր, իսկ Ուտյաց իշխանը՝ տասներեքերորդը²⁸: Արցախում և Ուտիքում քրիստոնեության տարածման ու ամրապնդման համար մեծ գործունեություն է ծավալել Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիս Եպիփակոսը, որի համար հալածվել է, դաժանաբար սպանվել և թաղվել Ամարասում:

Իսկ Կորյունը գրում է, որ հայոց և վրաց գրերը ստեղծելուց հետո Մեսրոպ Մաշտոցը գնում է Աղվանք, և երբ Աղվանքում իմանում են նրա այցի նպատակը, համաձայնում են ընդունել դպրու-

²⁸ Ազաթանգեղոսք, էջ 1684:

թյունը²⁹: Ապա գավառներից բազմաթիվ մանուկներ ժողովեցին, դասաստներ և դպրոցներ բացեցին, հմուտ ու բանիմաց դպրագետներ կարգեցին և ուսուցանեցին մանուկներին Եսվաղեն կամ Արշաղեն թագավորի և Երեմիա հայրապետի հովանավորությամբ: Նոյն դեպքերի մասին վկայում են նաև պատմահայր Մովսես Խորենացին³⁰ և Մովսես Կաղանկատվացին³¹:

Հազկերտ Բ-ից հետո զահ բարձրացած Պերոզը (459-484 թթ.), անհանդուրժողական վերաբերմունք ունենալով Վաչե Առաջահակիլ թագավորի նկատմամբ, ներխուժեց Աղվանք, ցանկացավ տարածել կրակապաշտությունը, որի համար սաստիկ հալածեց քրիստոնեաներին, քանդեց եկեղեցիները, ոչնչացրեց մշակութային արժեքները: Պերոզին հաջողվեց վերացնել Աղվանից թագավորությունը և ստեղծել մարզպանություն³²: Իսկ Վաչե արքան, հրաժարվելով գահից, մեկուսանում է Ավետարանոց ավանում, որտեղ, ըստ ավանդության, արտագրում է Ավետարան, «չիշելով, որ մի ժամանակ թագավոր է եղել»³³:

485 թվականին, երբ զահ է բարձրանում Վաչագան Բարեպաշտ արքան, անմիջապես ձեռնամուխ է լինում, որպեսզի Արցախ-Ուտիք աշխարհներում խորապես արմատանա քրիստոնեական հավատը և լայն տարածում գտնի հայոց այրութենք, որոնց միջոցով էր միայն հնարավոր պահպանել ազգային ինքնությունն ու հայագիր դպրու-

²⁹ «Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ զնալ ի կողմանս Աղուանից: Եւ երթեալ իշաներ յաշխարհն եւ հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսաներ զուրք եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, եւ զնոցին թագաւոր, որում Արսվադ էր անուն, ամենայն ազատաք հանդերձ, որոց առաւել հապատակութեամբ ընկանալ վասն անունն Քրիստոսի: Ապա հարցեալ ի նոցանէ, առաջի եղեալ վասն որոյ եկեալ էր: Եւ նոցա երկոցունց զուգակցելոց եպիսկոպոսին եւ թագաւորին, յանձն առեալ դպրութեանն հնազանդելոյ»: **Կորյուն**, Վարք Մեսրոպայ վարդապետի: Տես Մատենագիրը Հայոց, հ. Ա, առաջարան՝ **Կ. Խոզբաշեանի**, **Պ. Մուրադեանի**, Անթիլիաս, 2003, էջ 246:

³⁰ **Մովսես Խորենացի**, էջ 2083:

³¹ **Մովսես Կաղանկատվացի**, զլ. ԻԵ-ԻԸ:

³² Նոյն տեղում, զլ. ԺԱ, ԺԵ, ԺԸ:

³³ **Մովսես Կաղանկատվացի**, էջ 47: **Ս. Զալալեանց**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Բ, Տփիլիս, 1858, էջ 248:

թյունը: Ըստ պատմիչի՝ նա կառուցել է տափս 365 եկեղեցի, որոնց կից բացվում են դպրատներից³⁴: Առաջին դպրոցներից մեկն արքան բացում է Ուտի Առանձնակ գավառի՝ իր հայրենի Ռուտակ գյուղում, որտեղ էր նաև իր ամառանոցը: Արքան անձամբ էր հետևում և հովանավորում մերոպատառ դպրոցների զործունեությունը, հաճախ էր այցելում դպրոցներ, իր շուրջը համախմբելով երեխաններին՝ նրանց միաձայն կարդալ էր տափս, իսկ ինքն ուրախանալով պարծենում էր՝ դա համարելով իր համար որպես գյուտ և մեծագույն պարզել³⁵: Իսկ այդ դպրոցներում մանուկներին ուսուցանում էին այն բոլոր առարկաները, ինչ Հայաստանի մյուս նահանգների ու գավառների դպրոցներում. առաջին հերթին՝ կրոն և ազգային պատմություն, հայոց լեզու, գրչության արվեստ և ազգային երգ: Արքան իր երկրում կարգ ու կանոնն ամրապնդելու համար սահմանում է նաև քանանեկ կետից բաղկացած կանոնական օրենքներ:

Վաշագան Բարեպաշտի ժամանակ վերելք է ապրում մշակութային կյանքը, որը նրա մասից հետո³⁶ տևական դադար է առնում և կրկին հաջողություն հայոց լեզու, գրչության արվեստ և ազգային երգ: Արքան իր երկրում կարգ ու կանոնն ամրապնդելու համար սահմանում է նաև քանանեկ կետից բաղկացած կանոնական օրենքներ:

Մեզ հասած մատենագրական տեղեկությունները հետագա դարերի գրավոր մշակութային կյանքի մասին սակավաթիվ են, բայց ոչ ամուլ: Մովսես Կաղանկատվացին, դժգոհելով գրավոր սկզբնադրներում:

Մատենագրական տեղեկությունները հետագա դարերի գրավոր մշակութային կյանքի մասին սակավաթիվ են, բայց ոչ ամուլ:

Մովսես Կաղանկատվացին, դժգոհելով գրավոր սկզբնադրներում:

³⁴ **Մովսես Կաղանկատվացի, էջ 417:**

³⁵ «Եւ ի գալի իւրում ի գիլտն կատարել զիշտակս սրբոցն՝ նստէր ինքն թագավորն ի դպրոցատանն եւ զորդիս դիւրացն եւ քրնացն զինքնամբ կացուցաներ. գորողայաբար բակ առեալ բազմութեանն յոյժ եւ ոմանց զիրս, եւ ոմանց ախալիսու ի ձեռին ուներով եւ միաբան առ հասարակ ամենեցուն մեծաձայն հրամայէր կարդալ եւ ինքն զուարձացեալ ի մէջ նոցա յաւրանայր իրեւ մեծագոյն իմն գտեալ պարզեւս համարէր անձին»: **Մովսես Կաղանկատվացի, էջ 86-87:**

³⁶ Վաշագան Բարեպաշտը սպանվել է 510 թվականին, ըստ Ա. Հակոբյանի՝ 523-ին: Վաշագան արքան թաղված է Զքարերոյ գավառի Եղիշե առաջայի վանքում: 1286 թ. այսուհետ նրա հիշատակին կառուցվելու մատուռ, որի մեջ զտնվող տապանաքարին կա հետևյալ արձանագրությունը. «Վս է հանգիստ Վաշագան թագաւորին»: Տես Մատենագիրը Հայոց, հ. Գ, առաջարանը՝ **Ա. Յակոբեանի, Անթիիխա, 2004, էջ 53,** Դիվան հայ վիմագրության, պր. V, էջ 110:

յուրների սակավությունից, ցավով է արձանագրում, որ այդ երևոյթի պատճառն անօրենների կողմից մատյանների հրկիզումն է, ինչպես նաև անհայտ է դրանցից շատերի գտնվելու վայրը. «Հրկեզեղեալ են յանաւրինաց եւ կտակարանք, եւ սպասք, եւ տեղիք կալոյնոցա՝ մեզ անյայտք»³⁷:

Սովորս Կադանկատվացին Աղվանից երկրի (այդ թվում և Ուտիքի) առաջին պատմիչն է, իսկ նրա «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը՝ գիշավոր սկզբնադրյուրը: Աղվանից աշխարհի վաղ շրջանի գրի, գրականության, մշակույթի մասին խոսելիս հենվում ենք Կադանկատվացու հաղորդած տեղեկությունների վրա, որովհետև այդ շրջանից մեզ ուրիշ գրավոր աղբյուր չի հասել, որով կարող ենք պատկերացում կազմել այդ ժամանակաշրջանի գրական-մշակութային լյանքի մասին: Այս տեսանկյունից Կադանկատվացու հաղորդումները չափազանց կարենոր են և առաջնային: Կադանկատվացին խոսում է այրված, ոչնչացված, թալանված գրականության մասին: Պատմիչի հաղորդած տեղեկությունները որքան էլ սակավաթիվ են, դրանք մասունքներ են, որոնք խոսում են Ուտիքում վաղագույն ժամանակներից գոյություն ունեցած դպրության և գրականության մասին:

Աղվանից պատմության միջոցով մեզ են ավանդվել դավանաբանական գրականությանը վերաբերող մի քանի դրվագներ՝ Վաչե Բթագավորին ուղղված Գյուտ կաթողիկոսի երկու թղթերը, Վաչագան Գ Բարեպաշտի կանոնները:

Կադանկատվացին խոսում է նաև Աղվանքում ստեղծված գեղարվեստական գրականության մասին: Արվեստավոր խոսքի նմուշ է VII դարում Զիանշիր իշխանի «Տէ՛ր իմ, Տէ՛ր, որովհետեւ եղեր անյիշաշար ծառայի քում բազմամեղի» սկզբնատողով աղոթքը³⁸, մի գրական գոհար է Զիանշիր իշխանին ծոնված ողբը, որի հեղինակը աշխարհիկ բանաստեղծ Դավթակ Քերթողն է, որը, հայոց այրութենի տառերով ստեղծելով ծայրակապ (աքրոստիկոս), անմահացրել է ազգային գիրը:

³⁷ Մովսէս Կադանկատուացի, էջ 421:

³⁸ Նույն տեղում, էջ 244:

Գեղարվեստական խոսքի կատարյալ օրինակ է IX դարում Եսայի Արու Մուսեի³⁹ պատաժանը արաբ ոստիկան Բուղային: Բացառիկ տեղ է գրավում Համամ Արևելցու ստեղծագործությունը, որի «Համամ» աքրոստիկոսով շարականով⁴⁰, մեկնողական և քերականական աշխատանքներով IX դարում սկզբնավորվում է Աղվանից աշխարհի դասական գրականության նոր փուլը⁴¹:

Առաջահիկների իշխանական տոհմից սերող Գրիգորի որդի և Գարդմանքի տեր Սահակ Ալևադան (մոտ 895-940 թթ.) մեծ տեղ էր հատկացնում գիր ու գրականությանը: Նրա մասին Մովսես Կադանկատվացու շարահարողը՝ Մովսես Դասիուրանցին գրում է, որ Սահակը քաջ ու խելացի նարդ էր: Նա տիրեց Գարդման, Քուստի-Փառնես ու Զորոփոր գավառներին և հետամուտ եղավ գրագիտությանն ու իր տան մեջ դպրապետեր նշանակեց⁴²: Պատմիչը այսքանից ավելի ոչինչ չի ասում, սակայն իշխանի՝ դեպի գիրը, գրականությունը, ուսումն ունեցած սիրո նման դրսւորումը որքան նշանակալի երևույթ է եղել ժամանակին, որ Դասիուրանցին այն դարձրել է իր պատմության նյութը:

Ուտիքում VII դարում ստեղծված գրականության մասին հետաքրքիր հաղորդումներ ունի նաև Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը Հովհան Մայրագոմեցու կամ Մայրիվանեցու առնչությամբ: Ժամանակակիցների կողմից «աշխարհապոյս վարդապետ» ճանաչված Հովհան Մայրագոմեցին անգիջում հակաքաղկեդոնական էր: Ընդդիմանալով Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսին, որը 633 թվականին Կարինում ընդունել էր քաղկեդոնականություն, Մայրագոմեցին հալածվում ու քանադրվում է կաթողիկոսից, զրկվում պաշտոնից, քաշվում է Գարդման գավառի Գետարակ ամրոցը, որտեղ

³⁹ Եսայի Արու Մուսեն Արցախի ամենահզոր իշխանն էր IX դարում: Նրա իշխանության տակ էին ամբողջ Հարավային Արցախը և Ուտիքի Տրի գավառը:

⁴⁰ **Ս. Ամատունի,** Հին ու նոր պարականոն կամ անվավեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 163-164:

⁴¹ **Ա. Մնացականյան,** Աղվանից աշխարհի գրականության հարցի շուրջ, Երևան, 1966, էջ 183-204: **Շ. աբեղա Անանյան,** Համամ Արևելցի՝ մեկնիչ սուրբ գրոց, «Էջմիածին», 2009, Ե, էջ 48-58:

⁴² **Մովսես Կաղանկատուացի,** էջ 419-420:

ապրելով մենակեցի կյանքով՝ իրեն նվիրում է ստեղծագործ աշխատանքի: Այստեղ է Մայրազոմեցին գրում իր երեք նշանավոր ստեղծագործությունները՝ «Խորատ վարուցը», «Հաւատարմատը» և «Նոյեմակը»⁴³:

Հաջորդ տեղեկությունը հաղորդում է Մատթեոս Ուռհայեցին, որը վերաբերում է XI դարին և անուղղակի վկայությունն է այն բանի, որ Ուտիքում եղել են մեծ թվով գրչատներ, որտեղ ստեղծվել են անթիվ-անհամար ձեռագիր մատյաններ: Մատթեոս Ուռհայեցին գրում է, որ 1040-1041 թվականներին Կյուրիկյան Դավիթ Անհողին թագավորը Աղվանից Հովսեփ կաթողիկոսից օգնություն է իմադրում Արուլուար Էմիրի վիթխարի գորաբանակին դիմագրավելու համար. «Արդ, ժողովեա զամենայն Եպիսկոպոսունսդ Հայոց աշխարհիդ, որ յԱղուանսն են և ի քանակ այս հասիր»: Կաթողիկոսի հրամանով Դավիթ Անհողինի գորքին է միանում Աղվանից ողջ հոգևոր դասը՝ Եպիսկոպոսները, քահանաները, սարկավագները՝ բոլորը՝ մի ձեռքում իսաչ, մյուսում՝ Ավետարան: Միայն Եպիսկոպոսները երկու հարյուր հոգի էին, իսկ ցածրաստիճան հոգևորականները մի քանի անգամ ավելի շատ: Եվ ինչպես պատմին է գրում «ողջ ճամբարը իսաչ ու Ավետարան դարձավ»⁴⁴:

Ասատուր Մնացականյանն անդրադարձել է Մատթեոս Ուռհայեցու նկարագրած, գուցե փոքր-ինչ չափազանցված այս դրվագին և նկատի ունենալով Ավետարանների այսքան վիթխարի քանակությունը մեկ վայրում արել է հետաքրքիր դիտարկում. «Եվ դա միայն Ավետարանների մասին: Իսկ եթե մասնակի չափազանցումները մի կողմ դնենք և մտովի պատկերացնենք նաև այդ թվին հարաբերաբար համապատասխանող մյուս գրականությունը, այն ժամանակ կստանանք մի վիթխարի մատենագրություն»: Իսկ այդ վիթխարի մատենագրությունը կոպիտ հաշվարկով կազմում է մոտավորապես

⁴³ **Ստեփանոս Տարոնացի Վսողիկ.** Պատմութիւն տիեզերական: Մատենագիր Հայոց, հ. ԺԵ, գիրք Բ, առաջաբան՝ Գ. Մանուկեանի, Երևան, 2011, էջ 694:

⁴⁴ **Մատթեոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, Երևան, 1991, էջ 55:

14000-20000 ձեռագիր մատյան՝ տարաբնույթ բովանդակությամբ⁴⁵: Խոսել նման քանակությամբ ձեռագիր մատյանների մասին, քնականաբար, չենք կարող շընդունել, որ դրանք ոչ թե տարիների կամ տասնամյակների, այլ հարյուրամյակների ընթացքում ստեղծված արժեքներ են և գնահատությունը Արցախ-Ուտիքում զոյություն ունեցած բարձր մշակույթի՝ հայագիր գիտության, գրականության, գրչության արվեստի: Իսկ եթե գուգահետ ենք անցկացնում մեզ հասած և այս ահուելի քանակության մատյանների միջև, նախ ծնվում է որոշակի հարգանք մեր նախնյաց մշակույթի նկատմամբ, ապա առարկայանում է ձեռագրական կորուստների այն մեծ ողբերգությունը, որ հասցրել են հաճախակի կրկնվող արհավիրքները, պատերազմներն ու կողոպուտները:

Ուտիք աշխարհի մշակութային կյանքի ծնունդն են մատենագիր և քաղաքական գործիշ Դավիթ Արավկառորդին (1070/80-1140 թթ.) և Թոքակերի որդի Գրիգորը, որոնց մասին սակավ տեղեկություններ են հաղորդում Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին: Նրանք երկուսն էլ Գանձակի երկրից էին, Հռվիաննես Սարկավագ Իմաստասերի ժամանակակիցներն ու հայրենակիցները: Երկուսն էլ ժամանակին մեծ հռչակ էին վայելում:

Ըստ Վարդան Արևելցու՝ Դավիթը մտերմ է եղել Հռվիաննես Սարկավագի հետ. «Սարկաւագ Վարդապետն... հանգեաւ ի հինգ հարիւր ութասուն եւ ութ թուին: Եւ զկնի ամի միոյ լծակիցն իւր Արակայ որդին Դավիթ, որ կանոնք գրեաց դիւրահաս: Եւ Թոքակերայ որդին կոչեցեալ աշակերտ նորին»⁴⁶: Թոքակերի որդի Գրիգորի մասին շատ բան չգիտենք, բացի այն, որ նա Սարկավագի աշակերտն է եղել, և Գանձակեցու մի հաղորդման համաձայն՝ Գրիգորը և Դավիթը միջնորդել են Կիլիկիայում նասող Հայոց կաթողիկոս Գրիգոր ԳՊահավունուն, որպեսզի Աղվանից կաթողիկոս ձեռնադրի Գագիկ Եայիսկոպոսին, որովհետու երկար ժամանակ երկիրն առանց

⁴⁵ Ա. Մեացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ, էջ 215-216:

⁴⁶ Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 121-122:

հոգևոր առաջնորդի էր մնացել⁴⁷: Այս միջնորդությունն արվել է 1138 թվականին, իսկ 1139-ին Աղվանից կաթողիկոսության գահին նստում է Գագիկ Բ-ը: Սա կարևոր փաստ է, որը խոսում է Դավիթ Ալավերդու և Թոքակերի որդի Գրիգորի՝ ժամանակին մեծ հեղինակություն վայելելու մասին:

Դավիթ Ալավերդին Արքայություն անունով քահանայի խնդրանքով գրել է իննառևութ գիրից բաղկացած Կանոնական օրենսդրություն: «Դավիթ վարդապետն Ալավել որդի, որ գրեաց զԿանոնական օրենսդրութիւնս գեղեցկայարմարս և պիտանացուս ի խնդրոյ քահանայի միոց, որում անուն Արքայութիւն՝ ի քաղաքէն Գանձակայ»⁴⁸: Դավիթի կանոնները մեզ են հասել ընդօրինակությամբ⁴⁹: Ամենավաղ ձեռագիրը ՄՄ 5607 Ժողովածուն է, որի գրչության վայրը հայտնի չէ, ընդօրինակել է Ստեփանոս գրիչը XII դարում: Ժամանակային առումով մոտ լինելու պատճառով կարելի է ենթադրել, որ Ժողովածուն ընդօրինակվել է կամ հեղինակի կենդանության ժամանակ, կամ նրա մահից ոչ շատ ուշ: Ըստ Կ. Կոստանյանի՝ Դավիթի «Կանոնները» հայոց առաջին օրենագիրըն է, որից օգտվել է Մխիթար Գոշը Դատաստանագիրքը գրելու ժամանակ⁵⁰:

XI-XII դարերում ուժեղանում են հայ-վրացական քաղաքական կապերը: Զարարյանները մեծ դեր ունեն ոչ միայն Հայաստանում, այլ նաև վրաց արքունիքում: Հայ-վրացական կապերը նպաստեցին երկրի սոցիալ-տնտեսական, մշակութային նոր զարգացումներին և

⁴⁷ «Ապա մանուկ մի էր յազգէ կաթողիկոսացն Գագիկ անուն, որդի Գերզայ, թռոն Կարապետին, զոր սնուցին և ուսուցին, և իբրև ի չափ հասաւ մանուկն, ապա գրեն թուղթ մաղթանաց Գրիգոր Վարդապետն՝ որդին Թոքակերի, և Դավիթ՝ որդի Ալավայ, և այլ աշխարհն Աղուանից, առ մեծ հայրապետն Հայոց Գրիգորիս, որ ընդ այն ժամանակս էր նա ի կողման Արեւմտից: Եւ այր մի ընդ թղթոյն առաքեցին, զի ձեռնադրեսցէ զնա եպիսկոպոս, առաքեսցէ և ինքն եպիսկոպոս մի յիւրոցն, և տացէ հրաման ձեռնադրել զմանուկն Գագիկ յաթոռն Աղուանից, զի մի անառաջնորդ կորիցէ աշխարհն»: **Կիրակոս Գանձակեցի**, էջ 199-200:

⁴⁸ Նոյն տեղում, էջ 116:

⁴⁹ **Ա. Արքահամյան**, Դավիթ Ալավել որդու կանոնները (բնագիր և ուսումնասիրություն), «Էջմիածին», 1952, թ. 9-10, էջ 48-57, 1953, թ. 1-3, էջ 53-60:

⁵⁰ **Կ. Կոստանյան**, Դավիթ վարդապետ Ալավել որդի, «Ազգագրական հանդես», ԺԴ, Թիֆլիս, 1906, էջ 105-132, ԺԵ, 1907, էջ 62—67:

հոգևոր վերելքին: Սկսվում են մեծածավալ շինարարական աշխատանքներ, կառուցվում և վերակառուցվում են եկեղեցիներ, զարգանում են քաղաքները, աշխուժանում է ներքին և արտաքին առևտուրը: Զարգանում և ժամանակի պահանջներին համաքայլուրույն ընթացք են ստանում գիտությունը, գրականությունն ու արվեստը, առաջ են գալիս գրական նոր ժանրեր ու տեսակներ, բացվում են հոգևոր-մշակութային կենտրոններ, բազմանում են նաև գրչության կենտրոնները: Հատկապես մեծ հեղինակություն ունեին Գանձակի, Թարգմանչաց, Նոր Գետիկի, Խորանաշատի, Դեղնուտի, Հաղարծինի, ուշ միջնադարում՝ Զարեքավանքի, Քարահատի գրչության կենտրոնները, որտեղ գործում էին շնորհապի գրիչներ ու ծաղկողներ: Այդ կենտրոնները դեկավարում էին ժամանակի երեսեի բարունապետները, որոնց հեղինակության շնորհիվ երկրի տարրեր վայրերից շատերն էին գալիս սովորելու նրանց դպրոցներում: Ավանդները շարունակվում էին, խաչաձևվում ու ամրանում էին կապերը Նոր Գետիկի, Հաղարծինի, Խորանաշատի, Կայենի, Գանձակի և Անիի, Հաղբատ-Սանահինի, ինչպես նաև Կիլիկիայի նշանավոր դպրոցների միջև⁵¹: Միխթար Գոշը, Վարդան Արևեցին, Կիրակոս Գանձակեցին Գանձակի, Նոր Գետիկի և Կիլիկիայի դպրոցների ավանդների կրողներն են: Հավանական ենթադրություն է, որ Դավիթ Ալավկառորդին Հովհաննես Սարկավագի հետ գործել է Հաղբատում և Անիում: Հաղարծինում Խաչատուր Տարոնացու դպրոցը իր որակով չէր զիջում նմանատիպ առաջատար դպրոցներին և սերտ կապեր ուներ Կիլիկիայի և Հյուսիսային Հայաստանի դպրոցների հետ: Խորանաշատի վարդապետարանը մեր մատենագրությանը և եկեղեցուն տվեց նշանավոր պատմագիրներ

⁵¹ Այդ կապերը դրսեւրվում էին ոչ միայն մշակութային, այլև հոգևոր ոլորտներում: Պահպանված մի արձանագրության համաձայն՝ XIII դարում Անի քաղաք քարոզելու էր եկեղ 55 տարի ճգնած մի «Գանձակեցի» միայնակյաց, (անունը չի նշվում) և այստեղ է մահացել: Նրա հիշատակին քաղաքի եպիսկոպոսը պատարագներ է սահմանել, այդ մասին արձանագրեկ տալրվ եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցու պատին (Դիվան հայ վիմագրության, պրակ I, 1966, էջ 26):

և նվիրյալ հոգևորականներ՝ Վարդան Արևելցի, Կիրակոս Գանձակեցի, Գրիգոր Ակներցի, Խարայել Խաչենցի և ուրիշներ, որոնք իրենց գործունեությունը շարունակեցին Հայաստանի և Կիլիկիայի տարբեր հոգևոր կենտրոններում: Տաթևի Մեծ անապատում կրթություն ստացած Դավիթը XVII դարում հիմնադրեց Զարեքա անապատի գրչության կենտրոնը: Զարահատի դպրոցը առանձնանում էր իր վարպետ մանրանկարիչներով:

Հոգևոր-մշակութային այս կենտրոնները հովանավորում էին ժամանակի հեղինակավոր իշխանական տները և հոգևոր պետերը:

Իրաք հաջորդող արաբական, սելջուկ-թուրքական, մոնղոլական, թուրքմենական, պարսկական՝ դարեր շարունակ ընթացող աշխարհավեր արշավանքներն ու պատերազմները մեծագույն աղետ էին Հայոց Երկրի համար: Դրանց հետևանքով քանդվեցին, թալանվեցին նաև վանքերն ու եկեղեցիները, հրկիզվեց ու ոչնչացավ վիթխարի քանակությամբ մշակութային ժառանգություն, որոնց մեջ թիվ էին կազմում ձեռագիր մատյանները: Ինչպես ողջ Հայոց աշխարհում, այնպես էլ Ուտիքում քաղաքական դաժան հալածանքների պայմաններում, աղետների ու վերելքների մեջ մշակութային կյանքը, գիտությունը, արվեստներն ու կրթությունը երբեմն դադարներով, երբեմն մեղմ լիցքերով շարունակվում են՝ ծփարելով մենաստաններում և իշխանական հովանին վայելող եկեղեցիներում: Դրա վկայությունն են նահանգի տարբեր գրչակենտրոններում ստեղծված ու մեզ հասած աստվածաբանական, դավանաբանական, թարգմանական, պատմական, գիտական, մեկնողական, ուսումնական, ծիսական տարարնույթ ձեռագիր մատյանները: Այս կենտրոններում են ստեղծվել Մովսես Կաղանկատվացու, Հովհան Մայրագոմեցու, Համամ Արևելցու, Դավիթ Ալավելարդու, Միհեար Գոշի, Վանական վարդապետի, Կիրակոս Գանձակեցու աշխատանքները:

Ուտիքի վանքերում ու եկեղեցիներում, գյուղերում ու անհատ մարդկանց մոտ պահվել են այլուր գրված և այստեղ թերված ձեռագիր մատյաններ: Այդ ձեռագրերը, որոնք կամ փրկագնման ճանապարհով են հասել, կամ նվիրաբերվել են զանազան առիթներով, մեծ թիվ են կազմում, բայց դրանցից առանձնացնենք «Վեհամոր»

(ՍՄ ձեռ. 10680), «Վեհափառի» (ՍՄ ձեռ. 10780), «Հաղբատի» (ՍՄ ձեռ. 6288), «Ժարգմանչաց» (ՍՄ ձեռ. 2743) «Մուլնու» (ՍՄ ձեռ. 7736), «Կեռանի և Հեթումի» (ՍՄ ձեռ. 6764) անվանված Ավետարանները, որոնցից ամեն մեկը մի առանձին գլուխգործոց է: Այդ կենտրոններում ստեղծված ու պահված ձեռագրերի մեծ մասը հանդրվանել է Մաշտոցի անվան Մատենադարանում, մյուսները սփռված են աշխարհի տարբեր մատենադարաններում, անհատական հավաքածուներում, իսկ շատերի ճակատագրերն ել դեռ անհայտ են:

Ստորև ձեռագրական, վիմագրական ու մատենագրական աղբյուրների հիման վրա ներկայացվում է պատմական Ուտիք նահանգի գրչության կենտրոնների մասին ուսումնասիրությունը՝ ձեռագրագիտական և հիշատակարանային բազմաթիվ տվյալների հրապարակմամբ, որոնք լուսաբանում են նահանգի պատմությանը վերաբերող շատ հարցեր և օգտակար կյինեն Արցախ-Ուտիք նահանգների պատմությամբ ու մշակույթով հետաքրքրվող մասնագետներին: Աշխատանքը շարադրելու ժամանակ որպես սկզբնադրյուր և ուղղորդիչ օգտվել ենք նաև Ուտիքին ըստ «Աշխարհացույցի» (Բ. Հարությունյան, Ա. Հակոբյան), Արցախ-Ուտիքի հոգևոր-մշակութային (Ս. Կարապետյան), Աղբբեջանի Հանրապետության խորհրդային շրջանի քարտեզներից:

Նոյն աղբյուրների պահպանած տեղեկությունների հիման վրա վստահաբար կարող ենք ասել, որ պատմական Ուտիքի Առանոսու, Տրի և Ռոտ-Պացեան գավառներից մեզ ձեռագրեր չեն հասել: Իսկ Աղվե, Տուշքատակ, Գարդման, Շակաշեն և Ուտիք Առանձնակ գավառների ձեռագրական ժառանգությունը ներկայացվում է ըստ «Աշխարհացույցի» նրանց գրադարան տարածքների, չնայած հետագա դարերում պատմաքաղաքական անցուղարձերի պատճառով այդ տարածքները մեծ փոփոխությունների են ենթարկվել, որոնց արդյունքում փոխվել են նրանց և՛ սահմանները, և՛ անունները:

ՆՈՐ ԳԵՏԻԿԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ ԵՎ ԳՐՉԱՏՈՒՆԸ

Նոր Գետիկը միջնադարյան Հայաստանի հոգևոր-մշակութային և գրչության նշանավոր կենտրոններից է, գտնվում է աշխարհագրական այն տարածքում, որը համապատասխանում էր աշխարհացույցյան Ուտիք նահանգի Աղվե գավառին, հետազայում մտնում էր պատմական Գուգարք նահանգի Զորովոր գավառի, իսկ ավելի ուշ՝ Կայենու գավառի մեջ⁵²: Նոր Գետիկավանքի վարդապետարանի սկզբնավորումն ու փառքը կապվում է միջնադարի երևելի դեմքներից մեկի՝ մեծանուն գիտնական վարդապետ, մատենագիր, օրենսգետ, առակագիր Մխիթար Գոշի անվան հետ: Հիշատակարաններում վանքը հանդիպում է նաև Գոշ Մխիթարի վանք անունով⁵³, իսկ բարունապետի մահից հետո վերակոչվում է Գոշավանք:

Նոր Գետիկի սան պատմիչ Կիրակոս Գանձակեցին իր Պատմության հինգ գլուխներում (գլ. ԺԳ-ԺԷ) Նոր Գետիկի վանական համալիրի հիմնադրման, նրա հիմնադիր առաջնորդի, միաբանության և ուսումնական կենտրոնի մասին հաղորդում է առաջին հավաստի և բովանդակ տեղեկությունները⁵⁴: Այդ հաղորդումները գրեթե բառացի մտել են Գոշի հայսմավուրբային վարքի մեջ՝ «Սեհեկի Ե. Փետրվարի ԺԱ., Վարք և պատմութիւն Գոշին Մխիթարայ» վերնագրով (ամբողջական բնագիրը տե՛ս հավելվածում): Այսինքն՝ Գոշի հայսմավուրբային վարքի հիմքում Կիրակոս Գանձակեցու Պատմությունն է: Սակայն Մխիթար Գոշի վարքը բացակայում է Հայսմավուրբի Կիրակոսյան երկու խմբագրություններում (1253թ.⁵⁵ և 1269թ.⁵⁶): Այն բացակայում է նաև Հայսմավուրբի մյուս երեք՝

⁵² Նոր Գետիկավանքը կամ Գոշավանքը XIX դարում մտնում էր Ելիզավետապոլի նահանգի Ղազախի գավառի մեջ, իսկ այժմ << Տավուշի տարածաշրջանի հոգևոր կենտրոններից է, գտնվում է Դիլիջան քաղաքից 10 կմ արևելք:

⁵³ Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, էջ 180:

⁵⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 207-223:

⁵⁵ Տե՛ս ՍՍ ձեռ. 7463 (1413թ.), ՍՍ ձեռ. 7433 (1467թ.):

տեր Իսրայելի, Գրիգոր Անավարզեցու և Գրիգոր Շերենցի խմբագրությունների մեջ⁵⁷:

Գոշի վարքը մեզ է հասել ուշ շրջանի երկու ձեռագրերով: Առաջինը 1709 թվականին Զակամի երկրի Սուլտանեցիք գյուղում Սարգսի և Վարդանի օրինակած Հայսմավուրքն է⁵⁸: Երկրորդը, որի գրիչն ու գրչության վայրը հայտնի չեն, 39 թերթից բաղկացած ժողովածու է, օրինակվել է XIX դարում⁵⁹: Գոշի այս վարքում պահպանվել է նաև գրուցախառն մի պատմություն՝ «Միւս եւս պատմութիւն սքանչելի վարդապետին Միփթարայ» վերնագրով, որը բացակայում է Գանձակեցու Պատմության մեջ⁶⁰: Այն, որ վարքի հեղինակը Կիրակոս Գանձակեցին է, ցույց է տալիս նրա հիշատակարանի հստակ հաղորդումը. «Եւ ես՝ Կիրակոս պատմագիր՝ բանի սպասաւոր եւ աշակերտ սուրբ վարդապետին Միփթարայ, որ մականուամք Գոշ կոչիւր, ականջով իմով լուայ եւ աչօրս տեսի այսքան զգանչելիս եւ ձեռօր իմովք զրեցի զատ ի պատմութեանց իմոց...»⁶¹:

⁵⁶ Երուսաղեմ, ձեռ. 75: **Ն. Պողարեան**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա, Երուսաղեմ, 1966, էջ 260:

⁵⁷ **Մ. Ավդարեզյան**, «Յայսմաւուրք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, Երևան, 1982, էջ 53-87:

⁵⁸ ՍՍ ձեռ. 3813, թերթ՝ 497, նյութ՝ թուղթ, 39,5 չ 26,5, զիր՝ բոլորգիր, տող՝ 41, թ. 262թ-265թ:

⁵⁹ Վիեննա, ձեռ. 32, թ. 21ա-26թ: **Հ. Յ. Տաշեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միփթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 181-182:

⁶⁰ Վյատկա Գանձակեցին, իրքն ականատես, պատմում է, որ Գետիկի Ս. Ասսվածածին եկեղեցու կառուցումից հետո՝ 1198 թվականին, Միփթարը զնում է Երուսաղեմ՝ Քրիստոսի գերեզմանին երկրագության: Երուսաղեմից վերադառնում է 1200 թվականին: Սևանա կղզում նրան դիմավորում են Նոր Գետիկի միաբանները և հաղորդում միաբանության վիճակի մասին, որ վարդապետի բացակայության ժամանակ սաստիկ սովոր միաբանների ուղիղ կեսը վախճանվել էր: Միփթար Գոշի վարքը մասնակի կրնատումներով տպագրել է Ս. արք. Մմբառյանը: **Մ. Սմբատեանց**, Տեղագիր Գեղարքունիք Ծովազարդ զաւատի, որ այժմ Նոր Բայազետ զաւատ, Վաղարշապատ, 1896, էջ 380-386: Տես նաև **Հ. Ոսկեան**, Մատենագրական քննութիւններ, Վիեննա, 1926, էջ 142-143:

⁶¹ ՍՍ ձեռ. 3813, թ. 265ա, **Հ. Յ. Տաշեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց ..., էջ 182:

Չնայած այն բանին, որ չունենք Գոշի վարքի նախօրինակ բնագիրը, իսկ վարքը պահպանվել ու մեզ է հասել ուշ շրջանի ձեռագրերով, աներկրա կարող ենք ասել, որ այն ունի տեղայնացված բնույթ, կրում է տեղի ավանդույթների ազդեցությունը՝ պայմանավորված ժողովածուն կազմողի հեղինակային սկզբունքներով ու ստացողի պահանջներով, և անպայման սերում է Կիրակոսի՝ մի երրորդ և մեզ անծանոթ խմբագրությունից: Ասկածի վկայությունն է Կիրակոսի երկու խմբագրությունների հիշատակարանների հետ այս հիշատակարանի՝ իրարից անկախ և բոլորովին տարբեր լինելը⁶²:

Միփթար Գոշի մասին մատենագրական հիշատակություններ են թողել նաև XIII դարի պատմիչներ Վարդան Արևեցին, Միփթար Այրիվանեցին, Ստեփանոս Օքբեյանը և XVII դարի պատմիչ Առաքել Դավիթիցին: Վարդան Արևեցին գրում է, որ Գոշի նստավայրը Գետիկա վանքում էր. «Գետիկա վանք, ուր աթոռն էր Գոշ վարդապետին»⁶³, որտեղ էլ վախճանվեց ու թաղվեց նա. «Սուրբ և սքանչելի վարդապետն Միփթար, մականուն Գոշ Գանձակեցի, որ թաղեցաւ իւրում ձեռակերտին ի Գետիկ, զոր շինեաց հրամանաւ Խւանէի՝ քեռորդյոյն մեծի իշխանին Քրիստոն, որոյ հրամանաւ եկեալ իսկ էր յերկիրն Կայենոյ, ի Հինն կոչեցեալ Գետիկ, զի յայնմ ժամանակի նա ունէր զԿայեան հայրենեօր ի Հասանայ Կայենեցւոյ շինողէ քերդին»⁶⁴: Միփթար Այրիվանեցին Գոշին հիշատակում է հայոց պատմիչների շարքում⁶⁵: Ստեփանոս Օքբեյանը Գոշին հիշում է նախ նրա մահվան առիթով. «կատարի սուրբ և աշխարհալոյս վարդապետն Գոշ Միփթարն ի Գետիկ», ապա որպես Վանական վարդապետն Միփթարն ի Գետիկ», ապա որպես Վանական վարդա-

⁶² ՄՄ ձեռ. 7433, թ. 428թ, ՄՄ ձեռ. 7463, թ. 349թ, Երուսաղեմ, ձեռ. 75, թ. 1183: Տե՛ս նաև **Ա. Մաթեոսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Երևան, 1984, էջ 269, 374, **Մ. Ավելալբեզյան**, «Յայսմաւուրք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, էջ 147-148: **Մ. Աւգերեան**, Լրումն լիակատար վարուց և վկայարանութեանց սրբոց, հ. ԺԱ, Վենետիկ, 1814, էջ ՀԶ:

⁶³ Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, քնն. հրատ. Հ. Պերպերեանի, Փարիզ, 1960, էջ 12:

⁶⁴ Վարդան վարդապետ, էջ 140:

⁶⁵ **Միփթար Այրիվանեցի**, Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 37:

պեսի ուսուցի. «Առ այսու ժամանակաւ փայլը ծերացեալ աւուրբն մեծ վարդապետն Վանական՝ աշակերտն Գոշին»⁶⁶: Առաքել Դավրիթեցին շարադրելով վարդապետների կարգը՝ սկսած Միհիթար Գոշից մինչև Էջմիածնի դպրոցը, նրան կոչում է «եռամեծ վարդապետն Միհիթար, որ մականուն Գոշ կոչի»⁶⁷, որ «ՈԿԲ (1213) վախճանեցաւ»⁶⁸:

Միհիթար Գոշի ծննդյան ստույգ թվականը հայտնի չէ: Նկատի ունենալով Կիրակոս Գանձակեցու այն հաղորդումը, որ Գոշը մահացել է խոր ծերության հասակում, նրա ծնունդը դնում են 1120-30-ական թվականների ընթացքում: «Եթե այսպիսի ծերությունն է 80-85 տարեկան հասակը, ապա նա ծնված պիտի լինի շուրջ 1130 թվականին: Այս արևելյան մեծ վարդապետը, ուրեմն, ժամանակակից է Ներսես Շնորհապուն և Ներսես Լամբրոնացուն», - գրում է Մ. Արենյանը⁶⁹:

Միհիթար Գոշը ծնվել է պատմական Ուտիք նահանգի Գանձակ քաղաքում⁷⁰: Ծննդավայրի անունով Միհիթարը կոչվել է Գանձակեցի, հետագայում՝ Հին Գետիկի միաբան, ապա Նոր Գետիկի հիմնադիր և առաջնորդ լինելու համար կոչվել է նաև Գետիկցի: Իսկ ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Գոշ մականունն է ստացել, որովհետև սակավամազ մորուս ուներ. «Զի այսպէս կոչէին զնա մականուամբն, քանզի հեղգագոյն եկին ալիք նորա»⁷¹:

⁶⁶ Ժամանակագրութիւն **Ստեփաննոսի Օքքելեանի**, Երևան, 1942, էջ 23, 25:

⁶⁷ Պատմվթիւն **Առաքել վարդապետի Դաւրիթեցւոյ**, Վաղարշապատ, 1884, էջ 339:

⁶⁸ Նոյն տեղում էջ 481:

⁶⁹ **Մ. Արենյան**, Միհիթար Գոշ, տես Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 177:

⁷⁰ «Հոչակաւորն այն և մեծիմաստն զիտութեամբ՝ էր ի քաղաքէն Գանձակայ, քրիստոնեայ ծնողաց զաւակ, որք ետուն զնա յուսումն գրոց սրբոց, և իբրև եհաս նա յարբունս հասակի, ձեռնադրեցին զնա քահանայ կուսակրօն: Եւ պաշտեալ զքահանայութիւնն յոլով ամս՝ ցանկացաւ նա հմուտ լինել մտաց գրոց սրբոց և առակաց խորնց, որ կան ի նոսա»: **Կիրակոս Գանձակեցի**, էջ 207: **Հ. Յ. Տաշեան**, Ցուցակ հայերէն ծեռագրաց..., էջ 182, **Ղ. Ալիշան**, Հպապատմ, Վենետիկ, 1901, էջ 401-402:

⁷¹ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 220: Մ. Զամյանը գրում է, որ Գոշ նշանակում է «քեօտ», զոր հայերէն քարձ կոչեմք»: Իսկ Ստ. Մալիսայանը բառը բացարում է որպես ցանցառամորում. «Քոսակ, քոսայ, որի մօրուքը շատ

Միաժամանական կրթությունն ստանում է ծննդավայրում, որտեղ էլ ձեռնադրվում է քահանա: Որոշ ժամանակ քահանայություն անելուց հետո, ցանկանալով հմտանալ Սուրբ Գրքի իմաստության մեջ, նա ուսումը շարունակում է Տավուշ գյուղաքաղաքում գիտությամբ հոչակված Հովհաննես Տավուշեցու մոտ, նրանից ստանում է վարդապետական աստիճան:

Չբավարարվելով ձեռք բերած գիտելիքներով և թաքցնելով վարդապետական աստիճանը՝ Միաժաման 1162-1163 թվականներին լինում է Կիլիկիայում և ուսումը շարունակում Սև լեռան Կարմիր վանքի դպրոցներում, որտեղ դասավանդում էին մեծահամբավ ուսուցիչներ: Այստեղ նա երկրորդ անգամ ստանում է վարդապետական աստիճան: Պահպանված մի վկայության համաձայն՝ Գոշը Կիլիկիայում աշակերտել է Գրիգոր Տղային. «... Ներսես Կրայեցին: Նորին աշակերտ՝ Տղա՝ կոչեցեալ Գրիգոր: Նորին աշակերտ՝ Միաժամ Գօշ Գանձակեցին: Սա ևս ես զաւազան Յովհաննես վանականին»⁷²: Ասվածը հաստատվում է հյուսիսային վարդապետների կողմից Գրիգոր Տղա կաթողիկոսին ուղղված մի թղթով⁷³:

1169 թվականին Գոշը Կիլիկիայում գրել է Խոսրով Գանձակեցու վկայաբանությունը՝ «Վկայութիւն սրբոյն Խոսրովու մեծ եւ փառաւորեալ, որ կոյի նոր նահատակ, որ վկայեաց յաշխարհն Աղուանից

ցանցաւ և դժուար է բուսնում, քարձ: Գոշը քոսայ էր, ուստի և ստացել է Գոշ մականունը»: **Մ. Զամշեանց**, Հայոց պատմութիւն, հ. 4, Երևան, 1984, էջ 96: **Ստ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1944, էջ 584:

⁷² Գրիգ Մեծ Մահացոց կոչեցեալ, Պոլիս, 1807, էջ 336ա-336ը:

⁷³ «Սուրբ և աստուածունկալ գրուխ մեր և պասկ պարծանաց Հայաստանեաց Գրիգոր կաթողիկոս, ամենանուաստ աղօթող աշակերտրս լուսաւորչական աթոռոյդ, Բասկի Եպիսկոպոս, որ յարեւես հիւսիսոյ, վարդապետ Գրիգոր ի Սանահին, եւ հայր Հովհաննես, վարդապետք մայրաքաղաքի Հաղպատայ՝ Իզնատիոս, Պետրոս, Վարդան եւ Դաւիթ, Խաչատոր վարդապետ Հաղպատական գրուխն, Միաժամ վարդապետ Խորակերտոյ, եւ միւս Միաժամ վարդապետ Գետիկայ, եւ այլք աշակերտեալը ամեներեւան սրբոց կտակարանաց Աստուծոյ, Երկիրպազանեմք որպէս ի մօտոյ սուրբ պարողոյդ եւ վերակացնելունդ, եւ աղօթս ձիզս առնեմք վասն Երկար կենաց եւ խաղաղութեան ձերոյ»: Ընդհանրական թուղթը սրբոյն ներսիսի Շնորհալույն, յԵրուսաղէմ, 1871, էջ 307-308:

ի մայրաքաղաքն, որ կոչի Գանձակ» վերնագրով⁷⁴, նույն թվականին՝ Խոսրով Գանձակեցուն նվիրված ներքողյանը «Մխիթար Վարդապետի մականուն կոչեցեալ Գոշ Ներքողեան ասացեալ ի նոր վկայն կոչեցեալն Խոսրով» վերնագրով⁷⁵:

Կիլիկիայից հայրենիք վերադառնալու ճանապարհին Մխիթար Վարդապետը լինում է Կարինում, որտեղ ծանոթանում է Կայենի ու Մահկանաբերդի իշխանաց իշխան և Թիֆլիսի ամիրա Քուրդ Արծրունու հետ, որը, վրաց Գեորգի թագավորից հայածված, փախել և ապաստանել էր Կարինում⁷⁶: Նրանք բարեկամանում են, և այդ բարեկամությունը տևում է մինչև նրանց լյանքի վերջը: Կարինում Մխիթարը բաց է անում իր դպրոցը, կարճ ժամանակ հետո այն փոխադրում է Գանձակ: Սկսվում է Մխիթարի մանկավարժական, գիտական, քարոզչական գործունեությունը, որը տևում է մինչև խոր ծերություն:

Զաղաքական ներքին պայմանները, սակայն, բարենպաստ չեն Մխիթարի համար, որովհետև լարվում են հարաբերությունները նրա և Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի միջև: Կաթողիկոսի

⁷⁴ **Մխիթար Գոշ**, Մատենագիրք Հայոց, հ. Ի, գիրք Բ, առաջարանը՝ Յ. Մանդեանի և Հր. Աճառեանի, Երևան, 2014, էջ 574-582:

⁷⁵ Նոյն տեղում, էջ 583-587:

⁷⁶ Ըստ Մխիթար Գոչի «Ժամանակագրութեան» Քուրդ իշխանը և նրա եղբայրներ Վասակն ու Սարգիսը, որոնք Վրաց Դավիթ V արքայի համախոհներն էին, 1156 թ. Գեորգի Գ-ի օահ բարձրանալուց հետո ապստամբում և հաստատվում են Կարինում, որտեղ նրանց ընդունում է Սպահան ամիրան: Որքան ժամանակ է մնացել Քուրդ իշխանը Կարինում, հայտնի չէ, 1177 թ. նա դարձյալ իշխում է իրեւ Թիֆլիսի ամիրա: Քուրդ իշխանը հիշվում է նաև Հաղարծինի 1184 թվականի շինարարական արձանագրության մեջ՝ իրեւ Գեորգի Գ թագավորի «Անձամեծ իշխաններից» մեկը: Գեորգի Գ թագավորի դեմ Օրբեյանների ապստամբության պարտությունից հետո ենթադրվում է, որ նա կրկին ապաստանում է Կարինում: Եվ միայն արքայի մահից հետո, Սարգիս Զարարյանի միջնորդությամբ, մամար թագուհին 1185 թ. վերականգնում է նրա իրավունքները: **Պ. Ալիշան**, Հայապատում, էջ 389-390, **Հ. Մարգարյան**, Միջնորդպական պայքարը Գեորգի III-ի ժամանակ և Քուրդ ամիրապետը, «Արարե՛ հասարակական գիտությունների», 1975, թ. 11, էջ 48-60, Դիվան հայ վիմագրության, պրակ VI, Էջանի շրջան, կազմեցին՝ **Ս. Ավագյան**, **Հ. Զանփոլադյան**, Երևան, 1977, էջ 37:

սաղրանքներից հալածական՝ Մխիթարը հանգրվանում է Խաչենում Հաթերի գահերեց իշխան Վախթանգի ապարանքում, որտեղ ապրում է մի քանի տարի, որի մասին գրում է Կիրակոս Գանձակեցին⁷⁷: Այդ մասին հաղորդում է նաև Գոշն ինքը 1184 թվականին Դասն անապատում գրված Դատաստանագրքի հիշատակարանում⁷⁸: Իր և կաթողիկոսի լարված հարաբերություններին Մխիթարն անդրադառնում է նաև Երևմիայի մեկնության հիշատակարանում, երբ շարադրում է երկի համառոտ գրելու պատճառները⁷⁹:

Դատաստանագրքի վերջում հիշատակարանին կից, Մխիթար Գոշը շարահարել է «Ժամանակագրությունը», որտեղ բերված են Աղվանից կաթողիկոսների ցանկը և Աղվանից աշխարհում XI-XII դարերում տեղի ունեցած պատմական նշանավոր դեպքերն ու իրադարձությունները՝ «Կաթողիկոսք եւ դեաքը Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու» վերնագրով⁸⁰: Գոշի «Ժամանակագրությունը» մեզ է հասել ոչ ամբողջական տեսքով, քանի որ վերջին հատվածները չեն պահպանվել: Այն հասնում է մինչև 1161 թվականը: Գոշը հիշատակարանում գրում է, որ Աղվանից աշխարհի պատմությունը շարադ-

⁷⁷ «Եւ ապա նեղեալ ի տաճկաց՝ ի սաղրելոյ կաթողիկոսին Աղուանից Ստեփանոսի, և եկեալ նորա յաշխարհն Խաչենոյ առ Վախթանկ, իշխանն Հաթերքոյ, և առ Եղբարս նորա, որը բազում պատուվ պատուեցին զնա, և անդ դադարեապ ամս ինչ»: **Կիրակոս Գանձակեցի**, էջ 209:

⁷⁸ «...ի թուականութեան Հայոց ՈԼԳ (1184) ... ի կողմանս Խաչենոյ՝ ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ՝ որդույ Վախտանգայ կրաւանալուցեցելոյ, եւ որդույ նորա Վախտանգայ ի դդեկին, որ անուանեալ կոչի Հաթերք»: **Մխիթար Գոշ**, Գիրք Դատաստանի, Մատենագիրք Հայոց, հ. ԺԹ, գիրք Ա, Ա. Խմբագրութիւն, աշխատահիրությամբ՝ **Խ.** Թորոսյանի, էջ 134, Բ. խմբագրութիւն, աշխատահիրությամբ՝ **Վ.** Քաստամեանցի, էջ 425, առաջարան՝ **Վ.** Քողոյեանի, Երևան, 2014: Տե՛ս նաև Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, իրաւաբանական հետազոտութիւնը հանդերձ ծանօթութեամբ՝ **Վ. Ճ. Վոր. Քաստամեանցի**, Վաղարշապատ, 1880, Գիրք Դատաստանի, աշխատահիրությամբ՝ **Խ.** Թորոսյանի, Երևան, 1975:

⁷⁹ **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 408: **Գ. Յովսէկեան**, Ցիշատակարան ձեռագրաց, հ. Ա, Անթիիխա, 1951, էջ 522: **Ա. Մաթևոսյան**, Հայերեն ձեռագրեակի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, Երևան, 1988, էջ 253:

⁸⁰ **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 338-353: **Մխիթար Գոշ**, Մատենագիրք Հայոց, հ. Ի, գիրք Բ, էջ 605-612:

րել է Մովսես Դասիուրանցին⁸¹: Նրան հետո ոչ չի շարունակել, ուստի «Ժամանակագրությունը» կցում է Դատաստանագրքին որպես Դասիուրանցու Պատմության շարունակություն, միաժամանակ հորդորում է հետագա գրողներին, որպեսզի իրենք էլ շարունակեն և լրացնեն այդ պատմությունը⁸²: Միսիթար Գոշը Աղվանից բովանդակ պատմության հետինակ է համարում Մովսես Դասիուրանցուն: Մինչդեռ հայտնի է, որ «Աղվանից պատմությունը» VII դարում շարադրել է Մովսես Կաղանկատվացին, Մովսես Դասիուրանցին X դարում շարունակել է այն, իսկ XII դարում Միսիթար Գոշը մի հատված է ավելացրել:

Գետրգի Գ թագավորի մահից հետո (1184 թ.) Թամար թագուհին հետ է կանչում Քուրդ իշխանին՝ վերադարձնելով նրան հայրենի տիրույթները: Միսիթար Գոշը Հաթերքում էր, երբ լսում է Քուրդ Արձունու՝ տարագրությունից հայրենիք վերադառնալու լուրը և զայիս է նրա մոտ «վասն առաջին սիրոյն և միաբանությանն, որ առ միմեանս»: Մահկանաբերդցիները ազդեցիկ դիրք ունեին վրաց արքունիքում: Նրանք նաև Թիֆլիսի ամիրաներն էին և տիրույթներ ունեին Կարինում: Սակայն Մահկանաբերդցիների բուն տիրույթները Աղստև գետի հովտում էին՝ Մահկանաբերդ և Կայենո գավառում: Պատահական չէ, որ Միսիթարը բնակություն է հաստատում XII դարում արդեն ճանաչված Գետիկ վանրում, որը գտնվում էր Աղստև գետի աջ ափին՝ «ի գաւառին Կայենոյ, ի վերայ գետոյն մեծազունի, զոր անուանեն Աղստեւյ գետ»⁸³: Գետիկի առաջնորդն էր Միսիթարի աշակերտ Սարկավագ Վարդապետը, որը սիրով ընդու-

⁸¹ **Մովսես Կաղանկատուացի,** էջ 26-437:

⁸² «Համարեցաք եւ զայս եւս հարկաւոր լինի, զի զշար կարգի հայրապետացն դիցուք զԱղուանից, զի եւ յայնովիկ յամենեսեանն զսոսա, որ այժմ ունին, յարմարեսցուք: Մի ըստ այդմ գրեացուք պատճառի, երկրորդ՝ զի թէ որ յաւժարեսցի գրել պատմութիւն զկնի գրեցելոյն պատմութեանն Մովսէսի Դասիուրանեցւոյն, որ գրովանդակ պատմէ զսան Աղուանից, դիւրին լիցի յայսմանէ զշար հայրապետացն առնու, զի ոչ զամենեցու՞ անուն ի նորայն զոցի՝ պատմութեան, բայց զայնոցիկ, գրոց գրեաց: Զի յայն ժամանակէ մինչեւ ցայժմ ոչ որ գրեաց եւ թէ պատահի որ յոյժ հարկաւոր է»: **Միսիթար Գոշ,** Մատենագիրը Հայոց, հ. Ի, գիրք Բ, էջ 605:

⁸³ **Կիրակոս Գանձակեցի,** էջ 209:

նում է Գոշին: Այստեղ Գոշը 1187 թվականին սկսում և մեկ տարի հետո ավարտում է Երեմիայի մեկնությունը⁸⁴: Նախկինում այս երկի մեկնությունը արվել էր հատվածաբար⁸⁵: Գոշն առաջինն է, որ ամրողությամբ է մեկնում Երեմիայի մարգարեությունը, Բարուքի թուրքը, Երեմիայի ողբը և Աղոթքը⁸⁶:

Մեկնության ինքնազիրը չի պահպանվել, մեզ է հասել ընդորինակությամբ: Գրչությունից ուղիղ տասը տարի հետո՝ 1198 թվականին, Հաղբատում հենց ինքնազիրից Դավիթ գրին օրինակում է այն: Վերջինս, որին Գ. Հովսեփյանը նույնացնում է Դավիթ Զորայրեցու հետ⁸⁷, մասամբ ինքն է օրինակում, մասամբ ուրիշներին է օրինակել տայիս՝ կատարելով նաև որոշակի ուղղումներ: Դավիթը նույնությամբ պահպանում է զաղափար հիշատակարանը, որտեղից ել շարունակում է իրենը⁸⁸:

⁸⁴«Սկիզբն արարար այսմ իրողութեան ի թուականիս Հայոց ՈԼ.Զ (1187) եւ կատարեցաք զկնի միոյ ամի (1188)... Եղեւ այս ի հայրապետութեանն տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի եւ յեպիսկոպոսութեանն տեառն Բարսղի՝ հոչակաւոր ուխտիս Հաղբատոյ: Բայց գրեցաւ յանապատիս Գետկայ ընդ հովանեաւ Սրբոյն Գողոգոթայի եւ Լուսաւորչին Գրիգորի»: **Գ. Յովելիեան**, Յիշատակարանը ձեռագրաց, էջ 521-522, **Ա. Մաթեևսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 253:

⁸⁵ Երեմիայի երկերի առաջին մեկնիներից էին Օրոգինեսը (185-254), Եփրեմ Աստրին (303-373), Հովհան Օսկերեանը (347-407), Հերոնիմոս Երանելին (345-420), Կյուրեղ Ալեքսանդրացին (375-444), Թեղողորիտես Կեսարացին (393-460):

⁸⁶ Մեկնութիւն համառաւտ մարգարեութեանն Երեմիայի եւ նախադրութիւնն նորին ի Միսիթարայ վարդապետ: Գոշ կոչեցելոյ: Տե՛ս Մատենագիրը Հայոց, հ. Ի, գիրք Բ, առաջարանը՝ **Ա. Քողոյանի**, էջ 108-431:

⁸⁷ **Գ. Յովելիեան**, Յիշատակարանը ձեռագրաց, էջ 524:

⁸⁸ «Այս յիշատակարան Միսիթար վարդապետին է՝ Գոշին, յարմարողի զՄԵկնութիւն սրբոյ կտակիս, զոր եւ ես սիրող, եւ համակամ, եւ յորդորիչ նորին Դավիթ, յիմունս եղի աւրինակի վասն յաւերժութեան նորայն անուան յամենայն աւրինակս, որոց ախորժեկի երեսի գծել զա: Հաւանութեամբ եւ սիրով ընկալայ եւ շնորհակալ եմ քում նազեկի եւ երկիւղած պարեշտութեան, ով պատուական ինձ եւ սիրող ճշմարտութեան, զի թեւ սուր տարացուցիւ է յարդարեալ, բաւական է իմաստնոց յանմունս բանից եւ եւ յեղաշրջմանց ի նշանակս խորհրդականս եւ զի անպարապ եղեալ իմոյս անձին ի ժամանել եւ դրոշմել զա, այլ եւ այլ ոմն տիմարաց եսու գծել եւ ապաշաւ ունիմ, թեւ պետ եւ ուղեցի յետոյ» (ՄՄ ձեռ. 2606, թ. 256ար): Մայր ցուցակ հայերեն

Գոշի՝ ավելի ուշ գրված մեկ այլ՝ «Փիլոնի Յաղագս նախախնամութեան Բան առաջին առ Աղեքասանդրոս, Գոշին ասացեալ պատճառ» մեկնությունը պահպանվել է Գրիգոր Աբասորդու կազմած «Գիրք պատճառաց» ժողովածուում⁸⁹:

1188 թվականին սաստիկ երկրաշարժից հիմնովին ավերվում է Գետիկի վանքը, և անհնար է լինում վերականգնել այն: Միաբանության համար էլ ատեղծվել էր ծանր իրավիճակ. նախ՝ երկրաշարժը մեծ ավերածություններ էր պատճառել, ապա՝ մերձակա գյուղը, որ բնակչությունը էր ուն Սարգիս իշխանի կողմից, առաջ էր բերել միաբանների զայրույթը, որի պատճառով նրանք ըմբոստացել ու ցանկանում էին հեռանալ Գետիկից: Ուստի՝ Մշիթար Գոշը հորդորում է միաբաններին համախմբվելու, իսկ ինքը խնդրանքով դիմում է Քուրդ իշխանի քրոջորդի Խվանե Զաքարյանին՝ հարմար մի վայր տրամադրելու նոր եկեղեցու շինության համար:

Ավերված Հին Գետիկի փոխարեն անտառներով շրջապատված «բարեվայելու ու գոգավոր» Տանձուտ կոչված ձորում, Զաքարյան իշխանների հովանավորությամբ և միաբանների օգնությամբ, 1188 թվականին կառուցվում է Նոր Գետիկի Ս. Գրիգոր Լուսավորիչ փայտաշեն եկեղեցին: Գոշն այստեղ է տեղափոխում միաբանությունը: Եկեղեցու օծման հանդեսին ներկա էր նաև Հաղարծինի վանահայր Խաչատոր Տարոնացին⁹⁰: Կարճ ժամանակ անց Մշիթարը ձեռնարկում է Հովհաննես Կարապետի անունով երկրորդ փայտաշեն եկեղեցու կառուցումը, իսկ 1191-1196 թվականներին

ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը, խմբագրութեամբ՝ **գ. Տեր-Վարդանեանի**, Երևան, 2013, էջ 679-684:

⁸⁹ ՍՍ ձեռ. 1879, թ. 158ար: Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը, խմբագրութեամբ՝ **գ. Տեր-Վարդանեանի**, Երևան, 2012, էջ 337: Մեկնությունն առաջին անգամ հրատարակել է Լ. Մելիքսեթ-Բեկը ՍՍ 1879 ձեռագրի հիման վրա: **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Մշիթար Գոշի անտիպ երկերից, «Էջմիածին», 1959, թ. 12, էջ 41-45: Տե՛ս նաև Մատենագիրը Հայոց, հ. Ի, գիրք Բ, առաջարանը՝ **Օ. Վարդագարեանի**, էջ 435-450: Այս մեկնության գրչության թվականը հայտնի չէ: Ենթադրվում է, որ այն գրվել է XIII դարի սկզբներին և Աբասորդու «Պատճառաց գրքի» մեջ է մտել մինչև 1213 թվականը, այսինքն՝ մինչև Գոշի մահը:

⁹⁰ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 210-212:

Հաթերքի տեր Վախթանգ իշխանի ու նրա եղբայրների և Քուրդ իշխանի որդիների՝ Դավիթի ու Սաղունի հովանավորությամբ Գոշը կառուցել է տալիս Նոր Գետիկի գլխավոր՝ Ս. Աստվածածին եկեղեցին. «Հօչակաւոր վանքն, որ Գետիկն կոչի, ի զաւարին Կայենոյ, զոր շինեաց սուրբ վարդապետն Միխար, զոր Գոշն կոչէին, շինեալ հրաշազան եկեղեցի զմբեթարդ երկնանման, և կնքեալ զեկեղեցին, և օծեալ յանուն Սուրբ Աստուածածնին, տաճար փառաց Տեառն՝ բնակարան բանաւոր հոտին Քրիստոսի»⁹¹: Այս փաստը հաստատվում է նաև Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսարևելյան ճակատին պահպանված արձանագրությամբ, որից գրեթե բառացի օգտվել է Կիրակոս Գանձակեցին⁹²: Եկեղեցու օծման հանդիսության արիթով վանքն ստանում է բազմաթիվ նվիրատվություններ՝ հողատարածքներ, այգիներ, թանկարժեք սպասք ու իրեր և ձեռագիր մատյաններ: Զարարյան եղբայրները վանքին նվիրում են հսկայական հողատարածքներ, Աքասաձորում մի հանք և Բջնիի գավառում Չորաձորը:

Դավիթ իշխանի անունից մեզ է հասել բոլորգիր թղթյա մի Ավետարան, որի գրչի ու գրչության վայրի անունները չեն պահպանվել: Ձեռագիրն այժմ պահպում է Նոր Չուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանում՝ քայլայված ու բնագիրը թերի, վերջից պակասում են թերթեր, չկա գլխավոր հիշատակարանը, 185ա թերթի հիշատակագրության մեջ պահպանվել է պատվիրատուի՝ Քուրդ իշխանի որդի Դավիթի անունը: Մատյանն առանձնապես ճոխ հարդարանք չունի. մեկ կիսախորան, ճակատազարդեր, լուսանցազարդեր և Ավետարանների սկզբներում մի քանի զարդագրեր (թիվ 171, Ս. Ամենափրկիչ վանքի ձեռ. 710): Ձեռագրի գրչության ժամանակը մոտավոր կարող ենք որոշել: Ենթադրելի է, որ այն գրվել է ոչ շուտ, քան XII դարի 90-ական թվականների վերջերին, երբ Դավիթը եղբոր՝ Սաղունի ու քրոջ՝ Արգուխաթուն իշխանութեալ հետ օժանդա-

⁹¹ Նույն տեղում, էջ 164, 216:

⁹² Նույն տեղում, էջ 212: Ըստ այդ արձանագրության՝ եկեղեցու կառուցումն սկսվել է Սալահ աղ-Դինի կողմից Երուսաղեմի գրավումից չորս տարի հետո, այսինքն՝ 1191 թվականին, ավարտվել է հինգ տարում հունաց խելաթյուր զատկին և օծվել է 1197 թվականին (Դիվան, պրակ VI, էջ 65):

կում էր Մխիթար Գոշին Նոր Գետիկի շինարարության հարցերում, և ոչ ուշ, քան XIII դարի առաջին տասնամյակին, այսինքն՝ մինչև Դավիթ իշխանի մահը: Զի բացավում, որ Եկեղեցու օծման առիթով է իշխանը պատվիրել և ստացել Ավետարանն ու նվիրել Նոր Գետիկավանքին՝ հիշատակարանում խնդրելով հիշել իրեն. «Չստացաւ սուրբ Աւետարանիս զԴաւիթ զաստուածասէր իշխան՝ որդի պարոն Քրդին, յիշեսչիք ի Քրիստոս»⁹³:

Արգուխարուն իշխանուին էլ իր դուստրերի հետ սուրբ խորանի համար այծի աղվամազից վարագույր է հյուսում: Իշխանուին ձեռագործ վարագույրները, որոնք հիացմունք էին պատճառում իրենց նրբազեղությամբ, զարդարել են նաև Հաղրատի, Դադիվանքի ու Մալքարավանքի խորանները⁹⁴: Եկեղեցու գավիթը 1197-1203 թվականներին կառուցում է Մխիթար Հյուսնը և գավիթի սյուները միացնող կամարի վրա թողնում ընդարձակ արձանագրություն. «Ես՝ Մխիթար Հիւսն՝ միաբան եւ աշխատող այս Եկեղեցոյ ի մանկութենէ մինչ ի ծերութիւն շինեցի զոռունս աղաւթից իմով որդիացելովս Յոհաննիսի»⁹⁵: Իսկ 1208 թվականին Սերորի և Հովհաննի միջոցներով կառուցվում են Ս. Առաքելոց և Ս. Հոհիկսիմեանց մատուռները⁹⁶:

Այսպիսով, ուսումնական կենտրոն ունենալու համար ստեղծված էին անհրաժեշտ պայմանները: Գոշին մտահոգում էին բոլոր կարգի՝ տնտեսական, ուսումնական և գիտական խնդիրները: Սրանց զուգահեռ նա քրաղվում էր նաև քարոզությամբ ու դափանարանական խնդիրներով: Զափազանց մեծ էր Գոշի դերն ու հեղինակությունը Հյուսիսային Հայաստանի Եկեղեցական կյանքում: Նա արևելյան վարդապետների առաջնորդներից էր, մասնակցել է Լոռեի (1205 թ.) և Անիի (1207 թ.) Եկեղեցական ժողովներին, որոնք Զաքարե ամիրսպասալարի նախաձեռնությամբ հրավիրվել էին, որ-

⁹³ Յուցակ ձեռագրաց Նոր-Զուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, հ. Բ, կազմեց՝ **Լ. Մինասեան**, Վիեննա, 1972, Էջ 183, **Ա. Մաթևոսյան**, Հայերն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ պարկ, Էջ 334:

⁹⁴ **Կիրակոս Գանձակեցի**, Էջ 215-216:

⁹⁵ Դիվան, պրակ VI, Էջ 93:

⁹⁶ Նույն տեղում, Էջ 101:

պեսզի Արևելյան Հայաստանում հաստատեն Սսի Եկեղեցական ժողովի կանոնները շարժական սեղանի վրա պատարագ մատուցելու թույլավույթան մասին⁹⁷: Գանձակեցին հականե-հանվանե թվարկում է ժողովի մասնակիցների անունները, այս վարդապետներին անվանում է երևելի և առաջին տեղում հիշում է Մխիթար Գոշին⁹⁸: Նա Զաքարէ ամիրապասալարի խոստովանահայրն ու խորիրդատուն էր: Վերջինիս ակնածանքն այնքան մեծ էր Գոշի նկատմամբ, որ կարևոր որոշումներում միշտ հաշվի էր առնում նրա կարծիքը: Գոշի բոլոր ձեռնարկումները հովանավորում էին Զաքարյան եղբայրները, հատկապես Խվանեն, իսկ հոր մահից հետո՝ նրա որդի Ավագը:

Գոշը պայքարում էր հայ Եկեղեցուն ապահնացող նորամուծությունների դեմ և պահպանելով հայոց Եկեղեցու ավանդույթները՝ Եկեղեցիների միջև դավանաբանական հանդուրժողականություն էր քարոզում: Գոշը Զաքարէ և Խվանե իշխանների խնդրանքով գրում է «Թուլյթ առ վրացիսն՝ յաղագ ուղղափառութեան հաւատոյ» երկը⁹⁹: Այն վրացի մատենագիր Արսեն Վաչեսձեի «Դոգմատիկոնի» «Երեսուն գլուխ հայոց հերձուածի» գլխում հայերին ներկայացված մեղադրանքների պատասխան է, որով հերքվում են այդ մեղադրանքները:

Նոր Գետիկի վարդապետարանը, որ աղբյուրներում նաև վարժարան, վարժապետարան, համալսարան կամ ճեմարան էր կոչվում, շատ կարճ ժամանակում ձեռք է բերում մեծ անուն ու համ-

⁹⁷ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 166-178:

⁹⁸ «Եւ էին ի ժամանակին յայնմիկ վարդապետք երևելիք՝ Մխիթար, որ Գոշն կոչիւր, շինող վանացն Գետիկայ, այր իմաստուն եւ հեզ և վարդապետական ուսմամբ հռչակեալ, Իգնատիոս, Վարդան, Ղաւթիք Քորայրեցի ի Հայրատայ, Յովհաննես՝ հայր Սանահին, որ էր զինի մահուան վարդապետին Գրիգորյ, զոր Տուտայ որդին կոչէին»: Ցանկը լրացնում են Մոնոնիկ կոչված Գրիգորը՝ Կեչառիսց, Թեղենիքի Տուրքիկը, Հավուց թառի Եղիան, Գրիգոր Դվինեցին, Սարգիս Սևանցին, Հաղբատի Գրիգորես Եպիսկոպոսը, Անիի աթօռակալ Սարգիսը, Բջնիի և Դվինի Վրթանեսը, Կարսի Հովհաննեսը և ուրշներ (Կիրակոս Գանձակեցի, էջ 170):

⁹⁹ Մատենագիրը Հայոց, հ. Ի, գիրք Բ, առաջարանը՝ **Պ. Մուրայյանի**, էջ 452-508: **Պ. Մուրայյան**, ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները եւ Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուլյթը. աղբիւրագիտական քննություն եւ բնագրեր, Ս. Էջմիածին, 2011:

բավ և դառնում Հյուսիսային Հայաստանի հոգևոր, կրթական և մշակութային առաջադիմ ուսումնական կենտրոններից մեկը: Գոյին բարձր են գնահատում նրա սաները՝ կոչելով «եռամեծ և երջանիկն վարդապետ»: «Երևելի վարդապետն Միհրար, շինող փանացն Գետկա, այր իմաստուն և հեզ, վարդապետական ուսմամբ հոչակեալ», - այսպես է բնութագրում Գոյին Կիրակոս Գանձակեցին¹⁰⁰: «Սուրբ սքանչելի վարդապետն Միհրար՝ մականուն Գոյ Գանձակեցի», - գրում է Վարդան Արևելցին¹⁰¹:

Գոյը մեծացնում է Նոր Գետիկի միաբանութունը, կարգավորում ու բարձրացնում վարդապետարանի հեղինակությունը, ստեղծում է բոլոր բարենապատ պայմանները, մեծ ուշադրություն է դարձնում ուսուցման աշխատանքներին: Նոր Գետիկի վարդապետարանում ուսուցանվել են հայոց լեզու, հունարեն, լատիներեն, թերականություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, երաժշտություն, գրչության արվեստ և մանրանկարչություն:

Գոյի վարդապետարանն ուներ կրթական որոշակի ծրագիր և հակում աշխարհիկ գիտությունների նկատմամբ: Դա պայմանավորված էր այն բանով, որ կյանքում և գրականության մեջ ձևավորվում էր նոր աշխարհայացք: Տեղի ունեցող աշխարհականացման գործընթացը մուտք էր գործում գիտության և մշակույթի բոլոր բնագավառները: Հյուսիսային Հայաստանում այդ շարժումը սկիզբ էր դնում գրական-գիտական-գրչական նոր դպրոցի, որի համար հիմք էին ծառայում Անիի, Հաղրատի, Սանահինի և Գանձակի նշանավոր կենտրոնները: Այդ շարժումը սկզբնավորվեց Վարդան Անեցու փիլիսոփայական հայացքներում¹⁰², Հովհաննես Իմաստասերի «Բան իմաստութեան...» պոեմում, որով նա հեղաշրջում կատարեց գրականության մեջ¹⁰³, Հաղրատում գրված և Անիում նկարազարդված Ավետարանի («Հաղրատի Ավետարան») «Մուտք Երուսաղեան» տեսարանում աշխարհիկ տրամադրությունների արտահայտ-

¹⁰⁰ Կիրակոս Գանձակեցի, էջ 171:

¹⁰¹ Վարդան վարդապետ, էջ 140:

¹⁰² Ա. Մնացականյան, Բանաստեղծ Վարդան Անեցին և նրա ներքողը, «Բանքեր Մատենադարանի», թ. 10, 1972, էջ 261-291:

¹⁰³ Ա. Աբեղյան, Հովհաննես Իմաստասեր, տե՛ս Երկեր, հ. Դ, էջ 72-82:

մամբ¹⁰⁴: Գրական այս շարժման մեջ բարձրագույն տեղը պատկանում է Մխիթար Գոշին, իսկ նրա «Գիրք Դատաստանին» և 190 առակները բոլորովին նոր երևույթ էին մեր գրականության պատմության մեջ:

Դատաստանագրքում, որը հայկական և արևմտյան ավանդների խաչաձևումն է, առաջ են քաշվում ազգի և պետականության սկզբունքները, պետականության գաղափարը հաստատող օրենքներ, պաշտպանվում են բոլոր խավերի իրավունքները: Վեր բարձրանալով կրոնական շրջանակներից՝ Գոշն իրեն լայնախոհ մտածող, Դատաստանագրքում առաջ բերած խնդիրները լուծում է նաև առակների միջոցով, որոնք ունեն ուսուցողական-դաստիարակչական նպատակ ու ճանաչողական մեծ արժեք և ցայսօր արդիական են¹⁰⁵: Գոշի առակների ժողովածուն միջնադարում օգտագործել են որպես դասագիրք: Առակների նպատակը ոչ միայն ուսուցանելը, դաստիարակելն ու խրատելն է եղել, այլև զարգացրել է աշակերտների տրամաբանական և մեկնողական հմտությունները: Նման մոտեցում ունեցել են նաև Ներսես Շնորհալին և Գրիգոր Մագիստրոսը: Վերջինիս դպրոցի ուսումնական ծրագրերում դասավանդվել է նաև առասպեկտավարժություն առարկան, աշակերտները մեկնել են առակներ, որը մտավարժանք է եղել մեկնարաններ պատրաստելու համար¹⁰⁶: Իսկ Ներսես Շնորհալին, ինչպես վկայում է Կիրակոս

¹⁰⁴ **Կ. Մաթեոսյան, Հաղբատի Ավետարանը, Երևան, 2012:**

¹⁰⁵ Առակը **Մխիթարայ Գոշի**, տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. Ի, գիրք Բ, աշխատասիրութեանմ՝ Է. Պիտագեանի, առաջարանը՝ **Օ. Վարդագարեանի**, Երևան, 2014, էջ 42-106: Առակը **Մխիթարայ Գոշի**, աշխատասիրությամբ՝ **Վ. Եղիազարյանի** և մասնակի աշխատակցությամբ՝ **Թ. Ամիրխանյանի**, Երևան, 2019:

¹⁰⁶ Գրիգոր Մագիստրոսն իր թղթերից մեկում այդ մասին հետևյան է գրում. «Նախուստ քան զայտսիկ կրթեցերովք նեկուու վերծանութեամբ գէին եւ զնոր կտակարանս, եւ առասպեկտավարժութիւնս ի բազում եւ զանազան տեղիս եղեալ, զոր քննութեամբ արտայայտել հաւանիմք, եւ ի խոյց ելանել շերմագոյն եւ քաջողական խոհականութեամբ եւ տրամաբանական հատուածոց հոմերական եւ պղատոնական նախասականին եւ այլոց բոլոր արիեստից եւ մատենից»: Գրիգոր Մագիստրոսի մատենագրութիւնը, բնագիրը, առաջարանը և ծանոթագրությունները՝ **Գ. Մուրադեանի:** Տե՛ս Մատենագիրք Հայոց, ԺԶ, ԺԱ դար, Երևան, 2012, գլ. ԽԵ:

Գանձակեցին, զրել է խորհմաստ առակներ և հանելուկներ, որպեսզի սուտ գրույցների փոխարեն հավուր պատշաճի դրանք գործածվեն. «Արար և առակս խորհրդաբարս ի գրոց, և հանելուկս, զի փոխանակ առասպեկեաց՝ զայն ասասցեն ի զինարբունս և ի հարսանիս»¹⁰⁷:

Միիթար Գոշի՝ որպես գիտնականի և մանկավարժի համբավն ու փառքը տարածվում է շատ արագ, և կրթություն ստանալու նպատակով նրա դպրոց են զայիս երկրի չորս կողմերից¹⁰⁸: Նրանց մեջ հատկապես իրենց իմաստությամբ առանձնանում էին վարդապետական խոսքով բոլորին գերազանցող Վանականը, որ հետագայում դարձավ Խորանաշատի վարդապետարանի հիմնադիրը, թորոս Մելիստինեցին՝ հեզ և խոնարհ, առաքինի և աղքատաւեր մի մարդ, որ իր մահկանացուն կնքեց խոր ծերության հասակում և թաղված է Հաղբատում եայիսկոպոսների ու վարդապետների գերեզմանցում¹⁰⁹: Գոշի դպրոցի ավանդներով սնվեցին պատմիչ, մեկնիչ, եկեղեցական-քաղաքական գործիչ Վարդան Արևելցին, որը հետագայում դպրոցներ բացեց Կայենոն զավարի Ս. Անդրեասի վանքում, Թեղենյաց, Աղջոց, Հարիճի վանքերում, Սաղմոսավանքում և Խոր վիրապում, զրիշ Մարտիրոսն ու պատմիչ Կիրակոս Գանձակեցին, որոնք տարբեր ժամանակներում եղան Նոր Գետիկի քարունապետներ:

Բեղմնավոր եղան Գոշի բարունապետության տարիները Նոր Գետիկում: Նա միաժամանակ հետևեց ձեռագիր մատյաններ օրինակելու աշխատանքներին, ինքն էլ անձամբ գրեց շատ գործեր. «Եւ եթող նա յիշատակ եւ արձան գերեզմանի զիրս իմաստախոնի յօգուտ ուսումնասիրաց՝ Համառօտ մարզարենութեանն Երեմիայի՛ գեղեցկադիր կարգօր, եւ սուդ ինչ կանոնս վասն սպասաւորելոյ մարմնոյ եւ արեան Տեառն, թէ որպես պատշաճ իցէ, կամ որպիսի կար-

¹⁰⁷ Կիրակոս Գանձակեցի, էջ 147:

¹⁰⁸ «Քազումք էին, որ աշակերտեցան ի նմանէ վարդապետական բանին, քանզի համբաւ իմաստութեան նորա հրաշկեցաւ ընդ ամենայն տեղիս: Եւ զային առ նա յամենայն կողմանց, քանզի ըստ անուանն իւրոյ միսիթարեր զամենեսեան»: Նույն տեղում, էջ 217:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 218:

զօր, եւ զիրք մի՛ Ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Աղամայ առ որդիս նորա, եւ ի դիմաց Եւայի առ դստերս նորա, եւ զիրք մի՛ Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց, ի խնդրոյ մեծ զորավարին Զաքարիի եւ եղրօր իւրոյ, եւ այլ թուլքս խրատականս»:¹¹⁰

Միհիթար Գոշը հասավ խոր ծերության և իր մահկանացուն կնքեց ու թաղվեց Նոր Գետիկում. «Եւ թաղեցաւ յիւրում ձեռակերտին ի Գետիկ»¹¹¹: Մահից առաջ նա կանչում է միաբանության անդամներին, որոնք իր կողքին եղան վանական լյանքի և՛ դժվար, և՛ լուսավոր օրերին, օրինում է նրանց, օրինում է նաև իր աշակերտներին և բարունապետությունը փոխանցում կրտսերագույն, բայց ողջամիտ և խոստումնայից աշակերտներից Մարտիրոսին, ապա կտակ գրում Խվանեին՝ վերջինիս հանձնելով ուխտը:

Մարտիրոսի մասին Կիրակոս Գանձակեցին գրում է, որ պաշտամունքի երգերում քաղցրաձայն էր, ընթերցանության մեջ՝ առատամիտ, գրչության մեջ՝ արագագիր¹¹²: Ցավոք, նրա ձեռամբ գրված ոչ մի ընդորինակություն մեզ չի հասել: Մարտիրոսի անվան հետ է կապվում Նոր Գետիկի վարդապետարանի երկրորդ ծաղկուն շրջանը: Նա ձեռնարկում է նաև վանական համալիրի հետագա շինարարական գործերը: Միհիթար Հյուսնի ձեռամբ կառուցել է տալիս հաստահեղյուս որմերով և փայտակերտ վերնահարկով ժամատունն ու գրասունը. «Ծինեաց եւ գրատուն մի գեղեցկաշեն յարկօր, արուեստանոր ունելով զհիւսն Միհիթար»¹¹³: Հետագայում 1291 թվականին, Գրիգոր և Զաքինս վարպետները գրատան վրա կառուցում են երկրորդ հարկը:

1231 թվականին Միհիթար Գոշի կառուցած փայտաշեն եկեղեցու տեղում Մարտիրոս և Գրիգոր եղբայրները կառուցում են քարաշեն Ս. Գրիգոր հնգախորան եկեղեցին, որի շինարարությունը Զալալեղինի արշավանքների պատճառով մնում է կիսատ, և ավարտվում է միայն 1241 թվականին Գրիգոր Կապալեցի իշխանի

¹¹⁰ Կիրակոս Գանձակեցի, էջ 221:

¹¹¹ Վարդան վարդապետ, էջ 140:

¹¹² Կիրակոս Գանձակեցի, էջ 219:

¹¹³ Նույն տեղում էջ 222:

հովանավորությամբ¹¹⁴: 1237-1241 թվականներին Արցախի կուսականներ Վախթանգի թռո և Սարգսի որդի Գրիգոր Տղա իշխանը, որ Իվանեի որդի Ավագի հեջուրն էր, կառուցում է Ս. Գրիգոր Լուսավորիչ Եռախորան Եկեղեցին և այդ մասին թողնում ընդարձակ արձանագրություն՝ Ավագ Զաքարյանից խնդրելով Նոր Գետիկում իր համար գերեզմանատեղի¹¹⁵:

1227 թվականին վախճանվել էր Իվանեն և թաղվել Պղնձահանքում: Գետիկի հովանավորությունը ստանձնել էր նրա որդի Ավագը: 1244 թվականի մի հիշատակարանից (պահպանվել է 1166 թվականին Հռոմկայում Կողմա գրչի ձեռամբ գրված Ավետարանում), տեղեկանում ենք, որ Ավագը Կեսարիայում մոնղոլական աճուրդներից փրկել ու բազմաթիվ ձեռագիր մատյաններ է թրել հայրենիք՝ հարստացնելով հայրենի երկրի մատենադարանները¹¹⁶: Ավագի հովանավորության և Մարտիրոսի բարունապետության տարիներին, հատկապես այն ժամանակ, երբ կառուցվում է գրատունը, մեծանում է նաև միաբանությունը, բազմանում են հոգևոր սպասավորները և ուսուցման ձգողո սաները: Մարտիրոսը վարդապետարանը դեկավարում է քսան տարի և ինքնակամ թողնում է այն:

Մարտիրոսից հետո բարունապետությունն անցնում է Միխար վարդապետին, հետո՝ Հռվասափին, ապա՝ Աբրահամին, որոնցից յուրաքանչյուրն առաջնորդում է միաբանությունը շատ կարճ ժամանակ: Այնուհետև Նոր Գետիկի առաջնորդ է դառնում Հռվասաննես Արմանեցին, որ այստեղ է զայսի Հաղարծինի վանքից: Նա 1255 թվականին Խաչատուր և Բարսեղ Եղբայրներին կառուցել է տախի Ս. Գևորգ Եկեղեցին¹¹⁷, իսկ 1260 թվականին Կիրակոս Գանձակեցու միջնորդությամբ գետիկցիներին ազատում է հարկերից¹¹⁸: Հռվ-

¹¹⁴ Դիվան, պրակ VI, էջ 97:

¹¹⁵ «Ես՝ Գրիգոր, հեջուր ամիրսպասալար Աւագին, որդի Սմբատա՝ որդոյ Մեծին Վախտանգա՝ կողմնապետաց աշխարհին Արցախա, առեալ աթաքալի Իւանեի, սնոյց զիս եւ իւր տանն եւ Աւագին առաջնորդ կացոյց, զի ոչ ունեի զաւակ, յուսով խնդրեցի զայս Եկեղեցի ինձ շիրմ հանգստեան»: Դիվան, պրակ VI, էջ 70: Կիրակոս Գանձակեցի, էջ 223:

¹¹⁶ ՍՍ ձեռ. 7347, թ. 342թ:

¹¹⁷ Կիրակոս Գանձակեցի, էջ 223, Դիվան, պրակ VI, էջ 101:

¹¹⁸ Նույն տեղում, Առաջարան ԻԳ, Դիվան, պրակ VI, էջ 82:

հաննես Արմանեցին 1256 թվականին ձեռնադրվում է Եպիսկոպոս և որոշ ժամանակ հետո փոխադրվում Հաղբատ: Նոր Գետիկավանքի հաջորդ բեղմնավոր շրջանը կապվում է Կիրակոս Գանձակեցու հետ:

Վանքի գրատունն ունեցել է հարուստ մատենադարան, որը հարստացվել է նաև տեղի գրիչների օրինակած մատյաններով: Ժամանակին մեծահամբավ այս կենտրոնից, սակայն, սակավաթիվ ձեռագրեր են մեզ հասել: Այստեղ է արարվել Միհրար Գոշի աշխատանքների մեծ մասը:

Իր կյանքի մեծ մասը Գետիկավանքում է անցկացրել Կիրակոս Գանձակեցին, որի մասին կենսագրական տեղեկություններ ստանում ենք հենց իր Պատմությունից: Գանձակեցին, երբ հակիրճ տեղեկություն է հաղորդում Հռվիաննես Սարկավագի, Թորակերի որդի Գրիգորի և Ալավկառդի Դավիթի մասին, ասում է, որ նրանք երեքն էլ Գանձակ աշխարհից են, որտեղից որ ինքն է. «Սոքա երեքանն էին յաշխարհին Գանձակայ, ուստի և ես»¹¹⁹:

Կիրակոսը ծնվել է 1203 թվականին Ուտիք նահանգի Գանձակի երկրում: Աղյուրներում կոչվում է Կիրակոս վարդապետ, Կիրակոս Գետիկցի, ավելի հաճախ՝ Կիրակոս Գանձակեցի, իսկ ինքն իրեն անվանում է Արևելցի: Կիրակոսը վաղ մանկությունից սովորում է Նոր Գետիկավանքում: Նոր Գետիկից գնում է Խորանաշատ և կրթությունը շարունակում Վանական վարդապետի դպրոցում, Վանականից էլ ստանում է վարդապետական գավազան: 1236 թվականին Վանականի հետ գերեվարվում է մոնղոլների կողմից, սակայն մոնղոլական բանակից փախչելով՝ կրկին հաստատվում է Նոր Գետիկավանքում, որտեղ գրադարձնում էր որոշակի դիրք ու պաշտոն: Կիրակոսի խնդրանքով «Երգ երգոցի» մեկնությունը գրած Վարդան Արևելցին երկի ներածականում նրան անվանում է «քարունեաց պետ»¹²⁰:

Գանձակեցին 1241 թվականին Նոր Գետիկում սկսում է շարադրել իր Պատմությունը՝ «Համառոտ պատմութիւն Ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչև յետին աւուրս թևացեալ, արարեալ Կիրա-

¹¹⁹ Նոյն տեղում, էջ 116:

¹²⁰ **Փ. Անթապյան,** Վարդան Արևելցի, հ. Ա, Երևան, 1987, էջ 139:

կոսի վարդապետի ի մեծահռչակ ուխտն Գետկայ» վերնագրով: Նրա ինքնազիրը չի պահպանվել: Գանձակեցին դեաքերի շարադրանքը վաղագույն ժամանակներից հասցնում է մինչև 1265 թվականը¹²¹: Նա գրել է նաև թղթեր՝ ուղղված Վանական վարդապետին ու Վարդան Արևելցուն, որոնք մեզ չեն հասել, իմբագրել է Հայսմավուրք ժողովածուներ՝ դրանք լրացնելով նոր տոների ընթերցվածներով: Կիրակոսը Հայսմավուրքի առաջին իմբագրությունը կատարել է 1253 թվականին, հավանաբար Նոր Գետիկում ավելացնելով 112 նոր նյութ: «Ես նուաստ ծառայ Զրիստոսի Կիրակոս վարդապետ, ի թուականիս Հայոց ԶԲ (1253) աշխատասիրեալ յաւելի ի նախակարգեալ տօնս ճառս համաօսու ՃԺԲ (112)»¹²², իսկ երկրորդ իմբագրությունը՝ 1269 թվականին՝ Սսում, որտեղ ավելացրել է 170 նոր նյութ¹²³:

¹²¹ Գանձակեցին՝ որպես ականատես, տեղեկություններ է հաղորդում մոնղո-ների՝ Հայաստան կատարած արշավանքների, լեզվի, կենցաղի, բարքերի, հասարակական կառուցվածքի, Հուկավանների պետության քաղաքական, տնտեսական պատմության, Հայաստանի հայ իշխանների, Կիլիկիայի հայկական պետության և մոնղոլների փոխարարերությունների մասին:

¹²² ՍՍ ձեռ. 7433, թ. 428թ, ՍՍ ձեռ. 7463, թ. 349թ: Տե՛ս նաև **Ա. Մաթևոսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 269: **Մ. Ավդալբեգյան**, «Յայսմաւուրք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, էջ 147:

¹²³ «Յուստին Աստուծոյ և սիրով սրբոց նորա, նուաստ ոգի Կիրակոս վարդապետ Արևելցի, ի միասին հաւաքեցի զոօնս Սրբոց Աստուծոյ, ըստ իւրաքանչիւր յիշատակի աւուրց: Գրեցի և պատմութիւնս նոցա, որոց ոչ էր եղեալ ի գիրս Յայսմաւուրացն եւ խառնեցի ընդ նախակարգսն... Եւ եղև իրարկութիւնս այս ի թուիս ԶԺԸ (1269) յաշխարհիս Կիլիկեցւոյ ի Սիս մայրաքարի, ի թագաւորութեան Հեթմոյ և յառաջին ամի իշխանութեան որդույ նորին Լևոնի... Եւ ճառք, որ յաւելար մեր ընդ հինն խառնեալ՝ հարիւր եւ եօթանատուն»: Երուսաղեմ, ձեռ. 75, թ. 1183: **Ն. Պողարեան**, Ցուցակ ձեռագրաց, հ. Ա, էջ 260: **Ա. Մաթևոսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 374, **Մ. Ավդալբեգյան**, «Յայսմաւուրք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, էջ 148: Չնայած Բ. Սարգսյանը և Հ. Աճառյանը 1269 թ. Գանձակեցու «Յայսմաւուրքի» իմբագրությունը վերագրում են Կիրակոս Երգնիկացուն, (Բ. Սարգիսյան, «Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնն», Վենետիկ, 1907, էջ ՃԾՎ: **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 624), որոշ Հայսմավուրքներում Կիրակոսը հստակ կոչվում է Գե-

Կիրակոս Գանձակեցուն մտահոգում էր նաև վանքի մատենադարանը ձեռագիր մատյաններով հարստացնելու խնդիրը: Գավիթի հարավային սյուները միացնող կամարի վրա նրա անունից պահպանված արձանագրությունը վկայում է, որ բազում նվերների հետ նա վանքին է նվիրել նաև քան ձեռագիր մատյան: «Կիրակոս վարդապետու տուի ի մեր Եկեղեցիս Ի. Գիրք եւ Խ. դահեկան, Ա շուրջառ եւ դրի զդասերս»^{124:}

XIII դարավագրին Նոր Գետիկում հայտնի էր Սարգիս կրոնավոր գրիչը: Սարգիսն իր աշակերտ Ստեփանոսի հետ ընտիր մազաղարի վրա օրինակում է երկաթագիր մի Ավետարան, որն այժմ գտնվում է Դուրիխի Չեպթեր Բիթի գրադարանում (Դուրիխ, ձեռ. 557)^{125:} Գրիշը հասցրել է ավարտել Ավետարանը. «Փառք ամենասուրբ Երրորդութեանն, որ արժանի արար գեղեկի գրիչս տեսանել զվերջին գիծս» (թ. 271թ): Բայց քանի որ բացակայում է գիշավոր հիշատակարանը, անհայտ են մնում ձեռագրի ընդօրինակման ստույգ թվականը և վայրը: Հաստ Գ. Հովսեփյանի՝ Ավետարանը ստեղծվել է XIII դարի երկրորդ քառորդին^{126:} իսկ Ա. Մաթևոսյանն այն տեղադրում է 1232 թվականի տակ՝ գրչության վայր ընդունելով Նոր Գետիկի վանքը^{127:}

Մատյանը նորոգվել է XIV-XV դարերում: Նորոգության ժամանակ լրացվել են բացակայող թերթերը, ինչպես նաև Սարկոս և Հովհաննես ավետարանիների ու Պրոխորոնի մանրանկարները: 272ա թերթին գրիշը թողել է մի հիշատակություն, որի տվյալներն ավելի, քան խոսուն են: «Յիշեսփր ի Քրիստոս զսուրբ վարդապետն Միսթար եւ զամենայն միարան եղբարքս սուրբ ուխտիս, որ կամակից և

տիկից կամ Գետկցի: Տե՛ս նաև **Պ. Ալիշան**, Հայապատում, էջ 107, **Հ. Յ. Տաշեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց..., էջ 567: **Մ. Ավգերեան**, Լրումն լիակատար վարուց և վկայաբանութեանց սրբոց, հ. ԺԱ, էջ ՀԶ, **Ա. Մրապյան**, Բանասիրական ճշգրտումներ, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, թ. 4, էջ 138-141:

¹²⁴ Դիվան, պրակ VI, էջ 90:

¹²⁵ **Յ. Քիրստեան**, Իրանստայի Տրպինի Մատենադարանին հայերէն ձեռագիրները, «Սիրոն», 1972, թ. ԽԶ (3-4), էջ 165-169:

¹²⁶ **Գ. Յովսեփեան**, Ցիշատակարանը ձեռագրաց, էջ 1017-1018:

¹²⁷ **Ա. Մաթևոսյան**, Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 183-184:

ձեռնտու եղին սուրբ Աւետարանիս: Յիշեսչիք զՄադունն զբարեպահտ իշխանն, որ ծախսն սորա ետ, յիշեսչիք զՄերովք եւ զՅովասափ, եւ զեղրարս նոցա, եւ զծնաւդո իլրեանց, որ զնիւթո պատրաստեցին եւ ետուն կազմել զՎետարանս, յիշեսչիք զՄարգիս իմաստուն հուեսոր և սրբաւեր կրաւնաւոր եւ զծող սորա, եւ զՄտեփանոս աշակերտն նորին, որ սպասաւորեցի նմա»¹²⁸: Գրիշը ամենից առաջ խնդրում է հիշել Միսիթար սուրբ վարդապետին, որն արդեն վախճանված էր, և իշխան Սարունին, որը հոգացել է մատյանի ստեղծման ամբողջ ծախար: Միսիթար սուրբ վարդապետն, անշուշտ, Միսիթար Գոշն է, որն իր մահկանացուն կնքել էր 1213 թվականին, իսկ նույն ժամանակում ապրած ձեռագրի հովանավոր Սադուն իշխանը քուրդ իշխանի որդի Սադունն է, որի մահվան ժամանակը դրվում է XIII դարի առաջին երեք տասնամյակների ընթացքում¹²⁹: Սադունը Շխմուրադի 1181 թվականի արձանագրության մեջ հիշվում է «մեծ իշխան»¹³⁰, Մակարավանքի 1205 թվականի արձանագրության մեջ՝ «մեծ եւ հզար իշխան Կայենոյ»¹³¹, իսկ այս Վվետարանի իշխատակարանում «քարեպաշտ իշխան»: Նա հոր կենդանության ժամանակ ուներ որոշակի դիրք և իշխանություն Մահկանաբերդում և Կայենում, իսկ նրա մահից հետո դարձել էր Մահկանաբերդի և Կայենոն զավատի իշխանն ու Նոր Գետիկի հովանավորը: Գրիշը խնդրում է հիշել նաև միաբանության անդամներին, Սերովին ու Հռվասափին, նրանց եղբայրներին ու ծնողներին, որոնք աջակցել են ձեռագրի ստեղծման աշխատանքներին, պատրաստել են գրության համար նյութը և կազմել են տվել մատյանը: Վերջում գրիշը խնդրում է հիշել իրեն և իր աշակերտ Ստեփանոսին:

¹²⁸ Յ. Քիւրտեան, Իրանտայի Տըպիինի Մատենադարանին հայերէն ձեռագիրները, էջ 165, Պ. Յովեկիեան, Յիշատակարանը ձեռագրաց, էջ 1017-1018, Ա. Մաթևոսյան, Հայերէն ձեռագրերի իշխատակարաններ, ԺԳ դար, էջ 183-184:

¹²⁹ Հ. Մարգարեան, Մահկանաբերդոյիների (Սադունեանների) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դպրում, «Հայկակեան հայագիտական հանդիս», հ. ԺԲ, Պեյութ, 1998, էջ 21:

¹³⁰ Դիվան, պարակ VI, էջ 159:

¹³¹ Նույն տեղում, էջ 158-159:

Զեռագրի գրչությունը պետք է դնել 1213 թվականից հետո, երբ արդեն վախճանված էր Գոշը, և ոչ ուշ, քան XIII դարի առաջին երեսնամյակը՝ պայմանականորեն՝ 1232 թվականը։ Նոր Գետիկում 1232 թվականին Ստեփանոս գրիշը օրինակում է Խաղբակյան տոհմական Ավետարանը։ Երկրորդ Ավետարանի գրչության ժամանակ Ստեփանոսն արդեն կայացած գրիշ է, իսկ դուրիհնյան Ավետարանում գրչության աշակերտ։

Ստեփանովի մասնակցությամբ երկրորդ Ավետարանն է այս մատյանը, որը նա օրինակել է Զաջուռ Խաղբակյանց իշխանի դուստր և Կուկ Սևատյանց իշխանի կին Վանենու համար։ 1232 թվականին, երբ մահանում է Զաջուռ իշխանը, «ի գաւառիս Կայենոյ, ի գերահոջակ սուրբ ուխտս Գետկայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածիս և Սուրբ Լուսավորչիս Գրիգորի... յիշխանութիւն իշխանաց իշխանի աթարքակ Խւանեի և որդույ նորա Աւագին» Վանենին հոր իշխատակին Ստեփանոս գրչից խնդրում և ստանում է մագաղաթյա երկաթազգիր Ավետարան և նվիրում Հավապտուկ վանքին, որը Զաջուռյան իշխանների տոհմական տապանատունն էր։ «Ստացաւ զայս աստուածախաւս Ավետարանս յիշխատակ եւ փրկութիւն հոգույ հաւր իւրոյ՝ բարեպաշտ իշխանին Զաջոռյ եւ ետ սուրբ մենաստանն, որ կոչի Հավապտուկ, որ է շինեալ յանուն Ս. Աստուածածնին, եւ է բնական տուն եւ շիրիմ Զաջոռյ իշխանի եւ նախնեաց իւրոց»¹³²։ Ավետարանը XIX դարավերջին գտնվել է Նուխու շրջանի Գեղոյրուաղ գյուղում¹³³։ Մատյանի գտնվելու վայրն առայժմ հայտնի չէ։

Գետիկից մեզ հասած հաջորդ մատյանը 1273 թվականին Գեորգի և Մամախաթունի որդի Միհիթարի ձեռամբ «յոյժ նեղութեամբ եւ տառապանաւք» օրինակված Ժողովածուն է, որ պարունակում է

¹³² **Գ. Յովսեփեան,** Խաղբակեանք կամ «Պոչեանք Հայոց պատմութեան մէջ», հ. Ա, Վաղարշապատ, 1928, էջ 34, նույնի՝ Ցիշխատակարանը ձեռագրաց, էջ 882, **Ս. Զալալեանց,** Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Բ, էջ 216-217, **Ա. Մաթեոսյան,** Հայերեն ձեռագրերի իշխատակարաններ, ԺԳ դպր, էջ 182։

¹³³ **Մ. Բարխուդարեանց,** Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 234։

Վանական վարդապետի «Գիրք հարցմանցը», Մովսես Խորենացու «Յաղագ աշխարհագրությանը», Դավիթ փիլիսոփայի «Էակաց գիրքը», Սամուել Անեցու Ժամանակագրությունը¹³⁴: Զեռագիրը գրվել է «ի տիեզերակաղութեան Ապաղա ղանին, եւ յաթարակութեան Սաղունին եւ ի տերութեան տեղոյս Ճարին աստանաւը կատարեցաւ տառ մատենիս ի սուրբ եւ ի հոչակաւոր վանքս Գետկայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Նշանիս... առ ոսս սուրբ եւ վսեմապայծառ վարդապետիս Յովասարիս»:

XIII դարի երկրորդ կեսին Հովափու խանի որդի Աբաղա խանի (1265-1282 թթ.) կառավարման տարիներին Մահկանաբերդի և Կայենու իշխանն էր Ջուրդ Արծրունու թոռնորդին՝ Շերքարորի որդի Սաղուն Բ-ը: Իսկ XIII դարի կեսերից հիշատակարաններում ու վիմագիր արձանագրություններում Նոր Գետիկի պատրոն ու տեր հիշվող Ճարը Հասան Զալպահի փեսա, ծագումով մանագկերտցի ազնվական Ումեկի որդին Է՝ ծնված առաջին կնոշ՝ Թագուհու հետ ամուսնությունից: Ճարի՝ 1283 թվականին Գետիկում թողած արձանագրության համաձայն՝ Ումեկը «ի դառն ժամանակի, որ հայրենիքն արժան էր եւ ոսկին թանգ», Իվանեի մահից հետո նրա որդի Ավագից 40000 կարմիր դրույտով գնել էր Գետիկն իր շրջակայքով¹³⁵: «Պահպանվել է նաև Ճարի որդու՝ Թաղարտերի՝ 1301 թվականի արձանագրությունը, որի համաձայն վանքը եղել է այս տոհմի զանձայգին հայրենի եկեղեցին. «Ես՝ Թաղարտերս՝ որդի Ճարին, թոռն պարոն Ումեկին, միաբանեցա սուրբ ուխտին Գետկա՝ մեր զանձայգին հայրենի եկեղեցոյս» և վանքին է նվիրել Հանի գյուղը և Նախեղուտն հանդամասի խաս այգուց հարյուր պղնձե կծերով գինի¹³⁶: Ումեկի մահից հետո (1267 թ.) նրա ավագ որդին՝ Քարիմատինը ժառանգել էր 1251 թվականին Տփիլիսում հոր կա-

¹³⁴ Երուսաղեմ ձեռ. 1288, թերթ՝ 302, նյութ՝ թուլյթ, 16,5×12, գիր՝ բոլորգիր, տող՝ 248-30: **Ն. Պողարեան**, Ցուցակ ձեռագրաց, հ. Դ, Երուսաղեմ, 1969, էջ 484-496: **Ա. Մաթևոսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 435-437:

¹³⁵ Դիվան, պրակ VI, էջ 71:

¹³⁶ Նույն տեղում էջ 78:

ոուցած Ս. Գևորգ Եկեղեցին, իսկ Ճարը՝ Գետիկն իր շրջակայքով¹³⁷: Ճարը Գետիկի տերն է Եղել շուրջ քսան տարի՝ մինչև 1287 թվականը: Ստեփանոս Եպիսկոպոսի Ժամանակագրության համաձայն՝ նա վախճանվել է այդ թվականին¹³⁸:

Գրիգոր քահանայի խնդրանքով Մխիթարիչը, որ դեռ «զրոց աշակերտ» էր, Ավետարան է օրինակում «ի Գետկա վանքս, որ է վարդապետարան»: Գրիշը մատյանն օրինակել է հոչակավոր գրիշ Գրիգոր Մուրդանեցու «ի գովելի աւրինակե, ուղիղ եւ լի արուեստիւ, ի բան եւ ի գիր, ի տուն եւ ստոր, եւ ի գրադարձս, եւ յեղանակս, եւ ի վանկս, եւ յառագանութիւնս»: Գրիգոր Մուրդանեցու ընտիր օրինակից են գրված նաև Թեոդորոսի (Վենետիկ, ձեռ. 129)¹³⁹ և Թարգմանչաց (ՄՄ ձեռ. 2743) Ավետարանները¹⁴⁰: Օրինակը, որ «շատ ու բազում վարդապետք են հավաներ»¹⁴¹, Մխիթարիչին տրամադրել է «վարդապետաց վարդապետ և երեւելի» Կիրակոս Գանձակեցին, իսկ գրիշը «զշատն վասն աւրինակի» է գրել¹⁴²: Ավետարանը մեզ է հասել խիստ քայլայված, սկզբից և վերջից պակաս թերթերով, որոշ թերթեր եզրահատված և թերի հիշատակարանով: Զեռագրի գրչության թվականը հայտնի չէ: Բայց քանի որ Ավետարանը գրվել է Կիրակոս Գանձակեցու բարունապետության տարի-

¹³⁷ **Գ. Հովսեփյան,** Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Երևան, 1983, էջ 10:

¹³⁸ Մանր ժամանակագրություններ, հ. Ա, կազմեց՝ **Վ. Հակոբյան**, Երևան, 1951, էջ 48:

¹³⁹ **Բ. Սարգսիսեան**, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Վենետիկ, հ. Ա, 1914, էջ 567:

¹⁴⁰ **Ա. Մաթևոսյան**, Թարգմանչաց Ավետարանը, «Էջմիածին», 1992, թ-ժԸ, էջ 102-114:

¹⁴¹ Ներսես Եպս. «Պողարյանը տալիս է այն ձեռագրերի նկարագիր՝ համառոտ հիշատակարաններով, որոնք զաղափարվել են Գրիգոր Մուրդանեցու օրինակից: **Ն.** Եպս. **Ծովական**, Գրիգոր Մուրդանեցի, «Միոն», 1968, Խմ. (1-2), էջ 70:

¹⁴² ՄՄ ձեռ. 2814, թերթ՝ 183, նյութ՝ թուղթ, 23,5x16, գիր՝ բոլորգիր, տող՝ 24: Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Թ, խմբագրութեամբ՝ **Գ. Տեր-Վարդանեանի**, Երևան, 2017, էջ 742-744: **Ա.** Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 399-400:

ներին և նրա հանձնարարած օրինակից, գրչության թվականը պետք է դնել ամենաուշը մինչև 1271-ը, այսինքն՝ մինչև Կիրակոսի մահիլ:

Գետիկավաճքում էր կրթություն ստացել Մանուելի և Տավուսի որդի Թորոս վարդապետ Արևելցին, որը Նոր Գետիկ էր եկել Գանձակից: Նա 1262 թվինական չափազանց ծանր իրավիճակներում իր հոգևոր եղբոր՝ Մակար քահանայի հետ եկել-հասել է Հռոմ և այստեղ օրինակել է մի Ավետարան, որի հիշատակարանում գրում է, որ ինքն ուսում է ստացել Գետիկում¹⁴³:

1274 թվականին Նոր Գետիկում է ստվորել նաև Ալեքսիոսի որդի Սարգիս վարդապետը, որն իր ցանկալի օրինակն ունենալու համար 1280-ին գնացել է Դեղձուտ, որտեղ Առաքել վարդապետի դպրոցում նրա համար օրինակել են Տոնապատճառ ժողովածու (ՄՄ ձեռ. 5197):

Նոր Գետիկի գրիչներից էր նաև Հովհաննեալ, որը Կիրակոսի բարունապետության տարիներին ու նրա խնդրանքով ընդօրինակում է մի Տոնական: Բայց քանի որ գրչության մեջ սա իր առաջին փորձն է, գրիշը տագնապած է, ուստի Կիրակոս վարդապետից և ընթերցողներից անմեղադրություն է խնդրում, որովհետև գրչության մեջ հմուտ չէ, գրել է խոչոր գրերով և սխալներով, քացի այդ է՝ օրինակի մասին ամեննին չէր լսել¹⁴⁴: Գրչության տեղի մասին հե-

¹⁴³ «Ես նուաստ եւ անարժան ծառայ Աստուծոյ Թորոս պիտակար սպասաւոր քանի յԱրեւելցից գաւառաւ, եւ ի քաղաքաւ ի Գանձակայ, սնեավ եւ վարժեավ ի մեծ մենաստանն Գետիկ, տարբերեալ այսր անդր, հասի սահասասան ճանապարա, կասկածակոծ, մահառուա, հիւծեալ, հիւանդամաշ մարմնով, մանաւանդ թեմա հոգևով ևս, ի մեծս Հռովմ»: Պանդխառության մեջ ապրող Թորոս վարդապետը խնդրում է իհշել ծնողներին, եղբայրներ Ուրբենին, Հակոբին, Հովհաննեսին, քրոջը՝ Ազիզին, իր հոգևոր եղբայրներ Մակար, Վարդան, Ստեփանոս, Հակոբ, Հակորոս և Առաքել քահանաներին, Խայիզոնիկ կոչվող Թորոս վարդապետին: Թորոսի ծնողագիրը Հռոմից հասել է Նոր Չուլա և պահպում է Ա. Ամենափրկիչ վանքի մատենադարանում: **Ա. Տեր-Աւետիսյան,** Ցուցակ ձեռագրաց Նոր Չուլայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 45-46: Տե՛ս նաև **Ա. Մաթելոսյան,** Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 313-314:

¹⁴⁴ ՄՄ ձեռ. 3931, թերթ՝ 393, նյութ՝ թուլյթ, 17Տ 12, գիր՝ բոլորգիր, տող՝ 24: Տե՛ս նաև **Լ. Խաչիկյան,** Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար,

տագայի գրիշը գրում է. «ի վանս Գօշ Մխիթարայ, որ հանդեպ Հաղաքնոյ վանից, որ է դամբարան թագաւորաց մերոց Սմբատայ եւ Գեղրգայ» (թ. 345թ):

Գետիկավանքի շինարարությունը ավարտվում և ամբողջանում է 1291 թվականին, երբ վանքի միաբաններից Դասապետ ու Կարապետ վարդապետները կառուցում են զանգակատունը և պարսպապատում եկեղեցին: Սա Գետիկի վանական համալիրի վերջին շինարարական արձանագրությունն է: Այստեղ հիշատակվում են Ումեկի ավագ որդի Զարիմանինի զավակները՝ դուստրը՝ Իգդիշ խաթունը և որդիները՝ Արդութեն ու Թաղադամուրը. «պարոնութեան Իգդիշ խաթունին եւ Եղբարց իւրոց՝ Արդութին եւ Թաղադամուրին»¹⁴⁵: Դասապետին հիշում է նաև Ճարի որդի Թաղարտերը Նոր Գետիկի նվիրատվական արձանագրության մեջ¹⁴⁶:

Վերջին հիշատակությունը Նոր Գետիկի գրչության կենտրոնի վերաբերյալ XV դարից է, երբ Ղազար գրիշը «ի վանս Գօշ Մխիթարայ» օրինակում է մեկնությունների և քերականական նյութերի մի ժողովածու, որի սրբազնան աշխատանքները կատարում է Գևորգ Երգնլացին¹⁴⁷:

Ավելացնենք, որ Նոր Գետիկը կամ Գոշավանքը նշանավոր է նաև որպես պատմաճարտարապետական համալիր՝ իր գեղաշեն եկեղեցիներով և Պողոս Վարպետի ասեղնագործ խաչքարերով:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ միջնադարյան Հայաստանի հոգևոր-մշակութային և գրչության նշանավոր կենտրոն Նոր Գետիկի վանքի սկզբնավորումն ու ծաղկումը կապվում է մեծ գիտնական, օրենսգետ, հոգևոր-եկեղեցական գործիշ Մխիթար Գոշի անվան հետ: Նրա բարունապետության տարիներին Նոր Գետիկի վարդապետարանը ձեռք բերեց մեծ անուն և համբավ՝ դառնալով Հյուսիսային Հայաստանի առաջադեմ ուսումնական և գրչության կենտ-

Երևան, 1950, էջ 60-61, **L. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մաս Ա,** Երևան, 2018, էջ 167:

¹⁴⁵ Դիվան, պրակ VI, էջ 104:

¹⁴⁶ Նոյն տեղում, էջ 78:

¹⁴⁷ ՍՍ ձեռ. 3653, թերթ՝ 258, նյութ՝ թուղթ, 16՛ 13, գիր՝ բոլորգիր, տող՝ 23:

բոններից, որն իր բուն գործունեությունը շարունակեց մինչև XIII դարի վերջերը՝ ընդհատումներով հասնելով XV թվ: Վարդապէտարանի հաջորդ լուսավոր շրջանները Մխիթար Գոշից հետո վարդապէտարանը ղեկավարած Մարտիրոսի և Կիրակոս Գանձակեցու րարունապէտության տարիներն էին: Վերջիններս մեծ ուշադրություն էին դարձնում ձեռագրերի ընդօրինակման աշխատանքներին, որով հարստանում էր վաճքի մատենադարանը, իսկ որպես գրիչներ հայտնի էին Սարգիս կրոնավորը, Ստեփանոսը, Հովհաննեսը և Մխիթարը:



ՀԱՂԱՐԾԻՆԻ ՎԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԵ

Միջնադարյան Հայաստանի նշանավոր հոգևոր և մշակութային կենտրոններից է Հաղարծինի վանքը, որը գտնվում է պատմական Կայենո գավառում անտառապատ լեռներով ու ձորակներով շրջապատված մի գեղատեսիլ հարթավայրում, ուր Հաղարծին գետակի երկու վտակները լեռնոտ բարձունքներից իջնող փեշերի վրա կազմում են թերակղզի, ապա վանքից փոքր-ինչ ներքև միանալով՝ խառնվում Աղստև գետին:

Վանքն առյուրիներում հանդիպում է նաև Խաղարծին¹⁴⁸, Հռադին¹⁴⁹, Հավարծին¹⁵⁰, Աղարծին¹⁵¹, Աղոթին¹⁵² անվանումներով: Ժողովրդական ստուգաբանության համաձայն՝ «Հաղարծին» անունն առաջացել է «արծիվ» և «խաղաց» բառերից, որ նշանակել է արծիվների խաղ կամ արծիվների խաղալու վայր: Ըստ ավանդագրույցի՝ տաճարի օծման հանդեսին վանականները տեսնում են, որ Սուրբ Հոգին արծվակերպ իջել է Կաթողիկեի վրա, և նկատելով արծվի սավաններու ժամանակ պտույտներ գործելու խաղը՝ անվանել են «խաղ արծվի», որից ել վանքը կոչվել է Խաղարծին կամ Հաղարծին¹⁵³: Թևատարած արծվի կերպարն արտացոլվել է վանքի զարդարանդակներում: Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան պատին քանդակված տաճարի աջ և ձախ կողմերում երկու վենարա-

¹⁴⁸ Վիմագիր արձանագրություններում հանդիպում է և՛ Խաղարծին, և՛ Հաղարծին ձևով: Տե՛ս Դիվան, պրակ VI, էջ 20-61:

¹⁴⁹ Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, էջ 12: **Մ. Չամչանց**, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 96:

¹⁵⁰ **Ա. Մաթևոսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 560:

¹⁵¹ **Աբրահամ Կրետացի**, Պատմութիւն, առաջաբանը և ծանոթագրությունները **Ն. Ղորղանյանի**, Երևան, 1973, էջ 74:

¹⁵² ՍՄ 1028, Պահպանակ Ա: Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Դ, կազմնեցին Ա. Քեօշկերեան, Կ. Սուրիանեան, Յ. Քեօսէան, Երևան, 2008, էջ 118:

¹⁵³ **Հ. Ռսկեան**, Արցախի վանքերը, էջ 231:

վոր հոգևորականներ են, որոնք ձեռքերը պարզել են վեր և ցույց են տալիս Կաթողիկեի խաչին նատած արծվին¹⁵⁴:

Հաղարծինի վանքի մասին հիմնական աղբյուրը վիմագիր արձանագրություններն են, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում այս նշանավոր կենտրոնի պատմության, միաբանության, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային կյանքի վերաբերյալ: Հակառակ վիմագիր արձանագրությունների՝ մատենագրական աղբյուրները սակավախոս են: Մատենագրական առաջին տեղեկությունները հաղորդում է Կիրակոս Գանձակեցին: «Պատմիշը գրում է, որ 1197 թվականին Նոր Գետիկի եկեղեցու օծման հանդեսին ներկա էր նաև Հաղարծինի վանահայր Խաչատուր Տարոնացին՝ սուրբ և առաքինի, գիտությամբ, հատկապես երաժշտական արվեստով հրչակված մի մարդ¹⁵⁵: Նրա առաջնորդության տարիներին Հաղարծինը դառնում է Հայաստանի հոգևոր-մշակութային նշանավոր կենտրոններից մեկը: Կիրակոս պատմիշը նաև վկայում է, որ 1246 թվականին, երբ Վարդան Արևելցին Կիլիկիայից Հայաստան է բերում Կոստանդին կաթողիկոսի սահմանած կանոնները, Կարինի, Անիի, Բջնիի, Ամրերդի, Հաղպատի, Սանահինի, Գետիկի, Կեչառիսի, Այրիվանքի և այլ նշանավոր հոգևոր առաջնորդների շարքում կար նաև Հաղարծինի վանքի առաջնորդի ստորագրությունը¹⁵⁶: Հաջորդ տեղեկությունը տալիս է Վարդան Արևելցին՝ վանքը կոչելով Հողարծին. «Եւ բազում գաւառը ի կողմն իհւսիսյ, որ կոչ Զակամ, ուր կայ Սուրբ Խորանաշատ եւ Հողարծին եւ Գետկաց վանք»¹⁵⁷: Ստեփանոս Օրբելյանը վանքն անվանում է «զգերահոչակ ուխտն Հաղարծին»¹⁵⁸:

Չնայած Հաղարծինի մասին առաջին հիշատակությունները XII դարից են, բայց քանի որ վանական համալիրը բաղկացած է X-XIII

¹⁵⁴ Նույն տեղում:

¹⁵⁵ Կիրակոս Գանձակեցի, էջ 211-212:

¹⁵⁶ Նույն տեղում էջ 310:

¹⁵⁷ Աշխարհացոյն Վարդանայ Վարդապետի, էջ 12:

¹⁵⁸ Ստեփանոս Օրբելեան, «Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 342:

դարերում կառուցված շինություններից, ենթադրելի է, որ այնտեղ միաբանություն գործել է ավելի վաղ շրջանից:

Հաղարծինի վանական համալիրի մեջ են մտել Ս. Գրիգոր, Կաթողիկե, Ս. Ստեփանոս, Ս. Աստվածածին եկեղեցիները, երկու զավիթ, սեղանատունը, արքունական դամբարանը, եկեղեցականների խուցերը, աղոթատեղիներ, խաչքարեր, օժանդակ շինություններ:

Առաջին շինությունների վերաբերյալ վիմագիր և մատենագիր տեղեկություններ չկան: Ամենահինը Ս. Գրիգոր եկեղեցին է, որի հիմնադրման սոույզ ժամանակը հայտնի չէ, չունի ոչ մի արձանագրություն: Եկեղեցու մուտքին եղած միակ արձանագրությունն է ժամանակի ընթացքում մաշվել ու դարձել է անընթեռնելի: Դատելով ճարտարապետական ոճից՝ ենթադրվում է, որ եկեղեցին կառուցվել է X-XI դարերում: XII-XIII դարերում է կառուցվել Ս. Ստեփանոս եկեղեցին: Ենթադրվում է, որ Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1071 թվականին, իսկ վերանորոգումը տեղի է ունեցել 1281-ին¹⁵⁹:

Սեղուկների արշավանքներից ավերվում է վանքը: XII դարի վերջերին, երբ այս զավառում հաստատվում է Զաքարյանների իշխանությունը, Վրաց Գեորգի թագավորի հրամանով և նրա իշխան-

¹⁵⁹ Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման ժամանակը վիճելի է: Եկեղեցու հարավային մուտքի ճակատակափ կամարի երկու կողմերում պահպանվել են «Ձ ՉԼ» և «ԹՎ. ՇԻ» գրերը: «Ետազոտողներից ոմանք սա ընդունում են որպես երկու տարբեր արձանագրություն և եկեղեցու կառուցման թվականը համարում են ՇԻ (1071), իսկ վերանորոգմանը՝ ՉԼ (1281): Դատելով ճարտարապետական ոճական առանձնահատկություններից՝ որոշ հետազոտողներ էլ կարծում են, որ եկեղեցին չի կառող XI դարի կառույց լինել, այլ ավելի ուշ շրջանի՝ XIII դարի շինություն է, և արձանագրությունը կարդում են իրեն մեկ ամբողջություն, այսինքն՝ «Ձ ՉԼ (1281) թվին շինեցաւ»:
Մ. Տեր-Մովսիսեան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծինի և Դադի եկեղեցիները և վանական շինութիւնները, Երուսաղէմ, 1931, էջ 74-75: **Մ. Քարխուդարեանց,** Արցախ, էջ 364, Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, էջ 223, Հ. Եղիազարյան, Հաղարծինի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1954, թ. 9, էջ 35-38, **Ա. Տոկարչուսի**, Արհետության պատմության և կոլլուգարայի հուշարձանները, Երևան, 1980, էջ 53:

ներ Սարգիս Զաքարյան ամիրսպասալարի, Մահկանարերդի իշխան Ամիր Քրտի, Անտոնի Շղունտելիի և Ելբեկի աջակցությամբ 1184 թվականին Խաչատուր Տարոնացի վարդապետը և Սուրբիասը, որին Ս. Բարիսուլարյանցը անվանում է Արցախեցի¹⁶⁰, վերանորոգում են եկեղեցին, Վերականգնվում են Հաղարծինի վանքի հողատիրական իրավունքները, և վանքը անհատույց ստանում է Միջնաշենի այգին, Վրասաձորը, Տանձուտը, Տեառնիսաչը, Քրդևանը: Պատմական այս փաստը հաստատվում է Ս. Գրիգոր Եկեղեցուն կից գավիթի արևելյան պատին ազուցված սայի վրա պահպանված արձանագրությամբ¹⁶¹:

Ս. Աստվածածին կից գավիթից մնացել են միայն ավերակները: Երկրորդ գավիթը Եղբոր՝ Զաքարեի մահվանից (1212 թ.) հետո նրա հիշատակին կառուցում է Իվանե Զաքարյանը՝ «Եւ ես շինեցի ի մեր վանքս Հաղարծին ժամատուն վիմարդեան, կամարակապ ի դրան Ս. Գրիգորիս եւ այգի յԵրեւան ետու վասն յիշատակի Եղբաւրն իմոյ»¹⁶²: Իվանեն արևմտյան մուտքին թողնում է ընդարձակ արձանագրություն Զաքարյանների հաղթական պատերազմների, հայրենի տիրույթները սեղուկների արշավանքներից ազատազրելու և վերադարձնելու մասին: Այս արձանագրության մեջ Զաքարյանները

¹⁶⁰ Ս. Բարիսուլարեանց, «Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 195:

¹⁶¹ «Փ ՈՂԳ (1184) թուխս Հայոց ի թագաւորութեանն Ափիսազաց Գեորգեա, ի հայրապետութեանն Հայոց տեսան Գրիգորիսի եւ՝ Խաչատուր Վարդապետ, և Սուրբիա նորոգեցաք զՍուրբ Գրիգորու՝ հրամանաւ թագաւորին եւ իր մնամանծ իշխանացն՝ Սարգսի, Ամիր Քրտին, Անտոնի Շղունտելին, Ելբեկին: Եւ թագաւորն զին եւ զնոր կազմութիւնս զրով ետ ի Սուրբ Գրիգորս զայգին ի Միջնաշինին ջրին, զՏեառնիսաչ՝ կոպար վանիցս ի միջին, զԹուրդեւանն, զՎրասաձոր, զՏանձուտն»: Նույն արձանագրության անեծքի բանաձևում հիշատակվում է Վարձիա վրացական վանքը՝ «Նզովեսցին ի Վարձէս Վստուածածնէն» (Դիվան, պրակ VI, էջ 37): Հ. Օրբելին նկատում է, որ այս և Հաղարծինի վանքի մի շարք այլ արձանագրություններում հանդիպող վրացական անունները վկայում են այն մասին, որ Հաղարծինը այդ շրջանում հարել է քաղկեդոնականությանը (Դիվան հայ վիմագրության, պրակ I, Անի քաղաք, կազմեց՝ Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ IX):

¹⁶² Դիվան, պրակ VI, էջ 23:

համարվում են Բագրատունիներ, թվարկվում են այն տարածքներն ու ամրոցները, որոնք ազատագրել են Զաքարյան եղբայրները¹⁶³:

Ուշագրավ է, որ զավթի առաստաղին պահպանվել են Երկու մարդու բավականին մեծ պատկերաքանդակներ. մեկը, որ ձեռքին շերեփ ունի, ըստ կից արձանագրության՝ վանքի տնտես Սիմեոնն է, մյուսը՝ Դանիել վանահայրը, որը հիշատակվում է նաև 1219 թվականին¹⁶⁴:

Ս. Գրիգոր Եկեղեցու զավթի հարավային պատին կից է արքունական դամբարանը: 1865-1895 թվականներին, երբ Հաղարծինի վանահայր է դառնում Էջմիածնի միաբան Պողոս Վարդապետը, քանդում է դամբարանի պատերը և քարերը օգտագործում այլ կառույցների շինարարության մեջ¹⁶⁵. Այժմ պահպանվել են դամբարանի հիմնապատերը և Երկու տապանաքարը: Ենթադրվում է, որ այս տեղ հանգչում են Կյուրիկյան թագավորները¹⁶⁶:

¹⁶³ «Եւ ես տիրել սեփիհական ժառանգութեան նախնեաց մերոց ես ի ձեռս մեր յառաջ զանարիկ դրեակն Անքերոյ, եւ զրագավորանիստ քաղաքն Անի, ապա զամուրն Բջնի, զՄարանդ, Միջք եւ Գավազանը ի Թավուժ, զԿարնո քաղաք մինչեւ Խոյաշ, զՃարի եւ զՃրուան, Պարտսաւ մինչեւ Քելուկան եւ զայլ բազումս իւրեանց սահմանաւք»: Դիվան, պրակ VI, էջ 22, **Ս. Զալալեանց**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Ա, Տփիսիս, 1842, էջ, 131, **Հովի. Շահիսաթունեանց**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածն, 1842, էջ 370, **Հ. Մանադյան**, Քննական տեսություն, հ. Գ, Երևան, 1977, էջ 142-143:

¹⁶⁴ Դիվան, պրակ VI, էջ 43-44, 60:

¹⁶⁵ **Ս. Մեթատեանց**, Տեղագիր Գեղարքունի Ծովագարդ գաւառի..., էջ 179-185:

¹⁶⁶ Այսուղ Երեք տապանաքար է եղել, որոնցից մեկը կրաքարից է և ամբողջովին քայրայվել ու վերածվել է մանր բեկորների, անհնար է պարզել, թե ում տապանաքարն է: Ս. Զալալեանցը Ժամանակին կարդացել է տապանաքարերի արձանագրությունը. «Այս է հանգստարան թագաւորաց Գագայ եւ Գալգայ»: Այժմ պահպանվել է միայն մեկի անվան սկզբնատառը. «Այս է հանգստարան թագաւորաց Գ»: Երրորդի վրա արձանագրված է «Սմբատ թագաւոր»: Ժամանակին այն տեսակետն է եղել, որ այսուղ թաղված են Բագրատունի Սմբատ Բ (977-990) և Գագիկ Ա (990-1020) թագավորները: Ըստ Ստեփանոս Ասողիկի՝ Աշոտ Գ Ողորմածի որդիներից Սմբատ Բ թագավորը թաղված է Անիում. «Եւ մեռաւ անդէն եւ թաղեցաւ ի նմին քաղաքի»: Երկրորդ որդու՝ Գագիկ Ա-ի գերեզմանի տեղը չի նշվում: Աշոտ Գ

XII դարավերջին և XIII դարասկզբին Հաղարծինը հիշվում է Հայաստանի նշանավոր ուսումնական կենտրոնների շարքում: Հաղարծինի մեջ հայտնի ուսուցիչը բանաստեղծ և երաժիշտ, միաբանության առաջնորդ Խաչատուր Տարոնացին¹⁶⁷ է, որի անվան հետ է կապվում Հաղարծինի վանական դպրոցի հիմնադրումն ու ծաղկումը: Խաչատուր Տարոնացու գործունեությունը համընկնում է Զաքարյանների պատմության տնտեսական, քաղաքական և մշակութային վերելքի ժամանակաշրջանին: Ինչպես վանքի առաջնորդ դառնալուց առաջ, այնպես էլ հետո, Խաչատուրի մասին տեղեկությունները շատ քիչ են: Նրա մասին Կիրակոս Գանձակեցին ակնա-

Ողորմածի կրտսեր որդի Գուրգեն Ա Կյուրիկեն (982-989) հիմք դրեց Կյուրիկյան թագավորությանը Տաշիր-Չորագետում: Նա թաղված է Սամահինում: Կյուրիկյանների հաջորդ գահակալը Տաշիր-Չորագետում Գուրգեն Ա-ի որդի Դավիթ Անհողինն էր (989-1048), որն ուներ չորս որդի՝ Գուրգեն, Գագիկ, Ատրներսեն և Մմրատ անուններով և մեկ դուստր՝ Հրանուշը: Գագիկը 1037 թվականին տիրեց Կախեթ-Կուրեթի գահին և դարձավ Կյուրիկյան արքայատոհմի կրտսեր ճյուղի հիմնադիրը: Դավիթ Անհողինի մահից հետո Տաշիր-Չորագետի թագավոր է դառնում նրա ավագ որդին՝ Կյուրիկե Բ (1050-1089), իսկ Մմրատը եղբոր՝ Կյուրիկե Բ-ի հետ զահակից էր Տաշիր-Չորագետում: **Տե՛ս Ստեփանոս Տարանեցի Կողոկի, Պատմութիւն տիեզերական, Մատենագիրը Հայոց, հ. ԺԵ, գիրը Բ, էջ 808, Հայոց պատմություն, Երևան, 2014, էջ 55-61, 127-135, Ա. Զալալեանց, Ծանապարհորդութիւն..., հ. Ա, էջ, 134, Դիվան, պրակ VI, էջ 59, Հ. Եղիազարյան, Հաղարծինի վանքը և նրա վիմագիր արձանագրությունները, «Էջմիածին», 1954, թ. 9, էջ 39, Մ. Տեր-Սովոսիսեան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տայքի, Հաղարծինի և Դադի Եկեղեցիները և վանական շինութիւնները, էջ 78, Լ. Խաչենչերեան, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները... միջնադարյան Հայաստանում եւ Կիլիկիայում (V-XVI դ.դ.), Լիգորն, 1998, էջ 593, Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Քախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1991, էջ 316, Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 24, M. Brosset, Deux historiens arméniens, Petersbourg, 1870, ծնք. 51, Վ. Մովսիսեան, Լոռիի Կյուրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, 1923, էջ 32: Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 210-212:**

¹⁶⁷ **Լ. Խաչենչերեան, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները..., էջ 593-596: Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկակարժության պատմության, Երևան, 1958, էջ 257-259:**

ծանրով գրում է, թե նա առանձին փայլ և հոչակ բերեց այս միաբանությանը, որ իր զարուց առաջ ամուլ էր և խամրած. «Սա պայծառացոյց գուխատն, որում առաջնորդ էր ինքն, որ յառաջ քան զգալն որա ամայի էր եւ խամրացեալ»¹⁶⁸.

Իսկ ե՞րբ և որտեղից է Խաչատուրը եկել Հաղարծին: Չնայած հենց սկզբից էլ Խաչատուրին մենք տեսնում ենք Հաղարծինում¹⁶⁹, բայց դատերով Տարոնացի կամ Տարոնեցի¹⁷⁰ մականունից՝ ենթադրելի է, որ նա ծնված պետք է լինի Տարոնում և Հաղարծին է եկել է հավանաբար հենց Տարոնից մինչև 1184 թվականը, որովհետև Հաղարծինի այս թվականի արձանագրության մեջ նա արդեն հիշվում է իրու միաբանության առաջնորդ: Նրա նկատմամբ բարեկամ վերաբերմունք ունեին վրաց Գեորգի Գ թագավորը և թամար թագուհին:

Ինչպես տեսանք արձանագրությունից, Գեորգի թագավորը հատուկ իրովարտակով եկեղեցուն է նվիրում զյուղեր ու այգիներ: Գալով Հաղարծին՝ Խաչատուրը նախաձեռնում է ամայի դարձած վանքի բարեկարգումը, ծավալում է հոգևոր և մանկավարժական բեղմնավոր գործունեություն: 1184-ին նա Սուլքաս Արցախիցու հետ վերանորոգում է սեղուկների արշավանքներից ավերված վանքը: 1194 թվականին, համաձայն եկեղեցու արևմտյան մուտքի ճակատի արձանագրության, Հարբի որդի Խալթի միջոցներով կառուցվում է Կաթողիկե եկեղեցին¹⁷¹:

Կիլիկիայում և բուն Հայաստանում զարգանում են վանքերին կից բարձրագույն տիպի դպրոցները, բացվում են երաժշտական

¹⁶⁸ Կիրակոս Գանձակեցի, էջ 211:

¹⁶⁹ Կիրակոս Գանձակեցի, էջ 211: Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, հ. 2, էջ 473:

¹⁷⁰ Ն. Թահմիզյանը Խաչատուրին անվանում է Տարոնեցի: Ն. Թահմիզյան, Խաչատուր Տարոնեցին և հայոց պատարագի նախերգը, «Էջմիածին», 1975, ԺԱ, էջ 46-52, նոյնի՝ Հաղարծինի վանքը և Խաչատուր Տարոնեցի երաժիշտ վարդապետը, Գիտական աշխատությունների միջրուհական ժողովածու, թ. 1, Երևան, 1975:

¹⁷¹ «Բ թուին ՈԽՎ (1194) յիշանութեան Խւանի եւ յառաջնորդութեան Խաչատուր վարդապետին եւ՝ Խալթ՝ Հարբա որդի շինեցի գեկեղեցիս վասն իմ հոգոյս փրկութեան»: Դիվան, պրակ VI, էջ 52:

արվեստի մասնագիտացված կենտրոններ: Հանդես են գալիս ետշնորհայիական շրջանի երաժշտական արվեստի գիտակներ, ինչպես Ներսես Լամբրոնացին, Գրիգոր Ակևոսցին, Հակոբ Կայեցին Կիլիկիայում, Հովհաննես Սարկավազը, որը գիտավորում էր Անիի դպրոցը և շնորհայի երաժիշտ էր, «ընտրեալ երաժիշտ» Թորոսը՝ Խարբերդում¹⁷², «ընտիր թեմբական և անյաղթ երաժիշտ» Հովհաննեսը՝ Վանում¹⁷³, Հովհասափը՝ Կարինում¹⁷⁴, գանձասաց Մխիթարը՝ Այրիվանքում¹⁷⁵, Եղիան՝ Հավուց Թառում, որ կարգավորեց իր եկեղեցու պաշտամունքային արարողությունը¹⁷⁶, երաժիշտ-բանաստեղծ Վարդան Արևելցին, երաժիշտ-տեսաբան Հովհաննես «Պլուզ Երգնկացին»¹⁷⁷, ավելի ուշ՝ Գրիգոր Տաթևացին, որ «ուսուցաներ երգի վարդապետաց գերաժշտութիւնս քաղցրալուր ձայնի եղանակաւ»¹⁷⁸:

Հաղարձինում Խաչատոր Տարոնացին էր, որը գերազանց տիրապետելով հոգևոր երաժշտության կիլիկյան դպրոցի ավանդներին, վանքին կից հիմնադրում է երաժշտական մասնագիտացված դպրոց, ապահովում սովորելու պայմաններ՝ իր շուրջը համախմբելով բազմաթիվ աշակերտների: Խաչատորի դպրոցն իր ուսուցման մակարդակով ու որակով չէր զիջում Կիլիկիայի և Մեծ Հայքի նմանատիպ նշանավոր կենտրոններին: Իրքև շնորհաշատ երաժիշտ և գիտնական նա շրջում է արևելքի երկրներում, հավաքում, մշակում և Հայաստան է բերում այնպիսի խաղեր, որ մինչ այդ Հայաստանում չէին եղել: «Սա երեր զիսազն ի կողմանս յարևելից, զանմարմին

¹⁷² **Բ. Սարգիսեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, էջ 399-400:

¹⁷³ **Դ. Վիշան**, Հայապատում, էջ 442:

¹⁷⁴ **Ն. Թահմիզյան**, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դարերում, Երևան, 1985, էջ 39:

¹⁷⁵ **Ն. Թահմիզյան**, Մխիթար Այրիվանեցին և Ավագ հինգշաբթի օրվա «Սիրտ իմ սասանի» զանձ-երգը, «Հայկական արվեստ», 1983, թ. 2 էջ 33-35:

¹⁷⁶ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 172:

¹⁷⁷ Շարական հոգեւոր երգոց, Կ. Պոլիս, 1815, էջ 5:

¹⁷⁸ **Լ. Խաչիկյան**, Գյանձորի համալսարանը և նրա սաների ատենախոսությունները, Աշխատություններ, հ. Ա, Երևան, 2012, էջ 307:

Եղանակսն ի մարմին ածել, զարարեալսն յիմաստնոց, որ ցայն ժամանակս չեւ էր ափոեալ ընդ աշխարհս: Սա եկեալ գրեաց և ուսուց բազմաց և բազում հանգիստ եղև ի ծանր աշխատութեանցն»,— գրում է Կիրակոս Գանձակեցին¹⁷⁹:

Տարոնացին Կիլիկիայում իսմբագրված ու խազագրված երգարանները բերում և տարածում է Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում¹⁸⁰: Հաղարծինի դպրոցում Տարոնացին ուսուցանում է երաժշտություն և իմաստասիրական գիտություններ, ուշադրություն է դարձնում հատկապես երաժշտական արվեստի կատարելագործմանը, նոր մակարդակի ու որակի է հասցնում պաշտոներգության կատարումը: Խաչատուր Տարոնացին գրել է նաև գանձեր ու շարականներ: Նրա ամենանշանավոր ստեղծագործությունը «Խորիուրդ խորին» զգեստավորման շարականի «յոյժ ծանր» տարբերակն է¹⁸¹, որ առաջին անգամ նա կատարել է բարձրաստիճան հոգևորականների ներկայությամբ Լոռենում Զաքարե իշխանի հրամանով մատուցված բացօթյա պատարագի ժամանակ¹⁸²:

Հայտնի չէ, թե քանի տարի է Խաչատուրը Հաղարծինի վանքի առաջնորդ եղել: Նրա վանահայրության տարիներին վանքն ստացել է բազմաթիվ նվիրատվություններ, կատարվել են շինարարական աշխատանքներ: Խաչատուրին առաջին անգամ տեսնում ենք 1184 թվականին, երբ նա վերանորոգում է թշնամու ասպատակություններից ավերված վանքը, իսկ մահը պետք է լինի 1205-1206 թվականներին, որովհետև զավիթի մուտքի նվիրատվական մի արձանագրության մեջ 1206 թվականին վանքի առաջնորդ է հիշվում

¹⁷⁹ Կիրակոս Գանձակեցի, Էջ 212:

¹⁸⁰ **Ն. Թահմիզյան**, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դարերում, Էջ 278:

¹⁸¹ Զայնագրեալ երգեցողութիւնը Սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, 1878, Էջ 192, **Գ. Ավետիքեան**, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1786, Էջ 584-585, **Հ. Անասյան**, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, Էջ LXVIII:

¹⁸² **Մ. Զամշյան**, Հայոց պատմություն, հ. Գ, Էջ 179-182:

տեր Ստեփանոսը¹⁸³: Տարոնացին վախճանվել է Հաղարծինում և այնտեղ էլ թաղվել¹⁸⁴:

Հաղարծինի գրչության կենտրոնի վաղ շրջանի վերաբերյալ տեղեկությունները սահմանափակվում են Խաչատուր Տարոնացու մասին եղած տվյալներով և եկեղեցու որմերին պահպանված երկու արձանագրությամբ: Այս շրջանից որևէ ձեռագիր մեզ չի հասել, և չունենք գրավոր տեղեկություն այն մասին, որ Տարոնացու դպրոցում նաև ձեռագիր մատյաններ են օրինակվել: Բայց նկատի ունենալով այն, որ Խաչատուրը արևելքից բերված խազագրված երգարանները, կամ ինչպես Գանձակեցին է ասում, խազերը ջանասիրաբար տարածում էր Հայաստանի հոգևոր կենտրոններում, պետք է հոգար նաև այդ երաժշտածիսական ժողովածուները բազմացնելու, ինչու ոչ՝ խմբագրելու և լրացնելու մասին: Իսկ Հաղարծինի պարագայում դրանք առավել քան անհրաժեշտ էին: Այլ իմադիր է, որ այս կենտրոնից որևէ ձեռագիր մեզ չի հասել:

Այն, որ ձեռագիր մատյաններն անշափ արժևորվել են Հաղարծինում, երևում է զավիշի արևելյան պատի որմնայունները միացնող կամարների վրա պահպանված նվիրատվական երկու արձանագրություններից, որոնց համաձայն, նվիրատունները նաև թանկարժեք ձեռագիր մատյաններ ու իրեր են նվիրել եկեղեցուն: Դրանցից մեկի համաձայն՝ Ներսես քահանան ուկով ու արծաթով զարդարված մի Ավետարան է նվիրել Ս. Գրիգոր եկեղեցուն. «Ես՝ Ներսես քահանայ ետու զաւազ Աւետարանս ի Սուրբ Գրիգորս զարդարել յուսը եւ յարծաթո»¹⁸⁵: Երկրորդ արձանագրությունը՝ 1217 թվականին թողել են Հովհաննես և Սարգիս քահանաները: Նրանք Ս. Գրիգոր եկեղեցուն նվիրել են թանկարժեք մասնատուի, շուրջառ և մեկ Ավետարան. «Ես՝ Ցոհաննես եւ Սարգիս քահանայք տուաք ի Սուրբ Գրիգորս զանգին մարզարիտն զաւազ մասն, Ա. շուրջառ, եւ Ա. Աւետարան»¹⁸⁶:

¹⁸³ Դիվան, պրակ VI, էջ 24:

¹⁸⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 211:

¹⁸⁵ Դիվան, պրակ VI, էջ 41:

¹⁸⁶ Նույն տեղում, էջ 36:

Հաղարծինի վանքի երկրորդ բեղուն շրջանը Հռվիաննես Արմանեցու առաջնորդության տարիներն էին: Նա 1248 թվականին սրբատաշ քարերով կառուցել է տափս նշանավոր սեղանատունը, որի երդիկին և հարավային մուտքին պահպանված արձանագրությունների համաձայն՝ այն կառուցել է ճարտարապետ Մինասը, աշխատանքներին մասնակցել են Գրիգորեար և Մուսեար, իսկ կառուցման ծախսերը հոգացել է Կուտա անունով մի հոգևորական¹⁸⁷: Տեղեկություն չունենք այն մասին, որ Արմանեցու ժամանակ Հաղարծինի դպրոցը շարունակել է գործունեությունը: Սեղանատան կառուցումից կարճ ժամանակ անց Հռվիաննես Արմանեցին տեղափոխվում է Գետիկավանք, դառնում վանքի առաջնորդ, իսկ 1256 թվականին եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո վերջնականապես հաստատվում է Հաղբատում¹⁸⁸:

Ի՞նչ ձեռագրական ժառանգություն ենք ստացել Հաղարծինից:

Հաղարծինում գրված և մեզ հասած միակ ձեռագիրը XIII դարից է: Այն պահպում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանում¹⁸⁹: Մատյանը երկաթագիր մազաղաթյա Ավետարան է, կաշեկազմ՝ վրան Հարության և Խաչելության արծաթյա քանդակներով: Հուսկի որդի Աստվածատուրը 1284 թվականին Ավետարանն օրինակել է Գրիգոր քահանայի խնդրանքով և գրչության տեղը նշել՝ Հաւարծին: «Ի թուականութեանս Հայոց ԶԼԳ (1284) գրեցաւ Աւետարանս Յոհանու... ի վանս Հաւարծին կոչեցեալ՝ ընդ հուանեաւ

¹⁸⁷ «Ի թվին ՈՂԷ (1248) յառաջնորդութեան Յովլաննիսի վարդապետի ի շինութեան աստուածաշէն տանս եւ ես՝ Կուտաս, արարող սնունդ սրբոց եսու աւգնությին տրապիչազիս»: Նույն տեղում, էջ 58:

¹⁸⁸ Այս մասին գրում է Վիրակոս Գանձակեցին: «Ճեր Յովիաննէս Արմանեցին, որ և Հաղարծին էր առաջնորդ, և ձեռնադրեցաւ եպիսկոպոս յեօրն հարիւր իինգ թուականին (1256): Սա շինեաց ի Հաղարծինն զսեղանատունն երևելի՝ սրբատաշ վիմօր, և ապա գնաց ի մեծ աթոռն ի Հաղբատ»: Կիրակոս Գանձակեցի, էջ 223, Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, էջ 1951:

¹⁸⁹ Եղմ. 2905, թերթ՝ 298, նյութ՝ մազաղաթ, 16,5×12,5, զիթ՝ երկաթագիր, տող՝ 17: Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Թ, Երուսաղեմ, 1979, էջ 105: Ձեռագրի նկարագրությանն ավելի վաղ անդրադարձել է նաև Ա. Սյուրբելեանը: Ա. Սյուրբելեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց վանքի, հ. Ա, 1948, էջ 359:

Սուլք Գրիգորին մեր Լուսաւորչի, ի ձեռն անարժան ծառայի Տեառն եւ անպիտան քահանայ Աստուածատրոյ՝ Յուսկայ որդոյ, եւ գրեցաւ հրամանաւ եւ արդեամբք սուլք եւ պատուական քահանայի Գրիգոր անուն կոչեցեալ»¹⁹⁰:

Գրիշը հիշատակարանում խնդրում է հիշել Գրիգոր քահանային, նրա կնոջը՝ Տիրանցին, նորը՝ Մարիամին, ինչպես նաև Միսիթարին և Նահապետին՝ իբրև արժանավոր քահանաների, Փթութին, որ մատյանի գրության ժամանակ «վասն յիշատակի հոգյ իւրոյ» օժանդակել է գրչին: Աստվածատուրը խնդրում է անմեղադրություն, որովհետև գրության ու մանրանկարչական արվեստում չունի բավարար գիտելիքներ. «Խոշորութիւն գրոյս անմեղադիր լեռուք, աղաչեմ, եւ եթէ սիսալանս ինչ գտանեք, ուղղեցէք աննախանձարար, գիտեք զի ամենայն մսեղի տկարանայ ի գործս իւր: Հասու մարդ որ տեսնուս, վասն նշանացս մի մեղադրել, զի ոչ ուսեալ էի, եւ ոչ այլ նկարել, այդ չափ կարացի»¹⁹¹:

Ունենք ևս երեք ձեռագիր մատյան, որոնք թեև գրվել են այլ վայրերում, բայց կազմվել ու նկարագրվել են Հաղարծինում:

1296 թվականին Բարձանց գյուղում Իշխան սարկավագի խնդրանքով Անանիա սարկավագի օրինակած Մաշտոցը 1429 թվականին Հաղարծինում կազմել է Սարգիս սարկավագը և տեղը կոչել Աղրծին. «Ես՝ մեղայպարտ Սարգիս սարգաւակս, որ կազմեցի Մաշտոցս ի յիշատակ ինձ եւ ծնողաց... ի հովանեաւ Սուլք Աստուածածին, որ կոչի յԱղրծին»¹⁹²: 1624-ին Հովհաննես վարդապետ կազմել է մի Ավետարան, որը 1422 թվականին գրել ու ծաղկել է Սարգիս եպիսկոպոս Պարտավեցին¹⁹³: Ավետարանը Հաղարծին է հասել խիստ քայլայված վիճակով: Այսոեւ Հովհաննեսը լրացրել է

¹⁹⁰ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, Էջ 560:

¹⁹¹ Նոյն տեղում:

¹⁹² ՍՍ 1028, թերթ՝ 176, նյութ՝ թուղթ, 16,2×12,2, զիր՝ բոլորգիր, տող՝ 18-19: Սայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Դ, Էջ 113-118:

¹⁹³ ՍՍ 8423, թերթ՝ 172, նյութ՝ թուղթ, 15,5×12,5, զիր՝ բոլորգիր, տող՝ 19:

առաջին երկու գլուխները, ծաղկել Մարկոսի անվանաթերթը և կազմել մատյանը¹⁹⁴: Ղուկասի և Հովհաննու անվանաթերթերի ծաղկազարդումը կատարել է Սարգիս Պարտավեցին:

Հպանցիկ անդրադառնանք այս գրչին, որը չնայած գործել է Գեղարքունիքում, բայց իր մեջ կրում է ուստիքյան ավանդների ազդեցությունը: Անունից երեսում է, որ Սարգիս Եպիսկոպոսը Պարտավ քաղաքից էր, Սուլթանշահի և Մինահայրունի որդին, ինչպես ինքն է հաղորդում հիշատակարաններում (ՄՄ ձեռ. 4873, թ. 366ա, ՄՄ ձեռ. 8765, թ. 227թ): Ծնվել է 1357 թվականին, կրթություն ստանալուց հետո տեղափոխվել է Գեղարքունիքի Կոթիփորո վանք և քառասուներկու տարի գրադարձ գրչությամբ: Նա արագագիր ու վարժ գրիչ էր և կարող էր մեկ ամսում մեկ ձեռագիր ավարտել: Չնայած սրան՝ Սարգսից մեզ վեց ձեռագիր է հասել, որոնք նա գրել է կյանքի վերջին տարիներին՝ 1416-1427 թվականների ընթացքում¹⁹⁵: Պարտավում գրադարձ է գրչության արվեստով, թե ոչ, չգիտենք: Հայտնի է, որ Պարտավից ընդհանրապես ձեռագիր մատյան չի պահպանվել, իսկ Սարգսից մեզ հասած բոլոր մատյանները գրված են Կոթիփորո Ս. Աստվածածին և Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցիներում:

1511 թվականին Մանուել քահանայի խնդրանքով Գրիգոր գրչի՝ Սոթա գյուղաքաղաքում օրինակած Ավետարանը 1627-ին Հաղարձինում նույնապես նկարազարդել ու կազմել է Հովհաննես վարդապետը¹⁹⁶:

Մոնղոլ-թաթարական արշավանքներից հետո լրվում ու ամայանում է վանքը և կրկին վերահաստատվում միայն XVII դարում: Վանական համալիրում կատարվում են նորոգչական աշխատանքներ: 1681 թվականին Ս. Աստվածածին և Ս. Գրիգոր Եկեղեցիները վերանորոգվում են թիֆլիսեցի Զիթառյանների ու փակապատեցի

¹⁹⁴ Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Բ, Երևան, 1978, էջ 145:

¹⁹⁵ Սարգիս Պարտավեցու մասին մանրամասն տե՛ս Ա. Պազարոսյան, Գրիգոր Սարգիս Պարտավեցի, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, թ. 6, էջ 95-101:

¹⁹⁶ ՄՄ 10162, թերթ՝ 105, նյութ՝ թուղթ, 16,4×12,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 18:

Խոջազյուկի որդիների միջոցներով, իսկ Գրիգորը և Դավիթը հոգում են զմբեթի ծախսերը¹⁹⁷: Հակոբ Եալիսկոպոսի առաջնորդության տարիներին թիֆլիսեցի Հոգիշանի որդիների և թոռների միջոցներով է վերակառուցվում է Ս. Ստեփանոս Եկեղեցին¹⁹⁸:

XIX դարում կրկին ամպյանում է վանքը՝ վերածվում անասնագոմի ու ավազակների կացարանի¹⁹⁹: 1895 թվականին Կայենն գավառի երթեմնի գեղեցկուիին վերջնականապես լքվում է և դադարում հոգևոր կենտրոն լինելուց:

Այսպիսով, Հաղարծինի վանքը միջնադարյան Հայաստանի հոգևոր-մշակութային և ուսումնական նշանավոր կենտրոններից է, որի ծաղկումը եղավ XII-XIII դարերի սահմանագծին՝ բարունապես Խաչատուր Տարոնացու առաջնորդության և բուռն գործունեության տարիներին: Հաղարծինի վերելքի երկրորդ շրջանը կապվում է Հովհաննես Արմանեցու անվան հետ: Չնայած ենթադրելի է, որ այս կենտրոնում բազմաթիվ ձեռագրեր են գրվել, բայց, ցավոք, մեզ է հասել միայն մեկ ձեռագիր, վերը նշված՝ 1284 թվականի մագղացյա Ավետարանը:

¹⁹⁷ Դիվան, պրակ VI, էջ 48:

¹⁹⁸ Նոյն տեղում, էջ 55:

¹⁹⁹ **Ս. Մքրատեանց,** Տեղագիր Գեղարքունիք Ծովագարդ գաւառի..., էջ 185:

ՄՈՐՈ ԶՈՐՈ ՎԱՆՔ

Պատմական Կայենո գավառի նշանավոր հոգևոր կենտրոններից է Մորո ձորո վանքը, որը գտնվում է ներկայիս Իջևանի շրջանի Լուսահովիտ, նախկինում Ծովիզ կոչված գյուղի հարավարևմտյան կողմում՝ անտառապատ լեռներով շրջապատված և դժվարամատելի ձորակի աջ ափին²⁰⁰: Ենթադրվում է, որ վանքն իր անունը ստացել է մոտակա «Մորու թալա» կոչվող ձորակի անունից, որը հարուստ է եղել մոշի և մորու թփերով:

Մորո ձորո վանքի մասին եղած տեղեկությունները չափազանց աղքատ են: Մատենագրական հիշատակություններ չեն պահպանվել: Վանքի պատմության ուսումնասիրման հիմնական աղբյուրը վիմագիր արձանագրություններն են, որոնք վերաբերում են XII դարավերջին և XIII դարասկզբին և չնայած սակավ, բայց արժեքավոր տեղեկություններ են պարունակում ոչ միայն վանական կենտրոնի, այլև գավառի պատմության վերաբերյալ: Դատելով ճարտարապետական որոշ առանձնահատկություններից և զարդարանդակների ոճից՝ մասնագետները վանքի հիմնադրումը դնում են վաղ միջնադարում այն վերագրելով VI-VII դարերին, իսկ վերակառուցումը տեղի է ունեցել XII-XIII դարերում²⁰¹: Դաշնալով Մահկանաքերդի իշխանների նշանավոր հոգևոր կենտրոններից մեկը՝ արարների և սելջուկ-թուրքերի արշավանքներից ավերված վանքը հիմնովին վերակառուցվում և բարգավաճում է Մահկանաքերդի Արծրունիների, ապա Զաքարյան իշխանների հովանավորությամբ: Վրաց Գեորգի Գ թագավորի հատուկ արտոնագրով և Զուրդ իշխանի հովանավորությամբ վանքն ազատվում է բոլոր տեսակի հարկերից և համանվում հայր Հովհաննեսի առաջնորդությանը: Պատմական այս փաստը, որը տեղի է ունեցել մինչև 1184 թվականը, այսինքն՝ մինչև

²⁰⁰ Տեղացիները հոգևոր այս կոնտրոնը գյուղի անունով կոչել են նաև Ծովիզի վանք:

²⁰¹ Ս. Ավագյան, Մորո ձոր վանքը և նրա վիմարձանագրությունները, «Էջ միածին», 1967, թ. Գ, էջ 56-60, թ. Դ, էջ 56-60:

Գեղրգի Գ-ի մահը, արձանագրվել է Ս. Աստվածածին եկեղեցու կյուսիսային խորանի թաղի վրա՝ Գեղրգի թագավորի և քուրդ իշխանի անունից. «Անուամբ ամենակալին Աստուծոյ՝ ես՝ Գիաւրգի՝ թագաւորաց թագաւոր, եսու զՄոր ձորո վանքս հաւրն Յովանիսի եւ արարի ազատ յամենայն հարկէ Ամիր Քրդին հոգեցողութեամբ»²⁰²:

1197 թվականին Իվանե Զաքարյան իշխանի և նրա քրոջ՝ Նանայի հովանավորութամբ վերանորոգվում է վանքը և վերականգնվում է եկեղեցու գմբեթը. «Ի թուին ՈԽԶ (1197) ի ժամանակ երկուց եղբարց Զաքարի եւ Իւանէ, շինեաց Իւանէ զվանքս Մորո ձորո: Եւ ես՝ Նանա, կամակից եւ աւգնական եղէ Աստուծածինս եւ միարանեցա սուրբ ուխտիս եւ պատուական հաւրս Գրիգոր»²⁰³: Գրիգորն առաջնորդ է դառնում Հռվիաննեսից հետո և հոգում միարանության տնտեսական խնդիրների մասին. նա զնում է ջրադաց, տնկում է այզի և այդ մասին գմբեթի թմբուկի արևմտյան մասին թողնում արձանագրություն²⁰⁴: Իվանեի՝ 1213 թվականին գլխավոր խորանի թողած ընդարձակ արձանագրության համաձայն՝ նա կրկին նորոգում է վանքը և հայր Եվլագրին ժառանգաբար՝ «յազգէ յազգ մինչեւ յալիտեան» հանձնում վանքի առաջնորդությունը. «Ի թվին Հայոց ՈԿԲ (1213) թագաւորութեանն Գիաւրգէ մեք՝ որդիք ամիրսպասալար Սարգսի՝ աթարակ Իւանէ եւ ամիրսպասալար Զաքարի առաք զերկիրս Հայոց ի յանալրէնաց եւ շինեցար զվանքս... Նորոգեցաւ Ս. Աստուծածինս յառաջնորդութեան հաւր Եւազրի հեզի եւ խոնարիի: Եւ հաստատեցի զնա առաջնորդ յազգէ յազգ մինչեւ յալիտեան»²⁰⁵: Սրանից առաջ Իվանեն օտարներից հայրենի երկիրն ազատագրելու և շենացնելու մասին մի արձանագրություն էլ թողել էր Հաղարծինի զավիթում²⁰⁶:

XIII դարից հետո Մորո ձորո վանքի մասին հիշատակագրությունները լրում են: Մոնղոլական արշավանքների հետևանքով

²⁰² Դիվան, պրակ VI, էջ 139:

²⁰³ Նույն տեղում, էջ 135:

²⁰⁴ Նույն տեղում, էջ 136:

²⁰⁵ Նույն տեղում, էջ 138:

²⁰⁶ Նույն տեղում, էջ 22:

վանքը կորցնում է մահկանաբերողիների ժամանակ ունեցած իր նախկին հեղինակությունը և մինչև XIX դարի վերջը գործում որպես Ծռվիզ գյուղի ծխական եկեղեցի: Իշխանական հովանին վայելող երեմնի նշանավոր վանական համալիրից այսօր կանգուն են միայն Ս. Աստվածածին եկեղեցին և մի քանի անթվակիր խաչքարեր, իսկ նրանցից հարավ-արևելք՝ դեպի Համզայի լեռնաշղթան տարածված են միարանների կացարանների և օժանդակ շինությունների ավերակները:

Մորո ձորո վանքում գրված ձեռագիր մատյաններ մեզ չեն հասել: Փոխարենն այստեղ պահվել են Ավետարաններ, որոնցից հինգը XIX դարում տեղում տեսել ու նկարագրել է Մակար Եպիսկոպոս Բարիուլարյանցը²⁰⁷: Դժբախտաբար, այդ ձեռագրերից միայն երկուսի գտնվելու վայրն է հայտնի:

Մորո ձորո վանքում են պահվել այժմ Մաշտոցյան Մատենադարանի երկու ձեռագիր մատյաններ՝ 1431 թվականին Ամիդում Գրիգոր գրչի ձեռամբ գրված և Աբրահամ վարդապետի ծաղկած Ավետարանը²⁰⁸ և XVI դարում մահտեսի Գուլիբաթի խնդրանքով օրինակված թղթյա գեղեցկագիր ու պատկերազարդ Ավետարանը, որի գրչության վայրն ու գրիչն անհայտ են մնում գլխավոր հիշատակարանը ընկած լինելու պատճառով²⁰⁹:

Վանքում պահված հաջորդ երեք ձեռագրերի հետագա ճակատագրերը և գտնվելու վայրերն անհայտ են: Դրանցից առաջինն ամբողջապես գլխագրերով գրված հնագույն թղթյա մատյան է եղել՝ առանց հիշատակարանի, ուստի անհայտ են մնում նաև ձեռագրի գրչության հանգամանքները: Երկրորդը XIV դարի թղթյա պատկերազարդ Ավետարան է, որն օրինակել է Հակոբ գրիչը Սոսես կրոնավորի խնդրանքով. «Գրեցաւ Հայկական թուականիս ԶՀԱ (1322) յանապատս Աղուանածոր ընդ հովանեաւ սրբուհոյ մաւրս լուսոյ Աստուածածին և Վասիլ թագաւորի Սուլք Նշանիս... ձեռամբ ամե-

²⁰⁷ **Մ. Բարիուլարեանց**, Արցախ, էջ 343-344:

²⁰⁸ ՍՍ ձեռ. 6430, թերթ՝ 310, նյութ՝ թուղթ, 22,5×16, գիր՝ բոլորգիր, տող՝ 19: **Լ. Խաչիկյան**, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, Երևան, 1955, էջ 403-406:

²⁰⁹ ՍՍ ձեռ. 3975, թերթ՝ 318, նյութ՝ թուղթ, 18,5×13, գիր՝ բոլորգիր, տող՝ 19:

նամեղ և անարիեստ գրչի Յակոբայ մեղապարտ... հանդեպ սրբար ծովուն, ուր մանր ձկունք ելանեն... ստացող սորա Մոսէս կրոնաւոր հանդերձ ծնողիւք և եղբայր կենդանեալք»: «իշատակարանը թերի է, սակայն հայտնի են գրչության վայրը և թվականը. Ավետարանը գրվել է 1322 թվականին Աղվանաձոր անապատում, որը Ս. Բարիուղարյանցը տեղադրում է Վանի տարածքում: Իսկ երրորդը 1778 թվականին Գրիգոր Եպիսկոպոս Աշտարակեցու Բջնիի Ս. Աստվածածին Եկեղեցում օրինակած Ավետարանն է, որ ստացել են Մելիքիաթունն ու իր ամուսինը և նվիրել Աշտարակի Կարմրավոր Եկեղեցուն²¹⁰:

Վաղ միջնադարում կառուցված Մորո ձորո վանքը XIII-XIV դարերում դառնում է Մահիկանաքերդի և Կայենո իշխանների նշանավոր հոգևոր կենտրոններից մեկը: Սակայն մոնղոլական արշավանքների հետևանքով կորցնելով իր երրեմնի դերը՝ այն վերածվում է զյուղական ծխական Եկեղեցու: Մորո ձորո վանքում գրված ձեռագրեր մեզ չեն հասել, բայց այստեղ պահվել են հինգ Ավետարաններ, որոնցից երկուսն այժմ գտնվում են Մաշտոցյան Մատենադարանում, իսկ երեքի գտնվելու վայրն անհայտ է:

²¹⁰ **Ս. Բարիուղարեանց**, Արցախ, էջ 343-344:

ԴԵՂՁՈՒՏԻ ՎԱՆՔԸ ԵՎ ԱՌԱՋԵԼ ՎԱՐՄԱՊԵՏԸ

Պատմական Կայենո գավառի հոգևոր-մշակութային կենտրոն Դեղձուտի վանքի²¹¹ պատմությունը քիչ է ուսումնասիրված: Պատճառն այն է, որ բնակավայրերից ու բանուկ ճանապարհներից կտրված վայրում գտնվող վանքի ու նրա շրջակայքի վերաբերյալ եղած նյութերը շատ քիչ են: Մեզ հասած հիմնական աղբյուրը տասներկու վիմագիր արձանագրություններ (հիմնականում նվիրատվական) և երեք ձեռագիր հիշատակարաններ են, որոնց հաղորդած տեղեկություններից երևում է, որ միշնադարում Դեղձուտը՝ իբրև հոգևոր և գրչության կենտրոն, լայն ճանաչում է ունեցել, իսկ նրա բարունապետը մեծարվել է որպես «մեծ և հոչակավոր վարդապետ»: Այնուամենայնիվ, միշնադարյան ոչ մի հեղինակ չի հիշատակում Դեղձուտը: Անգամ Կիրակոս Գանձակեցին, որ իր Պատմության մեջ քանից հիշում է ոչ հեռու գտնվող Մահկանաքերդն ու Մահկանաքերդի իշխաններին²¹², ոչ մի ակնարկ չունի Դեղձուտի վանքի ու նրա բարունապետի մասին: Սադուն Բ-ին հիշատակող Գրիգոր Ակներցին Դեղձուտի մասին նույնական լուրմ է²¹³:

Վանական համակառույցի նկատմամբ հետաքրքրություն առաջացավ XIX դարավերջին, երբ նախ մի նյութ հրապարակվեց «Ար-

²¹¹ Վանքն աղբյուրներում կոչվել է նաև Դեղձնուտ, Դեղձկուտ, Դեղձնուտ, Դեղնուտ անուններով: **Մ. Քարիսուդարեանց**, Արցախ, էջ 380-381, **Հ. Օսկեան**, Արցախի վանքերը, էջ 218-219, **Թ. Հակոբյան, Ստ. Մելք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հյայստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**, հ. 2, էջ 75:

²¹² **Կիրակոս Գանձակեցի**, էջ 208-210, 215, 365, 386:

²¹³ **Գրիգոր Վրդ. Ակներցի**, Պատմութիւն թաթարաց, առաջաբանը և բնագիրը՝ **Ն. Պողարեանի**, Երուսաղէմ, 1974, էջ 42, 43, 48, 49, տես նաև **Գրիգոր Ակներցի**, Պատմութիւն վասն ազգին նետողաց, քնն. բնագիրը՝ **Ն. Պողարյանի**, արևելահայերեն թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները՝ **Գ. Խաչատրյանի և Վ. Եղիազարյանի**, Երևան, 2011, էջ 69, 71, 81, 83:

ձագանքում»²¹⁴, ապա Մակար Եպիսկոպոս Բարխուղարյանց²¹⁵ անդրադարձավ Դեղնուտին՝ տալով ճանաչողական բնույթի տեղեկություններ, իսկ նախորդ դարի հիսունականների սկզբին Գ. Սարգսյանն առաջին անգամ ուսումնասիրեց վանքն ու հրատարակեց նրա վիմագրերը²¹⁶: Սակայն Դեղնուտը՝ որպես գրչության կենտրոն, մնաց չուսումնասիրված, իսկ նրա բարունապետի անձի ինքնության հարցը՝ վիճահարույց:

Դեղնուտի վանքը և համանուն բնակատեղին, որոնցից միայն ավերակներ են մնացել, գտնվում են Իջևանի շրջանի Կիրանց, նախկինում Կունեն կոչված գյուղի հարավ-արևմուտք՝ Խնձորկուտ գետակի ձախ ափին՝ անտառապատ լեռների լանջերին: Վանական համալիրի դեմ-դիմացի բարձունքում Մահկանարերդ ամրոցն է, որը տեղաբնակներն անվանել են «քերդի քար» (այն դարձրել են հատուկ անուն՝ Բերդարար կամ Բերդքար)²¹⁷: Անարիկ ամրոցը XII-XIII դարերում վրաց արքունիքում քարձր հեղինակության հասած Մահկանարերդի Արծրունիների նատավայրն էր: Ծրջակայքով կոչվել է «գաւառ Մահկանարերդոյ» կամ «յերկիր Մահկանարերդոյ»: Դեղնուտը մտնում էր Մահկանարերդի գավառի մեջ, ինչպես վկայված է նաև հիշատակարաններում «յերկիրս Մահկանարերդոյ՝ ի վանս Դեղնուտի»: Դեղնուտով էր անցնում Կյուրիկյանների Տաշիր-Չորագետի մայրաքաղաք Լոռիիրերդ տանող քարավանային ճանապարհը:

Զեռագիր աղբյուրներում առաջին անգամ Դեղնուտի վանքը հիշատակվում է 1042 թվականին Բասեն գավառի Որդորու քաղաքում երկաթագրով օրինակված մագաղաթյա մի Ավետարանի հետա-

²¹⁴ **Քաջիկեան**, Ճանապարհորդական յիշատակարան (հոդվածաշար), «Արձագանք», 1888, թ. 12, էջ 159:

²¹⁵ **Մ. Բարխուղարեանց**, Արցախ, էջ 380-381:

²¹⁶ **Գ. Սարգսյան**, Դեղնուտի վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1953, թ. Դ, էջ 33-44:

²¹⁷ **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարավից շրջանների տեղանունների բառարան, հ.1, Երևան, 1986, էջ 667, **Ա. Սիմոնյան**, Մահկանարերդ, «Էջմիածին», 2003, թ. Է, էջ 47:

գայի (XII դար) հիշատակարանում²¹⁸: Ավետարանը Մեսրոպի որդի Սարկավագ քահանայի համար օրինակել է Սարգիս գրիչը: Հիշատակարանում նշվում է, որ մատյանը ձեռք է բերել Հովհաննեսը և նվիրել Դեղնուտի վանքին. «Ես՝ նուաստ Յոհաննէս, ստացա զուրք Աւետարանս յիմ հայլ արդեանց եւ եսու վասն միաբանութեան յիշատակ հոգւոյ իմոյ ի սուրբ վանքն Դեղնուտ: Արդ, մի ոք իշխեսցէ հանել զայ յայս վանիցս, զի մի եւ ինքն ելցէ ի կենաց որդույն Աստուծոյ»²¹⁹:

Մատյանը կրկնազիր է: XIII դարում քերել են մագաղաթը և վրայից գրել են բոլորգրով, սակայն Հովհաննեսի երկաթագրով գրված հիշատակարանը թողել են անաղարտ: Չնայած Դեղնուտին վերաբերող գրավոր առաջին հիշատակությունը XII դարից է, ենթադրվում է, որ գլխավոր եկեղեցին հիմնադրվել է VIII դարում կառուցված շինուազան տեղում, որ նույնացվել է Տաղձանք կոչված վանքի հետ²²⁰:

Վիմազիր արձանագրություններում Դեղնուտի վանքի մասին հիշատակությունները վերագրվում են XIII դարի երկրորդ կեսին, երբ Սահկանաբերդի տեր է դառնում Քուրդ իշխանի թոռնորդին՝ Շերքարոքի որդի Սադուն Բ-ը, իսկ Դեղնուտ և Առաքելոց վանքերի առաջնորդությունն ստամձնում է Առաքել վարդապետը: Արձանագրության համաձայն՝ Դեղնուտի վանական համալիրի կառուցումն ավարտվել է 1274 թվականին: Այս բաղկացած է գլխավոր եկեղեցուց՝ հար և նման Գետիկավանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն, ինչը ենթադրել է տալիս, որ ժամանակով և տարածությամբ

²¹⁸ ՄՄ ձեռ. 6384, թերթ՝ 256, նյութ՝ մագաղաթ, 24, 5 թ 19, գիր՝ ուղրաձիգ երկաթագիր, տող՝ 21: **Ա. Մաթեևսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 88:

²¹⁹ ՄՄ ձեռ. 6384, թ. 107 թ: Հովհաննեսի հիշատակարանը Ա. Մաթեևսյանը տեղադրել է ԺԲ դարի հիշատակարանների շարքում: **Ա. Մաթեևսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 327:

²²⁰ **Թ. Հակոբյան**, **Ստ. Սելիք-Բախչյան**, **Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարուստից շրջանների տեղանունների բառապան, հ. 2, էջ 76: Այս Տաղձանք կոչված հին վանքը չպետք է շփոթել Արցախի Մեծկվենք գավառում Ղ. Ալիշանի հիշատակած Տաղձանք անունով վայրի հետ, որը VI դարից եպիսկոպոսնիստ է եղել: Տե՛ս **Պ. Ալիշան**, Արցախ, էջ 39:

իրար մոտ երկու եկեղեցիների կառուցող վարպետը նույն անձը կարող է լինել²²¹: Գիշավոր եկեղեցուն արևմուտքից կից է զավիթը, իսկ հյուսիսից երկրորդ փոքր եկեղեցին է՝ թաղապատ, հասարակ մի շենք՝ կիսամշակ քարերով ու կրաշաղախով։ Վանական համալիրի մեջ են մտել միաբանների բնակելի և օժանդակ շինութունները, ինչպես նաև վանքից հյուսիս-արևմուտք տարածված Դեղնուտ բնակատեղին ու նրան կից գերեզմանոցը։

Առաքել վարդապետը եկեղեցու շինարարական արձանագրությունը թողել է գլխավոր եկեղեցու մուտքի մոտ կանգնեցված գեղաքանդակ խաչքարին, որը, չնայած պատվանդանից ընկնելով ջարդվել ու բեկորների է վերածվել, բայց արձանագրությունը կարդացվում է գրեթե ամբողջապես։ «Անեղին Աստուծոյ զարութեամբ յաշխարհակալութեան Աքաղա դանին եւ յիշխանութեան ամիրապասալար աթաքարակ Սադունին եւ՝ Առաքելս՝ նուաստ սպասաւոր բանին Աստուծոյ, յերկրեն Կիլիկոն՝ ի զաւառէն Տարսունի, կամակցութեամբ եղաքարց շինեցար գեկեղեցիս ամենայն պատրաստութեամբ եւ զգալիքս եւ կանգնեցար զուրբը նշանս աստուածքների ի նեղ ժամանակի դառն աշխատութեամբ բարեխաւս մեզ եւ ծնողաց մերոց ... եւ պարոնին եւ զաւակաց նորա, որ եղեւ ձեռնտու եւ միշթար կենաց մերոց արքեպիսկոպոսութեան Հաղբատա տէր Յովանեսի»²²²։

Ուրեմն, Առաքելը Կիլիկիայի Տարսոն զավարից է և Դեղնուտ է եկել Աքաղա խանի աշխարհակալության, Հովհաննես Խաչենցու առաջնորդության և Սադուն Բ-ի իշխանության տարիներին։ Հետևելով այս արձանագրությանը՝ Առաքելի Մահկանաբերդ զալը պետք է դնել 1265 թվականին, այսինքն Աքաղա խանի կառավարման սկզբից, կամ դրանից ոչ շատ հետո, մինչև 1267 թվականը, որովհետև Առաքելոց վաճքում ծնողների հիշատակին Բիսում քահանայի կանգնեցրած խաչքարի այս թվականի արձանագրության մեջ Առաքելն արդեն հիշվում է որպես առաջնորդ և «մեծ վարդա-

²²¹ Նոր Գետիկի Ս. Գրիգոր Լուսավորիչ եռախորան եկեղեցու շինարար վարպետի անունը հայտնի չէ։ Կառուցման հանգամանքների մասին տե՛ս վերևում Նոր Գետիկին նվիրված բաժնում։

²²² Դիվան, պրակ VI, էջ 112։

պես»: «Ի թվիս Հայոց ԶԺԶ (1267) իշխանութիւն մեծ իշխանաց իշխանին Սաղունի եւ յառաջնորդութիւն մեծ վարդապետին Առաքելի, որ էր նմանեալ սուրբ Առաքելոցն եւ էր դուռն եւ արեվելը Երկրիս եւ պարծանք եւ բարեխոս առ Աստուած եւ մարդիկ»²²³: Այն, որ Առաքելը մեծ հեղինակություն էր վայելում տակալին 1267 թվականին, երբ դեռ Առաքելոց վանքում էր, երևում է արձանագիր հեղինակի հաղորդումից, որ Առաքելը նման էր սուրբ առաքյալներին և Երկրի արևելյան կողմում պարծանք ու բարեխոս էր Աստծո ու մարդկանց առաջ: Հետազայում Առաքելը հիշվում է Դեղնուտի վանքի ևս Երկու՝ 1276 և 1292 թվականների արձանագրություններում, ինչպես նաև 1280-ին գրված Երկու ձեռագրերի հիշատակարանների մեջ:

Համարեկով Առաքելոց և Դեղնուտ վանքերի թվակիր արձանագրություններն ու ձեռագիր հիշատակարանները, ստանում ենք հետևյալ պատկերը: Մահկանաբերդ գավառում շուրջ քսանյոթ տարվա ժամանակաշրջան է ընդգրկում Առաքելի գործունեությունը: 1265-1267 թվականների ընթացքում գալով Մահկանաբերդ՝ Առաքելը սկզբում հաստատվել է Առաքելոց վանքում, եղել է վանքի առաջնորդը և կոչվել է մեծ վարդապետ: Հետազայում առաջնորդել է նաև Դեղնուտի միաբանությունը, 1274 թվականին ավարտել է Դեղնուտի գիխավոր Եկեղեցու ու զավիթի շինարարությունը: Միաբանության և ուսումնական կենտրոնի համար ստեղծելով անհրաժեշտ պայմաններ՝ հավանաբար այս ժամանակից էլ Դեղնուտում ծավալվել է գրչության գործը: 1274 թվականից հետո Առաքելն ապրել է ևս տասնութ տարի, վախճանվել հավանաբար 1292 թվականին ու թաղվել Դեղնուտում:

Գարեգին Հովսեփյանը Առաքել վարդապետին նույնացնում է Վանական վարդապետի աշակերտ Առաքելի հետ, որը, Վանականից ստանալով վարդապետական աստիճան, եկել է Մահկանաբերդի գավառ և Դեղնուտում հիմնել գրչության դպրոց: «Առաքել վարդապետն անկասկած Վանականի աշակերտն էր, Վարդանի և Կիրակոսի ընկերը, որին հիշում է Մադաքիան», - գրում է Գ. Հովսեփի-

²²³ Նույն տեղում, էջ 211-212:

յանը²²⁴: Այս տեսակետը առարկությունների տեղիք է տվել այն հիմամբ, որ նախ՝ Գարեգին Հովսեփյանին հայտնի չեն եղել Առաքելի թողած արձանագրությունը և այն հադրդումը, որ Առաքելը Կիլիկիայի Տարսոն զավարից է, և նրան համարել է Վանականի աշակերտը: Մինչդեռ Առաքելը, լինելով Տարսոնից, չէր կարող ուսում ստանալ Վանականի մոտ: Ապա Վանականի աշակերտներից Կիրակոս Գանձակեցին ու Վարդան Արևելցին հազիվ թե իրենց պատմություններում գոնե մեկ անգամ չիշեին իրենց ուսումնակից ընկերոջը²²⁵:

Ծագումով կիլիկեցի Առաքելի՝ Վանականի աշակերտ լինելու հանգամանքը մենք չենք հաստատում ուղղակի վկայություններ չունենալու պատճառով, բայց նաև չենք հերքում հետևյալ տրամաբանությամբ: Նախ, վերոհիշյալ փաստերը հազիվ թե տարակուսանք առաջացնեն այն պարզ պատճառով, որ խաչաձևվում էին մեծ դպրոցների փորձերը, և այդ կենտրոններում սովորելու էին զախս կրթական որոշակի մակարդակ և գիտելիք ունեցողներ ոչ միայն մերձակա, այլև հեռավոր գավառներից: Այդ ավանդները պահպանվել էին Կիլիկիայի, Անիի, Հաղբատի, Սանահինի, Նոր Գետիկի, Խորանաշատի դպրոցներում: Փաստերը շատ են: Միսիթար Գոշը, որ Հյուսիսային Հայաստանի գրական միջավայրի ծնունդն էր, հանգամանքների բերումով գոնում է Կիլիկիա, կրթություն ստանում Սև լեռան Կարմիր վանքում, կրկին վարդապետական աստիճան ստանալուց հետո վերադառնում հայրենիք: Գրիգորը, որը Վանական վարդապետի աշակերտն էր Խորանաշատում, հետագայում գործունեությունը շարունակեց Ակներում դառնալով վանքի միաբան: Դարձյալ Վանականի աշակերտներից Հովսեփը, որ փայլում էր դավանաբանական հարցերում, Արտազ զավատի թեմական էր: Տարսոնից եկած Խոչատուրը հաստատվել էր Հաղարծինում, դարձել միաբանության առաջնորդ և դպրոցի հիմնադիր, դեռ ավելին՝ Կիլիկիայից բերած խագերն էր տարածում Հյուսիսային Հայաստանի դպրոցներում:

²²⁴ Պ. Հովսեփյան, Հավուց թաղի Ամենափրկիչը (Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ), 1987, էջ 70, ծնյ. 185: Դիվան, պրակ VI, էջ 110:

²²⁵ Դիվան, պրակ VI, էջ 110:

Առաքելը Տարսոնից էր եկեղեցականաբերդ և առաջնորդում էր Առաքելոց ու Դեղնուտ վանքերի միաբանությունները: Արդ, հարց է ծագում: Ինչո՞ւ Առաքելը չէր կարող Տարսոնից զալ և կրթություն ստանալ Խորանաշատում, հատկապես որ Խորանաշատն ու Դեղնուտը տարածությամբ իրարից շատ հեռու չեն: Կրկին դատնանք Առաքելի թողած արձանագրությանը. «Ես՝ Առաքելս՝ նուաստ սպասաւոր բանին Աստուծոյ, յերկրէն Կիլիկո՞ ի գաւառէն Տարսոնի, կամակցութեամբ եղարցս շինեցաք գեկեղեցիս ամենայն պատրաստութեամբ եւ զգալիթս եւ կանգնեցաք զսուրք նշանս աստուածնեակալ...»: Այն, որ Առաքելը Կիլիկիայի Տարսոն գավառից է, հաստատում է անձամբ Առաքելն ինքը: Սակայն արձանագրությունից կարող ենք հասկանալ ոչ միայն նրա այդ պահին որտեղից եկած լինելը, այլև որտեղացի լինելը: Վյանքն՝ Առաքելը, լինելով Կիլիկիայի Տարսոն գավառից, հանգամանքների թերումով Մահկանաբերդի գավառի Դեղնուտի վանքում է, որտեղ իր հոգևոր եղբայրների հետ կառուցել է եկեղեցի, որի առաջնորդն ու գքչության դպրոցի հիմնադիրը եղավ, իսկ դրանից առաջ, համաձայն Առաքելոց վանքի արձանագրության, նա Առաքելոցի առաջնորդն էր: Կասկած չկա, որ Առաքելը Դեղնուտ է եկեղեցի Առաքելոց վանքից: Իսկ թե որտեղից է նա եկեղեցի Առաքելոց, կամ անմիջապես Տարսոնից է եկեղեցի, թե մեկ այլ վայրից, այս մասին չունենք որևէ հիշատակություն: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այդ ժամանակաշրջանում պատահական մեկը չէր կարող վաճախայր դառնալ: Դրա համար նա առնվազն պետք է վարդապետական գավազան ստացած լիներ նշանավոր րարունապետից: Երկրորդական չէ նաև այն հանգամանքը, որ Հյուսիսային Հայաստանի վարդապետներն այդ շրջանում չափազանց նախանձախնդիր էին դավանաբանական հարցերում և Կիլիկիայից եկած մեկին, եթե նա այստեղ թրծված ու համապատասխան կրթություն ստացած չիներ, դժվար թե այդախի պաշտոն վստահվեր:

Գալով այն հարցին, թե ինչու Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին չեն հիշատակել Առաքելին, ապա դրանում տարօրինակ ոչինչ չկա. պատմիչները գրել են որոշակի դեպքերի մասին, և եթե Առաքելը դրանց հետ առնչություն չի ունեցել, բնականաբար չէր նշվելու: Փոխարենը, Գրիգոր Ակներցին, որ Կիրակոսի ու Վար-

դանի հետ Խորանաշատում աշակերտել է Վանական վարդապետին, իր՝ Պատմության մեջ հիշում է Առաքելին՝ իբրև Վանականի գովելի աշակերտի և Վարդանի, Կիրակոսի ու Հովսեփի դասընկերոց: Խոսելով Վանականի մասին՝ Ակներցին գրում է, որ նա իբրև արեգակ փայլում էր «երկրորդ արևելք» կոչված արևելյան երկրում և հեղությամբ ու խոնարհությամբ վարդապետական խոսքն էր քարոզում. «Փայլէր իբրեւ զարեգակն՝ Սուրբ Հոգի վարդապետն մեր Վանականն յերկիրն արեւելյան՝ երկրորդ արեւելք անուանեալ, լի լուսով եւ անհաս գիտութեամբ ամէնիմաստ Հոգւոյն Սրբոյ, զոր եւ բազում երկամբք եւ աշխատութեամբ ձրի բաշխէր զերակուրն հոգեւոր, այսինքն զրան վարդապետութեան հոգւոյն՝ նմանեալ երկնաւոր վարդապետին Քրիստոսի, հեղութեամբ եւ խոնարհութեամբ, լուսութեամբ եւ երկայնմտութեամբ»²²⁶, ապա անմիջապես շարունակում է, որ այդպիսին են նաև նրա գովելի աշակերտները՝ Վարդանը, Կիրակոսը, Առաքելն ու Հովսեփը, որոնք արևելքի աշխարհը խաչաձև բաժանելով, լուսավորեցին իրենց վարդապետությամբ. «Նոյնպէս եւ գովելի աշակերտքն իւր Վարդան եւ Կիրակոս, Առաքեալն եւ Յովսէփի խաչանման բաժանեալ զաշխարհն Արևելից լուսաւորեցին կենարար վարդապետութեամբ Հոգւոյն Սրբոյ: Այեւ բազում որդիս ի փառս ածին՝ ձրի բաշխելով զտիրական զխաչանիշ զաւազանն՝ նմանեալ փառաւոր վարդապետին իւրեանց»²²⁷: Ենց Գրիգոր Ակներցու (իմա՝ Մադաքիայի) հաղորդած այս տեղեկությունն է նկատի ունեցել Գ. Հովսեփյանը: Կիրիկեցի Գրիգոր Ակներցին Վանականի աշակերտներից հիշում է այս չորսին և անունների հերթականությունը պատահականորեն չի դնում, այլ ըստ նրանց ճանաչման աստիճանի: Իսկ նրանք, ուսուցչի ստանալով «խաչանիշ զաւազանը՝ այսինքն վարդապետական աստիճան, նրա նման Արևելից աշխարհում տարածում էին վարդապետական լույսը:

Խորանաշատից հետո՝ 1235-1239 թվականներին Վարդանը Կայենարերդի Ս. Անդրեասի վանքում էր՝ որպես իր իսկ հիմնադրած

²²⁶ Գրիգոր Վրդ. Ակներցի, էջ 27:

²²⁷ Նույն տեղում, էջ 28:

դպրոցի բարունապետ²²⁸: Կիրակոսը 1236 թվականին մոնղոլների բանակից փախչելուց հետո հաստատվել էր Գետիկավանքում, Վարդանը նրան կոչում է «բարունիների պետ և մորենիների աղուտ անրուսաբեր վայրերի մշակ»²²⁹: Հովսեսիր Վանական վարդապետի ու Վարդան Արևելցու հետ մասնակցել է Հռոմի պապի հարուցած կրոնական վեճերին՝ պաշտպանելով հայոց եկեղեցու դավանակքը²³⁰:

Հայոց Արևելից կողմում այս ժամանակաշրջանում Հ. Աճառյանը Վանականի աշակերտից բացի չի ճանաչում որևէ այլ Առաքել վարդապետի²³¹: Առաքելոց վանքի ու Դեղձուտի արձանագրությունները, փաստորեն, լրացնում են Գրիգոր Ակներցու տեղեկությունները Առաքելի մասին՝ նրան ներկայացնելով որպես բանիքուն վարդապետի ու այդ վանքերի արդյունավոր վանահոր:

Դեղձուտի փանքը՝ իրեն հոգևոր-մշակութային կենտրոն, իր ծաղկումն է ապրում Մահկանաբերդի իշխանաց իշխան և պատրոն Սաղուն Բ-ի տիրապետության տարիներին: Կիրակոս Գանձակեցին և Գրիգոր Ակներցին նրա մասին գրում են, որ Սաղունը նաև ֆիզիկական բարձր կարողությունների տեր էր, պարթևահասակ ու քաջամարտիկ, ընտիր ըմբիշ ու վարպետ նետաձիգ էր, և իր արտակարգ ուժի շնորհիվ գրավել էր Հովհանու խանի ուշադրությունը: Վերջինս նրան դասել էր իր կտրիմներից առաջինների շարքում²³², իսկ երբ գահակալեց Հովհանու խանի որդի Աքաղա խանը (1265-1282 թթ.), Սաղունի հեղինակությունը Հայաստանում ու Վրաստանում էլ ավելի բարձրացավ, և համընդհանուր ճանաչում ձեռք բերելուց հետո մահկանաբերդցիները նրա անունով կոչվեցին Սաղուն-

²²⁸ Նույն տեղում, էջ 311:

²²⁹ Հ. Ալիշան, Հայապատում, էջ 471:

²³⁰ Նա հետո դարձավ Արտագ գավառի թեմակալ, 1248 թվականին վերաշինեց Թաղեսու առաջայի վանքը, կառուցեց գավիթը և ստեղծեց միաբանություն: Կիրակոս Գանձակեցի, էջ 311, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 716:

²³¹ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 208:

²³² Կիրակոս Գանձակեցի, էջ 386, Գրիգոր Վրդ. Ակներցի, էջ 48, 49:

յաններ²³³: Սիրված լինելով Արադա խանի կողմից՝ Սաղունն առաջին էր մեծ իշխանների շարքում²³⁴: Սաղուն Բ-ը, իսկ հոր մահից հետո (1282 թ.) նրա որդի Խուլյան Բուղան մեծ ներդրում ունեխին գավառի հոգևոր-մշակութային կյանքում: Նրանց ժամանակներում վերելք էին ապրում հատկապես Հաղբատի, Դեղձուտի, Կիրանցի և Առաքելոց վանքերը:

Առաքելի դպրոցը ճանաչված էր իր մատենադարանով: Վյստեղ ձեռագրերն արտագրվում էին «ընտիր և ստույգ» օրինակներից, և գաղափար օրինակ ունենալու համար Դեղձուտ էին զայս անգամ նշանավոր Գանձասարից ու Նոր Գետիկից: Դեղձուտի դպրոցում գրչության արվեստի ուսուցիչ էր Առաքելը: Հիշատակարանները թողել են Առաքելի սաներից վեցի անունները, որոնք «ի վանս Դեղձուտի՝ առ ոսս Առաքել վարդապետի» եկել էին տարբեր վայրերից և ձեռագիր մատյաններ էին ընդօրինակում այստեղ: Դժբախտաբար, այս դպրոցի աշակերտների ընդօրինակություններից մեզ միայն երկու ձեռագիր է հայտնի, որոնք պահպում են Մաշտոցյան Մատենադարանում:

Առաքելի աշակերտներից էր Պաքուտա որդի և Հզարի թոռ «ընտրեալ քահանա» տեր Գևորգը, որը եկել էր «ի մեծահոչակ քաւարանէն Գանձասարայ» և «մակացու էր յերկիրս Մահկանարերդոյ՝ ի վանս Դեղձուտի՝ առ ոսս Առաքել վարդապետի»²³⁵: Վյստեղ 1280 թվականին Գևորգն իրեն ուսումնակից Ավետիսի հետ օրինակում է մեկնությունների մի ժողովածու, որը պարունակում է Վարդան Արևելցու, Գրիգոր Նյուսացու, Բարսեղ Կեսարացու, Փիլինի, Գրիգոր Աստվածաբանի, Նոննոսի գործերից²³⁶: Գրեթե տեղեկություններ չունենք Դեղձուտի գրչության կենտրոնի և ուսումնական

²³³ **Ստեփանոս Օքբելեան**, «Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 426:

²³⁴ **Հ. Մարգարեան**, Մահկանարերդցիների (Սաղունեանների) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դպրում, «Հայկագեան հայագիտական հանդես», հ. ԺԲ, Պէլրութ, 1998, էջ 23:

²³⁵ **Ա. Մաթեևոսյան**, «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 509:

²³⁶ ՍՍ ձեռ. 5254, թերթ՝ 257, նյութ՝ թուղթ, 12,5 š 19, գիր՝ բոլորգիր, տող՝ 23-26:

ծրագրերի մասին, բայց այս հաղորդումից կարող ենք եզրակացնել, որ Առաքելի դպրոցում ուսման դասընթացների ծրագրերում ուշադրություն է հատկացվել մեկնողական երկերի ուսուցմանը և դրանց տարածմանը: Արտագրության համար օրինակը Գևորգն ստացել է իր հոգևոր եղայրներ Վահրամից ու Ստեփանոսից: Վերջիններս նույնական Առաքելի աշակերտներն են, որոնք արդեն ավարտել են Դեղնուտի դպրոցը և վերադարձել իրենց ծննդավայր՝ Այրարատ աշխարհից: Վահրամին ու Ստեփանոսին սիրով է հիշում Գևորգը, որովետև նրանք ոչ միայն օգնել են իրեն ընտիր օրինակ ունենալու, այլև միասին ապրելով նույն խցում միսիթարել են գրչին պանդխսության օրերին. «...զաւրինակն սոքայ շնորհեցին, եւ ոչ միայն այս, այլև պանդխսութեանս իմոյ միսիթարիչը են հոգեւոր եւ մարմնաւոր, քանզի ի միում խցի պանդխսանեաք...եւ յայս աւուր զնալով սոցայ յերկիրն իւրեանց յԱյրարատեան զաւառն, տրտութիւն հասուցին զիս միայն թողելով» (թ. 54թ):

Դեղնուտից մեզ հասած երկրորդ ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ այստեղ եղել են նաև արժեքավոր, և որպես գաղափար օրինակ՝ վնտրված մատյաններ: Ալեքսիոսի և Գոհարի որդի «կրտսեր և յետին սպասաւոր բանի» Սարգիսը, որ սովորել էր Գետիկի վարդապետարանում և հասել էր որոշակի դիրքի, 1280 թվականին՝ «ի նեղ և ի դառն ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց տիրել ունեին ազգն նետողաց...եւ Ապաղան ուներ զբռնակալութիւն», եկել-հասել է Դեղնուտ՝ «առ ոսս կենդանի վիմիս Առաքելի վարդապետի ի զաւառիս Մահկանաբերդոյ՝ ի պատրոնութեան աթապակ Սադունի»²³⁷:

Ձեռագիր օրինակը Սարգիսը շատ երկար է փնտրել, ի վերջո այն ձեռք է բերել Առաքել վարդապետի դպրոցում. «ըղճացեալ այս մատենի և անձնատան աշխատութեամբ և քրտնաջան ջանիւք և բազում տառապանօք դժուար ի գիւտ գրչաց ետու գծագրել զաւա»: Այստեղ Առաքելի աշակերտներից Գրիգոր և Շմավոն գրիչները Դեղնուտում եղած օրինակից Սարգսի համար արտագրում են Տոնա-

²³⁷ **Ա. Մաթեևսյան,** Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 496:

պատճառ ժողովածու և կազմում են այն²³⁸: Ժողովածուի հիշատակարանում Սարգիսը ծնողներին, Եղբայրներին՝ Հարոնին և Գառնիկին, հարսին՝ Թամթիխապահունին հիշելուց հետո խնդրում է հիշել Սարգիս բարունապետին, ուսուցիչներին, հատկապես իր հոգևոր հորը՝ ծերունի Դավթին:

Վերջին անգամ Առաքելը հիշվում է Դեղնուտի 1292 թվականի արձանագրության մեջ, երբ Միջագետքից Ասիլ անունով մեծահարուստ մի վաճառական ուխտի էր եկել Դեղնուտ և մեծ նվիրատվություններ կատարել. «Ի թվիս ԶԻՍ (1292) յառաջնորդութեան Առաքել վարդապետի ես՝ Ասիլ եկի յերկրէն Միջագետաց ի սուրբ ուխտո»²³⁹: Ուրեմն՝ 1292 թվականին դեռևս կենդանի էր Առաքել վանահայրը: Հավանաբար, կարճ ժամանակ անց, խոր ծերության հասակում Առաքել վարդապետը վախճանվում է և թաղվում վանքի գավիթում: Բնութագրական են նրա տապանաքարին գրված խոսքերը՝ «Այս է արձան սեմական եւ շիրիմ հանգստարան Առաքելի հոչակաւոր վարդապետի»²⁴⁰:

²³⁸ «Գրեցա Տաւանպատճառու ի թվին ԶԻԹ.(1280) եւ կազմեցաւ յաւուր վճարման, մարերի Ի.Ը (28)-ն եւ Հոռոմոց նոյեմբեր Դ (4)-ն յաշնան եղանակիս, որ ահազին շարժ եղեւ ի մեջ զիշերիս»: ՍՍ ձեռ. 5197, թերթ՝ 436, նյութ՝ թուլյթ, 17,5×12,5, գիր՝ բոլորգիր, տոր՝ 22-37: **Ա. Մաթեևսյան**, Հայեն ծեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դպր, էջ 497:

²³⁹ Դիվան, պրակ VI, էջ 117:

²⁴⁰ Դիվանի կազմողները վիմագիրը կարդացել են «այս է արձան մեական» ձևով: (Դիվան, պրակ VI, էջ 116): Այս վիմագիրը մեզ համար կարդաց Մատենադարանի ավագ գիտաշխատող Լուսինե Թումանյանը, որին հայտնում ենք մեր շնորհակարությունը և առաջարկում ենք հետևյալը. քանի որ Ս, Ե, Մ տառերը կցագիր են, «մեական» բարը կարդալ «սեմական» ձևով: «Մեական» բարը վկայված է նաև Հաղբատում՝ Հովհաննես Սարկավագի տապանագրում: (Դիվան հայ վիմագրության, պրակ IX, Երևան, 2012, էջ 219):

ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ ԵՎ ԳՐՉԱՏՈՒՆԸ

Հայ միջնադարյան մատենագիտության մեջ հիշվում են երկու Հովհաննես Տավուշեցի վարդապետներ, որոնք ապրել են XII-XIII դարերում: Բարեբախտաբար, երկուսի մասին է ժամանակակից աղյուրները կենապրական ստույգ տվյաներ են հաղորդում:

Տարիքով ավագը, որ աղյուրներում կոչվում է նաև Հովհաննես վարդապետ Ուշեցի²⁴¹, Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ, ճանաչված էր զիտությամբ ու խոհեմ վարդով: Ծառ շուտ կորցնելով կնոջ՝ նա տրվում է կուսակրոնության և վերահասու լինելով Սուրբ Գրքի զիտությանը՝ ընդունում է վարդապետական աստիճան: Հովհաննեսը շրջում էր տեղից տեղ, ուսուցանում էր Աստուծո խոսքը բոլոր այն տեղերում, որտեղ խաթարված էր պահոց ծիսակարգը, բարեկարգում էր այն, օրենքներ սահմանում և առաքինի վարք էր սովորեցնում մարդկանց²⁴²: Քահանա ձեռնադրվելուց հետո երկար տարիներ Միսիթար Գոշն աշակերտել է Հովհաննես վարդապետ Տավուշեցուն և նրանից ստացել վարդապետական գավազն²⁴³: Նրա ծննդյան ու մահվան թվականները հայտնի չեն: Բայց քանի որ զիտենք Միսիթար Գոշի ծննդյան մոտավոր (1120-1130 թթ.) և մահվան ստույգ (1213 թ.) թվականները, կարող ենք ասել, որ Հովհաննես վարդապետ Տավուշեցին ապրել ու գործել է XII դարում և մահցել ոչ ուշ, քան XII դարի վերջին տասնամյակներին:

Հովհաննեսի զիտնական և վարդապետ լինելու փաստն ինքնին վկայում է այն մասին, որ XII դարում Տավուշ գյուղաբանքում եղել է դպրոց: Ձեւ ինչպիսի դպրոց է եղել այն, և բացի աստվածա-

²⁴¹ Հ. Յ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց ..., էջ 182: Գ. Զարքիանալեան, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 686:

²⁴² Կիրակոս Գանձակեցի, էջ 207-208, էջ 95: Տաշեան Հ. Յ., Ցուցակ հայերէն ձեռագրաց..., էջ 182: Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 401-402: Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. Գ, 1984, էջ 187:

²⁴³ Կիրակոս Գանձակեցի, էջ 208, Հ. Յ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց..., էջ 182:

բանական գիտելիքներից ուրիշ ինչ առարկաներ են դասավանդվել, դժվար է ասել, բայց փաստ է, որ այդ դպրոցը եղել և ժամանակին մեծ հեղինակություն է վայելել: Դրա վկայությունն է նաև այն, որ այստեղ երկար տարիներ կրթություն է ստացել արդեն քահանա ձեռնադրված Մխիթար Գոշը. «Եւ իբրեւ եհաս յարբունս հասակի ձեռնադրեցին զնա քահանայ կուսակրոն եւ պաշտեր զքահանայութիւնն յոլով ամս: Ցանկացաւ հմուտ լինել մտաց զրոց սրբոց եւ հանդիպեցաւ նա Յոհաննես վարդապետի Ուշեցի անուանեա»²⁴⁴: Հենց Մխիթար Գոշի հայամավուրբային վարքից ել տեղեկանում ենք, որ Հովհաննես վարդապետը կոչվել է նաև Ուշեցի, որն, ինչ խոսք, Տավուշեցի անվան կարճ ձևն է:

Թեպետ ուղղակի վկայություն չունենք, բայց կարծում ենք, որ Հովհաննես Տավուշեցու դպրոցը ուսուցի մահից հետո այս կամ այն ձևով պետք է շարունակեր իր գործունեությունը՝ բավարար հիմքեր ստեղծելով գրչության մեկ այլ կենտրոնի, այս դեպքում Խորանաշատի դպրոցի ստեղծման համար: Այս հետևությանն ենք հանգում նկատի ունենալով, որ Տավուշ-Նոր Գետիկավանք-Խորանաշատ ուսումնական կենտրոններն իրար հետ կապված են ուսուցչապետերի և աշակերտների փոխհարաբերություններով ու նրանց գործունեությամբ: Այդ կապերը Նոր Գետիկի հետ ավելի ուժեղացան և խորացան, երբ Խորանաշատում հիմնվեց բարձր տիպի դպրոց՝ վարդապետարան, որը XIII դարի 20-ական թվականներին արդեն հիշվում էր Հայաստանի նշանավոր հոգևոր և մշակութային կենտրոնների շարքում: Հիմնադրման ժամանակներից Խորանաշատի գրչության կենտրոնը կապված էր Հայաստանի մշակութային մյուս կենտրոնների, ամենից առաջ՝ Նոր Գետիկավանքի հետ:

Խորանաշատի դպրոցի հիմնադիրը Վանական վարդապետն է: Վանականի կյանքի ու գործի մասին մեզ հասած տվյալներն ստույգ են, որովհետև այն ավանդել են նրա աշակերտները՝ Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին և Գրիգոր Ակներցին: Վանականի

²⁴⁴ Հ. Յ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց..., էջ 182, հմմտ. Կիրակոս Գանձակեցի, էջ 207:

վարքի մեկ այլ տարրերակ է մեզ է հասել հայսմավուրքյան խմբագրությամբ²⁴⁵:

Վանական Վարդապետը ծնվել է 1181 թվականին Տավոշ գավառում: «Էր նա յաշխարհէն Աղուանից ի Տառշ գաւառէն, ազգաւ հայ, եւ ծնողըն նորա նուիրեցին զնա Աստուծոյ եւ սրբութեամբ սնաւ ի վանս Գետկայ առ երեց Երթօրն իւրում, որում անուն էր Պօղոս՝ կուսան եւ սուրբ արեղայ»²⁴⁶: Վանականը զայիս է Նոր Գետիկ, որտեղ ավագ եղբոր՝ Պողոս քահանայի մոտ ստանում է սկզբնական կրթություն, քան տարեկանում ձեռնադրվում է քահանա, ապա աշակերտում մեծանուն գիտնական Միսիթար Գոշին և 1207 թվականին նրանից ստանում վարդապետական զավազան: Ուսումնառության ընթացքում առանձնանալով իր ունակություններով և անսահման աշխատասիրությամբ՝ Վանականը դառնում է ուսուցչի ոչ միայն սիրելին, այլև զաղափարակիցն ու օգնականը, նրա հետ մասնակցում է Լոռեի (1205 թ.) և Անիի (1207 թ.) եկեղեցական ժողովներին և իբրև ականատես՝ գրի է առնում այդ ժողովների պատմությունը: Այդ մասին Կիրակոս Գանձակեցին գրում է. «Զբովանդակ իրս և զրան և զզործ այս ժողովյոյ գրեաց մեծիմաստ և առատամիտ վարդապետն Վանական յիւրում Պատմութեանն, զի ականատես էր նա իրացն եղելոց և ականջալուր. յաշակերտի կարգի զոյով յայնժամ առ մեծ վարդապետին»²⁴⁷:

Վանականը Նոր Գետիկից վերադառնում է ծննդավայր և համաձայն պահպանված արձանագրությունների՝ 1211-1222 թվականների ընթացքում²⁴⁸ Գարդմանի թիկունքին՝ Երգեկանք բերդի դիմաց, իշխան Վահրամ Բ Գագեցու հովանավորությամբ կառուցում է մի վանք, որը բազմաթիվ խորաններ ունենալու պատճառով կոչվում է Խորանաշատ²⁴⁹: Վանական համալիրի մեջ են մտել U. Աստվածածին եկեղեցին և նրան կից զավիթը, U. Կիրակի և U. Ճգնա-

²⁴⁵ Դ. Ալիշան, Հայապատում, էջ 462:

²⁴⁶ Նոյն տեղում:

²⁴⁷ Կիրակոս Գանձակեցի, էջ 178:

²⁴⁸ Կ. Ղաֆադարյան, Պատմահնագիտական դիտողություններ Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանության մասին, «Տեղեկագիր», 1940, թ. 4-5, էջ 173-174:

²⁴⁹ Կիրակոս Գանձակեցի, էջ 346-347:

վոր եկեղեցիները, նրանց հարակից աղքատների գերեզմանոցը, ինչպես նաև շրջակայրում գտնվող այլ շինություններ, որոնցից միայն մնացել են ավերակները²⁵⁰:

Խորանաշատը դառնում է Վահրամյանների հոգևոր-մշակութային կենտրոնը, որտեղ է Վանականը հիմնում է բարձր տիպի դպրոց-վարդապետարանը, իսկ ինքը դառնում է վարդապետարանի առաջին ուսուցիչը²⁵¹: 1240 թվականին նա Խաչենի իշխան Հասան-Զալայի հրավերով մասնակցում է Գանձասարի օծման արարողությանը: Վանական վարդապետ Տավուշեցին վախճանվում է 1251 թվականի Արեգ ամսի տասին (մարտի 18), շաբաթ օրը և իր կտակի համաձայն՝ թաղվում աղքատների գերեզմանոցում. «Եւ տարեալ թաղեցին զնա ի գլուխ վանիցն յարևելից կուտէ, մոտ ի փոքրագոյն եկեղեցին, ուր էին գերեզմանք աղքատացն, զի ինքն այսպէս հրամայեաց»²⁵²: Վանականի մահը ծանր կորուստ էր բոլորի համար, որովհետև, ինչպես զրում է Կիրակոս Գանձակեցին, զրկվեցին երանելու լուսավոր վարդապետությունից ու հոգեշահ խոսքերից: Նրա հուղարկավորության արարողությանը ներկա են եղել զավահ Սարգսի Եայխսկոպոսը՝ քազմաթիվ վարդապետներով ու քահանաներով, Աղվանից Ներսես կաթողիկոսը և Հռվիաննես Եայխսկոպոսը²⁵³:

Ուշ շրջանի ձեռագիր աղբյուրներում և մատենագիտական զրականության մեջ Վանական Վարդապետը կոչվում է Հռվիաննես Վանական վարդապետ, ծննդավայրի անունով նաև՝ Հռվիաննես Վանական վարդապետ Տավուշեցի:

Թվում է՝ բանասիրության մեջ Վանականի անձի հետ կապված որևէ ինդիք չպետք է լինի, որովհետև մեզ հասած կենսագրական տվյալները դրա առիթը չեն տալիս: Այդուհանդերձ, հարց է ծագում որտեղից Վանականի Հռվիաննես անունը, եթե այն չենք հանդի-

²⁵⁰ Հ. Քարտաշյան, Խորանաշատի ճարտարապետական համալիրը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, թ. 4, էջ 42-52:

²⁵¹ Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Օսկեան, Ցովիաննես վանական եւ իր դպրոցը, Վիեննա, 1922:

²⁵² Կիրակոս Գանձակեցի, էջ 347-348:

²⁵³ Նույն տեղում, էջ 348:

պում ժամանակակից աղբյուրներից որևէ մեկում ոչ Վարդան Արևեցու, ոչ Գրիգոր Ակնեցու և ոչ Էլ հատկապես Կիրակոս Գանձակեցու մոտ, որը միշտ եղել է ուսուցչի կողքին և իր Պատմության Եջերում բազմաթիվ վկայություններ է թողել իրենց բարեկամության մասին: Այն չենք հանդիպում նաև Վանականի հայսմավուրբային վարքում:

Ընդհանրապես, հայ միջնադարյան մատենագրության մեջ նույնանուն հեղինակների ինքնության, ապրած ժամանակի, նրանց երկերի հեղինակային պատկանելության խնդիրները միշտ Էլ շփոթի տեղիք են տվել: Այդպես է նաև Վանական Վարդապետի պարագայում:

Անդրադանալով «Հովհաննես Վանական վարդապետ» անվանաձևին՝ նկատենք.

ա. Կամ՝ Հովհաննեսը Վանական վարդապետի աշխարհիկ անունն է, որը դուրս է եկել գործածվելուց, երբ նա հոգևորական կոչման է արժանացել, բայց պահպանվել է բանավոր ձևով և գործածվել ուշ շրջանի ձեռագրերի մեջ:

բ. Կամ ի սկզբանե եղել է Հովհաննես անունը, Վանականը հետո է ավելացել՝ իբրև նրա գործունեությունը բնորոշող մականուն, հետազայում լի այլ Հովհաննեսներից տարրերվելու համար ուղղակի կոչվել է մականունով, ինչպես դա եղել է Սարկավագի պարագայում:

գ. Չբացառելով նախորդ երկուսը՝ ավելի հակված ենք այն տեսակետին, որ «Հովհաննես Վանական վարդապետ» անվանաձևը միջնադարյան ձեռագրական ավանդույթից եկող շփոթ է: Հետևելով այդ ավանդույթին՝ հետազայի գրիչները Վանականի երկերի վերնագրերում և ձեռագրերի հիշատակարաններում ներմուծել են Հովհաննես անունը, որը, ինչ խոսք, առաջացել է ուսուցիչ-աշակերտ՝ Հովհաննես վարդապետ Տավուշեցի-Միհրար Գոշ և Միհրար Գոշ-Վանական վարդապետ Տավուշեցի փոխհարաբերություններում անունների և դերերի շփոթի արդյունքում:

1662 թվականին Երնջակի Ս. Կարապետի վանքում Ալեքսիան դայիրի ձեռամբ օրինակված Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցի» հիշատակարանում ահա թե ինչպես է ներկայացնում գրիշը միշ-

նադարյան այս աստղաբույլը. «Էր երանելի մեծ վարդապետն Մխիթար, որ մականուամբ Գոշ կոչեցաւ, եւ սորին աշակերտ Վանական վարդապետն, որոյ Յովիաննէս էր անունն, եւ սորին աշակերտ Վարդան վարդապետ, սորին աշակերտ՝ Ներսէս, սորին՝ Մեծ Եսայիան, սորին աշակերտ՝ Յոհան Որոտնեցի, սորին՝ Գրիգոր Տարեւացին, սորին Դանիել վարդապետն, սորին՝ Յոհաննէս Համշէնցին, սորին՝ Թորոս վարդապետն, սորին՝ Գրիգոր Տարօնացին, սորին՝ Յոհաննէս՝ Շիրակն կոչեցեալ, սորին՝ Ղուկաս Կեղացին, սորին՝ Սրապիոն Ուրիհայեցին, որ եղեւ կաթուղիկոս Հայոց: Սա ուներ Բ. (2) աշակերտ՝ Գրիգոր Կեսարացին եւ Մովսէս Սիւնեցին...» (ՄՄ 4120, թ. 207թ):

Հետազայի ուսումնափրոդները, մեկը մյուսին կրկնելով, պահպանել են ձեռագրերից եկող այս ավանդույթը²⁵⁴, իսկ երբեմն է նույնացրել Հովհաննես վարդապետ Տավուշեցու և Վանական վարդապետ Տավուշեցու լյանքն ու գործը²⁵⁵:

Խորանաշատի դպրոցը Ուտիք աշխարհի նշանավոր գիտական, մշակութային ու հոգևոր կենտրոններից էր, իսկ նրա ուսուցչապետ Վանական վարդապետ Տավուշեցին՝ ժամանակի հեղինակավոր աստվածաբաններից ու գիտնական վարդապետներից մեկը:

Կիրակոս Գանձակեցին Վանականի մասին գրում է, որ սուրբ ու պարկեշտ մարդ էր ու ամեն բարի գործի մեջ առաջադեմ, ողջախոհ ու զգաստ էր ամեն ինչում, իսկ վարդապետական խոսքով գերազանցում էր բոլորին, մտքով բեղմնավոր էր ու խոսքով ճարտար և որպես աղբյուր ամենքին խմեցնում էր ուսուցչական խոսքը: Նրա կյանքն ու գործը չգրված օրենքներ էին շրջապատի համար²⁵⁶: Տա-

²⁵⁴ **Հ. Ոսկեան**, Յովիաննէս վանական եւ իր դպրոցը, **I. Խաչերեան**, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները...միջնադարեան Հայաստանում եւ Կիլիկիայում (V-XVI), էջ 608-611: **Փ. Անթապյան**, Վարդան Արևելցի, հ. Ա, Երևան, 1987, էջ 26, 35, 51, 59 և այլուր, հ. Բ, 1989, էջ 27, 29, 48, 88 և այլուր, **Հ. Ոսկեան**, Արցախի վանքերը, էջ 157-158:

²⁵⁵ **Ռուբեն վարդապետ**, Հովհաննես վանական վարդապետ Տավուշեցի, «Էջ միածին», 1945, Բ, էջ 22-26:

²⁵⁶ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 218:

բածված էր նրա համբավը, և Հայաստանի տարրեր վայրերից շատերն էին զախս այստեղ՝ Վանականին աշակերտելու:

Խորանաշատի վարդապետարանի կրթական համակարգում դրված էր «ցոթն ազատ արվեստների»՝ «քառյակ» և «եռյակ» գիտությունների ուսուցումնը: Վարդապետարանում սաներն ուսանել են 7-8 տարի: Հոգևոր առարկաներից բացի այստեղ դասավանդել են պատմություն, իմաստասիրություն, մատենագիտություն, երաժշտություն, քերականություն, ճարտասանություն, թվարանություն, երկրաչափություն, աստղաբաշխություն, տրամաբանություն և այլ առարկաներ:

Չեռագրեր ընդօրինակելու արվեստը միշտ էլ գրչության կենտրոնների առաջին և հիմնական առարկաներից էր: Այդպես էր նաև Խորանաշատում, երբ ուսուցչապետ Վանական Վարդապետը կրթական և քարոզական գործին զուգահեռ շատ մեծ տեղ էր հատկացրել ձեռագրեր օրինակելու գործին, ինքն էլ անձամբ հետևում էր այդ աշխատանքներին: Նա իր սաներին ստույգ և ընտիր օրինակներից արտագրել էր տալիս ձեռագիր մատյաններ: Գանձակեցին գրում է, որ Վանականը լինելով չափազանց ուսումնասեր և աստվածասեր մարդ, այլ տեղերից հավաքում էր մեծ քանակությամբ գրքեր, որոնցով հարստացնում էր վանքի մատենադարանը. «Եւ անդ կայր զետեղեալ՝ ժողովեալ բազում գրեանս, զի յոյժ ուսումնասեր էր այրն, մանաւանդ թէ աստուածասեր: Եւ բազումք զային առ նա և ուսանէին զբանն վարդապետական ի նմանէ»²⁵⁷: Խորանաշատում են գրվել և որպես դասագրքեր օգտագործվել նաև Վանականի երկերը, որոնք կիրառվել են նախ իր դպրոցում, ապա ուրիշ դպրոցներում:

Ի՞նչ է հասել մեզ զիտության այս մշակից²⁵⁸: Վարդապետարանի աշակերտների համար աշխարհիկ և հոգևոր առարկաների մասին իմացական շտեմարան էր նրա «Հարցմունք և պատասխանիք»-ը, որը մեզ է հասել 1273 թվականին Նոր Գետիկում Մխիթար գրչի

²⁵⁷ Նոյն տեղում, էջ 244:

²⁵⁸ **Հ. Ոսկեան**, Յովհաննէս վանական եվ իւր դպրոցը, էջ 20-36:

օրինակած ձեռագրով²⁵⁹: Օգտվելով Անանիա Շիրակացուց՝ աշակերտներին աստղաբաշխական ու տոմարագիտական գիտելիքներ տալու նպատակով գրում է «Յաղագս տարեմտին» ճառը, որը նախատեսված է եղել Ամանորին Եկեղեցիներում կարդալու համար²⁶⁰: Ճարի վաղագոյն օրինակը մեզ է հասել XII-XIII դարերով թվագրվող մի ժողովածուով, որի գրչության վայրը հայտնի չէ, իսկ գրիչը Գրիգորեսն է, որը ձեռագիրն արտագրել է Գրիգոր Բշնեցու տրամադրած օրինակից (ՍՍ ձեռ. 5561,թ. 271ա-276թ)²⁶¹: Վանական վարդապետի մյուս գործերն են «Քացատրութիւն Աղօթից Ամբակումայ Մարգարէի» (Ճարագ, 1859), «Մեկնութիւն Յորայ», որը նախորդ մեկնիներից (Հեսիքսոս, Ստեփանոս Սյունեցի, Դավիթ Քորայրեցի) արված քաղագություն է²⁶², «Պատճառք վասն առաջաւրաց պահոց»²⁶³, «Համեմատութիւն Հնոյ և Նորոյ կտակարանաց»²⁶⁴, «Տեսութիւն շարականին Ուրախացիր պատկ կուտից»²⁶⁵: Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու վկայությամբ Վանական վարդապետը հեղինակել է նաև մոնղոլների և նրանց արշավանքների պատմությանը վերաբերող մի երկ, որը կարևոր սկզբնադրյուր է եղել մոնղոլների՝ Հայաստան կատարած արշավանքների վերաբերյալ²⁶⁶: Այս գործը, դժբախտաբար, մեզ չի հասել: Վարդան Արևելցին վկայում է, որ իր «Հաւաքումն Պատմության» երկը շարադրելիս որպես սկզբնադրյուր օգտվել է Վանականի Պատմությունից²⁶⁷:

²⁵⁹ Երուսաղէմ, ձեռ. 1288, թ. 2ա-141ա: **Ն. Պողարեան**, Յուցակ ձեռագրաց, հ. Դ, Երուսաղէմ, 1969, էջ 484:

²⁶⁰ **Լ. Խաչիկյան**, Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ, «Քանքեր Մատենադարանի», թ. 1, 1941, էջ 156-169:

²⁶¹ ՍՍ ձեռ. 5561, թերթ՝ 385, նյութ՝ թուլյա, 25 × 17, գիր՝ բոլորգի, տող՝ 27:

²⁶² Երուսաղէմ, ձեռ. 68, թ. 252-378: **Ն. Պողարեան**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա, էջ 221:

²⁶³ Երուսաղէմ, ձեռ. 173, թ. 496-500: Նոյն տեղում, էջ 514:

²⁶⁴ Երուսաղէմ, ձեռ. 587, թ. 1-3: **Ն. Պողարեան**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Բ, էջ 620:

²⁶⁵ Երուսաղէմ, ձեռ. 617, թ. 151-6: **Ն. Պողարեան**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Գ, էջ 18:

²⁶⁶ Նոյն տեղում, էջ 151:

²⁶⁷ **Վարդան Վարդապետ**, էջ 92, 146-147:

Վանականը ճանաչված աստվածաբան էր և ակտիվորեն մասնակցում էր նաև ժամանակի դավանաբանական վեճերին: XIII դարի կեսին սկիզբ առած հռոմեաբյուզանդական դավանաբանական մի վեճի առիթով նա գրում է «Խրատ դաւանութեան» ճառը, որ պահպանվել է Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ (Կիրակոս Գանձակեցի, Գ. Ծ): 1250 թվականին, երբ Վերին Խաչենի Ծար գավառում սկիզբ առած Դավիթ Ծարեցի Մոլորեցուցչի գլխավորած աղանդավորական շարժումն ընդորկել էր «զամենայն գաւառ» Հայոց արևելից կողմանց և դարձել էր խիստ վտանգավոր, զայրացրել ու պայքարի էր հանել շատ անվանի հոգևոր գործիչների: Վերջիններս բանադրում էին Դավիթ Ծարեցուն և նրա կողմնակիցներին, որոնց մեջ կային նաև հոգևորականներ ու ավատատեր ազնվականներ²⁶⁸: Վանական վարդապետը նույնպես պայքարում էր այս վտանգավոր երևույթի դեմ և այդ առիթով գրում է «Գիր սաստից և մեղադրանաց» վերնագրով թուղթը:

Վանականը դպրոցում ձեռագիր մատյաններ ընդօրինակերուց բացի՝ չափազանց կարևորում էր նաև խմբագրական աշխատանքները: Նրա հանձնարարությամբ աշակերտները կազմում և խմբագրում էին ծիսական ժողովածուներ, հատկապես Հայսմավուրքներ և Տննապատճառներ: Հայսմավուրքային ժողովածուների խմբագրման աշխատանքներում փայլում էին Խորայել Խաչենցին և Կիրակոս Գանձակեցին, որոնց վերագրվում է Հայսմավուրքի՝ իրարից տարբեր երկու՝ Խորայելյան և Կիրակոնյան խմբագրությունները: Խոկ Տննապատճառների խմբագրումն ու վերակազմումը իրականացնում էր Վարդան Արևելցին²⁶⁹:

Գրչության արվեստը ծաղկում էր Խորանաշատի վանքում ու կապիում Վանականի անձի հետ: Չափազանց մեծ էր դպրոցի և նրա բարունապետի հեղինակությունը: Գրիններն իրենց օրինակած ձեռագրերի հիշատակարաններում հաճախ գրչության վայրը ճանաչում ու նշում էին նրա անունով «ի վանս վարդապետի Վանականի»: Ուսուցչի մասին հատկապես հիացմունքով են խոսել նրա

²⁶⁸ Կիրակոս Գանձակեցի, էջ 326-328:

²⁶⁹ Փ. Անթապյան, Վարդան Արևելցի, հ. Ա, էջ 244:

աշակերտները: Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ դպրոցը, ի դեմս մեծիմասս ու հանճարեղ ուսուցչապետի, ձեռք էր բերել մեծ անուն և համբավ, որտեղ կրթություն ստանալու հին գալիս տարբեր վայրերից. «Բազումք դեգերէին առ նա ուսման աղազաւ ոչ միայն վարդապետական բանի, այլ ամենայն կեանք նորա և շարժումն անզիր օրէնք էին տեսողացն»²⁷⁰: Վարդան Արևելցին նրան անվանում է «համբաւատենչ և արդիւնական, փառաւորեալ հայրն մեր»²⁷¹: Վարդապետին մեծարում է նաև Գրիգոր Ակներցին²⁷²:

Խորանաշատում մեզ ծանոթ առաջին գրիչը Վանականի աշակերտ Ստեփանոս Աղթամարցին է: Ն. Ակինյանը կարծում է, որ այս Ստեփանոսը Աղթամարի Ստեփանոս Բ Նկարեն կաթողիկոսն է, որը վախճանվել է 1272 թվականին²⁷³: Ստեփանոսը 1223 թվականին «ի վանքս Խորանաշատու՝ ի գաւառիս Գարդմանայ առ ուսու ուղիւաճեմ և աստուածարդիւնական վարդապետիս Վանականի» լրջօրինակում է մի ժողովածու, որի հիշատակարանում նախ հիշում է բարունապետ Վանական վարդապետին, որ «փայլէ ի ժամանակիս որպէս զաստի առաւատու», ապա իր հորը՝ տեր Սարգսին, հորեղբորը՝ տեր Հովհաննեսին, և եղբորը՝ Իգնատիոս քահանային: Գրիչը անմեղադրություն է խնդրում, որովհետև «ի ձմեռնային յաւուր գրեցաւ, այլ աղաչեմ չինել մեղադիր թիւրութեան, զի զիոլովն ճրագով գրեցի»²⁷⁴:

²⁷⁰ Կիրակոս Գանձակեցի, էջ 218:

²⁷¹ Վարդան Վարդապետ, 146:

²⁷² «Ի նեղ և ի դարն ժամանակիս փայլէր իբրև զարեզակն՝ Սուրբ Հոգի վարդապետն մեր Վանականն յերկիրն արևելից, յերկրորդ արևելք անուանեալ, ին լոյսով եւ անհաս զիտութեամբ ամէնիմասս Հոգւոյն Սրբոյ, զոր և բազում երկամքք և աշխատութեամբ ձրի բաշխեր զկերակուրն հոգեւոր, այսինքն՝ զրան վարդապետութեան հոգւոյն, նմանեալ երկնաւոր վարդապետին Քրիստոսի, հեզութեամբ եւ խոնարհութեամբ, լուութեամբ եւ երկայնամսութեամբ»: Գրիգոր Վրդ. Ակներցի, էջ 27:

²⁷³ Ն. Ակինյան, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 40-41:

²⁷⁴ ՍՍ ձեռ. 2101, թերթ՝ 205, նյուութ՝ թուղթ, 17,2 × 12,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 22: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է, խմբագրութեամբ՝ Գ. Տեր-Վարդանեանի, Երևան, 2012, էջ 13-16:

Սրբամից մեկ տարի հետո՝ 1224-ին, Խաղբակյան Զաջուռ իշխանի դուստր Վանենու պատվերով գրվում ու նկարագրվում է մագաղայքա երկաթազիր մի Ավետարան, որը Վանական Վարդապետն անվանում է «Տավշ Ավետարան»²⁷⁵, իսկ հետագայում վաճռի անունով կոչվում է «Խորանաշատի Ավետարան»²⁷⁶: Հայտնի չեն ձեռագրի գրիչն ու ծաղկողը: Ձեռագիրն ունի չորս ավետարանիշների պատկերներ, ութ խորաններ, կիսախորաններ, զանազան լուսանցագրդեր, որ պարզ ու ներդաշնակ ծաղկագարդել է տաղանդավոր, բայց մասնագիտական հմտություն չունեցող նկարիչը²⁷⁷: Ծաղկողն օգտագործել է ոսկի և բազմազան գույներ: Ձեռագրի հետագա ճակատագրի մասին հաղորդումները նրա գերեվարումների և փրկագնումների մասին են:

Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ երբ Զալալեդինի արշավանքներից ավերվում է Երգեկանքի թերդի հանդեպ գտնվող Խորանաշատի վանքը, Վանական Վարդապետը, խուսափելով թշնամուց, 1229 թվականին ապաստանում է Լորուս գյուղի մոտ գտնվող մի քարայրում, որտեղ կառուցել էր եկեղեցի: Այստեղ էլ շարունակում է ուսուցանել²⁷⁸: Մոնղոլներն իմանում են Վանականի տեղը, պաշարում են քարայրը 1236 թվականին, ուսուցչապետին և աշակերտնե-

²⁷⁵ ՄՄ ձեռ. 4823, թերթ՝ 319, նյութ՝ մագաղաթ, 36 × 23, գիր՝ բոլորագիծ երկաթազիր, տող՝ 19:

²⁷⁶ «Խորանաշատի Ավետարանին» են անդրադարձել Գ. Սրբանձայանը (Գ. Սրբանձայանց, Թորոս Աղբար, Կ. Պոլիս, 1884, էջ 272-275), Գ. Հովսեփիյանը (Գ. Յովելիքեան, Խաղբակեանք կամ Պոշեանք Հայոց պատմութեան մէջ, հ. Ա, էջ 34, նույնի՛ Յիշատակարանք ձեռագրաց, էջ 837-842), Ա. Սվիրինը, (Ա. Հ. Սվիրին, Миниатюра древней Армении, М., 1939, էջ 90), Վ. Լազարեսը (Վ. Ի. Лазарев, История византийской живописи, М. 1947, էջ 12), Լ. Դուրնովինը (Լ. А. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979, էջ 32), Հ. Հակոբյանը (Հ. Հակոբյան, Արցախ-Ուտիքի մանրանկարչություն XIII-XIV դդ., էջ 51-62):

²⁷⁷ Հայլական մանրանկարչություն, աշխատասիրությամբ՝ Լ. Դուռնովոյի և Ռ. Դրամբյանի, Երևան, 1967, էջ 204:

²⁷⁸ Քարայրը կոչվում է Վանական վարդապետի քարայր և գտնվում է Տավշութերդի հարավային կողմում Լորուս գյուղի մոտ: Կիրակոս Գանձակեցի, էջ 247, Մ. Քարխուղարեանց, Արցախ, էջ 434, Հ. Օսկեան Ցովհաննես Վանական եւ իւր դպրոցը, էջ 13:

րին, որոնց մեջ էր նաև Կիրակոս Գանձակեցին, գերեվարում են՝ իրենց հետ տանելով ողջ գույքը՝ շուրջառներ, արծաթյա խաչեր, անոթներ, բազմաթիվ գրքեր և արծաթով ընդելուզված երկու Ավետարան, որոնցից մեկը այս գեղեցիկ մագաղաթյա մատյանն է. «...եւ խուզեալ ատին, որ ինչ կայր առ ումերք... խաչ արծաթի և երկու Աւետարանս ընդելուզեար»²⁷⁹: Որոշ ժամանակ անց Գագ թերդի բնակիչները 80 դահեկան փրկազին են տալիս և ազատում են Վանական Վարդապետին, իսկ Կիրակոսը, որ մոնղոլների բանակում թարգմանիչ ու գրագիր էր աշխատում, փախչում է և ապաստոնում Նոր Գետիկի վանքում: Վերադառնալով Խորանաշատ՝ Վանականը նորոգում է վանքը, վերականգնում դպրոցը և նորից սկսում է վարդապետական գործունեությունը:

Մոնղոլների կողմից գերված երկրորդ Ավետարանի ճակատագիրը ցայսօր անհայտ է, իսկ «Խորանաշատի Ավետարանը» 1238 թվականին Տփխիսում մոնղոլները հանում են վաճառքի: Բարեբախտաբար, այստեղ է լինում նաև Վանական Վարդապետը, որը մեծ փրկազնով ձեռք է թերում մատյանը և վերադարձնում Խորանաշատ: Նրա ձեռքով է գրված Ավետարանի հետազայի հիշատակարանը. «Ես՝ Վանականս, գրեցի իմով ձեռամբս ի Տփխիս քաղաքի՝ ի դրան Ս. Քառասնիցս, զի գերեալ էր Աւետարանս ի Տաւշոյ ի Մուղան ի թաթարէն, եւ յետ երից ամաց թերեալ անվնաս վաճառեցին ի ΩԶԷ (1238) թուիս, որ փառաւոր աւագէրէց Սարգիս, հասարակ պատուական քահանայիւր և աստուածասէր ժողովրդական տանուտէրաւք բազում ծախսաւք և աշխատութեամք գնել ետուն ի մեզ» (թ. 155ա): 1517 թվականին Ավետարանը տանում են Տայքն, որտեղ Ալեքսանոս արեդան ոմն Ղասումի խնդրանքով փոխում է արծաթյա կազմը, նոր կոստղազարդ կաշվե կազմ է դնում մետաղյա անվյունազարդերով և Ա փեղկին մետաղյա մի խաչ: Մատյանն այս կազմով է հասել է մեզ: XVI դարում նորից գերվում է Ավետարանը, ապա փրկազնվում այս անզամ մելիք Հռվասափի միջոցներով ու ընծայվում Վանի Ս. Վարդան Զորավար եկեղեցուն: 1915 թվականին Ս. Տեր-Ավետիսյանը Վանում տեսնում է Ավետարանը և

²⁷⁹ Կիրակոս Գանձակեցի, էջ 247:

նահանգապետ Դիտմենի միջնորդությամբ ուղարկում է Ս. Էջմիածին²⁸⁰: Վանենին «Խորանաշատի Ավետարանից» ութ տարի հետո՝ 1232 թվականին, Նոր Գետիկում Ստեփանոսից ստանում է նոր ու շքեղ մի Ավետարան:

Վանականի մահից հետո Խորանաշատի գործունեության հետագա ընթացքն անցնում է նրա եղբորորդիներին. վանքի առաջնորդ է դառնում Պողոս Վարդապետը, իսկ Վարդապետարանի բարունապետությունն ստանձնում է Գրիգորիս Վարդապետը²⁸¹: Վերջիններս չեն կարողանում նույն բարձրության վրա պահել դպրոցի հեղինակությունը, և աստիճանաբար խամրում է հոգևոր, գիտական, մանկավարժական և քաղաքական բուռն գործունեություն ծավալած Վարդապետարանի փառքը, իսկ Պետրոս Վարդապետի առաջնորդության տարիներին վերջնականապես ավարտվում է նրա գործունեության բեղուն շրջանը: Չնայած դրան՝ հետազոյի գրիչները, նկատի ունենալով Վանականի դպրոցի երրեմնի հոչակն ու անունը, հիշատակարաններում վանքն անվանում են «քարձրահամրաւ», «մեծայարկ գմբեթածն», «հոչակաւոր սուրբ ուխտն Խորանաշատ»:

Վանականի մահից հետո՝ հետագա տարիներից սակավաթիվ ձեռագիր մատյաններ են հասել: Գրիգորիսն ինքը նոյնպես գրիչ էր: Նա 1252 թվականին Աղբուղայի իշխանության տարիներին «ի նեղ և դառն ժամանակիս... վասն մեղաց մերոց, զի քազմացաւ անհնարին վիշտը և նեղութիւնը ի վերայ ամենայն աշխարհի ի ձեռն անաւրեն և այլակերպ զարուն նետողաց, որով քազմացեալ են քան զատելու եւ քան զաւագ ծովու ... ի վանս Վարդապետի Վանականի Խորանաշատ կոչեցեալ ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս... ի գլուխ իշխանութեան երկրիս այսմ պարոն Աղպուղային, և որդոց իւրոց Վահրամ և Զաքարէ և Իվանէ» (թ. 361ա) Ստեփանոս քահա-

²⁸⁰ Յու. Վարդանյան, Խորանաշատի գրչագրի դեգերումները, «Գրքերի աշխարհ», 1979,թ. 5, մայիսի 15:

²⁸¹ Կիրակոս Գանձակեցի, էջ 248:

նայի պատվերով ընդօրինակում է մի ժողովածու²⁸², իսկ 1255-ին թաղե և Հայրապետ եղայրների համար արտագրում է Վանականի «Հարցմունք ու պատախանիք»-ը²⁸³: XIII դարում Սարգիս գրիչը Միսիթար բարունապետի համար արտագրում է Վարդան Արևելցու Երգ երգոցի մեջնությունը²⁸⁴: 1283 թվականին՝ «Ի վանս Վանական Վարդապետի» Մարտիրոս գրիչը ծերացյալ հասակում արտագրում է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությանը»²⁸⁵:

Վահրամ Բ-ին հաջորդեց նրա որդի Աղբուղան, որի օրոք թուլացավ Վահրամյանների իշխանությունը, ինչն ազդեց նաև հոգևորմշակութային կյանքի վրա: Այդ իշխանության անկումով ավարտվում է նաև Խորանաշատի գրչության կենտրոնի առաջին շրջանը, և սկսվում է անհության շրջան, որը տևում է շատ երկար տարիներ, մինչև XVII դարը:

Վանականի դպրոցում աճեցին Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Մաղաքիա կրոնավորը, Ստեփանոս Աղթամարցին, Գրիգոր Ակներցին, Ներքին Խաչենի Խորայել արքեպիսկոպոսը, Փիլիստիա Սուպթենսը, Առաքել, Հռվետի և Խաչենի Մարկոս վարդապետները՝ բոլորն է իրենց գործի լավագույն գիտակներ, որոնք վարդապետական աստիճան ստանալուց հետո իրենց ուսուցչի գործը շարունակեցին տարբեր հոգևոր կենտրոններում:

Վանական Վարդապետի ամենից բեղմնավոր սանն ու վարդապետարանի առաջին շրջանավարտներից էր Վարդան Արևելցին, որ ժամանակակիցների կողմից մեծարվել է «սուրբ», «հոգիապայծառ սուրբ հայր», «զուսավոր վարդապետ», «եռամեծ», «տիեզերապույս վարդապետ» պատվանուններով:

²⁸² ՍՍ ձեռ. 2273, թերթ՝ 364, նյութ՝ թուղթ, 17 × 12, գիր՝ բոլորգիր, տող՝ 26-28: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է, էջ 751-758:

²⁸³ ՍՍ ձեռ. 6106, թերթ՝ 274, նյութ՝ թուղթ, 12 × 8, գիր՝ բոլորգիր, տող՝ 24:

²⁸⁴ ՍՍ ձեռ. 5452, թերթ՝ 205, նյութ՝ թուղթ, 24,5 × 15, գիր՝ բոլորգիր, տող՝ 26:

²⁸⁵ ՍՍ ձեռ. 1563, թերթ՝ 340, նյութ՝ թուղթ, 17 × 12,2, գիր՝ բոլորգիր, տող՝ 19-22: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, կազմեց՝ **Օ. Եղանեան**, Երևան, 2009, էջ 482-484:

Միիթար Գոշի մոտ կրթություն ստանալուց հետո Վարդանը գալիս է Խորանաշատ և աշակերտում Վանական Վարդապետին, նրանից ստանում վարդապետական աստիճան և 1235 թվականից զբաղվում գիտական, մանկավարժական, եկեղեցական ու քաղաքական բեղմնավոր գործունեությամբ: Նա բացում է դպրոցներ, սկզբում Կայենոն բերդի Ս. Անդրեի վանքում, ապա՝ Խոր վիրապում, որտեղ շարունակում է Վանական Վարդապետի դպրոցի ավանդները: Խոր վիրապում Արևելյուն աշակերտում են Գրիգոր Բջնեցի վարդապետը, Այրարատյան գավառի Գրիգոր Եպիսկոպոսը, Գևորգ Սկևռացին, Հովհաննես Երզնկացի Պլուզը, Ներսես Մշեցին: Վերջինս Սուրբ գրքի մեկնություն էր դասավանդում, իսկ բարունապետի մահից հետո փոխարինում է նրան, ապա դպրոցը տեղափոխում Մշո Առաքելոց վանք:

Վարդան Արևելյուն թողած մատենագիտական հարուստ ժառանգությունը՝ պատմական, մեկնողական, քերականական բնույթի երկեր, ճառեր, ներբողներ, խրատներ, թղթեր, շարականներ, թարգմանություններ, նրան դասում են մեր մատենագիրներից լավագույնների շարքում: Վարդան Արևելյուն հայ մեկնարանական մտքի ամենանշանավոր դեմքերից էր, իմանադիրը մի ամբողջ մեկնարանական դպրոցի: Վարդանը ճանաչված էր միջնադարյան Հայաստանում ու Կիլիկիայում և ակտիվ մասնակցություն ուներ դավանարանական ինդիրներում: Նա մասնակցել է 1243 թվականի Սսի Եկեղեցական ժողովին, այնտեղ սահմանված կանոնները 1245-ին բերել Հայաստան: 1248 թվականին կրկին մեկնել է Կիլիկիա՝ իր հետ տանելով «արևելյան» վարդապետների պատասխան թուղթը, մասնակցել 1251 թվականի Սսի ժողովի ընդունած կանոնների մշակմանը: Կոստանդին Ա Բարձրերդցի կաթողիկոսի հանձնարարականով գրել է «Ձուլյթ խրատականը», Հեթում Ա թագավորի պատվերով «Ժղանքը»: Վարդանը 1267 թվականին խմբագրում ու լրացնում է Տոնապատճառ ծիսական ժողովածուն: Իսկ նրա «Հաւաքումն պատմութեան» երկը կարևոր աղբյուր է ժամանակաշրջանի՝ Հայաստանի և հարևան երկրների ու ժողովրդների պատմության ուսումնասիրության համար:

Խորանաշատում Վարդան Արևելցու ուսումնակից ընկերն էր Կիրակոս Գանձակեցին: Նոր Գետիկի վանքում վաղ մանկությունից աշակերտելով Վանական Վարդապետին՝ 1215 թվականին նրա հետ զայխ է Խորանաշատ և ուսումը շարունակում այստեղ: 1236-ին նա ուսուցչի հետ գերեվարվում է մոնղոլների կողմից: Փախչելով մոնղոլների բանակից՝ ապաստանում է Նոր Գետիկում, որի դպրոցը Միսիթար Գոշի մահից (1213 թ.) հետո էլ դեռ շարունակում էր իր գործունեությունը: Այդ ժամանակ դպրոցում դասավանդում էին Արքահամը, Միսիթարը, Հովհաննավոր Հովհաննես Արմանեցին, իսկ դպրոցը գիշավորում էր Գոշի աշակերտ Մարտիրոսը: Մարտիրոսի՝ բարունապետությունը ինքնակամ թողնելուց հետո Նոր Գետիկավանքի վարդապետարանի բարունապետն է դառնում Կիրակոս Գանձակեցին: Նա այստեղ է շարադրել իր գիշավոր երկը՝ «Հայոց պատմությունը»:

Վանականի մյուս աշակերտը Գրիգոր Ակներցի պատմիչն է: Նա 1265-1266 թվականներին մեկնում է Կիլիկիա և դառնում Ակներ վանքի միաբան: Այստեղ Ականց անապատի առաջնորդ Ստեփանոսի համար Գրիգորը 1273 թվականին ընդօրինակում է Միխայել Ասորու «Ժամանակագրութիւնը» և գրում «Պատմութիւն թաթարաց» երկը²⁸⁶: Երկու երկերն էլ պահպանվել են Երուսաղեմի Ս. Հակոբյանց գրատան թիվ 32 ձեռագրում, որը հենց հետինակի ինքնազիրն է²⁸⁷: Ակներցու Պատմությունը ընդգրկում է 1230-1273 թվականների իրադարձությունները և կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանում մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանի վերաբերյալ: Հիշատակարանում Գրիգորը հիշում է նաև իր ուսումնակից ընկերների՝ Վարդան Արևելցու և Կիրակոս Գանձակեցու մահվան թվականները. «Ի թուականին Հայոց Զ և Ի

²⁸⁶ Այս երկը վերագրվել է Մադաքիա արենային: **Մադաքիա արենայի Պատմութիւն** վասն ազգին նեսողաց, Ս. Պետերոսուրց, 1870:

²⁸⁷ **Ն. Պողարեան,** Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա, էջ 144-147: **Ա. Մաթեոսյան,** Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 427, 429: Հմմտ. **Գրիգոր Վրդ. Ակներցի,** Պատմութիւն թաթարաց:

(1271) փոխեցան ի Քրիստո փառաւոր վարդապետքն Հայոց՝ Վարդան և Կիրակոս»²⁸⁸:

Վանականի լավագույն աշակերտներից էր Առաքել վարդապետը, որը դարձավ Դեղձուտ և Առաքելոց վանքերի առաջնորդը և իր հիմնած դպրոցի բարունապետը: Խոկ Հովսեփը, որ դավանարանական հարցերում բարձր հետինակություն էր վայելում, դատում է Արտազ գավառի թեմակալ: Վանականի աշակերտներից Մարկոսը ևս բարձր դիրքի էր հասել Խոչենում. նա Հասան Զալայի շքախմբի կազմում բանակցությունների էր գնացել Բաթու խանի մոտ²⁸⁹:

Խորանաշատի գրչության կենտրոնի գործունեության մասին հետազայի գրավոր տեղեկությունները վերաբերում են ուշ շրջանին:

XV դարից ունենք մեկ ձեռագիր, որի գրչության տեղի մասին անհայտ գրիչը գրում է. «առուրք ի գերահոչակ ուխտս Խորանաշատայ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս»: Մատյանը ավետարանիշների պատկերներով և կիսախորաններով ծաղկում է Ստեփանոս Եպիսկոպոսը և Ղուկասի նկարի տակ թողնում հիշատակարան. «Նկարող Ստեփանոս Եպիսկոպոսս յիշեցեք» (թ. 137թ)²⁹⁰:

Խորանաշատի գրչության կենտրոնի երկրորդ բեղուն շրջանը XVII դարում էր, երբ վանքի առաջնորդն էր Հովհաննես Եպիսկոպոսը:

1620 թվականին Հակոբ երեցը օրինակում է Ավետարան և Խորանաշատը հիշում Զալամ գավառի կազմում. «ի դուռն սուրբ, բարձրահամբաւ Սուրբ Խորանաշատու և ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս սուրբ Վանական Վարդապետիս և Գրիգոր վարդապետիս, և Ս. Յովանիսիս՝ ի ծորս Զալամա՝ ի գեղս, որ կոչի Լյարակ» (ՍՍ ձեռ. 6669, թ. 284թ): Գրիչը խնդրում է հիշել իր ծնողներին՝ Ղազարին և Ուստիանին, ինչպես նաև Էթար տնտեսին, որ ոչ

²⁸⁸ Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա, էջ 146:

Ա. Մաթևոսյան, Հայերն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 403:

²⁸⁹ Կիրակոս Գանձակեցի, էջ 359: Բ. Ուլուբարյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975, էջ 197-202:

²⁹⁰ ՍՍ ձեռ. 5601, թերթ՝ 311, նյութ՝ թուլյթ, 17,5 × 13, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:

միայն այս, այլ ուրիշ շատ ձեռագրերի ստեղծման աշխատանքներում իրեն շատ է օգնել²⁹¹: Քանի որ ձեռագիր արտագրելու արվեստը նաև վայելչագրություն է, գրիչն անմեղադրություն է խնդրում սխալների ու խոշոր գրի համար և փորձում է արդարանալ. այդպես է գրել, որովհետև արդեն ծեր է, այքի լույսն է՝ նվազ, ժամանակներն ել անբարենպաստ էին Ծահ Արասի թերած նեղությունների պատճառով, անօրինություններն այնքան շատ են, որ գրով հնարավոր չէ պատմել²⁹²:

1631-1657 թվականներին Խորանաշատում տեսնում ենք Իսրայելի և Խոնդադի որդի Եսայի գրին ձեռագրեր օրինակելիս, որը հիշատակարաններում գրցության տեղը հետևյալ կերպ է նշում «ի յերկիրս Տայուշ, ի գեղս, որ կոչի Թաւուզ, ընդ հովանեաւ Ս. Նահատակիս ի յաթոռս Խորանաշատայ Ս. Աստուածածնիս եւ ի Վանական Վարդապետի սուրբ գերեզմանի եւ ի սոցին ապասաւորի տէր Յովիաննէս արհեայիսկոպոսի»:

Խաչատուր քահանան 1631 թվականին իր ծնողների՝ Հովհաննես քահանայի և Խաթունի հիշատակին Եսայի գրչից խնդրում և ստանում է մի Ժողովածոլ՝ հիշատակարանում հիշելով կնոջը՝ Սալահին, հողագործ որդուն՝ Շատուրին, և մյուս որդուն՝ Աղա սարկավագին: Պողոս Երեցը, որ կորցրել էր ընտանիքի բոլոր անդամներին՝ ծնողներին՝ Մովսեսին և Ռեփսէտին, կողակցին՝ Նորարին, զավակներին՝ Գրիգորին և Եղիսին, մնացել էր մենակ, ու կյանքը նրա համար երերուն ու անիմաստ էր դարձել, նույն տարում էլ Խաչատուրից թանկ գնով ձեռք է բերում այս մատյանը՝ որպես հիշատակ իր մերձավորների, և խնդրում աղոթքներում հիշել նրանց²⁹³:

²⁹¹ ՍՄ ձեռ. 6669, թերթ՝ 286, նյութ՝ թուրթ, 20,5 × 15, գիր՝ բոլորգիր, տող՝ 19-20:

²⁹² «...զի նուազեալ էր զաւրութիւն մարմնոյս և ի աչացս լոյսն պակասեալ, զի չէշմաւ գրէի, զի չար ժամանակիս գրեցաւ, զի բազում նեղութիւնը ունեար ի ձեռն տաճկաց, որ Արագ... աւերաց զաշխարին, զմեծամեծս կոտորեաց և պյուտաց զաշխարին և զամեն առու գերի արաւ, տարաւ ի յաշխարին իւր, այնչափ չարիս գործեաց, որ գիր ոչ կարէ պատմել» (ՍՄ ձեռ. 6669, թ. 284թ):

²⁹³ **Պ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Բ, էջ 466:

1637 թվականին Եսայի գրիշը օրինակում է Մաշտոց, որի հիշատակարանում խնդրում է հիշել իրեն՝ գրչին, ծնողներին՝ հորը՝ Խորայել քահանային, և մորը՝ Խոնդադին, կնոջը՝ Սուլթանադին, եղբայրներին՝ Մաթեոսին և Հովհանին, որդիներին՝ Ստեփանոսին, Սենեքարիմին և Արապինին, և դուստրերին՝ Վարվառին, Թեկիին և Սառիկին²⁹⁴: 1639-ին՝ «ի դառն եւ անբարիշտ ժամանակիս», երբ ամենայն տեղ գորացել էին անիրավությունն ու անկարգությունը, և ծով մեղքերի պատճառով շատացել էր անօրինությունը, Եսայի գրիշը թումա կրոնավորի համար օրինակում է մի Ավետարան, որի հիշատակարանում գրչության տեղի մասին գրում է. «ընդ հովանեաւ Ս. Խորանաշատայ Աստուածածնիս ի գաւառ Զագամ»: Գրիշը հիշատակարանում հիշում է թուրք-պարսկական պատերազմից Բաղդադի հետ կապված անցքերը. «ի թագաւորութեան Պարսից Շահ Սահին եւ Յունաց թագաւորութեան Սուլթան Մուրատի ի թուականութեան Հայոց Ու եւ ԶԵ (1638) ամի... ժողովեցան անթիւ զաւրքն Յունաց գնացին ի վերայ Բաղդատս թերդին դեմ յանդման, եաւ զբերդն թոփիւ եւ զարքազանաւը եւ կոսորեաց զաւրս թերդին ԺԲՌ (12000) զաւրք Պարսից...»²⁹⁵: 1640-ին Եսայի գրիշը օրինակում է մի Մաշտոց, որի հիշատակարանում դարձյալ խնդրում է հիշել իրեն, ծնողներին եւ որդիներին²⁹⁶:

1642 թվականին որդու՝ Դավիթ սարկավագի համար Գալուստի որդի Թամուրը Ժամագիրը է պատվիրում, որն ավարտում է Եսային և հիշատակարանում դարձյալ խնդրում հիշել իր և Թամուրի բոլոր մերձավոր հարազատներին, ինչպես նաև տնտեսներին, որ հոգացել են իրենց կեցության խնդիրները²⁹⁷: Վերջին անգամ Եսայի գրչին տեսնում ենք 1657 թվականին, երբ նա Աստվածատուր քահանայի համար «ընդ հովանեաւ մեծայարկ գումբեթաձն Խորանա-

²⁹⁴ ՍՍ 8941, թերթ՝ 160, նյութ՝ թուղթ, 25 × 20, գիր՝ բոլորգիր, տող՝ 26:

²⁹⁵ Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Բ, էջ 785: Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, էջ 157-158:

²⁹⁶ ՍՍ 3998, թերթ՝ 230, նյութ՝ թուղթ, 18,5 × 13,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 22:

²⁹⁷ ՍՍ 8882, թերթ՝ 160, նյութ՝ թուղթ, 25 × 20, գիր՝ բոլորգիր, տող՝ 26:

շատ Ս. Աստուածածնիս և Վանական Վարդապետի սուրբ գերեզմանիս» ավարտում է մի ժողովածու²⁹⁸:

1674-ին Ավետիսի քահանան մի Մաշտոց է օրինակում «փ հայրապետութեան տեր Պետրոսի և յաթռո Խորանաշատու»²⁹⁹: Զեռազիրը խոնավությունից վնասված է, տեղ-տեղ անընթեռնելի, վնասված է նաև հիշատակարանը, չկա սկիզբը, հատվածաբար կարդացվում է հիշատակարանի վերջին մասը միայն: Տկար ու տարտամ ու անարմատ Ավետիսի գրիշը ուժ ու կարողություն է գտել ավարտելու ձեռագիրը, սակայն գրել է թերություններով ու սխալներով, դրա համար խնդրում է անմեղադիր լինել «եւ ոչ ծաղր առնեք», որովհետև իր կարողությունը այցափ էր: Գրիշը խնդրում է հիշել նաև իր ծննդներին՝ Հասանին և Սատիկին, իր կենակից Թանկազիզին, տեր Մարգարին, Մարտիրոսին, Հռոռմսիմին, Եղիսաբեթին, Հեղնարին: Հետազայում ձեռագիրը պատկանել է տիրացու Դավթին, ապա Նիկողայոս վարդապետին:

XII-XIII դարերում հիմնադրված Խորանաշատի վարդապետանը Նոր Գետիկավանքի վարդապետարանի անմիջական շարունակությունն է: Վարդապետարանը, որն ուներ պատմագիտական ուղղություն, հայ մշակույթին և հայ եկեղեցուն տվեց երևելի դեմքեր՝ խոհեմ մտավորականներ և նվիրյալ հոգևոր գործիչներ, որոնք իրենց ուսուցչի փորձն ու գիտելիքները տարածեցին միջնադարյան Հայաստանի մի շարք հոգևոր կենտրոններում: Խորանաշատի վարդապետարանի բեղուն շրջանը Վանական Վարդապետի մահից հետո աստիճանաբար թուլացավ, իսկ Վահրամյանների իշխանության անկումով ավարտվեց կենտրոնի գործունեության առաջին շրջանը, ունեցավ ամլության երկարատև շրջան, որն ընդհատումներով հասավ մինչև XVII դարի 70-ական թվականները:

²⁹⁸ ՍՍ ձեռ. 2116, թերթ՝ 250, նյութ՝ թուլթ, 25,5 × 15, 5, գիր՝ բոլորգիր, տող՝ 30: Սայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է, էջ 83:

²⁹⁹ ՍՍ 3536, թերթ՝ 134, նյութ՝ թուլթ, 20 × 15, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:

ԱՆՎՊԱՏ ԿԱՄ ՆՈՐ ՎԱՐԱԳԱՎԱՆՔ

Վարագավան զյուղից հարավ-արևմուտք, անտառապատ լեռան լանջին է գտնվում Նոր Վարագավանքը, որ տեղացիները անվանում են «Հյուսիսի թագուհի»: Այն Վահրամյան իշխանների հոգևոր կենտրոնն էր: Վիմագիր արձանագրություններում և մատենագիր աղյուրներում վանական համալիրը կոչվում է նաև Անապատ անունով: Այդպես է հիշատակվում վանքի զույգ խորաններով միանավ եկեղեցին, որը 1198 թվականին հիմնադրել է Նոր Բերդի Կյուրիկյան իշխան Դավիթ Բ-ը. «Կամաւ Աստուծոյ եւ՝ Դավիթ՝ որդի Վասակա՝ թոռն Կիւրիկէ արքաի, շինեցի զԱնապատս յիմ իշխանութեանս ձեռամբ վարդապետի Մխիթարա, եւ ի ՈԽԵ (1198) թվիս շինեցի գեկեղեցիս ձեռամբ հաւը Գրիգորո»³⁰⁰: Երկու տարի հետո՝ 1200 թվականին Դավիթը կառուցում է տոհմական տապանատունը³⁰¹: Հետագայում 1224-1237 թվականներին, Դավթի որդի Վասակը Անապատի հարևանությամբ հիմնում է Ս. Աստվածածին եկեղեցին³⁰², որը, Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, օծվում է 1240-ին՝ վանահայր Հովհաննես Տվեցու արքեպիսկոպոսության տարիներին³⁰³: Իսկ Վարդան Արևելցին Հովհաննես Տվեցու մահվան առիթով հիշում է, որ անվանի և երևելի այրն այս 1263 թվականին վախ-

³⁰⁰ **Գ. Սարգսյան**, Անապատ կամ Նոր-Վարագ վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1952, թ. Թ, էջ 28:

³⁰¹ **Կ. Ղաֆարյան**, «Պատմահնագիտական դիտողություններ Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանության մասին», «Տեղեկագիր», 1940, թ. 4-5, էջ 168:

³⁰² **Հ. Քարտաշյան**, Նոր Վարագավանքի ճարտարապետական համալիրը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1984, թ. 7, էջ 68: **Գ. Սարգսյան**, Անապատ կամ Նոր-Վարագ վանքը և նրա վիմագրությունը, էջ 30:

³⁰³ «...վանքն, որ Անապատն կոչի, հուապ ի Նոր բերդն՝ առաջնորդութեամբ և ձեռնտուութեամբ արքեպիսկոպոսին Յովհաննեսի Տուեցույ քաղաքն Շամքորոյ, և Գարդմանայ, և Երգեվանիցն, և Տերունականին, և Տաւշը, և այլ կողմանց իշխանութեան Վահրամյա իշխանի: Եւ եղև աւարտումն եկեղեցւոյն, որ օժաւ և կնքեցաւ յանուն սրբյ Աստվածածին ի ՈՂՁ (1240) թուականին Հայոց»: **Կիրակոս Գանձակեցի**, էջ 153:

ճանվեց ու թաղվեց Նոր Բերդի հոչակավոր Անապատ կոչված վանքում³⁰⁴:

Եկեղեցին կառուցող Գազան անունով ճարտարապետն Անի քաղաքից է: Խորանի գմբեթարդի վերնամասում պահպանվել է նրա անունը. «Գազան վարդպետ Անեցի»³⁰⁵: Ենթադրվում է, որ նա այն նույն ճարտարապետն է, որի Գազան անունը եղել է նաև Կարս քաղաքի պարիսպներից մեկի վրա³⁰⁶:

Վանական համալիրը բաղկացած է երկու եկեղեցիներից, երկու գավիթից, երեք մատուռից և տապանատնից: Անապատը Նոր Վարազավանք է անվանվել մոնղոլական արշավանքների ժամանակ, երբ Վասպուրականի Վարազավանքի վաճահայր Ղուկաս վարդապետը 1231 թվականին Քրիստոսի խաչափայտի մասունքը փրկելու նպատակով փախչում է հյուսիս և վեց տարի դեգերելուց հետո՝ 1237-ին հաստատվում է այստեղ³⁰⁷: Պատմական այս փաստն արձանագրել է եկեղեցու ներսի հյուսիսային պատի վրա պահպանված վիմագիրը. «Ի թվին ΠΩ (1231) ընդ այլ աշխարհս յոլովս հարաւ գաւազանաւ ցամանն Աստուծոյ գաւառն Խոլթա ի ձեռն Խորազմին եւ թաթարին, ընդ որս եւ մեծահոչակ սուրբ ուխտին Վարագ՝ յիշեցեալ մեղաց մերոց: Յայսմ ամի եւ՝ Ղուկաս՝ հայր Վարազա, առեալ զսիեգերահամբաւ Սուրբ Նշանն շնորհեալն Աստուծոյ ի փրկութիւն մարդկան ի ձեռն Պատրոնիկեա եւ սուրբ Հռոմսիմեայն եւ

³⁰⁴ «Յեօրն հարիւր և երկոտասան թուին հանգեաւ ի Քրիստոս անուանի ճգնաւորն և արժանաւորն պատուելի աստիճանաց և կոչմանց, ուր կոչեաց շնորհն Աստուծոյ ի քահանայութիւն, ի վարդապետութիւն և ի յարհեպիսկոպոսութիւն տանն Գարդմանայ և այլոց բերդից և գաւառաց, այրն անուանի և յերևելի աշխարհի՝ տէրն Յովիաննէս Տուեցի անուանեալ... ի հոչականոր վանսն Նոր-բերդին Անապատ կոչեցեալ, թաղեցաւ ի դուռն եկեղեցւոյն, զոր իւր իսկ էր շինեալ»: **Վարդան վարդպետ**, էջ 153-155:

³⁰⁵ **Հ. Քարտաշյան**, Նոր Վարազավանքի ճարտարապետական համալիրը, էջ 69:

³⁰⁶ **Ս. Քարիսուղարյան**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարագործ վարպետներ, Երևան, 1963, էջ 56:

³⁰⁷ Խաչափայտը մինչև 1651 թվականը մնացել է Նոր Վարազավանքում, որտեղից էլ տեղափոխվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի տնօրինությամբ ամեն տարի Վարազա Սուրբ խաչի տոնին Տրոջ խաչափայտի մասունքը բերվում է Նոր Վարազավանք:

Թողկար զշեցա թափառեալ ի տեղո ի տեղ, ապա ի կամս Աստուծոյ ետևս խնամոյն Տեառն, հասի ի Նոր Բերդ առ քրիստո-սասէր իշխանն Վասակ եւ յաստուածաբնակ Անապատ կոչեցեալ վանս եւ ազդում ինչ եղեւ առ իս հաճուանալ Սուրբ Նշանիս ի տեղոց նկատեցի եւ գեղադեշ եկեղեցիս արժանի հանգստեան սորա եւ մեծարեալ ի բնակից առի զվանքս եւ ետու զիաշս յեկեղեցիս Աստուծոյ միջնորդութեամբ եւ վկայութեամբ տեառն Յոհաննու շինաւդի եկեղեցոյս առաջի հրեշտակաց եւ մարդկան»³⁰⁸:

Նոր Վարազավանքում օրինակված ձեռագիր մատյաններ մեզ հայտնի չեն, բայց ուշ միջնադարում այստեղ պահվել են այլ վայրերում գրված և այստեղ բերված ձեռագիր Ավետարաններ³⁰⁹: Անապատում են պահվել 1505 թվականին Մշո Ս. Կարապետ վանքում (Գլակավանք) Մարտիրոս արեդայի ընդօրինակած թղթյա Ավետարանը, 1586 թվականին Դվինիկ գյուղի Ս. Սարգիս եկեղեցում Ներսես գրչի օրինակած Ավետարանը, 1633 թվականին շատախեցի Դավիթ քահանայի որդիի Հովհաննես երեցի Վերին Զակամի Շաքարենկ գյուղում օրինակած մի Ավետարան, որը 1674-ին ընծայվում է Ղարամուրատի Հարանց անապատի Ս. Աստվածածին եկեղեցուն³¹⁰, ինչպես նաև երկու՝ Ավետարաններ, որոնք չեն ունեցել գլխավոր հիշատակարաններ, ուստի անհայտ են մնում գրչության հետ կապված հանգամանքները: Բոլոր հինգ Ավետարանների գտնվելու վայրերն անհայտ են:

³⁰⁸ **Կ. Ղաֆադարյան**, Պատմահնագիտական դիտողություններ Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանության մասին, էջ 172: **Գ. Սարգսյան**, Անապատ կամ Նոր-Վարագ վանքը և նրա վիմագրությունը, էջ 31:

³⁰⁹ **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 333-334:

³¹⁰ **Գ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դար, հ. Բ, էջ 531:

Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 334, **Հ. Ռակեան**, Արցախի վանքերը, էջ 165:

ԶԱԿԱՄ ԳԱՎԱՐ

Զակամ գավառը տարածվում էր համանուն գետի հովտում՝ ընդգրկելով նրա ստորին ու վերին հոսանքները։ Մատենագրական աղբյուրներում Զակամ անունը հիշատակվում է XIII դարից։ Հավանաբար, այս ժամանակից էլ, իրրև գավառանուն և բնակավայր, այն դառնում է գործածական և տարածում է ստանում։ Վարդան Արևեցին Խորանաշատ, Հաղարծին և Գետիկ վանքերը տեղադրում է Հյուսիսային Հայաստանի Զակամ գավառի կազմում։ «Եւ բազում գաւառը ի կողմն հիւսիսոյ, որ կոչի Զակամ, ուր կայ Սուրբ Խորանաշատ եւ Հողարծին եւ Գետկաց վանք, ուր աթոռն էր Գոշ Մխիթար վարդապետին»³¹¹։ 1620 թվականին Հակոբ երեցը Լդարակ գյուղում օրինակած Ավետարանի հիշատակարանում Խորանաշատը նույնպես հիշում է Զակամ գավառի մեջ։ «Ի դուռն սուրբ, բարձրահամբաւ Ս. Խորանաշատու և ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս սուրբ Վանական Վարդապետիս և Գրիգոր վարդապետիս, և Ս. Յովանիսիս՝ ի ծորս Զակամա՝ ի գեղս, որ կոչի Լդարակ» (ՍՍ ձեռ. 6669, թ. 284թ):

Այն տարածքը, որը XIII դարից գրադեցնում էր գավառը, վաղ միջնադարում մտնում էր պատմական Աղվե և Տուչկատակ գավառների մեջ, ավելի ուշ ժամանակաշրջանում համապատասխանում էր Կողեզ գավառի մի մասին, իսկ երբեմն էլ նույնացվում էր նրա հետ³¹²։ Ուշ միջնադարում Զակամը բաժանվում էր երկու մասի՝ հյուսիսային մասը կոչվում էր Ներքին Զակամ, իսկ հարավայինը՝ Վերին Զակամ։ Ներքին Զակամը տարածվում էր Կուր գետի ստորին հոսանքում։ Այսուղե էր գտնվում Հայոց և Աղվանից արքաների

³¹¹ Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, էջ 12:

³¹² Զակամի արևմտյան մասը համապատասխանել էր Տավուշի մարզի Շամշադինի շրջանի մասին, արևելյան մասը՝ Ներկայիս Աղրեցանի մեղքուղի, մասամբ Ղազախի շրջաններին։ Մ. Բարիսուլարեանց, Արցախ, էջ 420։ Տնաւ նաև Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, էջ 259։

ձմեռոցը՝ պատմական Խաղիսաղ քաղաքը: Վերին Զակամը գավառի կենտրոնն էր և զբաղեցնում էր Կուր գետի վերին հոսանքի ավազանը: Երկու հատվածները միասին Աղվանից Եսայի կաթողիկոսը անվանում էր Ամիրաշ Շատինլու³¹³: Գավառը հիշատակվում է միշնադարյան Հայաստանի գրչության կենտրոնների շարքում:

1490 թվականին Զակամի Խորոտկա վանքում³¹⁴ Ալեքսանոս արեղան Խոնտքար տիկնոց խնդրանքով ընդօրինակում է թղթյա մի Ավետարան³¹⁵. «Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ԶԼԹ (1490) ի հայրապետութեան տեառն Սարգսի, ի դանութեան Յաղուր-քէկին, գրեցաւ ձեռամբ անարժան, հեք, ֆանաք, վտիտ և անարիեստ գծողի Ալեքսանոս արեղայի... Եղի գրչութեան այս աստուածաշունչ սուրբ Աւետարանիս ի յերկնահանգէտ և գերահոչակ Սուրբ ուխտիս Խորոտկայ՝ ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, և Ս. Յակոբիս, և Ս. Նշանիս, և այլ սրբոց, որ աստ կան» (թ. 319թ)³¹⁶:

Խոնտքարը և նրա ամուսին Ղարիպշա աղան զավակներ չունեին: Այս Ավետարանը նրանք պատվիրում և ստանում են որպես հիշատակ իրենց գերդաստանի. «Բարեմիտ կինն այս Խոնտկար, ոչ ունելով զաւակ, զա ստացաւ յիշատակ իւր և առն իւրո՛ Ղարիպշա աղին, և ծնողացն իւրո՞ց՝ հաւրն՝ Էտիլիին, և մաւրն՝ Մամա-Տետին» (թ. 320ա): Գրիչն անուն առ անուն իիշում է նրանց գերդաստանի անդամներին՝ հորը՝ Էտիլիին, մորը՝ Մամա-Տետին, եղբայրներին, քույրերին, նրանց զավակներին, անգամ զավակների զավակներին:

³¹³ **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 420:

³¹⁴ Խորոտկա Ս. Աստվածածին վանքը գտնվում է Ուտյաց Գարդմանաձոր, հետազայում Զակամ զավասի կազմում: Սակայն վանքի անունը նույնացներով Գեղարքունիքի Խորոտն զյուղի հետև և տեղադրելով այնտե՛ այս Ավետարանը «Յուցակ ձեռագրացում» նշված է իրեն Գեղարքունիքում գրված մատյան (հ. Բ, էջ 1232): Ավետարանը Խորոտն գյուղում գրված է համարում նաև Ս. արք. Սմբատեանցը: Տե՛ս Տեղագիր Գեղարքունի Ծովագարդ զաւատի..., էջ 54: **Ձ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 801: Տե՛ս նաև **Ա. Ղազարոսյան**, Մաքենցաց վանքի գրչության կենտրոնը, Էջմիածին, 2006, Ա, էջ 69:

³¹⁵ ՍՍ ձեռ. 8135, թերթ՝ 324, նյութ՝ թուլյո, 18×13, գիր՝ բոլորգիր, տող՝ 20:

³¹⁶ **Լ. Խաչիկյան**, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Գ, Երևան, 1967, էջ 161:

Գրիշը նաև տեղեկություններ է հաղորդում վանքի՝ երբեմնի ամայցած ու անմխիթար վիճակի մասին, որ «քազմաժամանակեա անմարդայրնակ լեալ և խախտեալ իհմանց»: Տեսնելով սուրբ ուխտի անմարդաբնակ և ավերակ վիճակը՝ Ավան աղան նորոգում է այն՝ «ջերմեռանդ սիրով և եռայի փափաք տենչմամբ»: Այս տարիներին ուխտի առաջնորդն էր տեր Ղուկասը, իսկ միարաններից հիշվում են փակակալ Սիմեոն քահանան և տնտես Շանչին: Ալեգանոս արեղան ավելի ուշ՝ 1515 թվականին յավ և ընտիր օրինակից նաև Մաշտոց է օրինակել Գարդմանի Ս. Հովհաննես վանքի առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոսի համար³¹⁷:

Գավառի հնագույն բնակավայրերից էր Ղարամուրատ գյուղը, որ XVI-XVII դարերում արդեն ճանաչված գյուղաքաղաք էր, հայտնի էր իր եկեղեցիններով³¹⁸: Ականատեսները հիացմունքով են խոսել հատկապես Ս. Ամենափրկիչ կամ Մեծ եկեղեցու փառահեղ ճարտարապետության նասին³¹⁹: Ս. Ամենափրկիչն ունեցել է նաև իր գրատունը և կազմատունը, որտեղ ձեռագիր մատյաններ են ստեղծվել մինչև XVIII դարավերջին գյուղի հայաթափումը³²⁰: Եկեղեցու ներսում ազուցված խաչքարի վրա պահպանված հիշատա-

³¹⁷ **Հ. Ոսկեան**, Արցախի վանքերը, էջ 5:

³¹⁸ Ղարամուրատում մի քանի վանքեր ու եկեղեցիներ են եղել: Կուսանաց անապատը հիմնադրվել է 1636 թվականին: Հարանց անապատը, որ նոյն Խամշի կամ Ղարամուրատի վանքն է, որի մասին հիշատակում է նաև Կիրակոս Գանձակեցին, IX-X դարերում եղել է Աղվանից կաթողիկոսների նստավայրը: Ս. Ամենափրկիչ եկեղեցին, ըստ շինարարական արձանագրության, կառուցվել է 1634 թվականին: **Կիրակոս Գանձակեցի**, էջ 182, 201, **Թ. Հակոբյան**, **Ստեփառ-Քախչյան**, **Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, էջ 635: Տե՛ս Դիվան, պրակ V, էջ 273:

³¹⁹ ԳԱԹ, Ս. Քամայանի Փ., տեսր թ. 1, VI-11, թ. 30-31: **Մ. Բարիսուլարեանց**, Արցախ, էջ 308-309:

³²⁰ XVIII դարում վրաց Հերակլ Բ արքայի օրոք գյուղի հայ բնակչությունը բռնի տեղահանվում է և բնակեցվում է Շուլավերում (Մառնաուլի շրջան), իսկ 25 տուն բնակիչներ հաստատվում են Շամշադինի շրջանի Այգեձոր գյուղում: Թուրքական խաշնարած ցեղերը տիրացել են հայաթափ գյուղին՝ սկիզբից այն դարձներով իրենց ամառանոցը, ապա վերաբնակեցրել են, իսկ եկեղեցինները վերածել՝ անասնազոմի:

կության համաձայն՝ այստեղ ձեռագրերը կազմել է Միրզան³²¹: Գրատուն են ունեցել նաև Ղարամուրատի Հարանց և Կուսանաց անապատները, որոնք հարստացվել են ոչ միայն տեղում գրված, այլև նվիրատվություն ստացած ձեռագիր մատյաններով:

1610 թվականին «Փ յերկիրս Զակամայ՝ ի գիւղն Ղարամուրատոյ, ի կաթողիկոս տէր Յոհանիսին եւ Եպիսկոպոսութեան երկրիս տէր Մելքիսեդին, որ էր իշխան երկրիս հոգեւոր և մարմնաւոր, եւ տէր Գրիգորին ի թագաւորութեան շահ Ապասին, եւ ի դանութեան երկրիս Ալիխան սուլթանին» Աղաբարը «Փ դառն և ի վշտահատ ժամանակիս» Դավիթ Եպիսկոպոս Գեղամեցուց և Հովհասակ երեցից «ըղձայի փափազմամբ... քանզի փափազեր սիրտ և տենչայր հոգին... ծարավեալ իբրև հնձող ի տապ խորշակի» խնդրում և ստանում է Գրիգոր Ծերենցի Հայսմավուրքը՝ «իբրև մեղսամակարդ հոգու քավարան» և նվիրում է զյուղի «նորակնունք սուրբ խորանին»³²²: Գրիգոր ստացողի անունից իշշում է նրա ծնողներին՝ Թարայդուլին և Խաթունին, Եղբորը՝ Սարուխանին, որդիներին ու դուստրերին, բոլոր մերձավոր բարեկամներին: Հիշվում է Ղարամուրատ գյուղի Սարգիս քահանան, որը միջնորդ էր հանդիսացել Հայսմավուրքի ստեղծման աշխատանքներում³²³, քայլ տակավին աշխատանքները չափարտած՝ փախճանվել էր: Հիշվում են Ստեփանոս, Սատթենու, Հակոբ, Ղազար քահանանները, Մխիթար արելան, Ալեքսիանոս իմաստուն բարունի կրոնավորը, ինչպես նաև գրի ծնողները՝ Խաչիկն ու Փիանդաղեն, Եղբայրները՝ Մկրտիչը, Սարգիսը, Փիրումը, Հովհաննեսը և նրանց որդիները, քույրն՝ Ազիզը և նրա որդի Խաչատուր քահանան:

³²¹ ԳԱԹ, Ս. Քամայանի Փ., տեսր թ. 1, VI-11, թ. 29:

³²² ՄՄ ձեռ. 3812, թերթ՝ 518, նյութ՝ թուղթ, 39 × 24,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 41: **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Ա, Երևան, 1974, էջ 362:

³²³ Միջնադարյան Հայաստանում ձեռագրերի գրչության ժամանակ հանդես եկող միջնորդների մասին տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Գրի և ստացողի միջնորդը (վաճառքի համար նախատեսված գիրը միջնադարյան Հայաստանում), «Պատմա-քանասիրական հանդես», 1990, թ. 4, էջ 121-131:

Ո՞վ էր այս Աղաքաբը, որի խնդրանքով Դավիթ Եպիսկոպոսը օրինակել է ձեռագիրը, նկարել թեմատիկ պատկերները, ճակատագարդերը, լուսանցազարդերն ու զարդագրերը, մինչդեռ նա 1587 թվականին Խնուռ զավառակի Քեշիշ ավանում գրված Ավետարանի հիշատակարանում բռնդրում էր իր հոգսաշատ լինելուց և ժամանակի սղությունից. «ավաղուց հետեւ զիր չէի գրել և էի տեղեացս խարիս, և հոգս շատ ունեի»³²⁴:

Դավիթ Գեղամեցին հայտնի Եկեղեցական գործիչ էր, Եպիսկոպոս է ձեռնադրվել 1575 թվականին, եղել է Խորոտկա վանքի առաջնորդը, գրել է նաև բանաստեղծություններ: Նրա «Ողբք ի Զուլա» բանաստեղծությունը, որի մեջ հեղինակը քննադատում է հայերի նկատմամբ բռնի տեղահանության առիթով Շահ Արասի իրականացրած քաղաքականությունը, մեզ է հասել հենց այս ձեռագրով: Ողբ-հիշատակարանում Դավիթ Գեղամեցին պատմում է նաև Գանձակի, Շամախու, Շիրվանի դեպքերի մասին: Շահ Արասը թուրքերից գրավում է Գանձակի բերդը և կառավարիչ է նշանակում Աղաս Մահմադ խանին³²⁵: Ահա թե ինչպես է նկարագրում գրիչը Գանձակի բերդի գրավումը.

Յորժամ յաղթեաց մեծ վագրին,
Եկեալ ի վերայ Գանձու քաղաքին,
Նըստան բոլոր շուրջ ըգբերդին,

Զորս ամիս ապա առին:
Սուր ի վերայ նոցա եղին,
Ումար ազգն կոտորեցին,
Զսան հազար այլ աւելին,
Որք բնակեալ էին ի մէջ բերդին:

Դավիթն այստեղ կրկին հիշում է Աղաքաբին, որը կառուցել է Եկեղեցի:

Շատ Եկեղեցիք շինեցան,
Բազմաց խորհուրդն կատարեցան:
Մէկն Աղաքաբիս է բազմաց,

³²⁴ Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 614:

³²⁵ Առաքել Դավիթթեցի, Գիրք Պատմութեանց, Երևան, 1990, էջ 113:

Իւր իսակին մօտ վիմէն շինեաց,
Ժամատեղով խորան շինեաց,
Ներքև վիմին գուգ ջրաղաց³²⁶:

Ենթադրելի է, որ Աղարաբի կառուցած եկեղեցին մատուռ կամ փոքր եկեղեցի է եղել, որի շինարարությունն ավարտվել է 1610-ական թվականներին, իսկ օժման առիթով Աղարաբը կառուցել է երկու ջրաղաց և եկեղեցուն է նվիրել այս ձեռագիր Հայսմավուրքը:

Ղարամուրատի գյուղամիջում գտնվող երկու եկեղեցիներից Ս. Ամենափրկիչը, ըստ նրա հարավարևելյան ավանդատան ճակատին պահպանված շինարարական արձանագրության, կառուցել է Սողոմոնի թռու և Ետզարի որդի Մուսես Զուղայեցին 1634 թվականին³²⁷: Նրա հարլւանությամբ գտնվող երկրորդ՝ Փոքր կոչվող եկեղեցին, մուտքի արձանագրության համաձայն, 1701 թվականին կառուցել է Ապաշխարողի որդի Ովանես վարդապետը. «Ես Ովանես վարդապետս՝ որդի Ապաշխարողիս, շինեցի գեկեղեցիս... յիշատակ ինձ և ծնողացն իմոց ի մայրապետութեան անապատիս Թագուհոյն և Կայինային ի ՈՃԾ (1701)»³²⁸: Թվում է՝ Աղարաբի կառուցածը հենց Փոքր եկեղեցին կարող է լինել, որ գուցե ծիսակատարությունների համար փոքր լինելու պատճառով է երկու տասնամյակ հետո կառուցվել է Ս. Ամենափրկիչը, որը կոչվել է նաև Մեծ եկեղեցի: Իսկ Ովանես վարդապետը գրեթե մեկ դար հետո վերակառուցել կամ վերանորոգել է այն և իր անունից թողել արձանագրություն: Բայց եթե դա այդպես չէ, ուրեմն զործ ունենք այս երկու եկեղեցիներից տարբեր մի երրորդ եկեղեցու հետ, որի մասին ոչ մի տեղեկություն չի պահպանվել, իսկ մեզ հասածը Հայսմավուրքի հիշատակարանային տվյալներն են միայն:

³²⁶ Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Ա, էջ 367:

³²⁷ «Ծինեցաւ սուրբ տաճարս ձեռամբ անարժան Զուղայեցի ուստա Մուսեին՝ որդի Ետկարիկ՝ զաւակ Սողոմոնին՝ հրամանաւ Փիլիպոս կաթողիկոսին եկի շինեցի սուրբ եկեղեցիս Ղարամուրատին Հայոց թվին ՈԶԳ (1634):

Դիվան, պրակ V, էջ 273:

³²⁸ Նույն տեղում:

Վյաբանով չի ավարտվում Աղարարի գործունեությունը: Նա հիշատակվում է նաև 1609 թվականին, երբ օտարներից փրկագնում է Վանա լճի շրջակա գավառներից մեկում ստեղծված, հնությամբ X դար հասնող և հնագրական ու ձեռագրագիտական առանձնահատկություններով բացատիկ մի ձեռագիր՝ «Վեհափառի Ավետարան»: Աղարարը այն վերադարձնում է Համազասպի և Տիրամոր որդի, Տաթևի սան Սարգիս վանականի սերունդներին, որոնց գերդաստանի սեփականությունն էր Ավետարանը XV դարից սկսած³²⁹: Վերջիններս Ավետարանը տանում են Փառհսոսի մերձակա Ջյուրլար գյուղը (այստեղ բնակություն էին հաստատել Սարգսի սերունդները), որտեղ Ավետարանը մնում է մեկ դար և գյուղի անունով կոչվում Ջյուրլարի Ավետարան: Իսկ երբ լեզզիների կողմից հիմնահատակ ավերվում է գյուղը, թշնամին թալանի հետ տանում է արծաթյա կազմը և թաշկինակը, որով փաթաթում էին ձեռագիրը՝ թողնելով մազադաթյա Ավետարանը առանց կազմի: 1720 թվականին հարևան Նյուկզար գյուղի բնակչների կողմից կրկին փրկագնվում է մատյանը, նորոգվում ու կազմվում է, իսկ 1729-ին այն նվիրվում է Խաղավանքին: 1978 թվականին Ավետարանը Մանիկ և Թադեոս Անտիկյաններից ձեռք է բերում Վազգեն Վեհափառը և «ի վայելումն Ազգիս Հայոց» նվիրում Մաշտոցի անվան Մատենադարանին³³⁰:

1682 թվականին «ի դուռն Ամենափրկչի՝ ի գեղն Ղարամուրաս» Ղուկաս երեցն իր համար Զեռաց մաշտոց է օրինակում, որի հիշատակարանում խնդրում է հիշել ծնողներին Սարուխանին և Գայանեին, կնոջը՝ Եղիսաբեթին, եղբայրներին, դրւտրերին և հանգույցյալ որդիներին՝ Դավիթին, Առաքելին, Պապին, Ալեքսանոսին և Խաչատուրին³³¹:

³²⁹ ՍՍ ձեռ. 10780: Վազգեն Վեհափառի Ավետարանը, նմանահանություն, ուսումնասիրությամբ՝ **Ա. Մաթևոսյանի** և **Տ. Իզմայլովայի**, Երևան, 2000: Տե՛ս նաև՝ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, կազմեց՝ **Ա. Մալխասյան**, Երևան, 2007, էջ199:

³³⁰ Վազգեն Վեհափառի Ավետարանը, էջ 555-572:

³³¹ ՍՍ ձեռ. 5868, թերթ՝ 152, նյութ՝ թուղթ, 19 × 13,7, գիր՝ բոլորգիր, տող՝ 22:

Գրիգոր գրիշը 1659 թվականին քարահատի Ս. Աստվածածին եկեղեցում Ղարամուրատի Հարանց անապատի միաբան մահտեսի Եղիայի խնդրանքով օրինակում է Ավետարան, նկարում է խորանները, ավետարամիջների դիմանկարներն ու անվանաթերթերը, լուսանցազարդերն ու զարդագրերը և կազմում այն կաշվե կազմով: Ստանալով ձեռագիրը՝ Եղիան նվիրում է իր հոգևոր ծնող «մաքրագարդ եւ սրբաներկ» տեր Տերունին: Ստացողի անունից գրիշը խնդրում է հիշել անապատի միաբաններ Գրիգոր եպիսկոպոսին, Կարապետ արեղային, իրեն՝ Տերուն քահանային³³²:

Հարանց անապատում գրիշ Ավետիս Քամալեցի արեղան ձեռացյալ հասակում լավ և ընտիր օրինակից 1679 թվականին արտագրում է Ավետարան. «Գրեցաւ սուրբ Ավետարանս ի դասն ժամանակիս ի լաւ ընտիր օրինակէ ի յերկիս Վերին Զակամ ի Ղարամուրատի Յարանց անապատիս, ձեռամբ մեղօր զառածեալ Աւետիս արեղայի, որ եմ ի յերկրեն Տաւուչու՝ ի գեղէն Քամալու: Ծերացեալ ժամանակիս և փթեալ փափակեցի սրտիւ ի սկիզբն արարի զԱւետարանս, որ է աւետիս կենաց և պարծանք հաւատոյ և գուլի անկեան քարանց չափիւղայից, որ է հիմունս Սիովնի» (թ. 263թ)³³³: Գրիշը խնդրում է հիշել իրեն, տնտես թագազիզին և իր հանգույցյալ զավակներին: Ավետիսը նկարել է նաև ավետարանիջների պատկերներն իրենց անվանաթերթերով ու խորհրդանիշներով, բազմաթիվ զարդագրեր ու լուսանցազարդեր: Այս ձեռագիրը պահվել է Մեծ Բանանց գյուղի Ս. Լուսավորիչ եկեղեցում³³⁴:

1633 թվականին՝ Հովհաննես եպիսկոպոսի առաջնորդության շրջանում, «ի յերկիրս Վերին Զակամ ի գիւղս, որ կոչի Շաքարբեկ... ձեռամբ մեղալք զառածեալ Յովիաննես երիցուս, որ եմ ի յերկրեն Գանջայոյ, ի գեղէն Շատախոյ, որդի մահդասի Դաւիթ քահանայի... հայրապետութիւն Աղուանից տեր Յովիաննեսին, որ մատնեցաւ ի

³³² Տե՛ս «Բանքեր Մատենադարանի», թ. 12, էջ 258-261, նաև՝ **Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ, Երևան, 1984, էջ 851-852; Մ. Բարխուլարեանց, Արցախ, էջ 94-95:**

³³³ ՍՍ ձեռ. 6705, թերթ՝ 264, նյութ՝ թուղթ, 20,8 × 14,8, գիր՝ բոլորգիր, տող՝ 19-23:

³³⁴ **Մ. Բարխուլարեանց, Արցախ, էջ 284:**

ձեռան պարսիկ ազգին, տարան ի դուռն շահին... Եպիսկոպոսութեան պարոնտէր Բարսեղին» Հովհաննես երեցը արտազրում է Ավետարան, որն ընծայվում է Հարանց անապատի Ս. Աստվածածին եկեղեցուն՝³³⁵:

1647 թվականին Սուլտանեցիք զյուղում Հայրապետ քահանայի որդի Մխիթարը լալա (դաստիարակ) Ծատուրի համար ընդօրինակում է Ավետարան «ի հայրապետութեան Հայոց Տէր Փիդիպոսի՝ ի յԱթոռ Սուլրը Էջմիածնի՝ ի յերկիրս Զակամա՝ ի գեօս, որ կոչի Սուլտանեցի ընդ հովանեալ Սուլրը Աստուածածնին»³³⁶: Մխիթարն իրեն անվանում է աշխարհական և անունը գրում է Եղբայրազիր ծածկազրով «ՃԾԼՃԲՏ» (=Մխիթար): Նա ինդրում է հիշել իր ծնողներին՝ Հայրապետ քահանային և Գոհարին, ուսուցին՝ Մովսես վարդապետին, Ստեփանոս քահանային և Հռիփսիմե ապաշխարողին, իսկ ստացողի անունից՝ նրա ծնողներին՝ Գրիգորին և Սուլթանին, պապ Ղարաճային, երկու ամուսիններին, զավակներին և բոլոր ազգականներին: Վերջում սիսակների և խոշոր գրի համար գրիչը «անմեղադրություն» է հայցում:

Մխիթարից մեզ հասած հաջորդ մատյանը գրվել է նախորդից քանչորս տարի հետո: 1671 թվականին Վերին Զակամում մոլեզնող սաստիկ համաճարակը խել էր բազմաթիվ մարդկային կյանքեր. «Ի յայս ամի անկալ սաստիկ մահ յերկիրս Վերի Զակամայ, որ օր մի ի տան միում եօթն ողի վաղճանեցաւ»: Այս դաժան աղետից մահացել էր Ուկանի եղբայր Մխիթարի ընտանիքը: Հարազատներին կորցրած Եվլա և Ուկան ամուսիններն իրենց հանգուցյաների հիշատակին Հայրապետ քահանայի և Գոհարի որդի Մխիթարին պատվիրում են մի Ավետարան, որը նա ընդօրինակում է

³³⁵ **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դար, հ. Բ, էջ 531:

Մ. Քարիսուդարեանց, Արցախ, էջ 334, **Հ. Ռուկեան**, Արցախի վանքերը, էջ 165:

³³⁶ ՍՍ ձեռ. 223, թերթ՝ 222, նյութ՝ թուղթ, 18 × 13,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 20: Տնի Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, 1984, էջ 995-997, **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ, էջ 247:

Սուլտանեցիք գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում³³⁷: Մխիթար գրիշը նաև պատկերազարդում է մատյանը: Ստացող Եվան այն նվիրում է Ղարամուրատի Կուսանաց անապատին, որի առաջնորդն էր Սանդուխտ կույսը, «և սա խոստացաւ կատարել զհայցուածն նոցին, որ և կատարեցան իսկ»: Հիշատակարանում հիշվում են Եվայի և Ուկանի հանգուցյալ և ողջ մնացած բոլոր հարազատները: Կակիծը տանջում էր նաև գրիշ Մխիթարին, որովհետև համաճարակի հետևանքով նոյնպես կորցրել էր ընտանիքի անդամներին: Նա հիշում է բոլորին անուն առ անուն³³⁸: Գրիշը խնդրում է հիշել նաև այդ աղեսից մահացած իր ուսուցիչ Մովսես Վարդապետին և տեր Ստեփանոսին:

Զեռազիրը հետո տարվել է Մեծ Բանանց գյուղ և պահվել է տեղի Ս. Լուսավորիչ եկեղեցում:

Մխիթար գրիշը մեզ հասած վերջին մատյանը Մաշտոց է, որ նա 1678-ին նոյն վայրում օրինակում է Թաթեռու եպիսկոպոսի համար: Հարազատների հիշատակին ստացած Մաշտոցի հիշատակարանում վերջինս խնդրում է հիշել իր ծնողներին՝ Դանիելին և Մարիանին, Երբայրներին՝ Աղապետին, Վարդանին, Մարտիրոսին, դատերը՝ Հոհիվահմեին, նրա հանգուցյալ մորը՝ Խաթունին, քետի Էվազին և նրա որդի տեր Ղազար կրոնավորին³³⁹:

Այստեղ 1709 թվականին Վարդան գրիշը Սարգսի համար արտագրում է Հայամավուրք, որի միջոցով մեզ է հասել Մխիթար Գոշի

³³⁷ «Ի հայրապետութեան տեառն Պետրոսի սրբազն կաթուղիկոսի Սրբոյ Գանձասարայ, ի առաջնորդութեան նահանգին Մինաս վարդապետի և ի տերութեանն Պարսից շահ Սուլտանեցիք, ընդ հովանեսու Ս. Աստվածածին» (թ. 257ա): ՍՍ ձեռ. 6759, թերթ՝ 260, նյութ՝ թուղթ, 18 × 12,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 22

³³⁸ «...զնուաստ Մխիթար գծողս և զկենաց կցորդ Թաճումն, և զծնօղսն իմ զհայրապետ քահանայն և զԳօհարն, և զեղրայրսն իմ զՍարգիսն, Յոհանն, Առաքեն, Անտոնն, և գրյուրսն իմ Մարիանն և Տաստազուն, և զորդիսն իմ Գալուստն, Նանումն, որ է Գօհար և Վարդիխաթունն, որք այս մահուամբ փոխեցան ի Քրիստոս, և եղեն մեծ կակիծ» (նոյն տեղում):

³³⁹ ՍՍ ձեռ. 968, թերթ՝ 228, նյութ՝ թուղթ, 23 × 18, գիր՝ բոլորգիր, տող՝ 21: Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, կազմեց՝ **Օ. Եղանեան**, Երևան, 2007, էջ 1507-1510:

վարքը³⁴⁰, իսկ 1844-ին Գրիգոր Լոռու-Մելիքյանը ավարտում է իր բանաստեղծությունների ժողովածուն³⁴¹:

Կուսանաց անապատի գրատունը հարստանում էր նվիրատվությունների շնորհիվ: 1636 թվականին Ամենայն Հայոց Փիլիպպոս կաթողիկոսը անապատի հիմնադրման առիթով նվիրում է 1633-ին Նոր Զուղայում գրված մի Հայութավուրք, որն Էրդամի խնդրանքով օրինակել էին Հայրապետ, Աստվածատուր և Գասպար գրչները, իսկ նկարագրումը կատարել էր Մարտիրոսը. «Յիշատակ է Յամապուրքս ի դուռն Ղարամուրատու կուսանաց Սուրբ Աստուածածնին, զի ի յամի, որում թվականն էր Հայոց ՌԶԵ (1636), սրբազն եւ երիցս երանեալ հայրապետն՝ տէր Փիլիպպոսն ետուր զաա ի դուռն Սուրբ ուխտիս և հաստատեաց զաա երդմամբ»: Անապատի մայրապետն էր Հռիփսիմե կույար³⁴²: Նույն թվականին անապատը նվեր է ստանում դարձյալ Նոր Զուղայում Եփրեմ քահանայի և Գրիգորի XVI դարում օրինակած մազաղաթյա Շարակնոց. «Յիշատակ է Շարակնոցս Ղարամուրատի աղջկանց անապատին ի թվին ՌԶԵ (1636), յառաջնորդութեան Հռիփսիմէ և իւր արքակրոն միաբանիցն»³⁴³

Վերին Զակամի Պապանան զյուղն ունեցել է իր գրչատունը, որտեղ ձեռագիր մատյաններ էին գրում ու նկարագրում Առաքելի և Նազուկանի որդի Ավետիսի քահանան և Հովհաննես երեցը: Ավետիսն այստեղ 1655 թվականին «փ դառն և անբարի, վշտաշատ ժամանակի, որ երերուր և տատանեալ ազգս Հայոց ի ձեռն այլազգաց, և անօրինաց, և յանիրաւ պահանջողաց, ի առաջնորդութեան

³⁴⁰ ՄՄ ձեռ. 3813, թերթ՝ 497, նյութ՝ թուղթ, 39,5 × 26,5, զիր՝ բոլորգիր, տող՝ 41, թ. 262թ-265թ:

³⁴¹ ՄՄ ձեռ. 7501, թերթ՝ 126, նյութ՝ թուղթ, 33,8 × 21,3, զիր՝ շղագիր, տող՝ 47-70:

³⁴² ՄՄ ձեռ. 1503, թերթ՝ 633, նյութ՝ թուղթ, 36 × 24, զիր՝ բոլորգիր, տող՝ 37: Տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, էջ 31-40: **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դպր, հ. Բ, էջ 656:

³⁴³ ՄՄ ձեռ. 7222, թերթ՝ 316, նյութ՝ մազաղաթյ, 13 × 9,5, զիր՝ բոլորգիր, տող՝ 23: **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դպր, հ. Բ, էջ 669:

տեառն Պետրոսի նորընծա և սրբազան կաթողիկոսի... ի խանութեան երկրիս մերում Սուլյառուցա խանին» սկսում է մի Շարակնոց, որն ավարտում է Խավունիս գյուղի Չուխտակ Եկեղեցում³⁴⁴:

Մեկ տարի հետո Շամքորի Սոսոռուտ գյուղում Ներսէս քահանայի համար Ավետիսը ավարտում է մի Մաշտոց, իսկ 1659 թվականին տանուտեր Հախում Պասակերցու խնդրանքով օրինակում է մի Ավետարան և բազմագույն երանգներով ծաղկազարդում այն՝ նկարելով չորս ավետարանիների պատկերները, անվանաթերթերը, զանազան լուսանցազարդեր ու զարդագրեր³⁴⁵: Տեղացիներն այն կոչել են Կարմիր Ավետարան. «Եղեւ զրաւ գրչութեան քրիստոսախոս եւ տիեզերալոյս սուրբ Կարմիր Աւետարանիւ... խաղաղութիւն ժամանակի, յերկիրս Վերին Զազամ ի գեղոս Պապանան կոչի, ընդ հովանեաւ Ղարամուրատի յանապատի եւ առաջնորդ սուրբ ուխտիս պարուն տէր Գրիգոր կոչի, նաև սրբազան հօրն տէր Տերունի, որ բազմացոյց դասս կրօնաւորի»: Գլխավոր հիշատակարանում Ավետիսն իր անունը թողել է խառն՝ գումարագիր-եղբայրագիր ծածկագրով «ա եռ բգ դո ժժ բո ժժ», որ կարդում ենք «Աւետիսի»:

Հախումն ու նրա կողակից Գուլիսաթունը գնել են «զզիրքս ի հալաւ արդար վաստակոց» և նվիրել իրենց որդուն՝ նորընծա Բարսեղ քահանային: Ավետիսը հիշատակարանում բոլորից առաջ հիշում է իր ուսուցչին՝ «քաջարան տէր Մխիթարին՝ աննման վարդապետին», ապա տէր Սարգսի վարդապետ քաջ բարունապետին և «սմին բանի համեմիչ եւ առաջնորդ» տէր Հակոբ շնորհազարդ քահանային (թ. 299ա-300ա): 1661 թվականին Ավետիսը գրում, ծաղկում ու կազմում է երկրորդ Ավետարանը և դարձյալ հիշում իր ծննդներին ու ուսուցիչ տէր Մխիթարին, որ իրեն գրել ու նկարել է սովորեցրել. «...շնորհազարդ վարպետն իմ զսէր Մխիթարն, որ ուսույց զիս զիր և ծաղիկ» (թ. 279թ)³⁴⁶: Ավետիսից մեզ հասած վերջին մատյանը Շարակնոց է, որ նա օրինակում է նույն վայրում 1668 թվականի ձմռանը և դժողոհում ցուրտ եղանակից, որ օրինակը «ոչ եղև ընտիր ըստ յոճին և ըստ պատշաճին, սակա ցրտութեան խան-

³⁴⁴ Մ. Քարիսուղարեանց, Արցախ, Էջ 388:

³⁴⁵ ՍՍ ձեռ. 3542, թերթ՝ 304, նյութ՝ թուլթ, 19 × 12, զիր՝ բոլորգիր, տող՝ 21:

³⁴⁶ ՍՍ ձեռ. 7687, թերթ՝ 282, նյութ՝ թուլթ, 18,6 × 12,2, զիր՝ բոլորգիր, տող՝ 22:

գարումն եղև թանաքին և թառամի թղթին» (թ. 292ա)³⁴⁷: Ավետիսը դարձյալ հիշում է Մխիթար վարդապետին:

1661 թվականին «փ յերկիրս Վերին Զակամ՝ ի գեօդս Պապանան ընդ հովանեաւ Զուխտակ Եկեղեցիս հնոյն Ս. Աստուածածնի և նորոյ Ս. Գրիգորի Լուսաւորչիս և Ս. Յովանէսի» Հովհաննես Երեցն ընդօրինակում է մի Ավետարան: Այս թվին վախճանվում է Հարանց անապատի վանահայր տեր Տերունը, և վանահայր է դառնում տեր Գրիգորը³⁴⁸: Մեկ տարի հետո՝ 1662-ին, նույն վայրում Հովհաննես Երեցը գրում և ծաղկում է Երկրորդ Ավետարանը³⁴⁹:

Հակոբ քահանան «փ յերկիրս Զակամ՝ ի գիւղս Մելիքզատայ՝ ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս, և Ս. Թովմայ, և Ս. Նահատակի» 1652 թվականին արտագրում է Ավետարան³⁵⁰: Մատյանը գտնվել է Մեծ Բանանց գյուղի Ս. Լուսավորիչ Եկեղեցում: Այժմ ձեռագրի գտնվելու վայրն անհայտ է:

XVII դարում Զակամում մի Ավետարան է օրինակում Գրիգոր քահանան³⁵¹: 1703 թվականին Զակամի Սարդարի թալա կոչված վայրում Արխատակես Երեցը մահտեսի Եսայու և տանուտեր Ուկանի պատվերով արտագրում է Գրիգոր Ծերենցի Հայսմավուրքը³⁵²:

³⁴⁷ ՍՍ ձեռ. 8549, թերթ՝ 295, նյութ՝ թուլդ, 12,3 × 8,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 23:

³⁴⁸ **Հ. Ոսկեան**, Արցախի վանքերը, էջ 165-166:

³⁴⁹ ՍՍ ձեռ. 337, թերթ՝ 266, նյութ՝ թուլդ, 19,1 × 12,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 23: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, կազմեց՝ **Օ. Եղանյան**, **Ա. Զեյթունյան**, **Փ. Անթարյան**, **Ա. Քեօշկերսան**, Երևան, 2004, էջ 89-90:

³⁵⁰ **Գ. Հակոբյան**, Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ, էջ 476:

³⁵¹ ՍՍ ձեռ. 7299, թերթ՝ 327, նյութ՝ թուլդ, 17,8 × 13, գիր՝ բոլորգիր, տող՝ 20:

³⁵² ՍՍ ձեռ. 9088, թերթ՝ 495, նյութ՝ թուլդ, 34,7 × 23,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 39:

ԳԱՆՉԱԿ

Գանձակի³⁵³ հիմնադրման մասին գրավոր աղյուրներում առաջին հիշատակությունը 844 թվականն է, երբ «Մուհամմեդ իրն Խալիլը հիմնադրեց Գանձակ քաղաքը և բնակեցրեց Դիարբեքիրից թերած արարներով»³⁵⁴: Ըստ Մովսես Կաղանկատվացու շարահարողի՝ Գանձակը Բաղդադի խալիֆի հրամանով և արքունի գանձերով հիմնադրվել է 846 թվականին արար Փատգոսի որդու կողմից. «Նորին որդին եկեալ էառ զաշխարհս սրով եւ գերութեամբ եւ եկեղեցիս բազումս հրով այրեալ կիզեաց եւ զնաց ի Բաղդատ: Եւ անտի դարձեալ եկն արքունի հրամանաւ եւ գանձուք շինեաց զԳանձակ քաղաքն ՍՂԵ. (846) թուին յԱրշակաշեն գաւառի»³⁵⁵: Արարական աղյուրները Գանձակի հիմնադրումը դնում են 853-854 թվական-

³⁵³ Գանձակը Շակաշեն կամ Սակասեն գավառի կենտրոնն էր: Մշիթար Գոշը Դատաստանագրի հիշատակարանում Գանձակը հիշում է որպես մայրաքաղաք. «յաշխարհս Առանայ ի նահանգիս, որ կոչի մայրաքաղաքին Գանձակ»: Գրավոր աղյուրներում հայտնի է նաև Արքասապատ, Գանզակ, Գանձակ Առանի, Գանձակ Հայոց, Գանջա, Գենչե, Գենչե, Կենճե, Քանճա, Զանզան, Ավելի ուշ շրջանում Գանձակ Նոր, Ելիզավետպոլ, Եղիսաբերթուպիս անուններով: Ասրպատականի համանում քաղաքից տարբերելու համար աղյուրներում հաճախ կոչվել է Գանձակ Առանի կամ Գանձակ Աղվանից: XVII դարասկզբին իհն Գանձակից հարավ-արևելք հիմնվում է համանուն քաղաքը՝ Նոր Գանձակը, որը XVIII դարում դառնում է խանության կենտրոն: 1804 թ. Գանձակը միանում է Ռուսաստանին, դառնում համանուն նահանգի կենտրոնը, որը հետազոտում Ելիզավետա թագուհու անունով կոչվում է Ելիզավետպոլ, իսկ 1935 թ.՝ Ս. Կիրովի անունով Կիրովարադ, այժմ կոչվում է Գյանջա: **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան**, հ. 1, էջ 785:

³⁵⁴ **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մաս Բ, Երևան, 1960, էջ 297: **J. Markwart** Ost-europaische und Ostasiatische Streifzüge, Leipzig, 1903, p. 462.

³⁵⁵ **Մովսես Կաղանկատվացի**, Էջ 408-409: Տե՛ս նաև Մանր Ժամանակագրություններ, հ Ա, էջ 391:

ներին³⁵⁶: Ըստ թուրքական աղբյուրների՝ քաղաքը կառուցել է Ոռովի Իսրենդերը, իսկ Կուրաղ Բին-Փիրուզը վերակառուցել է այն³⁵⁷: 951 թվականին Գանձակը գրավում են արար Շեղբաղյանները³⁵⁸: «Այդ ժամանակ ուժեղացավ Գանձակի ամիրա Փաղլունը, որը սկսեց հպատակեցնել իրեն Հերքի (Հերեթի) և Կարխքի (Կախեթի) իշխաններին, ժամանակ առ ժամանակ ավագակորեն և զաղտազողի ավերելով և գերելով այլ և այլ տեղեր»³⁵⁹:

XI դարում Գանձակին տիրում են սեղուկները³⁶⁰: Մատթեոս Ուսիհայեցին գրում է, որ 1086 թվականին Աղվանից հայրապետական աթոռը Պարտավիլց տեղափոխվում է Գանձակ. «ի գօրանալն Պարսից փոխեցաւ աթոռ հայրապետութեանն ի Գանձակ»³⁶¹, իսկ 1087-ին Մելիք-շահ սուլթանի հրամանով սեղուկ Բուղա գորապետը գրավում է Շեղբաղյաններին պատկանող Գանձակը՝ այն վերածելով աթարեկության.³⁶²:

³⁵⁶ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, հ Գ, կազմեց՝ **Հ. Նալբանդյան**, Երևան, 1965, էջ 153, ծնթ. 130:

³⁵⁷ Թուրքական աղբյուրները Հայաստանի հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ Բ. կազմեց՝ **Ա. Սաֆրաստյան**, Երևան, 1964, էջ 14:

³⁵⁸ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, հ Գ, էջ 153, ծնթ. 130:

³⁵⁹ **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, էջ 203-204:

³⁶⁰ **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 52:

³⁶¹ **Մատթեոս Ուսիհայեցի**, էջ 248:

³⁶² «Ի ՇԼԶ (1087) ամի գնաց սուլտանն քազմութեամբ գօրօք և բնակեցաւ ի վերայ քաղաքին, որ կոչի Գանձակ՝ ի յաշխարհին Հայոց, և արար սաստիկ պատերազմ ի վերայ քաղաքին Գանձակայ և ժողովեաց զամենան պարսիկ ի վերայ նորա և սաստիկ պատերազմաւ փորեալ ընկեցին բուրգն մի, և այսպիսի պատերազմաւ առին գրադարն Գանձակ և արարին կոտորած զիոռք մասն քաղաքին, և հրամայեաց Պուղան և վերացոյց զսուրն և արար խաղաղութին: Եւ Տէր Ստեփանոս կաթուղիկոսն Աղուանից էր յայնժամ ի քաղաքն, և զերծաւ խաղաղութեամբ օգնականութեամբն Աստուծոյ վասն զի պահեալ ենու ի Հայոց գօրացն, որը էին զիեն Պուղանին»: Բուղայի կողմից Գանձակի գրավումը արձանագրել է նաև Վարդան Արևելցին: **Մատթեոս Ուսիհայեցի**, էջ 254: **Վարդան Վարդապետ**, էջ 106: **Մանուկ Անեցի եւ շարունակողներ**, ժամանակագրութիւն, աշխատասիրութեամբ՝ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 197:

1139 թվականի սաստիկ ու ավերիչ երկրաշարժից կործանվում է քաղաքը:

Հետագա դարերը Գանձակի համար նույնքան պատերազմաշատ եղան, որքան նախորդները: Պատմության անցուղաձերն արձանագրել են պատմիչները, ժամանակագիրներն ու գրիչները:

Իրար հաջորդելով՝ Գանձակին տիրում են սելջուկ Չոյի զորապետի, ապա վրացական գորքերը՝ Ենթարկելով քաղաքն ավարի ու ավերի, սպանում ու գերեփարում են ողջ մնացածներին³⁶³: Ծանր կորուստներ կրած, սակայն կարճ ժամանակ հետո վերակառուցված քաղաքը թաթար-մոնղոլական արշավանքներից կրկին ավերվում է 1232 թվականին³⁶⁴: Գանձակի առման վերաբերյալ Կիրակոս Գանձակեցին գրում է, որ մոնղոլները բոլոր կողմերից պաշարեցին քաղաքը, բարաններով քանդեցին քաղաքի պարիսպները, այրեցին, ամեն ինչ հրի ճարակ դարձեցին, անխնա սրի քաշեցին տղամարդկանց, կանանց, մանուկներին, ոչ ոք չկարողացավ փախչել ու փրկվել³⁶⁵:

Նոր Գետիկում 1232 թվականին Վանենու խնդրանքով օրինակած Ավետարանի հիշատակարանում Ստեփանոս գրիչը նույնպես անդրադառնում է Գանձակի գրավմանը. «Ի թուիս Հայոց ՈԶԱ

³⁶³ **Սովոր Կաղանկատուացի** (հավելված Բ, հեղինակ՝ Մխիթար Գոշ), Էջ 432-433, **Ղ. Ախշան, Հայապատում**, Էջ 386-388:

³⁶⁴ Սոնդոների կողմից Գանձակի գրավման թվականը տարբեր աղբյուրներ տարբեր թվեր են նշում՝ 1229-1235 թվականներ:

³⁶⁵ «Եւ յանկարծակի հասին զօրքն թաթար, և պատեցին զաղաքն յամենայն կողմանց, և մարտ եղեա՝ մարտնչեին ընդ նմա բազում մերենայիւր, և հարին զայգեստանն, որ շուրջ քաղաքան էին: Ապա վլուցին և զպարիսպ քաղաքին փիփիկուանօք յամենայն կողմանց, և ոչ ոք եմուտ ի քաղաքն ի թշնամեացն, այլ վառեալը զինու՝ պահեցին զրադաքն շաբաթ մի: Իսկ բնակիչը քաղաքին իբրև տեսին, թէ առա քաղաքն ի թշնամեացն, մտեալ իւրաքանչիւր որ ի տուն իւր՝ այրեաց ի վերայ իւր զշինուածն, զի մի անկցի ի ձեւուն թշնամեացն, և այլը այրեցին զամենայն, որ ինչ ծախսիւր ի հրոյ, և ինքեանք միայն մնացին: Եւ զայն տեսեալ թշնամեացն՝ առաւել ևս ի ցասումն բարկութեան բրդեցան և սուր ի գործ արկեալ, զամենեսեան ճարակ սրոյ եսուն՝ զարս և զկանայս և զմանկունա»: **Կիրակոս Գանձակեցի**, Էջ 236-237:

(1232)... եկն ազգն նետողաց եւ զմայրաքաղաքն Գանձակ իհմն ի վեր արարեալ՝ կոտորեաց զմարդ եւ զանառուն, զբազումս ի քրիստոնէից»³⁶⁶:

Քաղաքը չորս տարի ամայի մնալուց հետո կրկին վերակառուց վում է: Դրույթունը անասելի ծանրանում է Շահուուխի երրորդ արշավանքների (1435 թ.) պատճառով, երբ վերջինիս զորքերը ասպատակում են Գանձակն ու հարևան շրջանները՝ հասնելով մինչև Տաթև և ստիպում ժողովրդին լքել իրենց բնօրբանը³⁶⁷: Հովհաննես գրիչը, որը Շահուուխի արշավանքներից Տաթևից փախած և Եղեկիել վարդապետի հետ Գանձակով Վրաստան հասած միաբաններից մեկն է, 1436 թվականին «ի յաշխարիս Վրացտան, ի մայրաքաղաքիս Տիխիեաց մերձակայ գեղս Կրծանիս, ընդ հովանեաւ կաթուղիկէ Ս. Աստուածածնիս... ի հայրապետութեան տեառն Կոստընդնայ, ի Աղովանից տէր Մաթեոսի, և մեր՝ բազում երախտավոր, քաջ և իմաստուն տէր Եղեկիել վարդապետին, ի թագաւորութեան Վրաց Ալեքսանդրին» օրինակում է մի Գանձարան, որի հիշատակարանում գրում է, թե ինչպես չարիք ու պատուիաս Շահուուխի զորքը Գավազան ամրոցի ճանապարհին հարձակվում է Գանձակով Վրաստան շարժվող քարավանի վրա, որը, անօրեններից փախստական դարձած, տանում էր նաև Եկեղեցական սպասք և թանկարժեք զրքեր³⁶⁸:

³⁶⁶ **Պ. Յովսէփեան,** Խաղբակեանք կամ «Պոչեանք ...», էջ 344, նոյնի՝ Ցիշատակարան ձեռագրաց, էջ 883, **Ա. Մաթեոսյան,** Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 183: **Ս. Զալալեանց,** Ճանապարհորդութիւն..., հ. Բ, էջ 216-217:

³⁶⁷ **Ա. Ղազարոսյան** Դանիել բարունապետի բարձր տիպի դպրոցը, «Պատմա-քանակիքական հանդես», 1986, թ. 3, էջ 102:

³⁶⁸ Ահա, թե ինչպես է գրիչը ներկայացնում այդ ծանր օրերի իրավիճակը. «...ի ներ և ի դառն ժամանակիս, որ վասն իմ ծովացեալ մեղացն եկն չար անաւրենէ Շահուուխն, ու մեծ աւերումն արար աշխարհին... Այլ չարիքն ու պատուիան անաւրեն ջաղաթին նեղեցուց զմեզ, այլ մեր առար զմեր Եկեղեցւոյ հանդերձն՝ շուրջաներ, զԱւետարան, ու զգրանք, ու զբուրվար, և զայլ ամենայն հոգոյ և զմարմնոյ զինչ որ կայր, զամեն առաք ի Վրաց տուն կու զայր բազում կարվան: Եկաք մինչև Աղստև, հանդիպեցաւ ջաղաթին ինիլդարն բազում հեծեալ, և թալանեցին զմեզ և զամեն քրիստովնեայքն և մերկեցուցին, որ քան զոտից ամանն այլ իրք քթողին, այլ ձմերան աւուրք և

Իրար հաջորդող պատերազմները խաթարում են նաև մշակութային կյանքը, և ձեռագիր աղբյուրները Գանձակի մասին լուում են գրեթե մեկ դար՝ մինչև 1541 թվականը, երբ պարսից շահ Թահմազը գրավում է Երևանը, Գանձակը և Շամախին. «Շահ Թահմազ՝ որդի շահ Խամայիին նստալ թախտ թվին ԶՀԵ (1526): Թվին ԶԴ (1541) գնաց էառ Երևան, Գանչայ, Շամախի»³⁶⁹: 1552 թվականից Գանձակին տիրում են օսմանցիները³⁷⁰. Ժամանակագիրները վկայում են, թե ինչպես սուլթան Մուրադը անթիվ գործով գրավում է Թավրիզը, Երևանը, Շամախին, Գանձակը, ապա իր մտերիմներից Ֆարհադ փաշային ուղարկում է տեղերում բերդեր կառուցելու³⁷¹: Պատմական նույն անցքերի վերաբերյալ արժեքավոր են նաև Գեղամա երկրի իշխան մելիք Շահնազարի՝ 1606 թվականին թողած ընդարձակ հիշատակարանի տեղեկությունները, որոնք պահպանվել են 1330 թվականին Զդավնա անապատում Կիրակոս Երգնկացու օրինակած Ավետարանում³⁷²:

Քանից վերակառուցված քաղաքն այս անգամ ենթարկվում է Շահ Արքայի ավերիչ արշականքներին: Գանձասարում 1576

ցուրտ: Այլ եկար ի Գավազանին բերքն, քրիստովնայքն ի վերա եկին և ծածկեցին զմեր մերկութիւնն: Այլ մեք եկաք յալագին աչար, առաք զթուլթօս» (ՄՄ ձեռ. 4117, թ. 294ար): **Լ. Խաչիկյան**, ԺԵ դարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, հ. Ա, էջ 461:

³⁶⁹ Սանր Ժամանակագրություններ, հ. Բ, կազմեց՝ **Վ. Հակոբյան**, Երևան, 1956, էջ 427:

³⁷⁰ **Կոարել Դաւրիժեցի**, էջ 458, **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 111, 137:

³⁷¹ Սանր Ժամանակագրություններ, հ. Ա, էջ 145, 173, հ. Բ, էջ 246, 516:

³⁷² «Ի թվականին ՈՒՀ (1583) ամին եւա Ֆարհան փաշան ի Հատինապալր՝ հրամանաւ սուլթան Մուրատին, իջա ի քաղաքն Երևան և փախոյց տեր երկրին ըգՄահամատ խանն՝ Պարսից թագաւորութեանն Խուաբանդա շահին, որ շինեցին ամուր բերդ: Եւ ի ամ ամի շինեցին թագում ամուր բերդս ի Տիֆլիս, ի Գալրի, ի Թալմանիս, ի Թալրէզ, և ի Գանչայ, ի Շամախի և այլ տեղիս բազումս, որ էր թուով ԻԵ (25) բերդ» (Նոր Օռլայս, ձեռ. 43, թ. 283ա): **Ա. Տեր-Աւետիսեան**, Ցուցակ ձեռագրաց Նոր Օռլայս Ամենափրկիչ վանքի, հ. Ա, էջ 25: **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, հ. Ա, էջ 217-219: **Մ. Բարխունյանց** Գանձակի բերդի կառուցումը դնում է 1588 թվականին: **Մ. Բարխունյանց**, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 59:

թվականին օրինակված Սահմուարանի հետագայի հիշատակագրության մեջ ձեռագրի ստացողը այդ օրերի մասին թողել է հետևյալ տեղեկությունը. «Թվին ՈՇԳ (1604) Գևորգյան դուռ երես թէրէտ, աման, խիստ կոտորեց. դառն ժամանակ եղեւ»³⁷³: Այդ դեպքերին է անդրադառնում նաև Ակոր երեցը 1604 թվականի հիշատակարանում³⁷⁴:

1779 թվականին գրիչ Միքայել Աստապատեցին Գանձակում ավարտում է հայատառ պարսկերեն Ավետարան՝ հիշատակարանում գրելով. «Վերջին գրող սուրբ Աւետարանիս՝ տէր Միքայել Աստապատեցին, որ եմ Գանձայ բնակեալ, տեսի բան լուսայինզի Օվանիսիի և Յակոբին, որ նորանք ևս էին գրեալ, և ես ի նոցուն օրինակի գրեսցի: Հոգի Սուրբ օգնեայ բազմայմեղ գրչիս. ՈՒՄԸ (1779) յունվար ի ԻԷ (27)»³⁷⁵: Գրիչը մատյանն ընդօրինակելու ժամանակ ձեռքի տակ զաղափար օրինակ է ունեցել 1717 թվականին Շամախիում սկսած և 1721-ին Թիֆլիսում ավարտած Հաքիմ Յանուարի (Հակոր վարդապետի) ձեռամբ գրված հայատառ պարսկերեն

³⁷³ ՍՍ ձեռ. 1923,թ. 45 թ: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Զ, էջ 58-582: **Վ. Հակոբյան**, Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Ա, էջ 133:

³⁷⁴ Ակոր երեցը գրում է, թե ինչպես անօրենները ավերեցին Հայոց աշխարհը՝ Էրզրումից մինչև Գանձակ ու Շիրվան, թալանեցին սրբավայրերը, գերեվարեցին հոգնոր սպասավորներին ու բազմաթիվ ձեռագիր մատյաններ: Այս ամենին հաջորդում է սոսկափ առևտուր՝ որդուն վաճառում են հորը, կնոջը՝ ամուսնուն. «Ես՝ մեղավոր Ակոր երեցս, գիրեցի զգիրս ի դառը և ի դժար ժամանակի, որ շահ Ապազն ելա ի Խորասանայ աւերեաց զՀայոց աշխարհս Առզրումայ մինչև ի Շրվան: Ցուսմանլուն, Գանձայի դուռն Բ (2) անգամ զնաց ի Երևան Գեղամանա, բազում գերիս գերեաց՝ ի քահանայից, սարկաւագաց, Աւետարանաց և ի գրոց: Տարան ի քաղաքն Գանձակոյ, վաճառուցին որդիքն ի վերայ հարցն, կինն ի վերայ յայրոն, որն Ճ (100) մարչի, որն Ծ (50), այլ աւել և պակաս»: ՍՍ ձեռ. 2745, թ. 1ա: Տես նաև **Վ. Հակոբյան**, Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Ա, էջ 134: Գանձակի բերդի գրավումը նկարագրում է նաև Դավիթ Գեղամեցի գրիչը (նույն տեղում, էջ 367):

³⁷⁵ ՍՍ ձեռ. 3044, թերթ՝ 144, կյութ՝ թուղթ, 21,1 և 16,9, գիր՝ նոտրգիր, տող՝ 34-37: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ժ, խմբագրութեամբ՝ **Գ. Տեր-Վարդանեանի**, Երևան, 2019, էջ 214-218:

Ավետարանը (ՍՍ ձեռ. 8492), իսկ վերջինս է Յահյա (Հովհաննես) Իբն Էյվազ Թաքրիզիի ընդօրինակած մի հայտառ պարսկերեն մեկնություն, որն իր օրինակում (ՍՍ ձեռ. 8492) օգտագործել է որպես նախարան: Միքայել գրիչը բացատրում է նաև Ավետարանը պարսկերենով գրելու պատճառը. «այն էր, որ մուսուլման ուսումներից շատերը շատ հարցերի շուրջ վիճարանում էին քրիստոնյա համայնքի հետ, որ՝ այսպես չէ և այնպես է: Այս նախարանին անհրաժեշտությունը հասավ ինձ՝ մեղսագործ, ազնիվ, իսկական խաչապաշտներին նվիրյալի՝ Միքայել անունով՝ Մարգարի որդի Նախշե Զհան քաղաքից, Եղիշրիվար գյուղաքաղաքից, որ այժմ ապրում եմ Գանջայում»³⁷⁶.

1783 թվականին Միքայել Աստապատեցին նույն վայրում ընդօրինակում է մի Բժշկարակ³⁷⁷: Հովհաննես գրիչը մի Ժողովածու է ընդօրինակում 1682-ին³⁷⁸: 1881-1882 թվականներին տարաքնույթ բովանդակությամբ նյութերի ժողովածու է հետինակում Մկրտիչ մահտեսի Վղաճանյան-Խսահակյանը³⁷⁹:

1804 թվականին Գանձակն ընդգրկվում է Ռուսական կայսրության կազմում, Վերանվանվում Ելիզավետապոլ ու դատնում համանուն նահանգի կենտրոնը: Մշակութային կյանքը դադար չի առնում. Վերաշխնվում են Եկեղեցիներ, բացվում են դպրոցներ, գործում են թատրոնը, գրադարանները, մամուլը: Ելիզավետապոլյան շրջանից սակավաթիվ ծիսական բնույթի ձեռագիր մատյաններ են հասել, որոնք XVIII-XIX դարերի ընդօրինակություններ են (տե՛ս ցանկը):

Գանձակի ձեռագրական ժառանգությունը լրացվում է այլուր գրված և քաղաքի Եկեղեցիներում պահված ձեռագիր մատյաններով:

³⁷⁶ Այս ձեռագրերի մասին մանրամասն տե՛ս **Հ. Կիրակոսյան**, Մաշտոցյան Մատենադարանի հայտառ պարսկերեն երկու ձեռագիր Ավետարանների հիշատակարանների մասին, «Էջմիածին», 2018, Ե, էջ 56-70:

³⁷⁷ ՍՍ ձեռ. 6234, թերթ՝ 129, նյութ՝ թուլյա, 35 Տ 21, գիր՝ նոտրգիր, տող՝ 31-51:

³⁷⁸ ՍՍ ձեռ. 8967, թերթ՝ 86, նյութ՝ թուլյա, 16,8 Տ 11,5, գիր՝ նոտրգիր, տող՝ 14-19:

³⁷⁹ ՍՍ ձեռ. 9770, թերթ՝ 128, նյութ՝ թուլյա, 20,6 Տ 17, գիր՝ շղագիր, տող՝ 17-27:

Ս. Հովհաննես Եկեղեցում է պահվել 1283 թվականին Սկևորյում Կեռան թագուհու պատվերով Ստեփանոս գրչի օրինակած մազադարյախ բոլորգիր Ավետարանը, որի հայտնի է «Կեռանի և Հեթումի Ավետարան» անունով (ՄՄ ձեռ. 6764)³⁸⁰:

Այսուել է պահվել Թումա գրչի ձեռամբ ամբողջապես Երկաթագրով գրված մազադարյախ մի Ավետարան, որի գրչության վայրը և ժամանակը անհայտ են, որովհետև չի պահպանվել գիշավոր հիշատակարանը: Այս ձեռագրի գտնվելու վայրը նույնպես անհայտ է:

Ս. Հովհաննես Եկեղեցու հավաքածուի մեջ են մտել 1295 թվականին Դրազարկում Հովսեփ փիլիստփայի համար Թորոս փիլիստփայի և Հովսան գրչի օրինակած մազադարյախ Ավետարանը (ՄՄ - ձեռ. 6290), Ծարա Երկրում Սիմեոնի խնդրանքով Եսայի Երեցի գրած և ծաղկազարդած Ավետարանը (ՄՄ ձեռ. 4053, 1663 թ.), 1555-ին Մկրտչի գրչի օրինակած Ավետարանը, 1678-ին Ամիրխանի համար Ղուկաս քահանայի օրինակած Ավետարանը, 1666 թվականին Հակոբի խնդրանքով Մալագնաբերդի Ս. Ամենափրկիչ վանքում Հովհաննես գրչի օրինակած և Գրիգոր Քարահատու ծաղկազարդած ու կազմած Ավետարանը (ՄՄ ձեռ. 11060), 1745 թվականին տանուտեր Պանագուրցի Ալահվերդու՝ այլադավանների ձեռքից փրկած և Երիցմանկանց վանքին նվիրած մի Ավետարան, մոխրաթաղի մելիք Եսայու՝ 1724 թվականին փրկած և դարձյալ Երիցմանկանց վանքին նվիրած մի Ավետարան, 1505 թվականին Ելենի որդու միջոցներով Կախեթում փրկազնած մի Ավետարան³⁸¹, 1660 թվականին ընտիր թղթի վրա Ստեփանոս քահանայի բոլորգրով օրինակած Ավետարանը, որը Հակոբն ու Աբրա-

³⁸⁰ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի ձեռագրատանն է պահպում «Կեռան թագուհու Ավետարանը» (ձեռ. 2563, 1272թ.): Վյու ձեռագրից տարրեկու համար Կ. Մաթևոսյանը ՄՄ 6764 Ավետարանը պայմանականորեն անվանում է «Կեռանի և Հեթումի Ավետարան»՝ նկատի ունենալով ձեռագիրը ստացողի և նրա որդու անունները: Վյու անունով ենք անվանում ենք նաև մենք: **Կ. Մաթևոսյան**, Կեռան թագուհու և Հեթում արքայորդու Ավետարանը, «Գիտություն և տեխնիկա», 1991, թ. 3, էջ 46-49:

³⁸¹ **Ս. Քարխուղարեանց**, Արցախ, էջ 40-43:

համը 1699-ին արդար վաստակով ձեռք են բերում և նվիրում Գանձակի Ս. Հովհաննես Եկեղեցուն³⁸²:

Գանձակի Ս. Լուսավորիչ Եկեղեցին ունեցել է մեկ Ավետարան, որ 1668 թվականին Հարցհանկիստում օրինակել էր Հովհաննես գրիշը (ՍՍ ձեռ. 10966): Ս. Աստվածածին Եկեղեցում ևս եղել է մեկ Ավետարան, որն օրինակել է Վարդան գրիշը 1322 թվականին Պեղգենա Գոմեր գյուղում³⁸³:

Մի քանի հայուր տարի Հաղբատում պահվելուց հետո XI դարի հայ ձեռագրական մշակույթի գլուխգործոցներից մեկը՝ Հովհաննես Սանդղկավաննեցու Արշարունյաց դպրոցում 1060-ական թվականներին երկարագործ գրիված ու ծաղկազարդված մագաղաթյա Ավետարանը, որ հայտնի է «Մուղնու Ավետարան» անունով (ՍՍ ձեռ. 7736)³⁸⁴, Պարսից Խուտայրանդ շահի (1578-1586 թթ.) և Վրաց Սիմոն Ա թագավորի (1588-1600 թթ.) տիրապետության տարիներին գերել ու տարել են Գանձակ: Ափիլոյի որդի պարոն Բայանդուրը երեք թումանով փրկազնել է Ավետարանն ու արծաթյա մի գրակալ, և, իբրև հոգևոր զավակ, նվիրել Հաղբատի Սուրբ Նշանին՝ այս մասին թողնելով հիշատակություն. «Ես՝ Գալրեցի պարոն Ափիլոյի որդի պարոն Բայինդուրս, ի հալաւ արդեանց իմոց գնեցի սուրբ Աւետարանս եւ զարծայթած գրայկալքս Հաղբատայ, այեւ ետու ի դուռն Հաղբատայ Սուրբ Նշանին... որժամ գերեցաւ սուրբ Աւետարանս, գնաց հասաւ ի Գանջայ, Աստուծոյ ողորմութեամբ եւ յետս դարձուցեալ գնեցայք սուրբ Աւետարանս ... եւ ետու հոգեւոր զաւակ ի դուռն Սուրբ Նշանիս»³⁸⁵:

³⁸² Հ. Ոսկեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Միսիթարեան Մատենադարանին ի Վիեննա, հ. Բ, էջ 719-720:

³⁸³ Լ. Խոաչիկյան, Ա. Մաթելոսյան, Ա. Ղազարոսյան, Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մաս Ա, 2018, Երևան, էջ 444: Մ. Բարխունյանց, Արցախ, էջ 47:

³⁸⁴ «Մուղնու Ավետարան» է կոչվել Թիֆլիսի Մուղնու Ս. Գևորգ Եկեղեցում 100 տարի պահվելու համար: «Մուղնու Ավետարանի» մասին տեսն Ա. Մաթելոսյան, Գրիշ Հովհաննես Սանդղկավաննեցի, «Բանքեր Մատենադարանի», թ. 10, 1974, էջ 379-398:

³⁸⁵ ՍՍ ձեռ. 7736, թ. 300ա:

Գանձակյան ձեռագրական մշակույթի տևականության ապացույց են Գանձակ գավառի³⁸⁶ տարբեր բնակավայրերում ու եկեղեցիներին կից գործած գրչության կենտրոններում՝ Գառնակեր, Արլահ, Քարատակ, Դաստիվյուռ, Ռուկանապատ, Շատախ և այլուր ընդօրինակված ձեռագրերը, որոնց հիշատակարանները տեղեկություններ են տախս ոչ միայն կոնկրետ ձեռագրի գրչի, ստացողի, ընդհանրապես ձեռագրի ճակատազրի մասին, այև նրանցից շատերի հիշատակարանները մասամբ կամ ամբողջական պատմական տեղեկություններ են հաղորդում ժամանակի իրադարձությունների, ստեղծված մատյանների հովանավոր եկեղեցիների ու վանքերի, նրանց միարանությունների վերաբերյալ:

Բարսեղի և Խոնարարի որդի Ազարիա կրոնավորը, որը հիշատակարանում իրեն անվանում է նկարող, 1467 թվականին «ի յերկիրս Գանձակյա՝ ի յաթոռս Գառնակերի՝ ի դուռն Շաղկոցի Ս. Աստուածածնիս եւ յայլ սրբութեանցս ի կաթողիկոսութիւն տեառն Յովիաննիսի, առ տեղոյս աթոռակալութեան տէր Ծերունի արքայիսկոպոսի» նկարազարդում է Եղիվարդում 1466 թվականին Մատթեոս արեղայի օրինակած Ավետարանը³⁸⁷: Ազարիան նկարում է ավետարանիների պատկերները՝ իրենց անվանաթերթերով, կարմիրի և կապույտի բաց երանգներով թոշնագիր զարդագրեր և լուսանցագարդեր: Մատյանի պատվիրատուն Մատթեոս քահանան է, որը ողջ ունեցվածքը ծախել և գնել է այս Ավետարանը՝ որպես «հիշատակ և վայելումն» իր ծնողների՝ Սարգսի և Խոնձի, կողակցի՝ Սերովիհայի, եղրոր՝ Հովհաննեսի, իրենց զավակների, հորդերոր՝ Հազարաբեկի և արյունակից բոլոր հարազատների³⁸⁸: Վերջում Ազարիան խնդրում է հիշել նաև վանքի միարաններին՝ իր աշա-

³⁸⁶ Գանձակի գավառը համապատասխանում էր Ռոտիքի Շակաշեն, Գարդման, Արցախի Փարիսոս գավառների տարածքներին: Տե՛ս Ե. Լալայան, Գանձակի գավառ, էջ 5:

³⁸⁷ Նոր Զուղայի ձեռ. 60: Տե՛ս Ա. Տեր-Ավետիսիեան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենասիրկիշ վանքի, հ. Ա, էջ 92-93:

³⁸⁸ Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, Երևան, 1958, էջ 244, հմնտ. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, էջ 272, Հ. Ռուկան, Արցախի վանքերը, էջ 162:

կերտ Մելիքսեթ արեղային, մահդասի Միմոնին, տնտես Կիրակոսին: Գառնակեր գյուղում պարոն Հովհաննեսի և Հովսեփի Բալենացի քահանայի մոտ եղել են ձեռազիր Քարոզգրքեր, բայց քանի որ սկզբից և վերջից թափված են եղել թերթեր, գրիչը, գրչության վայրը և ժամանակը մնում են անհայտ³⁸⁹:

1515 թվականին լավ և ընտիր օրինակից Ավելասնոս արեղան Գարդմանաձոր ավանում Ս. Հովհաննես եկեղեցու առաջնորդ տեր Բարսեղի համար օրինակում է մի Մաշտոց³⁹⁰:

1639 թվականին Հովհաննես երեցը աստվածասեր Գրիգորի խնդրանքով լավ և ընտիր օրինակից արտագրում է մի Ավետարան՝ գրչության տեղը նշերով «ի երկիրս Գանձակայ՝ ի ծորս Գանջոյ՝ ի դրան Ս. Աստուածածին անապատին... ի կաթողիկոսութիւն Տեառն նորընծա Գրիգորին... ի ժամանակս շահ Սարին»³⁹¹: Զեռազրի նկարազարդման համար հոգացել են անապատի միաբանները, որոնց հիշում է գրիչը: Հիշվում են ուխտի առաջնորդ նորընծա Անտոն քահանան, «որ է արի և քաջ հովիվ և հովանի ի վերայ միաբանից և ազգ քրիստոնեից», ժամանակ Ներսեսը, ժամասաց Հովհաննեսը, տնտես Բարաղամը:

1763 թվականին Հովհաննես գրիչը արտագրում է Ավետարան «ի ձորս Գանձակու ի երկիրս Գանձու՝ ի զիւլս, որ կոչի Պայանանց ի դուռն Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ»³⁹²:

Քարատակ գյուղում 1669 թվականին Սարգիս երեցը պարոն Միրումի խնդրանքով օրինակում է Աստվածաշունչ³⁹³, որը Միրումն ու իր կողակից Խաթունաղեն նվիրում են Ուկանապատի Ս. Աստվածածին եկեղեցուն:

1671-ին «ի թագաւորութեան Պարսից Շահ Սուլեյմանին նորընծայի և հայրապետութեան տանս Աղուանից տեառն Պետրոսի

³⁸⁹ **Ս. Բարխուղարեանց**, Արցախ, էջ 315:

³⁹⁰ **Հ. Ոսկեան**, Արցախի վանքերը, էջ 5:

³⁹¹ ՍՍ ձեռ. 7980, թերթ՝ 299, նյութ՝ թուղթ, 18,6 Տ 14,7, գիր՝ բոլորգիր, տող՝ 19:
Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Բ, էջ 772:

³⁹² **Հ. Ոսկեան**, Արցախի վանքերը, էջ 7:

³⁹³ ՍՍ ձեռ. 3856, թերթ՝ 326, նյութ՝ թուղթ, 18 Տ 12, գիր՝ բոլորգիր, տող՝ 21 :

սրբազն կաթողիկոսի ի յերկիրս Գանջայ՝ ի գեօդս Համտիւնա, ընդ հովանեաւ Ս. Պանտալեոն քժշկի և Ս. Աստուածածնի» Ղազար քահանան ավարտում է իր վարպետի՝ Ազարիա քահանայի անավարտ թողած Ավետարանը: Ազարիան արտագրել է Մատթեոսի և Մարկոսի Ավետարանները. «Մաթեոս և Մարկոս գլուխն գրեցաւ վարպետին իմոյ՝ Ազարիայ քահանա //»: Այստեղից ընդհատվում է հիշատակարանը, եղծված է գրությունը, հաջորդող թերթերը թափված են, և չգիտենք, թե ինչ պատճառով է կիսատ մնացել Ազարիայի սկսած գործը, որը շարունակել է Ղազարը: Պահպանված այս մի քանի բառերից՝ «// ի խնդրոյ բարեմիտ և աստուածասեր, հեզափն զի //», հասկանալի է դառնում, որ հաջորդ երկու Ավետարանները Ղազարն ավարտել է բարեպաշտ, բայց մեզ անհայտ մի անձնավորության հորդորով: Ղազարը կատարել է նաև ծաղկազարդումը՝ նկարելով ավետարանիչների պատկերները, բազմազան լուսանցագարդերը և թռչնագիր, հանգուցագիր ու հրեշտակագիր զարդագրելը³⁹⁴:

Զեռագիր մատյաններ են հասել նաև Շատախ գյուղից: Ակոր քահանայի և Եղիսաբեթի որդիի գրիչ Ովանես քահանան «ի դառն և ի նեղ ժամանակիս» «ի յերկիրն Գանճա՝ ի գիւղս, որ կոչի Շատախ՝ ի դուռն Ս. Աստուածածնին» 1621 թվականին ստույգ և ընտիր օրինակից արտագրում է մի ժողովածու: Գրիչը վշտացած է երկրին պատուհասած ծանր վիճակներից, որովհետև իրաք են խառնվել բնական և բարոյական աղետները, և փոխվել են բոլոր չափանիշները. «զմարախն Է. (7) տարի աշխարհս կերաւ», «թագաւորաց զուլումը շատացաւ», աստծո խնամքը վերացավ և ժամանակը չարացավ, մարդիկ մատնիչներ դարձան և աշխարհը լցվեց չարով³⁹⁵:

1634 թվականին «ի դառն և ի նեղ ժամանակիս» «ի յերկիրս Գանճակայ ի ձորս Գանջայ ի գիւղն իմ, որ կոչի Շատախ… ի հայ-

³⁹⁴ ՍՍ ձեռ. 3541, թերթ՝ 283, նյութ՝ թուղթ, 19 Տ 14, գիր՝ բոլորգիր, տող՝ 20- 21: **Մ. Բարխուդարեանց**, Աղուանից երկիր և դրախտիք, էջ 251: **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 271:

³⁹⁵ ՍՍ ձեռ. 728, թերթ՝ 318, նյութ՝ թուղթ, 15,5 Տ 10, 5, գիր՝ բոլորգիր, տող՝ 17- 22: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 510-514:

բապետութեան Տեառն տէր Գրիգորի նորընծային, և առաջնորդ սուրբ ուխտիս պարոնտէր Մկրտչի... ի ժամանակիս Շահ Սարին» լավ և ընտիր օրինակից Հովհաննես երեցը Ս. Կաթողիկեի հովանու ներքո ավարտում է մի Ավետարան: «Պատվիրատուն Շատուրի և Գույի որդի Ամիրն է, որը Ավետարանը խնդրել ու ստացել է որպես հիշատակ իրենց ընտանիքի³⁹⁶: Դավիթ Շատախեցու որդին է Հովհաննես զրիչը, որը 1633 թվականին Վերին Զակամի Շաքարբեկ զյուղում օրինակած Ավետարանի հիշատակարանում իր մասին գրում է. «որ եմ ի յերկրեն Գանջայոյ, ի գեղեն Շատախոյ, որդի մահդասի Դասիթ քահանայի»³⁹⁷: Իսկ մի հիշատակարանում Դավիթը Հովհաննեսին համարում է իր աշակերտը:

Շատախում է գրվել նաև ՍՍ 713 մատյանը, որը կազմված է երկու տարբեր ձեռագրերից³⁹⁸: Առաջինը Պարզատումար է, որը 1636-ին «փշխանաց իշխան և պարոնաց պարոն մեծաշուր և քաղցրայինգի» մելիք Սիմավոնի խնդրանքով օրինակել է Հովհաննես երեցը: Երկրորդ ձեռագրի գրիչը Բարսեղն է, որը 1687 թվականին մատյանը օրինակել է «քարեպաշտ և աստուածաւեր, իշխանաց զարմ և մեծազգի պարոնաց պարոն» մելիք Հախմազարի խնդրանքով: Գրիչն իր աշխատանքն անվանում է «Քաղուածո», այն տարբեր նյութերի Ժողովածու է, պարունակում է «Պատմություն և խրատ Խիկար իմաստունի, Հակաճառություն այլազգաց, Գրիգոր Նարեկացու Մատյանից հատվածներ (Բան ԺԲ, ՂԴ), աղոթքներ, հանելուկներ, 1658-1718 թվականների Ժամանակագրություն, ախտարք, որ, ինչպես գրիչն է ասում, «հաւաքեալ աստի և անտի, ետ զծագրել և դնել ի միում տփի, ի զրօսան և ի վայելումն անձին» մելիք Հախմազարի:

³⁹⁶ **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Բ, էջ 560:

³⁹⁷ **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանների ԺԷ դար, հ. Բ, էջ 531: **Մ. Բարխունյառեանց**, Արցախ, էջ 334, **Հ. Ոսկեան**, Արցախի վանքերը, էջ 165:

³⁹⁸ ՍՍ ձեռ. 713, թերթ՝ 65, նյութ՝ թուղթ, 14 Տ 10, գիր՝ նոտրգիր, տող՝ 18 (Ա ձեռագիր), թերթ՝ 76, նյութ՝ թուղթ, 13,5 Տ 9,5, գիր՝ նոտրգիր, տող՝ 19 (Բ ձեռագիր): Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 427-434:

Շատախի գրչության կենտրոնն ուներ նաև իր կազմատունը, որտեղ հայր և որդի՝ Դավիթ և Հովհաննս Շատախեցիները կազմում, ինչպես նաև ձեռագրեր էին նորոգում: 1617 թվականին «ի Երկիրս Գանձակոյ, ի ձորս Գանջոյ, գաւլս Համասրայրակ կոչի, ի դրան Ս. Ստեփանոս Եկեղեցին» Դավիթը կազմում է 1460 թ. Եղեգաց Երկրի Եղուձոր գյուղում Մատթեոս քահանայի օրինակած Ավետարանը և հիշատակարանում խնդրում է հիշել իր ծնողներին՝ Միրաքին և Գունդուլին, ինչպես նաև իր աշակերտներ տեր Հովհաննես և Սմենվ քահանաներին, Ակոր և Ավանես սարկավագներին³⁹⁹: Երկու տարի հետո՝ 1619-ին, Դավիթը նորոգում է Կիլիկիայում 1351 թվականին օրինակած և գանձակեցի Ակոր Երեցի սեփականությունը դարձած Ավետարանը⁴⁰⁰: Իսկ Մաքենյաց վանքում 1524 թվականին Ալեքսանոս գրչի օրինակած Ավետարանի վերջին ստացող Զիլավսխանի անունից 1644 թվականին հիշատակարան է թողել Դավիթ Երեցը՝ գրչության վայրը նշելով «ի յերկիրս Գանձոյ, ի գեղն Շատախի, ի դուռն Աստուածածին Եկեղեցւոյ» (ՄՄ ձեռ. 8196, թ. 2ա): 1625 թվականին Մեծ Բանանց գյուղում Հովհաննեար նորոգում է Խ դարում Վանի շրջակայրում ստեղծված «Վեհափառի Ավետարանը»: Իսկ 1627 թվականին, Խորանաշատի Հովհան արքայի կողոպոսի խնդրանքով նորոգում է Բասեն գավառում 1477 թվականին գրված մի Ավետարան (ՄՄ ձեռ. 6319):

Շատախից մեզ հասած հաջորդ Ավետարանը օրինակել է Նազար դպիրը 1661 թվականին «ի ժամանակս փոքր Շահ Ապագին, յերկիրն Գանջա, ի գիւղս, որ կոչի Շատախի, ի դուռն Ս. Աստուածածին և ի դիտապետութիւն Հայոց հանուր սեփի տեառն Պետրոսի Երիցս Երջանիկ հայրապետի»⁴⁰¹: Մատյանի պատվիրատուն տանուտեր Խաչատուրն է, որը հիշատակարանում խնդրել է հիշել

³⁹⁹ ՄՄ ձեռ. 6316, թ. 190ա: **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Ա, էջ 613:

⁴⁰⁰ ՄՄ ձեռ. 2745, թ. 267թ: Տես Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Թ, էջ 331-338: **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Ա, էջ 684:

⁴⁰¹ ՄՄ ձեռ. 5072, թերթ՝ 306, նյութ՝ թուղթ, 18 և 12, գիր՝ բոլորգիր, տող՝ 20:

իր որդում՝ տեր Հովհաննես քահանային, տեր Մարտիրոսին և բոլոր կենդանի և հանգուցյալ հարազատներին:

Դաստիփյուր գյուղում էր գործում գրիչ և ծաղկող Սարգիս Երեցը: Նրանից հայտնի առաջին մատյանը 1671-1673 թվականներին ընդօրինակած Ավետարանն է: Սարգիսը նաև ծաղկել է մատյանը, նկարել չորս ավետարանիշների պատկերները՝ իրենց անվանաթերթերով և ավետարանիշների խորհրդանիշներով, թեմատիկ նկարները, բազմաթիվ բուսական և թռչնային լուսանցազարդեր ու զարդագրեր: Կազմը կոստղազարդ Է՝ Ա փեղկին՝ մետաղյա ակնակուռ խաչով⁴⁰²: 1677-ին մատյանը ստանում է Եարամիշը և իր ու որդիների անունից թողնում է հիշատակարան. «Յիշատակ է ս. Ավետարանս Եարամիշին և իր որդի Ամիրիսոցին և Թումանին, որ է ի գուղն Լև» (թ. 147ա):

Սարգիս գրիշը «յերկիրս Աղուանից՝ ի մեծ և վայելագեղ ձորամիջի գեղոյս Դաստիփիւրի, որ է մերձ մայրաքաղաքին Գանջայոյ՝ ի դուռն Ս. Ստեփաննոս» 1673 թվականին սկսում և 1674-ին ավարտում է երկրորդ մատյանը՝ այս անգամ Մաշտոց⁴⁰³: Դարձյալ «ի յերկիրս Գանճոյ՝ ի գիւղս, որ կոչի Դաստափիւր» Սարգիսը «հենքահողի և քրիստոսահավատ» Վարդանի խնդրանքով ավարտում է երրորդ մատյանը՝ ընտիր բոլորգրով գրված Ավետարանը: Սարգիսը ծաղկազարդում է նաև մատյանը՝ նկարելով չորս ավետարանիշների պատկերները, անվանաթերթերը, լուսանցազարդերը, ապա կազմում է մատյանը կաշվե կազմով: Հիշատակարանը թերի է, ընկած են վերջին թերթերը, անհայտ է մնում գրչության ստույգ թվականը: Հոր՝ Ռվանեսի և մոր՝ Մարթայի հիշատակին պատվիրված մատյանը ստանալով՝ Վարդանն ու յուր կողակից Մարյանը նվիրել են զյուղի եկեղեցուն: Վարդանը հիշատակարանում հիշում է նաև իր որդուն՝ Դոլաթին, և դստերը՝ Էզիլին և նրանց զավակներին⁴⁰⁴:

⁴⁰² ՍՍ ձեռ. 6746, թերթ՝ 304, նյութ՝ թուլյթ, 19,2× 14, գիր՝ բոլորգիր, տող՝ 21-23:

⁴⁰³ ՍՍ ձեռ. 3576, թերթ՝ 308, նյութ՝ թուլյթ, 18,5×12, գիր՝ բոլորգիր, տող՝ 20:

⁴⁰⁴ Վիեննայի ձեռ 914: Տես Հ. Ռուկեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Միսիթարեան մատենադարանին ի Վիեննա, հ. Բ, էջ 502:

Պահպանվել է մի պատառիկ 1626 թվականին գրված Գանձարանի հիշատակարանից (ՄՄ Դ 848), որը գրել է Ուսկանապատ զյուղի Վարդան քահանան: Նկարագրվող դեպքերին ականատես է եղել տեր Վարդանը: Նա գրում է Գանձակի Ուսկանապատ, Գետաշն, Բարսում և մյուս զյուղերում վրացական գործի գործած ավարառու գործողությունների մասին, որոնց արդյունքում շատերը սպանվեցին, շատերին գերի տարան: Չորրոր թալանել է նաև Ուսկանապատի եկեղեցին ու տարել եկեղեցու ողջ ունեցվածքը՝ արժեքավոր գրքեր, թանկարժեք իրեր, սպասք, սպանել են նաև քահանայի հորը, իսկ ինքը փախչելով փրկվել ու հասել է Դադիվանը⁴⁰⁵:

Իսկ զյուղի Ս. Հակոբ եկեղեցում է պահպել Դրազարկում Թորոս գրչի «ոսկեզաւծ որակալք» օրինակած և Կիրակոս վարդապետի ոսկով, արծաթով ու թանկարժեք քարերով ընդելուզած մագաղաթյան ու գեղեցկազարդ մի Ավետարան, որը 1331 թվականին ստացել է Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Տարսայինը⁴⁰⁶, 1463 թվականին Մոկաց Փասավանք անապատում Խարայել գրչի օրինակած Ավետարանը⁴⁰⁷:

⁴⁰⁵ «Ազգն Վրաց՝ Մովիաւ ասին անուն նորայ, վասն մեր մեղաց եկեղալ բազում հեծելալք հասաւ ի Գանձակ քաղաք, որ այժմ Գանջայ ասի: Եւ ոչ եզ անդ ազգեն դղբապաշի, քանզի յորժամ լուան գալն Վրաց՝ փահատական եղեն ի ննանէ: Եւ յանիրաս ազգն Վրաց արձակեցաւ ի վերա Հայոց ազգին՝ Գետաշենու հետ մինչ ի պարսումեցիք Ա (1) աւոր գերացուցին դաշտ ու սար, հայր և թուրք ի միասին, և ձեռն անկեալն զոմն սպանին, զոմն վիրաւորեցին և քազումն գերի տարան, որ անթիւ, շատ աւերս ածի ի վերայ աշխարհիս: Եւ ես՝ նուաստ ու անպիտան Վարդան սուտանուն քահանայ, վայ ինձ, որ անուանս չեմ արժանի, խիստ թալանվեցայ ինչ մորեմերկ: Գոհութիւն Աստուծոյ իմ մեղացն բարկացաւ Աստուած և զանենայն ինչս իմ բազում գիրանք ու շատ անաւթս եկեղեցոյ իմ, գերի տարան, և հայրն սպանին, և միայն ես մնացի արտասուալից աչօք լալիս: Աշխարհս զամենայն տարտարոսի մնաց, վերջն Աստուած գիտէ: Ապա ես՝ մեղաւոր Վարդան երեցս Ուսկանայպատու եկի ի սուրբ յուխտս Դատիվանայ», **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դար, հ. Բ, էջ 206:

⁴⁰⁶ **L. Խաչիկյան**, **Ա. Մաթեոսյան**, **Ա. Ղազարյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դ., մասն Բ (1326-1350 թթ.), Երևան, 2020, էջ 98: **L. Խաչիկյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դ., էջ 231: **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 273:

⁴⁰⁷ **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 274:

Գանձակի Արլահ զյուղի Ս. Մինաս եկեղեցում ևս պահպել են ձեռագիր մատյաններ: Այստեղ է եղել 1463 թվականին Վանի Ս. Աստվածածին եկեղեցում Նիկողայոս գրչի օրինակած թղթյա պատկերագարդ Ավետարանը, որ պատկանել է Փիլիպոս կաթողիկոսին⁴⁰⁸:

Երկրորդ ձեռագիրը 1374 թվականին գրված Ավետարան է, որի գրիչն ու գրչության վայրը հայտնի չեն: Ավետարանի հետագայի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Շահ Արասի արշավանքների ժամանակ՝ 1607 թվականին պարոնտեր Օհանես Ղալաքելը Գանձակ քաղաքից ազատում է մեծաթիվ գերեվարված մարդկանց, մեծաքանակ ձեռագիր մատյաններ է փրկագնում ու նվիրում Ս. Եղիշեի վանքի միաբան Մելքիսեթ քահանային. «Շահ Ապագն վար երեկ Ղարապաղս կալաւ, պարոնտեր Ոհանն Գանձայ քաղաքէն շատ գերի ազատեց, շատ գիրանք՝ Ա (1) Շարակնոց, որ ետ Ս. Եղիշեայ առաքեալին վանքն, Դ (4) Մաշտոց, Ա (1) Աւետարան, Ա (1) Սաղմոսարան, Ա (1) Աղթաքք, Ա (1) Խորատագիրը տուի տէր Մելքիսեթն... Տէր Ոհաննէսն Ղալապեկ ես այս գիրանքս ազատեցինք անաւրինաց ձեռքէն, տվինք մեր հոգին՝ Ա (1) Աւետարան տվի Ոսկեան, Ա (1) Շարակնոց տվի Աւանէս երեցն Շաշվացի. թվին ՈԾԶ. (1607) էր»⁴⁰⁹:

Արլահից մեզ հասած հաջորդ մատյանը դարձյալ Ավետարան է, որի հիշատակարանը չի պահպանվել, ուստի հայտնի չեն գրիչը, գրչության վայրն ու թվականը: Պատվիրատուն Մուրադշենն է, որն Ավետարանը 1448 թվականին վաճառել է Ջրվշտիկի Եղիշե առաքյալի վանքի Խաչատուր երեցի որդի Հովհաննեսին⁴¹⁰:

⁴⁰⁸ **Լ. Խաչիկյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դ., հ. Բ, էջ 198: **Մ. Քարխուղարեանց**, Արցախ, էջ 267

⁴⁰⁹ **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, հ. Ա, էջ 282: **Մ. Քարխուղարեանց**, Արցախ, էջ 268:

⁴¹⁰ **Լ. Խաչիկյան**, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, էջ 618: **Մ. Քարխուղարեանց**, Արցախ, էջ 268:

ՇԱՄՔՈՐ

Պատմական Ուտիք նահանգի նշանավոր թերդաքաղաքներից է Շամքորը: Այն մտնում էր Գարդման, երբեմն Շակաշեն գավառների կազմի մեջ: Զաղաքի հիմնադրումը VII դարի սկզբներին վերագրվում է Աղվանից Վիրո կաթողիկոսին. «Սա շինեց քաղաքս հինգ յանուն Շաթայ՝ գՇաթառ, գՇամքոր, գՇաքի, գՇիրուան, գՇամախի, գՇապօրան»⁴¹¹:

652 թվականին քաղաքին տիրում են արաբները⁴¹², իսկ VIII դարում այս շեն ու հայաշատ քաղաքը կործանվում է Ուտիքում ապրող սևորդյան ցեղերի կողմից: Արարական աղբյուրները Շամքորի մասին գրում են. «Սա մի հին քաղաք էր և շեն մնաց, մինչև այս կործանեցին սևորդիք կոչվածները: Սա մի ժողովուրդ է, որը համախմբվեց, երբ Յազիդ իրն Մազհաղը (ոստիկան) հեռացավ Հայաստանից, և նրանք ուժեղացան»⁴¹³: 850-ականներին զորավար Բուղան վերաշինում է քաղաքը, բնակեցնում Դարրանից թերքած երեք հարյուր տուն խազարներով և անվանում է քաղաքը Ալ-Մուտավաքքիխաս⁴¹⁴: Իսկ մի քանի տասնամյակ հետո՝ 890-ական թվականներին, Մմբատ Ա Բագրատունի արքան, ընդարձակելով թագավորության սահմանները, հյուսիս-արևելքում հասնում է մինչև Ուտիք՝ ներառելով Հունարակերտ քաղաքը, Տավուշն ու Շամքորը՝ վերջինս դարձնելով սահմանային քաղաք. «Եւ այսպէս ձգեալ աճնցուցանէր զշաւիդ տէրութեան իւրոյ... ի հարաւակողմն կոյս զկուր

⁴¹¹ Կիրակոս Գանձակեցի, էջ 195:

⁴¹² Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, հ Գ, կազմեց՝ Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 85:

⁴¹³ Օսար աղբյուրները Հայաստանի հայերի մասին, Արարական աղբյուրներ, Բ, իրն ալ-Վահր, Թարգմ., առաջարկն և ծանոթագրությունները՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 56:

⁴¹⁴ Համառոտ պատմութիւն Վրաց ընծայեալ Զուանշէրի պատմիչի, Վենետիկ, 1884, էջ 106:

գետով մինչև ի քաղաքն Տփիսիս և զՈւտի գաւառ մինչև ի քաղաքն Հունարակերտ և մինչև ի Տուս և ի Շամբոր»⁴¹⁵:

Շամբորը միջին մեծության քաղաք էր, գտնվում էր Պարտավ-Գանձակ-Հունարակերտ-Տփիսիս տարանցիկ առևտրային մայրուղու վրա և պաշտպանված էր ամրակուռ պարիսպներով։ Շամբորը արհեստագործության նշանավոր կենտրոն էր, հայտնի էր բրուտագործական և մանածագործական բարձրորակ արտադրությամբ։ Քաղաքը բարգավաճեց մինչև 1236 թվականը, մինչև մոնղոլների կողմից քաղաքի գրավումն ու ավերումը։ XI դարում Շամբորին տիրեցին սելջուկները, և մինչև Զաքարյանների կողմից ազատագրվելը քաղաքը գտնվում էր Գանձակի Ելտկուզյան աթաքրեկության տիրապետության տակ։ XII-XIII դարերում Զաքարյանները, ազատագրելով Շամբորն իր մերձակայքով, այն հանձնում են իրենց տոհմից սերած Վահրամ Գագեցի իշխանին։ «...ատին և բազում գաւառս ի պարսից և բերդս ամուրս՝ զԳարդման, զՉարհերձ, զԵրգեվանք, զՏավուշ, զԿածարեթ, զՏերունականն, և զԳագ, և զՃամբոր քաղաք ի ներ եարկ, զոր յետոյ էառ որդի նորա Վահրամ, հայրն Աղբուղին, պապն Վահրամայ, Զաքարէի և Իւանէի»⁴¹⁶։ Վարդան Արևեցին Շամբորի առումը դնում է 1214 թվականին։ «Ի վեց հարիւր վարժուն և երեք թուին... մեծն Իւանէ անուանի եղեալ քաջարութեամբ առնու զՉարեն և զամենայն շրջակայս նորա և ապա ձեռն տուեալ ազգայնոյն իւրոյ՝ Վահրամայ որդույ Զաքարիայ, առնու և զՃամբոր»⁴¹⁷։ Վրացական աղբյուրները նույնպես արձանագրել են պատմական այս փաստը։ «Շամբորը Վահրամ Գագեցու ձեռին էր, որը խելամիտ և պատերազմներում անուն հանած մարդ էր»⁴¹⁸։

Վահրամյանների իշխանության կազմում Շամբորը մնաց մինչև մոնղոլ-թաթարական արշավանքները, իսկ մոնղոլ-թաթարների

⁴¹⁵ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1996, էջ 164։

⁴¹⁶ Կիրակոս Գանձակեցի, էջ 163։

⁴¹⁷ Վարդան վարդապետ, էջ 140։

⁴¹⁸ L. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, h. Բ, էջ 52։

Երևալով՝ առաջին հարվածը Վահրամյաններն ստացան Շամքորից, և վաճառաշահ ու շեն քաղաքը կորցրեց իր երբեմնի փառքը և մնաց որպես ծայրագավառային քաղաք: Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Մոլար-նուինը գրավում է Վահրամյաններին պատկանող բերդեր՝ Տերունականը, Երգեվանը, Մածնարերդը, Շամքորը, ավերում, թալանում ու սրի ճարակ է դարձնում ամեն ինչ. «Մի ոմն յաւագացն, որում անուն էր Մոլար-նուին, որոյ հասեալ էր բաժին կողմանքն այնորիկ, մինչդեռ շարժեին ի տեղուցէ իւրեանց, ուր բնակեալ էին ի դաշտին, որ կոչի Մուղան, առաքեաց սակաւ զօր, իբրև արս հարիւրս, որք եկեալ՝ նստան առ դրունս քաղաքին Շամքորյ և արգելին զելողս և զմտողս ի նա Խոկ քաղաքն յայնժամ էր ընդ իշխանութեամբ Վահրամայ և որդույ իւրոյ Աղրուղային, զոր առեալ էին յառաջազոյն ի պարսկաց... Եւ դիմեաց զօրն իւրաքանչիւր հանդեալ երեսաց իւրոց ի քաղաքն, և առին զնա, և կոստորեցին զամենեսին բերանով սրոյ, և այրեցին զշինուածն, որ ի նմա, և առին, զոր ինչ զտան ի նմա: Եւ ապա յարձակեցան ի վերայ այլ բերդիցն, որ ընդ իշխանութեամբ Վահրամայ՝ ի Տերունականն, և ի յերգեվանքն, և ի Մածնարերդն»⁴¹⁹: Քանից գրավված, ավերված ու վերաշինված քաղաքը 1606 թվականին նորից է ենթարկվում ավերիչ արշավանքների, այս անգամ Շահ Արասի կողմից. «Եկեալ անտի Շահարասայ՝ զնաց ի Շամքոր և էառ զայն և արար կոստորած մեծ»⁴²⁰: 1804 թվականին Շամքորն անցնում է ռուսական տիրապետության տակ, որը հաստատվում է 1813 թվականի հոկտեմբերի 12-ին Գյուլիստանում կնքված ռուս-պարսկական պայմանագրով:

XIX դարավերջին քաղաքից մնացել էին միայն ավերակները⁴²¹:

⁴¹⁹ Կիրակոս Գանձակեցի, էջ 242:

⁴²⁰ Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 555:

⁴²¹ Մ. Բարխուղարյանցը այդ ատիֆով գրում է. «Մեծ եղած է քաղաքիս ծաւալն, ինչպես երևում է աւերակիս մեծութիւնից, մօս մի մողն երկարութիւն ունեցած է քաղաքս իւր արուարձանով միասին և կէս մողնից պակաս՝ լայնութիւն: Տակաւին զտնում են աւերակներիցս ոսկի, արծաթ, և պղնձ դրամներ և պղնձեղեն, երկաթեղեն և խեցեցեն, գործիքներ, կարասիներ և անօթներ: Այժմ ամենայն ինչ կործանեալ դրութեան մէջ է, միայն կիսաւեր է բերդն... Այժմ քաղաքիս աւերակներում բնակում են մի քանի մահմետական գերդաստան»: Մ. Բարխուղարեանց, Արցախ, էջ 55-56:

Շամքորը միջնադարյան գրչության կենտրոնների շարքում հիշատակվում է VII դարում, իսկ ձեռագիր մատյաններ մեզ հասել են XVII դարից, որոնք գրվել են Շամքորի երկրի տարբեր քնակավայրերում: Շամքորում որպես գրիչներ հայտնի էին Սարգիս բանասրը, Ավետիսը, Ստեփանոս արեղան, Եսայի, Հովհաննես, Սարգիս երեցները: Քանի որ, Շամքոր անունով կոչվել է ամբողջ երկրամասը, հաճախ ձեռագիր աղբյուրներում գրչության վայրը նշվել է «յերկիրս Շամքո»:

XVII դարում իրքև գրչության կենտրոն հիշատակվում է Շամքորի անապատը: Հայտնի չեն անապատի հիմնադրվելու ստույգ ժամանակը և գտնվելու վայրը: Ենթադրվում է, որ այն կարող է լինել Մովսես Կաղանկատվացու հիշատակած Բերդ վանքը, որտեղ VIII դարում Վղվանից Միքայել կաթողիկոսի ժամանակ գումարվել է եկեղեցական ժողով⁴²²: Անապատի վերաբերյալ առաջին տեղեկությունը ստանում ենք Սարգիս բանասերի ձեռամբ օրինակված ձեռագրի հիշատակարանից, որտեղ գրչության վայրը հիշատակվում է «սուրբ անապատս Շամքորու»⁴²³: 1635 թվականին Սարգիս բանասերն այստեղ ընդօրինակում է «Պողոս առաքյալի թղթերը»: Սարգիս բանասերը ամենայն հավանականությամբ անապատի բարունապետ Սարգիս վարժապետն է, որի համար 1651 թվականին Գրիգոր քահանան գրում ու ծաղկում է մի Խորհրդատետը. «Արդ ես՝ նրասատ և չնչին Գրիգորս, յոկ անուամբ կոչեցեալ քահանայ, ծրեցի և ծաղկցի զաա երբն-երբն գունովք և ետու ի ձեռն երիցս երանեալ, երջանիկ բարունապետի սրբոյն Սարգիս վարժապետի, վերադիտողի սրբոյ անապատին Շամքորոյ»⁴²⁴:

1656 թվականին Ավետիս քահանան Սոսոռու գյուղում ընդօրինակում է Մաշտոց և խնդրում ուժ ու կարողություն՝ ձեռագիրն ավարտին հասցնելու. «Չակաւ ծրողս և նկարիչ մրողս և տառիս

⁴²² **Մովսես Կաղանկատուացի**, Էջ 388:

⁴²³ ՍՍ ձեռ. 3944, թերթ՝ 150, նյութ՝ թուլյթ, 20,5 Տ 14,5, գիր՝ նոտրգիր, տող՝ 21: **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Բ, էջ 611: **Յ. Թոփճեան**, Ցուցակ ձեռագրաց, Խաչիկ վ. Դադեան, մասն Ա, էջ 11:

⁴²⁴ **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ, էջ 450:

կազմող և ծաղկօդս Աւետիս բազմամետ քահանայ, յիշեա առ Քրիստոս, աւզնեա Տէր, տկարիս, որ հասնիմ աւարտ Մաշտոցիս ողմամբ»⁴²⁵: Մաշտոցի պատվիրատուն Ներսես քահանան է, որը ստացողի հիշատակարանում խնդրում է յիշել հորը՝ Ղազարին և նրա երկու կանանց՝ իր մորը՝ Գուլաղին (հավանաբար հանգուցյալ) և երկրորդ կնոջը՝ Խանիին, եղբայրներին և քույրերին, իր հոգևոր հայր Հակոբ քահանային և ազգակից բոլոր բարեկամներին: Խսկ Ավետիս գրիչը, ինչպես իր օրինակած բոլոր ձեռագրերի հիշատակարաններում, այստեղ էլ վերջում խնդրում է յիշել իրեն, ծնողներին՝ Առաքել քահանային ու Նազուխաթունին և իր ուսուցիչ տեր Միհիթարին: Հիշատակարանում իրեն նկարիչ, ծաղկող և կազմող համարող Ավետիսն անունը գրում է եղբայրագիր ծածկագրով «Ճեռամբ անիմաստ եւ փծուն, մեղսամած եւ մեղսաներ Բ 8 Զ Լ-ն (= Ավետին) յեւնեալ եւեթ երիցուկ հիքը ... Գրեցաւ սուրբ տառս ի յերկիրս Շամքոռայ, ի գեօսու, որ կոչի Սըռսոսուտ, ի թուարերութեան Հայկազեան մեծ տումարի տասն հարիւր երկ յիսուն եւ հինգ ամի եղեւ աւարտ այսմ տարի (1656)»⁴²⁶: Սա Ավետիսից մեզ հասած երկրորդ մատյանն է: 1655 թվականից Առաքելի և Նազուխաթունի որդի Ավետիսին տեսնում ենք Զակամ զավառի Պապաճան զյուղում: Անունը ծածկագրով գրելը հատուկ է Ավետիսին, նա ծանոթ է ծածկագրության տեսակներին: 1659 թվականին Հախում Պասկեցու խնդրանքով օրինակած Ավետարանի հիշատակարանում էլ նա իր անունը գրել է գումարագիր-երկաթագիր ծածկագրով «ա էո բգ դո ժժ բո ժժ (=Ավետիսի):»:

Գրչության կենտրոն է գործել Լեղան զյուղում⁴²⁷: Գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում ընդօրինակված երկու ձեռագիր մատյան

⁴²⁵ Յ. Քուեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վրձնեան վարժարանի ի Կարին, տես «Հանդէս ամսօրեա», 1962, թ. 1-4, էջ 40-42: **Վ. Հակոբյան**, Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ, էջ 740:

⁴²⁶ **Վ. Հակոբյան**, Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ, էջ 740:

⁴²⁷ Ձեռագիր աղբյուրներում զյուղի անունը հիշատակված է երկու ձևով՝ Ղեղան և Լեղան: Առաջին անգամ զյուղի Ս. Նշան եկեղեցին հիշվում է 1441 թվականին Հաղբատում գրված մի ձեռագրի հիշատակարանում (ՄՄ ձեռ. 6862, թ. 300ա):

է մեզ հասել: Ընդ որում՝ գյուղը XV դարում հիշվում է Գանձակի, իսկ XVII դարում Շամբորի կազմում:

«Գաւառիս Գանձակայ ընդ հովանեաւ Լեղանի Ս. Աստվածածնիս եւ արհիական յաթողիս եւ առաջնորդութեան իմոյ Ստեփանոս յեպիսկոպոսիս սուրբ ուխտիս եւ կաթողիկոսութեան տեառն Յոհանիսի, եւ թագաւորությանն վրաց Գաւրկի, եւ դանութեան Զահանշահի» Ղարամանի և Ուշուսի որդի Ստեփանոս աքեղան Ավետարան է ընդօրինակում Արքահամի որդի տեր Սահակի համար⁴²⁸: Գրիշը նկարում է նաև ավետարանիչների պատկերները, խորաններն ու կիսախորանները, զարդարում բազմաթիվ լուսանցազարդերով ու զարդագրերով: Ստանալով Ավետարանը՝ Սահակի որդի Փիլիպպոս Կեչառացին այն տախս է կազմելու ու կոստղազարդելու և խնդրում է հիշել ծնողներին՝ տեր Սահակին ու Շահումին, իր կողակցին՝ Խաթունճանին, ուստրերին ու դուստրերին: Ձեռագիրը չունի գրչության թվական, բայց նկատի ունենալով, որ այն գրվել է վրաց Գեորգի Ը-ի թագավորության (1446-1466 թթ.) և Զահանշահի խանության (1437-1467 թթ.) տարիներին, Լևոն Խաչիկյանը մատյանի գրչության վերջին հավանական թվական է համարում 1466-ը⁴²⁹:

1650 թվականին «ի յերկիրս Շամբռո ի դուռն Ղեղանա Ս. Աստուածածնին և սորին սպասաւոր Յովիհաննէս կուսակրօն կրաւնաւորիս ի թուաքերութեան Հայոց Ո-ՂԹ (1650)» Եսայի գրիշը կրատների ու առակների մի ժողովածու է ընդօրինակում ամենայն հավանականությամբ վաճառքի համար և հիշատակարանում խնդրում է հիշել իրեն, կնոջն ու երեք որդիներին: 1662-ին ձեռագիրը գնում է Ղազարի և Գուլաղի որդի Ներսէս երեցը, որը ստացողի իր հիշատակարանում հիշում է ընտանիքի բոլոր անդամներին⁴³⁰:

⁴²⁸ ՍՄ ձեռ. 3992, թերթ՝ 321, նյութ՝ թուլդ, 18 Տ 14, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:

⁴²⁹ Լ. Խաչիկյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դ., հ. Բ, էջ 245:

⁴³⁰ Վ. Օսկեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Միխթարեան Մատենադարանին ի Վիեննա, հ. Բ, Վիեննա, 1963, էջ 454: Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, հ. Գ, էջ 409:

Մահտեսի Հովհաննես երեցը «ի յերկիրս Շամքաւո ի գեաղս Բերդայտակ ընդ հովանեաւ Ս. Յովաննիսին եւ ամենայն սրբոց, որ աստ կան հաւաքեալ, ի դիտապետութիւն Աղվանից տեառն Պետրոսի ի հայրապետութիւն սուրբ ուխտիս Փառջիսուսայ Բարսեղ պարունտերին» 1671 թվականին ընտիր և սոույզ օրինակից ծնողների՝ Էվազի և Պայի հիշատակին ընդօրինակում է մի Ավետարան, կատարում է ծաղկազարդումը՝ նկարելով խորանները, կիսախորանները, լուսանցազարդերը: Գրիչը մատյանի մի քանի էջերի լուսանցքներում նաև բնագրային լրացումներ է կատարել: Հիշատակարանում Հովհաննեսը խնդրում է հիշել իր եղբայրներին՝ Հովսեփին, Գրիգորին և տարածամ հասակում վախճանված Հարությունին, կնոջը՝ Թառդումաշին, որդիներին ու դուստրերին, ինչպես նաև ազգակից-բարեկամներից շատերին: Ավետարանը հետո հասնում է Կարս, հայտնի չ' ինչ ճանապարով: Վստեղ 1737 թվականին Համպար անունով մի աստվածաւեր այր, երբ տեսում է Ավետարանը «անօրեն տաճկի» մոտ, «արտասուս հարեալ», գնում է մատյանը և ծնողների՝ Թումաջանի ու Նազիկի, հանգուցյալ եղբոր՝ Մանուկի հիշատակին նվիրում Ս. Ստեփանոս Նախավկայի եկեղեցուն⁴³¹:

Սարգիս գրիչը 1717 թվականին «ի յերկիրս Շամքոռ ի գեօս Բերթատակ ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին» օրինակում է Աղոթագիրը, որի մեջ ամփոփված են եկեղեցու հայրեր Գրիգոր Նարեկացու, Եփրեմ Ասորու, Բենիկ և Սարկավագ վարդապետների աղոթքները⁴³²: «Պատվիրատուն Միխթար դպիրն է՝ «ի յերկրեն Գեղամայ, բնիկ գեղջիւ Աղճաղալեցի», որը ստանում է մատյանը իր ծնողների՝ Խաչատուրի և Թեղայի, եղբոր՝ Հարությունի, և քեռու՝ Տալվաթի հիշատակին: Նույն վայրում և նույն բովանդակությամբ մի Աղոթագիրը է Սարգիս երեցը ընդօրինակում է 1721-ին այս անգամ Առաքելի համար, որ «է ի յերկրէն Շամքոռու՝ ի գեօն, որ կոչի Դանձուտ, որ է մերձ Փառիսով սուրբ աթոռոյն»⁴³³: Ստանալով

⁴³¹ ՍՍ ձեռ. 6645, թերթ՝ 268, նյութ՝ թուլյթ, 20,5×15, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:

⁴³² ՍՍ ձեռ. 1574, թերթ՝ 232, նյութ՝ թուլյթ, 15×9,4, գիր՝ նոտրգիր, տող՝ 19-20:
Սայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, էջ 523-526:

⁴³³ ՍՍ ձեռ. 7008, թերթ՝ 205, նյութ՝ թուլյթ, 15,7×10,7, գիր՝ նոտրգիր, տող՝ 20:

մատյանը՝ Առաքելը նվիրում է իր ծնողների՝ Միմոնի և Հուրիի, եղբայր՝ Գրիգորի և հոգևոր ծնող՝ Պետրոս Վարդապետի հիշատակին:

Ծամբորի Նոր Փիփ ավանի Ս. Ստեփանոս Եկեղեցում եղել է չորս Ավետարան⁴³⁴, որոնցից երկուսը չունեն հիշատակարաններ, ուստի հնարավոր չեղանակում նրանց գրչության վայրը, ժամանակը և գրիչը: Երրորդ ձեռագրի գրիչը Աթանասն է, որը մատյանն օրինակել է 1486 թվականին «ի սուրբ ուխտս Աւծոպոյ՝ ի դուռն Ս. Աստուածածնին յիշատակ Գասպարին և ծնողաց իւրոց»⁴³⁵: Չորրորդ մատյանը, որը 1605 թվականին Արտամետում Գուլիարի համար օրինակել է Կարապետ Երեցը և ծաղկել տեր Վառմը, թղթայ է, պարզունակ նկարազարդումով, բայց ունի հարուստ հիշատակարան, որտեղ գրիչը մանրամասն ներկայացնում է դարի արհավիրքներին հաջորդած արտագաղթը, սովոր ու թանկացումը⁴³⁶

1659 թվականին Ալեքսանդ և նրա որդի Միքայելի խնդրանքով Հովհաննես գրիչը ավարտում է մի Հայսմավուրք՝ «ի յերկիրս Ծամբոր՝ ի գեղոս Գետապա՝ ընդ հովանեաւ Ս. Աստուածածնիս և սուրբ հերձանիս վախմ է յեկեղեցյու...»⁴³⁷:

Գետարակը կամ Գետաբեկը Գարդմանի նշանավոր բերդաբանաքններից է, պատմության մեջ հիշատակվում է VII դարից: Կիրակոս Գանձակեցին խոսելով Հովհան Մայրագոմեցու մասին, գրում է, որ նա գնաց Գետարակ բերդի կողմերը և իր համար հարմար տեղ ընտրեց ապրելու համար. «Եւ երթեալ Յովիաննու ընտրեաց

⁴³⁴ Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, էջ 296-298:

⁴³⁵ Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Գ, Էջ 90:

⁴³⁶ Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, հ. Ա, էջ 193:

⁴³⁷ Հիշատակարանում այնուհետև նշում է. «...ի հայրապետութեան տեատր Պետրոսի կաթողիկոսի Տան Աղուանից Սուրբ աթոռոյն Գանձասարայ վերադասութիւն և ի մենասատան Զարեքանն Ծամբորու Հ. (70) ճգնազգեաց կրոնաւորացն առաջնորդի տէր Սարգսի բարունապետի և առաջնորդութեան Քարդման զաւահի տէր Դաւիթ արհեավիսկոպոնի և ի խանութեանն Գանձակայ Մուրթուզարդուին, որ էր խաղաղաւր ըստ օրինի, թէպէտ ծնունդն էր», ՍՍ ձեռ. 4559, թէրթ՝ 663, նյութ՝ թուղթ, 39 Տ 24, գիր՝ բոլորգիր, տող՝ 35: Տե՛ս նաև Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, հ. Գ, էջ 875:

իւր տեղի լուլթեան ի կողմանս Գետարակս բերդոյ, և անդ դադարեա՞ հանապազ ընդ Աստուծոյ խոսելով»⁴³⁸: Ասողիկն ասում է՝ նա գնաց Գարդման⁴³⁹: Խակ ըստ Վարդան Արևելցու. «Գարդման գաւառն Քարթմանիկ է, ուր կայ գերեզմանն Յովիաննէս վարդապետին Մայրագոմեցւոյն»⁴⁴⁰: Խոսքը նշանավոր աստվածարան և Եկեղեցական գործիչ Հովհան Մայրիվանեցու կամ Մայրագոմեցու մասին է: Գետարակում Հովհան Մայրագոմեցին իրեն նվիրել է ստեղծագործական աշխատանքի: Ըստ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի՝ Մայրագոմեցին այստեղ գրել է «Խրատ վարուց», «Հաւատարմատ» և «Նոյեմակ» վերնագրով գործերը, չնայած «Խրատ վարուցը» թյուրիմացարար վերագրվել է Հովհան Մանդակունուն: Ենթադրվում է, որ Հովհան Մայրագոմեցին Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի հետ մասնակցել է «Կնիք հաւատոյ» ժողովածուի կազման աշխատանքներին:

⁴³⁸ Կիրակոս Գանձակեցի, էջ 55:

⁴³⁹ **Ստեփանոս Տարոնացի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական: Տե՛ս Մատենագիրը Հայոց, հ. ԺԵ, գիրք Բ, էջ 694:

⁴⁴⁰ Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, էջ 12:

ԴԱՍՆԸ ԸՆԾՊԱՏ

Դասնո անապատը, որ կարմրավուն քարով կառուցված լինելու պատճառով տեղացիները նաև Կարմիր վանք են անվանել⁴⁴¹, գտնվում է Շամքոր գետի աջափնյակում Գյուլամբար գյուղի հյուսիսարևմտյան կողմում: Ավանդության համաձայն՝ վանքը հիմնադրել են Հունաստանից այստեղ տեղափոխված հայ կրոնավորները 751 թվականին «Սա ևս շինեցաւ ի կրօնաւորաց Հայոց փախուցելոց ի Յունաստանէ ի Մ (751) թուին»⁴⁴²: Իբրև գրչության կենտրոն՝ անապատի մասին և միակ վկայությունը 1184 թվականի Միհրար Գոշի Դատաստանագրքի հիշատակարանն է, որտեղ Գոշը շարադրում է Դատաստանագիրքը գրելու պատճառները, նրա կարևորությունն ու նշանակությունը:

Միհրար Գոշը Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի հետ լարված հարաբերությունների պատճառով գտնվում էր Դասնո անապատում: Անապատի Հոռոմաշեն վանքում էլ նա գրում է իր Դատաստանագրքի Նախադրությունը⁴⁴³: Մատյանը Դատաստանագրքի

⁴⁴¹ **Մ. Քարխուրքարեանց**, Արցախ, էջ 295-296, **Հ. Ոսկեան**, Արցախի վանքերը, էջ 137-138, **Ս. Կարապետյան**, Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 486:

⁴⁴² **Ս. Զալալեանց**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Ա, էջ 162:

⁴⁴³ «Բայց ձեռնարկութիւն մեզ յայս իրողութիւն եղեւ ի թուականութեանն Հայոց ՈՒԳ (1184)... յամի, յորում մեռաւ յաղթող թագաւորն Վրաց Գէալրգէ, ի հայրապետութեանն տեառն Գրիգորի Հայոց Մեծաց և ի դիտապետութեանն տեառն Ստեփանոսի Տան Աղուանից, յաշխարհ Առանայ, ի նահանգիս, որ կոչի մայրաքաղաքին Գանձակ, յանապատս և յեղբայրանցս անուանեալ Դասնոյ սկզբնաւորեալի ի լեռնակողմն մենաստանին կոչեցելոյ Հոռոմաշեն, ընդ հովանեաւ արքոց եկեղեցեաց կուսաստանացն յիշեցելոց, ձեռնաստուութեամբ հաւր Յովելիսայ և եղաւր Պատղոսի յորդորմամբ յառաջարկութիւնս: Բայց զծագրութիւն յիշատակիս ի Նախադրութիւնս Գրոց Դատաստանի եղև զի կատարած սորա ի ձեռն մեր միանգամ ոչ է, որպէս ասացեալ է կանխաւ զպատճառն»: **Ս. Վրդ. Ճեմճեմեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միհրարեանց ի Վենետիկ, հ. Զ, Վենետիկ, 1996, էջ 326: Հիշատակարանը տեսն նաև **Գ. Յովսէփեան**, Յիշատակարանը ձեռագրաց, էջ 505, **Ա. Մաթևոսյան**, Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 243:

Վաղագույն օրինակն է: Այն այժմ գտնվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում և կրում է 993 թվականաբրը⁴⁴⁴: Մատյանը գրված է բոլորգրով, սկզբնատառերն ու սկզբնատողերն ամբողջությամբ՝ երկաթագրով, մուգ բամբակյա թղթի վրա, առանց զարդարանքի: Մատյանը բավարար վիճակում է, խոնավության հետքերով, գրությունը մասամբ վնասված է: Բնագիրը թերի է, որովհետև բացակայում են Նախադրության ամբողջ առաջին գլուխը, երկրորդ գլխի մի մասը, միջից և վերջից որոշ թերթեր կտրված հանված են, սակայն «ընդհանուրին մեջ պատկառելի է իր հնութեամբ»: Չնայած բանասերների կողմից բազմից վիճարկված լինելուն՝ Սահակ վարդապետ Ճեմճեմյանը, գրի տեսակն ու գրչության ձևը նկատի ունենալով, համարում է մատյանը Մխիթար Գոշի ինքնագիրը⁴⁴⁵:

Զեռագրի ստացողներն են Հայթերքի իշխանաց իշխան Վահանգը և նրա կինը՝ Քուրդ իշխանի դրւար Արզուխաթունը: Իր ողջ կյանքում Մխիթար Գոշը միշտ է երախտագիտությամբ է հիշել իշխան Վահարանգին, նրա եղբայրներին՝ Գրիգորին, Գրիգորիսին, Խոյդանին, Վասակին ու իշխանուին Արզուխաթունին: Որպես երախտիքի առհավատցա՞ Մխիթարը իշխանին և իշխանուին է նվիրել Դատաստանագրքի վաղագույն օրինակը՝ հետևյալ ընծայականով. «Յիսոս Քրիստոս, յորժամ զաս ի նորոգել զերկիր, նորոգեա հոգուվ եւ մարմնով զաստուածաւը իշխանն իշխանաց զՎահատանգ և զամուսին իւր զԱրզուխաթունն ի կեանս անմահս եւ ի ներկայիս առանց փորձանաց պահեսցես զաւակաւը հանդերձ եւ ամենայն ընտանեալը, եւ բազում առատ ողորմութեամբ քո ողորմեսցիս ննջեցելոց նոցա» (թ. 299ա)⁴⁴⁶, և ցանկացել. «Աստուած վայելել տացէ աստուածաւը եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Վահստանկայ՝ որդույ Հասանայ, ի կամս իւր զԳիրքս դատաստանի, անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան սորին» (թ. 52р)⁴⁴⁷:

⁴⁴⁴ **Ս. վրդ. Ճեմճեմեան,** Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Զ, էջ 326:

⁴⁴⁵ Նոյն տեղում:

⁴⁴⁶ Նոյն տեղում, էջ 329:

⁴⁴⁷ **Ս. վրդ. Ճեմճեմեան,** Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց..., հ. Զ, էջ 329: **Ռուկեան,** Մատենագրական քննութիւններ, էջ 152-153:

Որքան ժամանակ է մատյանը մնացել Հաթերքի իշխանների մոտ, չգիտենք: 1387 թվականին այն ձեռք են բերել Նավորօղի որդիներ Պայազիթ և Խզրահիթ Եղբայրները, XIV-XV դարերում պատկանել է Ասոմთին, իսկ XVI-XVII դարերում՝ Միմեռնին:

Այնուհետև վանքի մասին հիշատակությունները լուրս են մինչև XIX դարի սկիզբը: Աստիճանաբար վանքը կորցնում է ինքնուրույնությունը և 1804 թվականից անապատն անցում է Նյուկզար գյուղի Ս. Ամենափրկիչ վանքի Ենթակայության տակ⁴⁴⁸, իսկ 1840-ական թվականներին վերջնականապես լրացն և ամայանում է: Անապատն այսօր խոնարհված վիճակում է, մնացել են միայն ավերակները, իսկ վանքի քարերն օդտագործվել են հարակից տարածքում անասնագոմ կառուցելու համար:



⁴⁴⁸ **Ս. Կարապետյան**, Հյուսիսային Արցախ, էջ 467:

ԹԱՐԳՄԱՆԶԱՑ ՎԱՆՔ

Պատմական Գարդման գավառի հնագույն հոգևոր և մշակութային կենտրոններից է Թարգմանչաց վանքը: Այն գտնվում է Խաչակապ գյուղի դիմաց՝ երկու փոքրիկ ձորակների միջև՝ հարավային լեռնալանջի հարթության վրա: Ավանդության համաձայն՝ վանքը V դարում հիմնադրել է Մեսրոպ Մաշտոցը, երբ Ուտիքում ծավալում էր լուսավորչական գործունեություն⁴⁴⁹: Հետագա դարերում վանքը քանիցս ավերվել ու վերանորոգվել է՝ ամեն նորոգման ժամանակ կորցնելով նախնական տեսքը⁴⁵⁰: Երեք տեղ՝ եկեղեցու հարավային ավանդատան պատին, զավթի հարավային և հյուսիսային պատերին արձանագրված է նույն՝ 989 թվականը, որն ամենայն հավանականությամբ նորոգության կամ կրկին հիմնադրվելու թվականն է⁴⁵¹: 1800 թվականին՝ Սամուել Եայսկոպոս Դադյանի առաջնորդության տարիներին, կառուցվում է զավթը, որը վանքի առաջնորդների տապանատունն էր, իսկ 1856 թվականին գանձակեցի Պողոս Ամիրիանյանցը կառուցել է տափս զանգակատունը: Վանական համալիրի մեջ են մտել միաբանների և ուխտավորների բնակելի սենյակները, օճանդակ շինություններ և շրջապարհապր:

1884 թվականին հոգևոր իշխանություններին ուղղված Խաչակապ գյուղի բնակիչների խնդրագրով վանքի առաջնորդ է դառնում Թեղողոս վարդապետ Շիրակունին⁴⁵², իսկ 1898 թվականի հայրապետական կոնդակով նրան արտոնվում է մինչև կյանքի վերջը մնալ վանքի առաջնորդի պաշտոնում: Իր վանահայրության տարիներին Շիրակունին նորից կառուցում է ավերակված մենաստանը՝ այդ մասին թողնելով արձանագրություն եկեղեցու մուտքի ճակատաքարին⁴⁵³: Նա նաև 1872 թվականին այստեղ հիմնադրում է հոգևոր

⁴⁴⁹ **Դ. Ալիշան**, Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1853:

⁴⁵⁰ «Արձագանք», 1885, թ. 4, էջ 55:

⁴⁵¹ Դիվան, պրակ V, էջ 252:

⁴⁵² «Արարատ», 1884, էջ 420-421:

⁴⁵³ **Ս. Կարապետյան**, Հյուսիսային Արցախ, էջ 222:

դպրոց, որը գործում է մինչև 1885 թվականը՝ ցարական իշխանությունների կողմից հայկական դպրոցների փակումը⁴⁵⁴. Թեոդորոս Շիրակունին դպրոցի միակ ուսուցիչն էր: Նա դասավանդում էր հայոց լեզու՝ աշխարհաբար և գրաբար, ուստաց լեզու, թվարանություն, ժամերգություն: 1877-ին Շիրակունու ջանքերով վերաբացվում է գրատուն-մատենադարանը⁴⁵⁵, որտեղ պահվում էր հազար կտոր գիրք: Ըստ Սարգսի Զալայշանցի՝ վանքի գրատանը եղել են նաև երևելի շատ ձեռագիր մատյաններ. «Եղեալ են ի սմա բազում երևելի ձեռագիր մատենանք, բայց յանզգուշութենէ բնակեալ միաբանից յանշարժութեան մնացեալ մատնեալ են ապականութեան և ապա թաղեալ են ի սիրտ երկրի ի նշան մեծի յարգանաց ըստ ռամկական մտաց նոցա»⁴⁵⁶: Համաձայն 1890 թվականի մի տեղեկագրի՝ այստեղ է եղել նաև Զ դարի մի ձեռագիր Ավետարան, որը վանքում պահվել է մինչև 1910 թվականը, ապա Գանձակի փոխանորդության միջոցով հանձնվել է Մայր Աթոռ Սրբ Էջմիածնին⁴⁵⁷:

Հայտնի չէ, թե երբվանից և որքան ժամանակ է վանքում գործել գրչության կենտրոն: Չնայած պատկառելի տարիքին՝ վանքի ձեռագրատան հավաքածուից շատ քիչ ժառանգություն է հասել մեզ:

Ծուրջ մեկ դար՝ մինչև 1900 թվականը, Թարգմանչաց վանքում է պահվել Հռվիաննես քահանայի խնդրանքով 1232-ին Տիրացու գրի օրինակած Ավետարանը, որը վանքի անունով կոչվում է «Թարգմանչաց Ավետարան»⁴⁵⁸: Ձեռագիրը գրված է գեղեցիկ երկաթագրով, լավ մշակված սպիտակ մազադարթի վրա: Նույն թվականին Գրիգորը ծաղկել է մատյանը՝ կատարելով համարարբառի խորանների, ավետարանառաջների, լուսանցագարդերի ու զարդագրերի նկարագրումը՝ օգտագործելով գերազանցապես կարմիր ու կապույտ երանգները: Ավետարանը հետո նվիրվել է Խաղավանքին,

⁴⁵⁴ Նույն տեղում, էջ 230-231:

⁴⁵⁵ Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, էջ 136:

⁴⁵⁶ Ս. Արք. Զալայեանց, Ճանապարհորդություն ... , հ. Ա, էջ 168-169:

⁴⁵⁷ Խոսքն ամենայն հավանականությամբ «Վեհամոր Ավետարանի» մասին է:

⁴⁵⁸ ՍՍ ձեռ. 2743:

«որ է գերեզմանատուն մեծ իշխանացն ազգին Դօփեանց»⁴⁵⁹, և դարձել Դոփյան իշխանական տան սրբություններից: Գրիգոր Դոփյան իշխանն ու նրա կին Ասփան, որը Սյունյաց Տարսային իշխանի դուստրն էր, ստանալով Ավետարանն՝ արդեն Արցախում հանձնարարում են Գրիգոր մանրանկարչին նկարելու ավետարանիների ու տերունական պատկերները: Գրիգոր նկարիչը, պահպանելով Գրիգոր ծաղկողի ներկապնակը, լրացնում է թերին:

Մասնագիտական գրականության մեջ երբեմն շփոթություն է առաջացել ծաղկողի (զարդանկարների հեղինակի) և մանրանկարչի (տերունական պատկերների հեղինակի) անունների նույնության հետևանքով, քանի որ երկուսն էլ Գրիգոր են: Մինչդեռ երկրորդ Գրիգորը տերունական պատկերները նկարել է Արցախում, և ինչպես տարբերակում է Ա. Մաթևոսյանը, առաջինին անվանում ենք **Գրիգոր ծաղկող, երկրորդին՝ Գրիգոր Արցախեցի**⁴⁶⁰:

1312 թվականին Ասփայի մահից հետո նրա հիշատակին Գրիգոր իշխանը վանքին է նվիրում մեծ հարսություն՝ գյուղեր, այգիներ, անդաստաններ, զանազան սպասք ու հանդերձներ, իսկ Ավետարանը զարդարել է տափս ոսկով և արծաթով⁴⁶¹: Ասփան վախճանվել է 1311 թվականին և թաղվել իրենց տոհմական դամբանատանը:

Սարգիս Զարայանցը վկայում է, որ Թարգմանչաց վանքում տեսել ու վերցրել է մի Ժողովածու, որ բովանդակել է Թովմա Մեծոփեցու, Սոկրատեսի, Միհայել Ասորու, Մաղաքիա արեղայի, Դիոնիսիոս Արիոպազացու աշխատանքներից⁴⁶²: Օ. Եզանյանը կարծում է, որ դա կարող է լինել ՍՍ 3076 ձեռագիրը⁴⁶³: Թարգմանչաց վանքում Հովհաննես Եպիսկոպոսը 1583 թվականին Գանձատեսր է

⁴⁵⁹ Տե՛ս նաև՝ **Ս. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 390, Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, էջ 77: **Վ. Հացունի Վրդ.**, Հայուիին պատմութեան առաջ, Վենետիկ, 1936, էջ 203:

⁴⁶⁰ **Ա. Մաթևոսյան**, Թարգմանչաց Ավետարանը, «Էջմիածին», 1992, Թ-Ժ-ԺԱ, էջ 106-109, 1993, Ա-Բ-Գ, էջ 112-118:

⁴⁶¹ **Լ. Խաչիկյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դ., Երևան, 1950, էջ 84:

⁴⁶² Նոյն տեղում:

⁴⁶³ **Օ. Եզանեան**, Սարգիս արք. Զարայանցի Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան գրքում հիշատակվող ձեռագրերը, Աշխատութիւններ, էջ 21:

կազմել⁴⁶⁴: Վանքում է եղել նաև 1652 թվականին Սարիսոց Վարդենիսցու խնդրանքով Գրիգոր Բյուրականցու օրինակած Ավետարանը, որի գտնվելու վայրը նույնպես անհայտ է⁴⁶⁵: Թարգմանչաց վանքում է վանահայր Թեոդորոս Վարդապետը գրել իր աշխատությունները, կատարել թարգմանություններ՝ տե՛ս ցանկը): Վանքում պահվել են նաև սրբություններ՝ 1640 թվականի Եպիսկոպոսական կերպարյա մի թագ, Ս. Ստեփաննոս Նախավկայի մասունքը, որ վանքին է նվիրել Իգնատիոս քահանան 1558 թվականին⁴⁶⁶:

Վանքի գրատուն-մատենադարանը վանականների անտարբերությունում անհոգատար վերաբերմունքի պատճառով մատնվում է անուշադրության, աստիճանաբար նորանում է, իսկ 1910 թվականին այն այլևս գոյություն չուներ: Նկատի ունենալով գրատուն-մատենադարանի անմիջաբար վիճակը՝ 1911 թվականի հունվարի 12-ի Էջմիածնի Սինոդի որոշմամբ ձեռագրերը ուղարկվում են Ս. Էջմիածնին, տպագիր գրքերի մի մասը հանձնվում է Բանանց գյուղի հայկական դպրոցին, իսկ մյուս մասը՝ Գանձակի Ս. Հովհաննես և Ս. Լուսավորիչ եկեղեցիների ծխական դպրոցներին:

⁴⁶⁴ **Հ. Ոսկեան**, Արցախի վանքերը, էջ 136:

⁴⁶⁵ **Օ. Եզգանեան**, Թարգմանչաց վանքի ձեռագրերը, Աշխատութիւններ, էջ 19:

⁴⁶⁶ **Ե. Լալայեան**, Գանձակի գաւառ, Թիֆլիս, 1901, հ. Ա, էջ 133:

ԶԱՐԵՔԱ ԱՆԱՊԱՏ

Մեծ Հայքի Ուտիք նահանգի Գարդման գավառում՝ Շամբոր գետի ձախ ափին՝ Գետաբեկ վտակի և Շամբոր գետի միախառնման տեղից հարավ-արևմուտք ընկած մի գեղատեսիլ և անտառապատ վայրում է գտնվում Զարեքա անապատը⁴⁶⁷: Գրավոր աղբյուրներում «գլուխ ամենայն անապատաց», «հրչակեալն ամենայն երկրի», «մեծ և սուրբ» կոչված Զարեքը չնայած իրրև վանք հայտնի է ուշ միջնադարում, բայց որպես բերդանուն հիշատակվում է ավելի վաղ՝ XII-XIII դարերից՝ Վարդան Արևելցու, Կիրակոս Գանձակեցու և Ստեփանոս Օրբելյանի Պատմությունների մեջ: Ոչ հեռու գտնվող բերդի անունից էլ անապատը կոչվել է Զարեքա⁴⁶⁸:

Բերդի հիմնադրման ստույգ ժամանակը չգիտենք: Վարդան Արևելցին գրում է, որ սեղուկ-թուրքերի ասպատակություններին ենթարկված Զարեքա բերդը 1206 թվականին ազատագրում են Զարարյան եղբայրները. «Ի վեցհարիւր յիսուն և հինգ թուին ատին Կարս թագաւորին և ապա զԳետարակս և զԶարեքս... »⁴⁶⁹: Խոկ

⁴⁶⁷ Անապատն աղբյուրներում կոչվում է նաև Զարեքավանք, Զարեքագետի անապատ, Զարագետի անապատ, Զարեքու մեծ անապատ, Զարեքա մենաստան: Համաձայն մի ավանդագրության՝ վանահայր Սարգիս վարդապետի քարոզից հարություն է առել Ստամբուլի ամիրայի մինուճար որդին: Որպես հատուցում ամիրան վանքին է նվիրաբերել իր հարստության մեկ չորրորդ մասը՝ չարեքը: Տե՛ս Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Քարսելյան, Հայաստանի և հարավից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 222:

⁴⁶⁸ Ս. Զավալյանցը և Ս. Բարիսուղարյանցը Զարեքա բերդը նույնացնում են Մամոնուտ բերդի հետ, որը կառուցվել է Փառիսոսի իշխանների օժանդակությամբ: Իսկ XIX դարում Զարեք այցելած տեղագիրներից մեկը գրում է, որ հայերը գետի անունով բերդը կոչում էին Շամխորի բերդ, իսկ թուրքերը՝ Մամուր կալասի: Տե՛ս Ս. Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Ա, էջ 164, Մ. Բարիսուղարեանց, Արցախ, էջ 326, 432, ճնշ. 53: Ս. Բարիսուղարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 193:

⁴⁶⁹ Վարդան վարդապետ, էջ 138:

Հաթերքի Վախթանգ իշխանի մահից հետո Իվանեին է անցում նրա տիրույթների մի մասը, որոնց մեջ էր մտնում նաև Զարեքն իր շրջակայրով. «Ի վեց հարիւոր վայթուն և երեք թուին (1214) գՀաթերք յԻւանէ տուին տեարք նորա, զի մեռաւ Վախթանգ բուն տէր նորա և որդիր իւր տարածամ... Եւ մեծն Իւանէ անուանի եղեալ քաջարութեամբ առնու զԶարեքն և զամենայն շրջակայս նորա և ապա ձեռն տուեալ ազգայնոյն իւրոյ՝ Վահրամայ որդոյ Զաքարիայ»⁴⁷⁰: Զաքարյան իշխանների մղած ազատագրական մարտերի առնությամբ Զարեքը որպես բերդ հիշում է նաև Ստեփանոս Օրբելյանը⁴⁷¹:

XIII դարում բերդը գրավում են մոնղոլները: Կիրակոս Գանձակեցին մանրամասն նկարագրում է, որ Գանձակ քաղաքի ավերումից հետո մոնղոլ կատաղի և խորամանկ զորավարները, ըստ իրենց դիրքի, կարծես իրաք մեջ բաժանել էին Հայոց, Վրաց ու Աղվանից աշխարհները⁴⁷²: Գարդմանն ու նրան մերձակա բերդերը՝ Գետարակը, Զարեքը և Վարդանաշատը վիճակով բաժին էին ընկել Ղատաղանա նոյնին. «Եւ ի Գարդման, և յայլ կողմանս, ի Զարեքն և ի Գետարակս այլ ոմն զիսավոր չոզաւ, որում անունն էր Ղատաղանուին»⁴⁷³: Այս դեպքերի մասին զրում է նաև Վարդան Արևելցին⁴⁷⁴:

⁴⁷⁰ Նույն տեղում, էջ 140:

⁴⁷¹ «Որք բազում ջանի թափեցին զաշխարհս Հայոց ի Պարսից և ատին յԱռանայ մինչեւ գներքին Բասեն և Բարկուշտապ մինչեւ ի Մժնկերս: Առին զԿարս, զՎաղարշակերս, զԿաղզվան, զՍուրբ Մարի, զԱնի, զԱնքերդ, զՔջնի եւ զԳանի, զԴվին մայրաքաղաք, զԳարդման, զԳանձակ, զԶարեք, զՀերք, զԾամքոր, զԾաքի, զՊարտաւ, զԶաքարիերդ: Առին ի 660 (1211) թուին զՍիւնիս, զՄրուտն, զԲյորտան, զԲդեն, զԲարկուշտա... և ազատեցին զաշխարհս ի դառն ծառայութեն Տաճկաց»: **Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Միսական, Թիֆլիս, 1910, էջ 391-392:**

⁴⁷² «Զինի ամաց ինչ անցանելոյ աւերման քաղաքին Գանձակայ, այս մոլեկան և խորամանկ իբրև վիճակա բաժանեալ զամենայն աշխարհս Հայոց, Վրաց և Աղուանից, իւրաքանչիւր զիսաւորի ըստ մեծութեան և փոքրկութեան՝ զբաղարս և զգաւառս, զաշխարհս և զբերդս, առնուլ, քանդել, աւերել: Եւ չոզան յուրաքանչիւր մասն բաժին կանամքը և որդուվը և ամենայն աղիսի բանակին իւրեանց, և նստել անհոգութեամբ՝ յապականել և յուտել զամենայն բյոսս դպարոյ ուղտօր և անասնօր իւրեանց»: **Կիրակոս Գանձակեցի, էջ 237-238:**

⁴⁷³ Նույն տեղում, էջ 243:

Մոնղոլական արշավանքներից հետո Զարեքը կորցնում է իր ռազմավարական նշանակությունը, և պատմությունը նրա մասին լրում է մինչև XVII դարի առաջին տասնամյակները: Այս ժամանակներից դարձյալ հիշվում է Զարեքը՝ որպես երկրամասի նշանավոր հոգևոր-մշակութային կենտրոններից մեկը:

Չնայած Առաքել Դավիթեցին վանքի հիմնադրումը դնում է XVII դարում, բայց, ամենայն հավանականությամբ, այն կառուցվել է ավելի վաղ ժամանակներում եղած շինուալիքան տեղում: Այս ենթադրության օգտին է խոսում Կիրակոս Գանձակեցու այն վկայությունը, որ Աղվանից հայրապետական աթոռը պատմական որոշակի շրջանում հաստատվել էր Զարեքա բերդին մերձ գտնվող մի քարայրում: Գանձակեցին գրում է, որ քազմաթիվ տառապանքներից ու նեղություններից հետո, որ կրեցին Հայոց և Աղվանից աշխարհները հարավյախն ազգերի, այսինքն՝ թուրք-սելջուկների պատերազմներից, Աղվանից կաթողիկոսները, աթոռի հաստատում տեղ չունենալու պատճառով, տեղից տեղ էին թափառում, մինչև եկան մի քարայր Զարեք կոչված բերդի սահմաններում և այստեղից էին հովվում իրենց հոտը. «Կաթողիկոսքն Աղուանից այսր անդր յածելով, վասն ոչ ունելով հաստատուն տեղի աթոռոյ, դեռ եղև նոցա զալ ի քարայր մի ի սահմանս բերդին, որ կոչի Զարեք, և անդ դադարի և անդրուստ հովուել զիօս իւրեանց»⁴⁷⁵: Այդ կաթողիկոսներից Բեմբեկն անունով մեկը, որը, ըստ Աղվանից կաթողիկոսների գալագանագրքի, աթոռակալել է 1140 թվականին, թողեց կարգը, ամուսնացավ ու որդիներ ունեցավ, նրան մերժեցին աթոռից և նրա փոխարեն ձեռնադրեցին տեր Ստեփանոսին (1155-1195 թթ.)⁴⁷⁶. «Մի

⁴⁷⁴ «Զադադա նոյինն էառ զԼոռէ քաղաք, և որք յանր կողմանէ գաւառը. Դոլադա նոյինն՝ զկայեն բերդ, ուստ հանին զԱւագն տէր երկրին. և մեծն Զորմադանն՝ զԱնի և զԿարս, և զմերձակայսն. Ղատադա նոյինն՝ զկողմանս Զարերին, զԳետարակուց և զՎարդանաշատու»: **Վարդան Վարդապետ**, էջ 144:

⁴⁷⁵ **Կիրակոս Գանձակեցի**, էջ 178:

⁴⁷⁶ Ըստ Աղվանից կաթողիկոսների գալագանագրքի՝ Բեմբեկն կաթողիկոս է եղել 1140 թվականին: Վերջինիս կարգաթող լինելուց հետո կաթողիկոս է

ոմն ի նոցունց կաթողիկոսացն՝ Բեծգեն անուն, եթող զկարգ իւր և առ կին և ստացաւ որդիս: Եւ մերժեն զնա յաթօռոյն և ձեռնաղրեն փոխանակ նորա զտէր Ստեփաննոս»⁴⁷⁷: Վերջինիս մահից հետո Աղվանից կաթողիկոս դարձած Հովհաննեսը (1195-1235 թթ.) դեռ երկար ժամանակ հայրապետական աթոռը պահեց այդ քարայրում, իսկ Զալալեդինի արշավանքների պատճառով այն Զաքարյան իշխանների աջակցությամբ տեղափոխեց Միավոր գավառի Խամշի վանք և այստեղ սկսեց կառուցել մի մեծ և հրաշալի եկեղեցի⁴⁷⁸: Ուրեմն՝ հայրապետական նստավայր ունենալու համար առաջին քանը, որ արեց Հովհաննես կաթողիկոսը Խամշի վանք տեղափոխվելուց հետո, եկեղեցի կառուցելն էր: Կիրակոս Գանձակեցին չնայած Զարեքա բերդին մոտ զտնվող քարայրը ուղղակիորեն շինություն չի համարում, որևէ ակնարկ չի անում քարայրին մերձակա որևէ կառույցի, եկեղեցու կամ մատունի մասին, որը Աղվանից կաթողիկոսների համար կարող էր ծառայել որպես նստավայր, բայց ենթադրելի է, որ այդպիսին եղել է, որտեղ իր աստանդական շրջանում մինչև Խամշի վանք տեղափոխվելը, տասնամյակներ շարունակ հաստատվել է հայրապետական աթոռը: Մեր ենթադրությունը հաստատվում է տեղաբանակների մոտ պահպանված մի ավանդությամբ, որը Զարեքարերդի մոտ զտնվող վիմափոր եկեղեցիների մասին է և հիշվում է Աղվանից կաթողիկոսության առիթով: Տեղացիները քարայրն անվանել են Ուխտի քար, Ուխտի եղի կամ Օխտը եղի: Այն

դարձել Ներսես Բ-ը (1149-1155), իսկ նրա մահից հետո կաթողիկոս է օծվել Ստեփաննոսը (1155-1195), չնայած Գանձակեցին Բեծգենից հետո Ստեփանսին է համարում հաջորդ կաթողիկոսը:

⁴⁷⁷ Կիրակոս Գանձակեցի, էջ 178-179:

⁴⁷⁸ «Եւ այսպես կապա զաթոռն Աղուանից տէր Յովհաննես զամս բազում: Սա հաստատեաց զաթոռս իւր ի սահմանս Զարեքին, ի քարի անդ, զոր ասացար վերապոյն: Սա նեղեալ յայլազգեացն՝ դիմեաց զալ յաշխարիս Հայոց առ մեծամեծ իշխանն՝ առ Զաքարէ և Խանն՝ եղբայր նորա: Եւ նորա մեծաւ պատուով ընկալան զնա: Եւ բնակեցոյց զնա Խանն ի զաւառն Միավոր՝ ի վանքս, որ կոչի Խամշի: Սա սկսաւ շինել անդ եկեղեցի մեծ և հրաշալի, և մինչև էր աւարտեալ՝ խափանումն եղեւ, զի եկն սուլտանն Խորասանա՝ Զալալաղինն կոչեցեալ»: Նոյն տեղում, էջ 182:

գտնվում է Զարեք թերդից 3,5 կմ հյուսիս-արևմուտք: Դա հենց այն քարայրն է, որի մասին հիշատակում է Կիրակոս Գանձակեցին, և որը XIX դարում տեսել ու շատ հստակ ու գեղեցիկ նկարագրել է Մակար Բարիուղարյանցը⁴⁷⁹: Ամենայն հավանականությամբ, հենց XII-XIII դարերում էլ ժայռի մեջ փորվել են այդ եկեղեցիներն ու մատուռները, և Աղվանից կաթողիկոսները այս քարայրն են ընտրել իրենց համար որպես աթոռանիստ: Կասկած չպիտի ունենանք, որ այդ շինության տեղում է XVII դարում հիմնվել է Զարեք քանավոր անապատը:

Զարեքավանքի՝ ավելի վաղ կառուցված լինելու մասին է վկայում նաև կովկասյան լեռնականների կողմից վանքին նյութական օգնություն հատկացնելու առիթով Կարապետ Ռուբեցի կաթողիկոսի (1726-1729 թթ.) կոնդակներից մեկում անապատի մասին եղած ուշագրավ վկայությունը⁴⁸⁰:

Վանական համալիրի մեջ են մտել Ս. Աստվածածին եկեղեցին, նրան կից զավիթը, զանգակատունը, միաբանների երեսունից ավե-

⁴⁷⁹ «Ծիպասարիցն դեպի Շամբոր գետակն երկարած է մի լեռնաբազուկ, որի հիւսիսահայաց ծայրի քերծի ճակատում փորված են եօթը քարայրներ և քարուկիր պատով պատուած բաց տեղերն: Քերծն և քարայրներս շրջապատուած են թանձր անտառներով: Քարայրներս բոլորն ևս եկեղեցի չեն, այլ միայն երկուսն են, որոնց մեջ մնում են վէմ և սեղան քարերն ցարդ: Վիմահերծի ճակատով շինուած է ուղի, որ տանում է այրերն: Ուղիդ Զարեք թերդի հարաւային հանդէպ են քարայրներս, որոց արևելեան կողմում կայ պատուական աղբիւր, որից խմած և գործածած են այրերումս նատող կաթողիկոսներն»: **Ս. Բարիուղարեանց**, Արցախ, էջ 301: Տե՛ս նաև **Ս. Կարապետյան**, Հյուսիսային Արցախ, էջ 255-256:

⁴⁸⁰ «Գլուխ ամենայն անապատաց, անուանի և հոչակեալն ցամենայն երկրի մեծ և սուրբ Անապատն Զարեքու, որ է յերկրին Գանջայու, որ կառուցեալ է յառաջնոց թագաւորաց, ի հայրապետացն սրբոց լուսապայծառ եկեղեցիս անուամբ սուրբ Աստուածածին և հաստատեալ անապատս քաղմախումք կրօնաւորաց: Եւ յօրինեալ են պատարազատեղս երկուտասան: Եւ է սուրբ անապատն այն անուանի և հոչակեալոր քաղմահրաշ և սրբանշելագործ և գանձեալ կայ ի նմա բազում մասունք սրբոց և սուրբ հշանք տէրունական, յորում տեղուց բնակեալ կան բազմութիւնը միաբանից աղօթաւորաց խարազնազգեաց կրօնաւորաց»: **Ս. Կարապետյան**, Հյուսիսային Արցախ, էջ 103:

լի սենյակները, օժանդակ շինություններ, որոնք շրջապատված են ամրակուռ պարիսպով: Վանական համալիրն ամբողջացնում է պարսպից դուրս գտնվող Հարանց անապատը, որ անապատի հոգևոր առաջնորդների տապանատունն էր: Այստեղ են հանգչում Սարգիս, Սահակ, Ներսես վարդապետները:

Առաքել Դավիթիթեցին վանքի հիմնադիր է համարում Սյունյաց Մեծ կամ Հարանց անապատում կրթություն ստացած Դավիթ Եայսկոպոսին, որը սերում էր Շամբորի Ղարամանենց նշանավոր ազնվական տոհմից: Դավիթը ծննդավայրի անունով կոչվում էր Շամբորեցի, իսկ տոհմի անունով՝ Ղարամանենց⁴⁸¹: Առաքել Դավիթիթեցին գրում է, որ երբ հոչակվեց Հարանց անապատը և դարձավ ուսումնական նշանավոր կենտրոն, այստեղ եկան ոչ միայն աշխարհական և ոչ հայտնի մարդիկ, այլև եկեղեցականներ ու անվանի այրեր, վարդապետներ ու եպիսկոպոսներ, որոնք Սարգիս Եայսկոպոս Սաղմոսավանեցու, Կիրակոս քահանա Տրավիզոնցու և Մովսես վարդապետ Տաթևացու⁴⁸² մոտ ուսում ստանալուց հետո, տարբեր տեղերում հիմնեցին անապատներ ու վանքեր և ծավալեցին հոգևոր-մշակութային-կրթական գործունեություն:

Հարանց անապատի սաներից Ներսես վարդապետ Մոկացին գնաց Լիմ և այնտեղ հիմնեց անապատը, Թովմաս Եայսկոպոս

⁴⁸¹ «ԵՌ Դավիթ Եայսկոպոսն, որ էր ի Շամբոռու ձորէն եւ ի ցեղէ իշխանաց, զոր Ղարամանենց կոչէն: Սա եւս եկեալ եկաց ի Մեծ անապատս, եւ ապա եկեալ զնաց ի ձորն Շամբոռու եւ անդ շինեաց անապատ, զոր կոչէն Զարեթագետի անապատ, որ է բազմաժողով եղացր բնակութիւն, եւ յոյժ հաստատուն ամենայն կարգօք եւ սահմանօք անապատի»: **Առաքել Դավիթիթեցի**, գլ. ԻԱ:

⁴⁸² Մովսես Տաթևացին (1578-1632) կրթություն ստացել է Տաթևի վանքում, որտեղ էլ 1592 թվականին ձեռնադրվել է արեղա: Հետո մեկնել է Ամիդ և մինչև 1606 թ. աշակերտել Սրբափոնն Ուշայեցուն: 1613 թ. վերադարձել է Տաթև և Սյունյաց Մեծ անապատում Պողոս վարդապետ Մոկացու հետ եղել է Սարգիս Եայսկոպոս Սաղմոսավանեցու և Կիրակոս քահանա Տրավիզոնցու օգնականը: Հիմնել է դպրոցներ, գրադպետ եկեղեցիների ու վանքերի վերականգնման և բարեկարգման աշխատանքներով, մշակութային հարցերով: Ամենայն Հայոց կաթողիկոս է եղել 1629-1632 թթ.: Ժամանակակիցների կողմից նա ստացել է «Երկրորդ Լուսավորիչ Հայոց» պատվանունը: **Ն. Ակինեան**, Մովսես Գ Տաթեւացի հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 152:

Տաթևացին անապատ հիմնեց Շամախու գավառում, Կարապետ եպիսկոպոս Էջմիածնեցին՝ Սևանա կղզում, Բարձրաշատ գավառից տեր Արիստակեար՝ Տանճափարախում, Արիստակես Վարդապետ Շամբեցին մնաց Մեծ անապատում, իսկ Սարգիս Եպիսկոպոսի վախճանվելուց հետո դարձավ միաբանության առաջնորդը, Դավիթ Եպիսկոպոս Շամբքորեցին հիմնադրեց Զարեքագետի կամ Զարեքա անապատը⁴⁸³:

Դավիթ Եպիսկոպոսի գործունեության մասին շատ քան հայտնի չէ: Նրան հանդիպում ենք Սյունյաց Գետաթաղ և Շինուհայր զյուղերում գրված երկու ձեռագրերի հետագա հիշատակարաններում: Այդ ձեռագրերը 1637 թվականին Զարեքա վանքն ստացել է Սյունյաց մեծ անապատի միաբաններից: Առաջինը 1619 թվականին «յերկիրն Որոտան, ի գեւղն, որ կոչի Գետաթաղ ընդ հովանեաւ Զազյարյոց Ս. Աստուածածինս» Սարգիս Եպիսկոպոսի և Ղազար քահանայի խնդրանքով Դուկաս դպրի օրինակված Ներսես Լամբրոնացու Պատարագի մեկնությունը⁴⁸⁴: Ստացողի հիշատակարանում Դավիթ Եպիսկոպոսը խնդրում է հիշել իրեն և ուխտի մյուս միաբաններին. «Չվերջին ըստացող սուրբ գրոյս զտէր Դավիթ պարոնտերն, զտէր Խաչատուրն, զտէր Բարսեղն, զտէր Անտոնն, զտէր Սարգիսն եւ Սարգիս քանին աշակերտն եւ զայլ միաբանքն յիշեցէք քարի մտօր առ Աստուած: Թվին ՌԶԶ (1637) էր, յորժամ թերաք զաս Մեծ անապատէն»⁴⁸⁵: Երկրորդ ժողովածուն 1635 թվականին «ի յերկիրն Որոտան, ի գեւղն, որ կոչի Շինահայր՝ ընդ հովանեաւ Ս. Ստեփաննոսի, յառաջնորդութեան տեառն Փիլիպոսի» օրինակել է Հռվիաննես գրիչը, իսկ Արիստակես Վարդապետը, Հակոբ և Բարսեղ քահանաները այն վաճառել են Զարեքա անապատին⁴⁸⁶:

⁴⁸³ **Մ. արք. Օրմանյան**, Ազգապատում, հ. Բ, էջ 1620:

⁴⁸⁴ **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դար, հ. Ա, էջ 685:

⁴⁸⁵ **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դար, հ. Բ, էջ 704:

⁴⁸⁶ «Ես՝ Արիստակես Վարդապետս, տէր Յակոբս, տէր Բարսեղս վաճառեցաք զաս գիրքս Զարեքա անապատին՝ Դավիթ պարոնտերին, տէր Խաչատուրին, տէր Անտոնին եւ այլ միաբանիցմ՝ ի թվին ՌԶԶ (1637)»: Դավիթ Եպիսկոպոսը, ստանալով մատյանը, դարձյալ թողել է հիշատակարան. «Ես՝ Դա-

Դավիթ Եպիսկոպոսին է վերագրվում Անդրեաս Ազուլեցու⁴⁸⁷ վկայաբանությունը, որը նա գրել է Անդրեասի նահատակությունից շատ ժամանակ չանցած՝ 1617-1620 թվականների ընթացքում⁴⁸⁸: Վկայաբանությունը մեզ է հասել ՍՍ 784 ձեռագրով (թ. 383ա-384թ, սկ. «Արիննեալ է բարերար, բարեխնամ եւ բարեգութն Աստուած...»), որն ընդորինակել է Մաթեոս գրիշը 1641 թվականին, երբ տակավին կենդանի էր Դավիթ Շամբորեցին: Այս վկայաբանությունը, որպես աղբյուր, իր Պատմության մեջ օգտագործել է Առաքել Դավիթիցին «Ղասն նահատակութեան տէր Անդրեաս քահանային» վերնագրով⁴⁸⁹: Դավիթիցու Պատմությունից են ծագում վկայաբանության Հայսմավուրբային տարրերակները⁴⁹⁰: Առաքել Դավիթիցու են օգտվել նաև «Հայոց նոր վկաներ» գիտական հրատարակության հեղինակներ < Սանանյանը և < Առաջյանը⁴⁹¹:

Դավիթ Ղարամանենց Եպիսկոպոսը վախճանվում ու թաղփում է անապատում իր կառուցած եկեղեցու արևելյան կողմում. «Եւ ինքն՝ Դավիթ Եպիսկոպոսն, անդէն վախճանեցաւ եւ անդէն թաղեցաւ»⁴⁹²: Ըստ տապանաբարի արձանագրության՝ նա մահացել է 1643 թվականին «Այս է հանգիստ Դավիթ Եպիսկոպոսին, թուին ՈՂԲ (1643)»⁴⁹³:

իթ Եպիսկոպոս եւ միաբանը յատացանք զայս գիրք Մեծ անապատէն Արհատակէս վարդապետէն»: ՍՍ ձեռ. 2608, թերթ՝ 270, նյութ՝ թուղթ, 26,4×19,9, գիրք բոլորգիր, տող՝ 31: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, էջ 693: **Վ. Հակոբյան**, Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դար, հ. Բ, էջ 702-703:

⁴⁸⁷ Անդրեաս Ազուլեցին ուսանել է Սյունյաց մեծ անապատում աշակերտելով Սովուն Տաթևացուն: Ուսանելուց հետո դասավանդել է Ազուլեցուն: Հայածելով Ծահ արքասի կողմից՝ նահատակվել է 1617 թվականի նոյեմբերի 18-ին:

⁴⁸⁸ **Կ. Սուրբիայան**, Անդրեաս Ազուլեցու վկայաբանությունը և նրա հեղինակը, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, թ. 1, էջ 199-202:

⁴⁸⁹ **Առաքել Դավիթիցի**, գլ. ԻԷ:

⁴⁹⁰ ՍՍ ձեռ. 1501, թ. 165ա-167ա, ՍՍ ձեռ. 1534, թ. 173թ-175ա: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, էջ 9:

⁴⁹¹ Հայոց նոր վկաներ (1155-1843), աշխատութեամբ՝ **Յ. Մանանդեանի և Հ. Աճառեանի**, Վաղարշապատ, 1903, էջ

⁴⁹² **Առաքել Դավիթիցի**, գլ. ԻԱ:

⁴⁹³ Դիվան, պրակ V, էջ 268:

Դավիթ Եպիսկոպոսի մահից հետո վանքի առաջնորդ է դառնում Սարգիս Վարդապետը և գլխավորում միաբանությունը մինչև 1671 թվականը: Սարգիս բարունապետի կյանքի, ինչպես նաև անապատի և միաբանության գործունեության մասին հարուստ տեղեկություններ է հաղորդում նրա խնդրանքով գրված Ճաշոցի հիշատակարանը: Մատյանը 1665 թվականին «ի թագաւորութեանն պարսից Շահ Ապահին և ի հայրապետութեան Տան Աղուանից տեառն Պետրոսի սրբազն կաթոլիկոսի՝ կրկին լուսաւորքի ի յետինս ժամանակի ի յԱթոռն Գանձասարայ ի յերկնահանգէտ և ի գերահոչակ սուրբ ուխտս, որ կոչի Զարեքայ անապատ՝ ընդ հովանեալ մօրս լուսոյ Ս. Աստուածածնիս և իրաշափառ և երկնանման Ս. Կաթոլիկէիս՝ լուսազարդ Հրեշտակապետիս» օրինակում է Քարահատում հայտնի գրիչ և ծաղկող Գրիգոր քահանան, ծաղկազարդում քսան հինգ նրբաճաշակ պատկերներով, կիսախորաններով ու զարդամուխիներով և կազմում է նատյանը⁴⁹⁴:

Ըստ հիշատակարանի՝ Սարգիսը վաղ մանկությունից նվիրվում է անապատին, իսկ վարդապետական աստիճան ստանալուց հետո դառնում է միաբանության առաջնորդ և անմնացորդ տրվում անապատի զարգացման ու բարեկարգման աշխատանքներին. «Եւ եղեւ այր կատարյալ եւ արժանի գոտեալ աստիճան վարդապետութեան, եւ վերատին ուղղեալ զկարգ սուրբ ուխտիս եւ զարդարեալ պայծառացոյց հոգեւոր հրճուանք եւ պարապետ ամրացոյց եւ նորոգեալ զամենայն սենեակս եղբարցն» (թ. 549թ): Սարգսի առաջնորդության տարիներն անապատի ամենաբեղմնավոր տարիներն էին: Նախ նա բարեկարգում է բոլոր միաբանների սենյակները, կառուցում Միքայել և Գարքիրի հրեշտակապետներին նվիրված հաստահերյուս այուներով և աղյուսաշեն զմբեթով բարձր ու գեղեցիկ զանգակատունը, որը հաստափում է 1659 թվականի զանգակատան մուտքի բարավորի վրա պահպանված արձանագրությամբ⁴⁹⁵: Սար-

⁴⁹⁴ ՍՍ ձեռ. 986, թերթ՝ 552, նյութ՝ թուղթ, 29,7×23, գիր՝ բոլորգիր, տող՝ 29: Տես Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, էջ 1617:

⁴⁹⁵ «Կամօրն Աստուծոյ շինեցալ զանգակատունս յանուն սուրբ հրեշտակապետացն Միքայելի եւ Գարքիրի ի հայրապետութեան Պետրոսի սրբազն

զիս վարդապետի առաջնորդության տարիները բեղմնավոր էին նաև գրչության կենտրոնի զարգացման համար: Նա ձեռագիր մատյաններով հարստացնում էր վանքի գրատունը. «ստացաւ բազում անօթս պատուականս եւ գրեանս հոգիակեցոյցս», իսկ Ճաշոցը զարդարել է տայիս ոսկով ու երփնավառ զույներով և նվիրում իր ծնողների՝ Հռվիաննեսի ու Եղիսաբեյի, և հանգուցյալ եղբոր՝ Հակոբի հիշատակին: Սարգիս վարդապետը երկու տարի հետո՝ 1667-ին, Հարանց մատուռում նաև մի խաչքար է կանգնեցնում հանգուցյալ ծնողների և միաբանների հիշատակին⁴⁹⁶:

Սարգիս բարունապետն իր շուրջն էր համախմբել 70 միաբանների և, ինչպես Գրիգոր քահանան է գրում, նրանք «միակամ ու միախորհուրդ էին»: Ճաշոցի հիշատակարանում հիշվում են ուխտի միաբաններ «քաջ և ամենիմաստ» Ներսես վարդապետը, որը Սահակ վարդապետից հետո դարձավ առաջնորդ և 1684 թվականին կառուցեց վանքի գավիթը՝ «հանդերձ Հ (70) եղբարց»⁴⁹⁷, «փոնիեմ և սրբատեր» տեր Նահապետը, խոստովանահայր տեր Սահակը, որ «անապատի գարդն էր», տեր Խաչատուրը, «սրբամիտ» տեր Հռվիաննեար և «սրբանունդ» տեր Եղիեն, «քաղցրաբարբառ» տեր Ղազարը, ուխտի վերակացու Գասպարը, երկու Հռվիափներն ու երկու Ազարիանները, երկու Խաչատուրներն ու չորս Կիրակոսները, երկու Հռվիաննեսներն ու երկու Մարտիրոսները, խառատ Գասպարն ու դարբին Սիմեոննը, գետից ամեն անզամ իրենց ձուկ բերող Մինասը, Կոստանդն ու Գրիգորը... Այսպես՝ 70 միաբան, որոնց

կաթուղիկոսի ի տանս Աղուանից, յառաջնորդութեան սուրբ ուխտիս եւ անապատիս Զարեքայ Սարգիս վարդապետի, ձեռնուութեամբ եւ աղօթից Հ. (70) միաբանիցու. Կատարումն եղեւ սուրբ խորանիս ի փառս Աստուծոյ: արդ, ես՝ Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետս եւ ազօթաւոր եղբարքս շինեցար զուրբ կաթողիկէս ի փրկութիւն հոգոց մերոց եւ ամենայն հաւատացեեց: Թվին ՌՃ եւ Ը (1659):»: Դիվան, պրակ V, էջ 268:

⁴⁹⁶ «Ի թուին Հայոց ՌՃԾ (1667) ես՝ Քրիստոսի ծառայ Սարգիս վարդապետս, կանգնեցի զիսպահ ի լուսաւորութիւն հոգոյ իմոյ եւ ծնողացն իմոց տեր Յաւանէփն, Յեղիսաբեյին եւ միաբանիցու, որը աստ կան հանգուցեապ»: Նույն տեղում, էջ 268:

⁴⁹⁷ Նույն տեղում, էջ 267:

հականե-հանվանե հիշում է գրիչը: Նրանք հիշվում են նաև նվի-րատվական արձանագրություններում⁴⁹⁸:

Հիշատակարանում գրիչը հիշում է Սարգիս վարդապետի ծնող-ներին՝ Հովհաննեսին և Եղիսաբեթին, հանգուցյալ Եղբորը՝ Հակո-բին, կրտսեր Եղբորը՝ Միհրարին և նրա որդիներին՝ Մինասին ու Սարգսին: Գրիգորը հիշում է նաև իր ծնողներին՝ Հովհաննեսին և Մարգարիտին, կնոջը, Եղբայրներին՝ Գրիգորին, Աստվածատուրին, Եղիեին և Վարդանին, որդիներին՝ Պալասան դպրին, Ղազարին և Հակոբին: Ղազարն ու Հակոբը հիշվում են նաև Ղազարի՝ 1691 թվականին օրինակած Հայսմավուրքի հիշատակարանում: Գրիգո-րը հիշում է նաև իր հոգևոր Եղբայր Մելքոնին, որ վիրով սպասում էր մատյանի ավարտին, բայց, ավաղ, դեռ չավարտած աշխատանք-ները, նա վախճանվում է: Հիշվողների շարքից անտեսված չեն Գրի-գորի աշակերտները՝ Արիստակես, Սարգիս, Եսայի, Մելիքսեթ և Ներսես քահանաները:

Գրի հարգը իմացող գրիչը վերջում հորդորում է. «Աղաչեմ զդասի սուրբ քահանայից, զգիրքս ազատ պահել ի ձիթէ, ի մոմէ և ի զինուրենէ, վասն որոյ յոյժ աշխատեաց ի վերա սորա, եթէ արուես-տից տեղեակ իցես, հայեսչիր ի պատկերսն և ի խորանան, ի թփերսն ամենայն, եթէ հաւանիս տուր փառս Աստուծոյ» (թ. 551ա):

Վանքի Երրորդ ծաղկումը Մկրտիչ վարդապետի առաջնորդու-թյան տարիներն էին: Երեսուն տարուց ավելի նա դեկավարում է միարանությունը (1710-ական-1746 թթ.), պարսպապատում է վան-քը: Անապատը Ենթարկվում է լեզգիների ավերիչ արշավանքներին, կողոպտվում է վանքը, և վանքի հարստության հետ թալանվում են նաև ձեռագիր մատյանները: Եվ չնայած 1730 թվականին Կարապետ կաթողիկոսի և Երուսաղեմի Գրիգոր պատրիարքի թույլտվությամբ ու կոնդակով Մկրտիչ վարդապետը շենացնում է լեզգիների արշավանքների հետևանքով թալանված ու քայրայված միարանությունը, բայց անապատի ձեռագրատան հարստու-թյունից գրեթե ոչինչ չի պահպանվում⁴⁹⁹:

⁴⁹⁸ Դիվան, պրակ V, էջ 268:

⁴⁹⁹ Հ. Ոսկեան, Արցախի վանքերը, էջ 172, «Արձագանն», 1886, թ. 23, էջ 330:

Այսօր Զարեքա անապատի ձեռագրական ժառանգությունից ունենք հասուլիկենտ տվյալներ: Ահա դրանք: Առաքել գրիչը 1579 թվականին գրում է մի Ավետարան⁵⁰⁰, 1637-ին ձեռագիր է ստանում ՄԵծ անապատից⁵⁰¹: Դավիթ Եպիսկոպոսի աշակերտ Սարգիս կրոնավորը 1641 թվականին նորոգում է մի Ավետարան, որը հետագայում պահվել է Շուշիի Ազուլեզուց Ս. Աստվածածին Եկեղեցում⁵⁰²: Առաքելի և Նազուկանի որդի Ավետիս քահանան 1655 թվականին ավարտում է Վերին Զակամի Պապաճան գյուղում սկսած Շարակնոցը⁵⁰³, իսկ Մխիթարը նորոգում է մի ձեռագիր: Վանքի առաջնորդ Ներսես վարդապետը 1699 թվականին ավարտում է «Գիր օրինութեանը»⁵⁰⁴, իսկ 1704-ին մի Գավազանագիրը⁵⁰⁵:

Ունենալով բնակավայրերից կտրված ու մեկուսի դիրք՝ Զարեքավանքը XIX դարում նաև աքսորավայր էր կարգազանց հոգևորականների համար, որոնք ուղարկվում էին այստեղ՝ երկար ժամանակով ապաշխարելու⁵⁰⁶: XX դարի սկզբին արդեն վանքը դատարկվում ու ամայանում է⁵⁰⁷:

⁵⁰⁰ **Հ. Ոսկեան**, Արցախի վանքերը, էջ 175:

⁵⁰¹ **Ն. Ակինեան**, Մովսէս Գ Տաթեւացի հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը , էջ 161:

⁵⁰² **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 144: **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դար, հ. Գ, էջ 47:

⁵⁰³ **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 388:

⁵⁰⁴ **F. Conybeare**, Catalogue Armenian manuscripts bodleian library, Oxford, 1918, էջ 265:

⁵⁰⁵ **Յ. Թոփճեան**, Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, էջ 52:

⁵⁰⁶ **Ս. Կարապետյան**, Հյուսիսային Արցախ, էջ 117:

⁵⁰⁷ Գերմանացի հնագետ Լեման-Հաուպտը 1906 թվականին եղել է Զարեքա վանքում և իր նոթերում գրել: «Այդ վանքը նույնպես անայացած էր: Այնտեղ դեռ բնակվում էր միայն մի վանական, որը գերմաներեն լեզվին տիրապետում էր և մեզ ծանոթացրեց ընդարձակ, ամայի կառույցների, ստորգետնյա նկուղի հետ, որ ծառայում է որպես փախստավայր: Այնուհետև նա վանքի վայրի և խարնիխուռն կերպով աճող այգում, մի լորենու տակ մեզ թեյ, կարագ, հաց և սեփական արտադրության լորենու մեղք հյուրափեց, որոնք մենք շոգ միջօրեի արշավից հետո հաճույքով փայելեցինք: Մեղվապահությունը նրա հիմնական գրադմունքն էր: Լավ տարիներին նա ստա-

ՔԱՐԱՀԱՏԻ ԴՊՐՈՑԸ

Պատմական Ուտիք նահանգի Գարդման զավառում՝ Արթինացուր գետի ձախակողմյան հարավարևելահայաց ձորալանջին է գտնվում Քարահատ գյուղը⁵⁰⁸: Ըստ հնագիտական ուսումնահրությունների՝ գյուղը հիմնադրվել է վաղ միջնադարում, սակայն գրավոր աղբյուրներում հիշատակվում է XVII դարի հիսունական թվականներից, երբ Քարահատը հայտնի է դառնում որպես գրչության կենտրոն: Զետագիր հիշատակարանների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Քարահատի գրչության դպրոցը գործել է գրեթե չորս տասնամյակ: Այս կենտրոնից մեզ հասած առաջին ձեռագիր մատյանը 1655 թվականից է, վերջինը՝ 1691: Հատկապես բեղմնավոր էին գրչակենտրոնի առաջին քսան տարիները: Դա դպրոցի ծաղկման ու բարգավաճման տարիներն էին, երբ այն դեկավարում էր դպրոցի հիմնադիրն ու առաջին ուսուցիչը՝ Հովհաննեսի և Մարգարիտի որդի Գրիգոր քահանան: Կարճ ժամանակում դպրոցի հեղինակությունն այնքան է բարձրանում, որ Գրիգորին ու նրա աշակերտներին ձեռագրեր էին պատվիրում Արցախի և Ուտիքի հոգևոր և աշխարհիկ տերերը:

Կենտրոնն ունեցել է իր գրատունը, մատենադարանն ու կազմատունը, որտեղ քարահատի գրիչներն արտագրել, ծաղկել, կազմել են այդ մատյանները: Իբրև մանրանկարչական ուղղություն ունե-

նում էր 50-ից 60, իսկ աննպաստ տարիներին միայն 10-ից 15 պուդ (1 պուդ կազմում է 16,38 կգ) մեղր»: «Արարատ», 1906, էջ 794: **C. F. Lehmann-Haupt**, Armenien Einst und Jetzt, Berlin, 1910, էջ 133:

⁵⁰⁸ 1894-1895 թթ. Արթինացուր գետի ձախակողմյան հարավահայաց լանջին Քարահատից փոխադրված ընտանիքները հիմնադրում են նոր գյուղ և անվանում Վերին Քարահատ, իսկ հին գյուղը նրանից տարբերվելու համար վերանվանվում է Ներին Քարահատ: Վերին Քարահատում պահպանված X-XI դարերի մի քանի խաչքարեր վկայում են, որ այստեղ վաղ միջնադարից գոյություն է ունեցել հայանակ գյուղ, որը, սակայն դատարկվել է XVIII դարում և կրկին բնակեցվել XIX դարի վերջերին: Տե՛ս **Ս. Կարապետյան**, Հյուսիսային Արցախ, էջ 268:

ցող դպրոց՝ Քարահատը ամենից առաջ ներկայանում է իր երեք մանրանկարիչներով: Ամենանշանավորը Գրիգոր քահանան էր, որը հիշատակարաններում իրեն անվանում է ծաղկող և կազմող: Մեծ համրավ ունեին նաև նրա երկու որդիները՝ Բարսեղին ու Ղազարը: Նրանք չնայած հաստատված էին Քարահատում, բայց հաճախ լինում էին նաև Արցախ-Ուտիքի տարրեր բնակավայրերում, մնում տեղերում, կատարում պատվերներ: Գրիգորը նաև բեղուն գրիչ էր: Լինելով գրչության արվեստի լավագույն գիտակ և հմուտ ուսուցիչ՝ նա միաժամանակ ուսուցանում և իրեն արժանի փոխարինողներ էր պատրաստում: Գրիգորը գրչագրելու ու ծաղկելու արվեստը փոխանցել է նաև իր հինգ որդիներից երկուսին՝ Բարսեղին ու Ղազարին, որոնք նրա առաջին աշակերտներն էին և գրչության ու նկարագրդման արվեստում գրեթե չեն զիջում իրենց հորը⁵⁰⁹:

Քարահատի դպրոցի սաները հմտանում էին հատկապես ծաղկագրդման արվեստում: Նրանք գեղեցկագիր էին, իսկ ծաղկագրդման մեջ ունեին հարուստ ներկապնակ, նկարում էին բացառապես պայծառ ու վառ երանգներով: Օգտագործում էին նաև ուկի: Զարեքա անապատի բարունապետ Սարգիս վարդապետի համար օրինակած Ճաշոցի հիշատակարանում Գրիգորը հիշում է իր աշակերտներին: Իր որդիներ Բարսեղից ու Ղազարից բացի՝ Գրիգորի մոտ են ուսում առել Արխատակես, Եսայի, Սարգիս, Մելիքսեթ և Ներսես քահանաները (ՄՄ ձեռ. 986, թ. 551ա):

Գրիգորի դպրոցում ստեղծված ձեռագրերն ըստ բովանդակության ծիսական մատյաններ են, իսկ նրանց հիշատակարանները՝ Քարահատի դպրոցի պատմության առաջին և հիմնական աղյուրը, որոնցից սոույզ տեղեկություններ ենք ստանում գրիշների, ծաղկողների, աշխարհիկ և հոգևոր պատվիրատուների, ձեռագրերի ստեղծման հանգամանքների վերաբերյալ: Նման են նաև Գրիգորի դպրոցում ստեղծված ձեռագրերի հիշատակարաններն իրենց ստեղծման սկզբունքներով: Դրանք առանձնանում են իրենց գրությամբ, բառապաշտությամբ, լեզվով և ոճով:

⁵⁰⁹ Գրիգորի, Բարսեղի և Ղազարի նկարագրդած ձեռագրերի մասին տե՛ս **Ա. Գեղրգեան**, «Հյա մանրանկարիչներ, մատենագիտություն», IX-XIX դր., էջ 138-139, 93-95, 350-351:

Առաջին անգամ Գրիգորին հանդիպում ենք 1655 թվականին, երբ նա ծաղկազարդում է Ավետիսի օրինակած Ավետարանը, Վերջին անգամ՝ քսանմեկ տարի հետո՝ 1676 թվականին, երբ վախճանվում է Գրիգորը և նրա կիսատ թողած գործը ավարտում է ավագ որդին՝ Բարսեղը: Գրիգորի մասին Վերջին հիշատակությունները Բարսեղի հալորդած տեղեկություններն են հոր մահվան և այն ծանր զգացումների մասին, որ ապրել է որդին ծնողի, իսկ աշակերտն ուսուցչի կորստի առիթով: Հոր մահից հետո դպրոցը դեկապարում է Բարսեղը:

Գրիգորից, Բարսեղից և Ղազարից մեզ բազմաթիվ ձեռագրեր են հասել, որոնք բոլորն են նկարազարդված են վարպետորեն, առանձնահատուկ ոճով ու ճաշակով և խոսում են մանրանկարչական դպրոցի բարձր զարգացածության և հեղինակության մասին:

1655 թ. Ավետիս գրիշը Գանձասարում բոլորգորով օրինակում է մի Ավետարան «տիեզերաքարող և լուսազարդ» Ղուկաս րարունապետի և նրա աշակերտ՝ Աղվանից Պետրոս Խանձկեցի կաթողիկոսի իմադրանքով: Գրիշը գրել է լավ մշակված մազադաթի վրա, գեղեցիկ ու համաչափ գրերով: Ավետարանը պետք է նաև ծաղկազարդվեր, սակայն նույն թվականին ել մահանում է գրիշը՝ կիսատ թողնելով աշխատանքը: Ծաղկազարդումը Պետրոս կաթողիկոսի պատվերով հանձնարարվում է Գրիգոր քահանային: Գրիգորը «իսոց լերդով եւ թախիծ կսկծալի սրտիւ, հողամած դիմօք» ավարտում է այն ուսկով և բազմերանգ գույներով նկարելով երկու թեմատիկ նկար («Հովսեփ և հրեշտակ» (թ. 6ա), «Տեառն և աղանակերպ Սուլը Հոգին» (թ. 276ա), ավետարանիշների պատկերները, կիսախորանները, լուսանցազարդերն ու զարդագրերը: Գրիգորը կազմում է նաև մատյանն արծաթյա զարդարուն կրկնակազմով: Ա փեղկին Աստվածամայրն է մանկան հետ, Բ փեղկին՝ խաչված Հիսուսը՝ աջ ու ահյակ կողմերում Աստվածամայրն ու Հովհաննես ավետարանիշը, ներքևում և վերևում հրեշտակներ, իսկ դռնակին

ավետարանիշների խորհրդանիշ չորս մետաղադրոշմներ են⁵¹⁰: Սա Գրիգորից մեզ հասած առաջին մատյանն է, որին նա վերաբերել է «որպես որդի հարազատ, առեալ աղերս ինչ ի ձեռաց հօր իւրոյ, եւ եսու ձեռն՝ զարդարել ըստ իմում անվարժ տկարութեամբ»: Իսկ Պետրոս կաթողիկոսը, երբ ստացել է այս շրեղ մատյանը «ուրախ եղեւ, իբրեւ ընծա ի վերուստ առաքեալ»: Գիսավոր հիշատակարանում գրիշը հիշում է Եղիշե առաջայի ուխտի միաբան Կիրակոս վարդապետին, Գանձասարի միաբաններ Աստվածատուր արքեպիսկոպոսին, Հովհաննես, Եղիա և Մինաս եպիսկոպոսներին, դպրապետերին ու դպիրներին: Ավետիս գրչի՝ Գանձասարում սկսած ձեռագիրը Գրիգորն ավարտել է Քարահատում. «Եղեւ աւարտ սուրբ Աւետարանիս յերկիրս Գանջու ի գեղու Քարհատ ի թագաւորութեանն պարսից Շահ Ապասին Փորու ի հայրապետութեանս Աղուանից զվերոգրելոյն» (թ. 299թ):

Երկու տարի հետո Գրիգորը Պետրոս կաթողիկոսի համար գրում ու ծաղկազարդում է Խորհրդատեսոր. «Գրեցաւ եւ աւարտեցաւ ուկիազարդ եւ ծաղկափթիթ Տետրս խորհրդեան... ի խմբոյ երիցս երանեալ եւ երջանիկ հայրապետի եւ սրբազան կաթողիկոսի Տեառն տէր Պետրոսի վերադիտողի Սրբոյ յաթոռն Գանձասարայ»⁵¹¹: «Հայրապետը Գրիգորին պատվիրել է նաև ծաղկազարդել մատյանը, ինչը սիրով կատարել է գրիշը. «Ես նաև յետնեալս ամենայն՝ Գրիգոր բազմամեղ երեցս, գրեցի և ծաղկեցի զսա բազում աշխատութեամբ ի թվականութեանս Հայոց ՌՃ եւ Զ (1657) ամին, իսկ ոչ թէ վասն ինչ իրաց եւ վարձու աշխատեցա, այլ վասն հայրական գթոյն եւ ինամոյն, զոր ունի առ անարժան ծառայս իւր»⁵¹²: Մատյանը գրված է վայելուշ բոլորգրով: Գրիշը նաև գեղեցիկ ու ճաշակով է նկարազարդել այն, սկզբնատողերը, սկզբնատառերը

⁵¹⁰ ՄՄ ձեռ. 3196, թերթ՝ 304, նյութ՝ մագաղաթ, 13,6×9,7, գիր՝ բոլորգիր, տող՝ 21: Մայր ցուցակ հայերն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ժ, էջ 871:

⁵¹¹ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի ձեռ. 2273, թերթ՝ 40, նյութ՝ թուղթ, 25 × 20, գիր՝ բոլորգիր, տող՝ 23-27, Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Է, Երուսաղեմ, 1974, էջ 366-367:

⁵¹² Նույն տեղում:

և տերունական անունները ոսկեգույն են, թերթերն առնված են զարդարուն շրջագծերի մեջ, գունավոր զարդագիր է զիխավոր հատվածների սկիզբը, ունի բազմաթիվ լուսանցազարդեր:

Նույն թվականին Միրզան իր ծնողների՝ Նավասարդի և Թափառուկի հիշատակին Գրիգորից խնդրում ու ստանում է Ավետարան: Գրիգորը արտագրում է մատյանը, նկարում է նաև ավետարանիշների պատկերներն ու խորանները՝ իրենց զիխագրերով ու լուսանցազարդերով՝ օգտագործելով նաև ոսկի, խոկ մյուս լուսանցազարդերն ու զիխագրերը թողնում է նորուսում մի նկարչի⁵¹³: Գրիգորի օրինակած չորրորդ մատյանը Ղարամուրատ անապատի միաբան մահտեսի Եղիայի խնդրանքով օրինակած Ավետարանն է, որ հետո դարձել է նյույորքաբնակ Արսեն և Արման Փուշմանյանների սեփականությունը⁵¹⁴: Ավետարանը գրված է բոլորգրով, կաշեկազմ է՝ Ա վետիկին արծաթյա խաչելության պատկերով:

Այս շրեղ մատյանը 1659 թվականին Գրիգորն ընդօրինակել է Քարահատի Ս. Աստվածածին եկեղեցում, «երփն-երփն գունովք եւ ոսկեզօծ որակօր» նկարել է խորանները, ավետարանիշների դիմանկարներն ու անվանաթերթերը, լուսանցազարդերն ու զարդագրերը, ապա կազմել այն կաշվե կազմով: Զեռագիրը Եղիան նվիրել է իր հոգևոր ծնող «մաքրազարդ եւ սրբաներկ» տեր Տերունին, որ «ստացաւ բազում գրեանս եւ շատ շինութիւն աւելացոյց ի յանապատին»: Ավետարանը դարձել է Ղարամուրատ անապատի սեփականությունը: Ստացողի անունից գրիշը խնդրում է հիշել տեր Տերունին, Գրիգոր եպիսկոպոսին, Կարապետ արելային, անապատի բոլոր միաբաններին, իրեն՝ գրչին և տեր Դավիթին, որը գրչին օգնել է աշխատանքի ընթացքում, ինչպես նաև պատվիրատուին՝ Եղիա միայնակեցին, որը շարունակ հորդորում էր գրչին՝ մատյանն ավարտին հասցնելու: Վերջում գրիշը խնդրում է անմեղադիր լինել, քանի որ մազադաթը շատ վատն էր և մեծ դժվարությամբ է ծաղկազարդումն ավարտել, որովհետև երբեմն հիվանդ է եղել, երբեմն իրեն ստիպելով է աշխատել. «Այլ եւ աղաչեմ

⁵¹³ ՍՍ ձեռ. 6873, յերթ՝ 308, նյույշ՝ թուլթ, 16,2 × 12,5, գիր՝ բոլորգիր, տոռ՝ 19:

⁵¹⁴ «Բանքեր Մատենադարան», թ. 12, էջ 258-261, նաև՝ **Վ. Հակոբյան**, Հայերն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Գ, էջ 851-852:

անմեղադիր լինել պակասութեան սորա, զի մազադաքն յոյժ վատ էր, մանաւանդ թէ ի ծաղկել համաբարբառին, զկէս աւուրն տենդէի եւ սարսափեի, եւ կէս աւուրն ի ստիպմանէ նկարէի ըստ խորհրդին եւ ոչ վայրապար»: Քանի որ գրչության արվեստով ու ներքին հարդարանքով Ավետարանը շատ էր շքեղ, տարիներ հետո Եղիա և Մխիթար միայնակեցները ցանկանում են արտաքին տեսքն էլ պատշաճ տեսնել և կազմի Ա փեղկին արծաթյա Խաչելության պատկեր են ավելացնում: Ավետարանը 6000 դեկանով զնել են Սարգսին ու նրա կողակից Օսկանձը: Խսկ տեր Եղիազարի՝ 1747 թվականի հիշատակումից տեղեկանում ենք, որ ձեռագիրը հիշատակ է մելիք Բաղիի դուստրերին՝ Հռուրսիմեին, Դավիթին և Շահանդուխտին:

Գրիգորը 1662 թվականին ստանում է կաթողիկոսական նոր պատվեր. նա Պետրոս կաթողիկոսի համար գրում ու ծաղկում է երրորդ մատյանը, այս անգամ մազադաքյա Տոնացույց՝ նկարելով նաև թեմատիկ պատկերները⁵¹⁵: Մեկ տարի հետո Քարահատում Գրիգորը Սանդուխտի խնդրանքով գրում ու նկարազարդում է Շարակնոց, դարձալ զարդարում ուկով ու բազմազան գույներով⁵¹⁶:

1665-ին Գրիգորն արտագրում է մի Ժամագիրք և նկարազարդում⁵¹⁷: Նոյյն թվականին՝ «ի թագաւորութեանն պարսից Շահ Ապասին և ի հայրապետութեան Տանս Աղուանից տեառն Պետրոսի սրբազան կաթողիկոսի... ի յերկնահանգէտ և ի գերահոչակ սուրբ ուխտու, որ կոչի Զարեքայ անապատ՝ ընդ հովանեալ մօրս լուսոյ Ս. Աստուածածնիս և հրաշափառ և երկնանման Ս. Կաթուղիկէիս՝ լուսազարդ Հրեշտակապետիս» նա Զարեքա անապատի Սարգսի բարունապետի համար արտագրում է Ճաշոց, նկարում է թեմատիկ պատկերները, կիսախորաններն ու զարդամոտիվներն ու կազմում մատյանը⁵¹⁸:

⁵¹⁵ ՍՍ ձեռ.10743, թերթ՝ 270, նյութ՝ մազադաք, 10,5 × 7,6, զիր՝ բոլորգիր, տող՝ 17:

⁵¹⁶ ՍՍ ձեռ.10044, թերթ՝ 378, նյութ՝ թուլթ, 12×8,7, զիր՝ բոլորգիր, տող՝ 22:

⁵¹⁷ ՍՍ ձեռ. 9448, թերթ՝ 285, նյութ՝ թուլթ, 10 ×7 ,4, զիր՝ բոլորգիր, տող՝ 17:

⁵¹⁸ ՍՍ ձեռ. 986:

Գրիգոր Երեցը ծաղկազարդում ու կազմում է նաև Մալազնաբերդի Ս. Ամենափրկիչ վանքում 1666 թվականին գրիչ Հովհաննեսի օրինակած Ավետարանը, որ նա կատարել է Հակոբի խնդրանքով «ի յերկիրս Գանջայ՝ ի գեօղն Հարցհանկիստ ի դրան Ս. Մալազնաբերժին ի հայրապետութեան Երիցս երանեալ հովուապետին Տանս Աղուանից Պետրոսի սրբազն կաթուղիկոսին, յեպիսկոպոսութեան Ս. Ամենափրկիչին քաջ եւ արի բարունապետի Խաչատուր վարդապետի և թագաւորութեան Պարսից փոքր Շահ Արափին, խանութեան Երկրիս Աւղուրլու խանին»⁵¹⁹: Երկու տարի հետո՝ 1668-ին, Հովհաննեսը «առաջնորդութեան աթոռոյս Ամենափրկիչին պարունտէր Յովիհաննիսի» խոշա Փարսադանի համար ընդօրինակում է մի Ավետարան, որը դարձյալ Հարցհանկիստում ծաղկում է Գրիգորը⁵²⁰:

Գանձակի Գուլլար գյուղում 1667 թվականին Տարչինի խնդրանքով Սարգիս Երեցի օրինակած Ավետարանը Գրիգոր քահանան զարդարում է «ոսկով, Երփնափայլ գունով և զանազան երանզօր», որը նվիրում են Ս. Հովհաննես Եկեղեցուն⁵²¹: Տարիներ հետո՝ 1741 թվականին, մատյանը կազմել են արծաթե զարդաքանդակ կրկնակազմով:

1675-ին Գրիգորը Գանձասարի առաջնորդ Իգնատիոս վարդապետի խնդրանքով Քարահատում գրում ու ծաղկում է Ավետարան⁵²²: 1676 թվականին Գրիգորը հասցնում է նկարել Մովսես քահանայի համար Բարսեղի օրինակած Ավետարանի միայն համարբարաններն ու ավետարանիների պատկերները⁵²³: Նա մահանում է՝ անավարտ թողնելով սկսած ծաղկազարդումը: Բարսեղը «Հայոց ՈՃԻԵ (1676) ամին... ի յերկիրս Գանձակայ, ի գեօղս Քարահատ ընդ հովանեաւ Սուլք Աստուածածնի և ի թագաւորութեան պարսից շահ Սուլեյմանին և ի հայրապետութեան տանս Աղուանից տեառն Սիմօնի ամենիմաստ և սրբանուէր հայրապետի» ավարտին

⁵¹⁹ ՍՍ ձեռ. 11060, թերթ՝ 318, նյութ՝ թուլյթ, 17,8 × 13, գիր՝ բոլորգիր, տող՝ 22:

⁵²⁰ ՍՍ ձեռ. 10966, թերթ՝ 293, նյութ՝ թուլյթ, 17,3 × 12,8, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:

⁵²¹ ՍՍ ձեռ. 6771, թերթ՝ 304, նյութ՝ թուլյթ, 17,8 × 13,5, գիր՝ բոլորգիր տող՝ 21:

⁵²² ՍՍ ձեռ. 8965, թերթ՝ 365, նյութ՝ թուլյթ, 15,7 × 11, գիր՝ բոլորգիր, տող՝ 19:

⁵²³ ՍՍ ձեռ. 5636, թերթ՝ 323, նյութ՝ թուլյթ, 18,5 × 12, գիր՝ բոլորգիր, տող՝ 21:

է հասցնում իոր կիսատ թողած գործը. «Ես՝ նուաստ եւ եղկելի Բարսեղ իրիցուկս բազում հեծեծանօր եւ արտասուաթոր աչօք ապահնելով զտնօրինիչ Սուրբ Հոգին անկ ածեալ աւարտեցի զեռահրաշ սուրբ Աւետարանս» (թ. 317թ): Բարսեղը «երփն-երփն զունովը և ոսկեզօծ որակոր» ծաղկում է տերունական նկարները և կազմում մատյանը արծաթյա կրկնակազմով, որի Ա փեղկին խաչելության պատկերն է՝ անկյուններում սերովիթների ոսկեզօծ զարդաքանդակներով: Ստանալով մատյանը՝ Մովսեսն ու իր եղբայրներն այն իրենց ծնողների հիշատակին նվիրում են Գանձակի Ս. Հովհաննես եկեղեցուն: Մովսեսը խնդրում է հիշել եղբայրներին՝ խոչա Ներսեսին, պարոն Հովսեփին և Պարխուտարին, իրենց որդիներին ու դուստրերին, ընկերներից Եսայի և Ղազար քահանաներին: Վերջում Բարսեղը խնդրում հիշել նաև իր ծնողներին:

1683 թվականին Գանձակի Հարցհանկիստ զյուղում Հովհաննես քահանան Նազար քահանայի համար արտագրում է մի Ավետարան⁵²⁴: Հիվանդության պատճառով մահանում է նաև այս գրիչը՝ չափարտելով ձեռազրի նկարազարդումն ու կազմելը: Գանձակում, որտեղ արդեն այնքան էր մեծացել Բարսեղի հեղինակությունը, «իշխանաց իշխան և պարոնաց պարոն» մելիք Հախնազարի պահանջով ծաղկազարդումը հանձնարարվում է նրան: Վերջինս էլ իր եղբայր Ղազարի հետ ավարտին է հասցնում մատյանը, որը կազմում է Ովաննես երեցը: Ձեռազրի հետազա ճակատազրի մասին հիշատակարանում կարդում ենք. «Ի ներ և դառնացեալ ժամանակիս, որ անկեալ եմք ընդ լծով ծանր ծառայութեանն օսմանցւոց և պարսից, որք յարեալ յաղթայարեն զմիմեանս, և տառապեալ ազգս Հայոց ցիր ու ցան եղեալ, ի ներքոյ ոսից անկեալ, ոսից կոխան եղեն, ի հուր մերձեցան և ի սուր մաշեցան, բազում գերի վարեցան և շատք ի ծովս լրուկ // խավարեցան և հատան ձայնք փառաբանչաց // և տեղիք սրբութեան ի ձեռս անօրինաց անկեալ ցրուեցան» (թ. 297թ): 1733 թվականին որախստիկցի տեր Մովսեսի որդի տեր Սահակը, երբ այլազգիների մոտ տեսնում է Ավետարանը՝ «գալարեալ կիզաւ ատիքը և տոչորէր», փրկազնում է այս մատյանը:

⁵²⁴ ՍՍ ձեռ. 3994, թերթ՝ 298, նյութ՝ թուլթ, 18 × 14, գիր՝ բոլորգիր, տոռ՝ 21:

1671 թվականին Օղվերձում Պետրոս վարդապետի խնդրանքով Եփրեմ քահանայի օրինակած մագաղացյա Ավետարանը 1684-ին դարձյալ Բարսեղ գրիգ ծաղկում ու կազմում է «ի յերկիրս Ծար, որ կոչի Փոքր Սիւնիս՝ ի գերահոչակ եւ ի իին հանդիսարանի Դադէի վանիցս ընդ հովանեաւ Ս. Առաքելոյն եւ Ս. Աստուածածնիս եւ ամենազօր Ս. Նշանիս Մարդադանաց»՝ օգտագործելով ուկի և հարուստ ներկապնակ⁵²⁵: Ավետարանի նկարագրդումը նախաձեռնել էր Գրիգոր քահանան, բայց մահվան պատճառով չի հասցնում ավարտել. տարիներ հետո հոր կիսատ թողած գործը շարունակում է որդին: Այդ մասին Բարսեղը հայտնում է 325թ էջում թողած հիշատակարանում. «Դարձեալ զծաղկող եւ զկազմող աստուածազարդ սուրբ Աւետարանիս զբազմաւեր եւ ամենավրեպ զԲարսեղ սուկ քահանայս՝ որդի Գրիգոր քահանային, յոզնահանձար եւ ոսկիհանկար քաջ քարտուղարին՝ ի յերկրեն Գանջակոյ՝ ի գեղջեն Քարահատու: Քանզի ի կենդանութեան իւրում ձեռնարկեալ էր նկարագրեալ սուրբ Աւետարանս... վճարեց զկեանս իւր հատուցաներով զպարտ բնութեանս... եւ ի մահուն ինձ աւանդեց անդարձիւ կատարել զայս եւ լարու աչօր յանձն այի իմում կարողութեանս եւ բազում աշխատանօք նկարագօրծել զայս աստուածարդ սուրբ Աւետարանս»: Քանի որ հայրը վարպետ ծաղկող էր, իսկ նրան շարունակելի խիստ դժվար ու պատասխանատու, Բարսեղից մեծ հմտություն ու ջանք է պահանջվել, ուստի այս մատյանում նա նկարել է կաղապարներով: Բարսեղն ստեղծել է քսանչորս տերունական նկար, ավետարանիների պատկերներն՝ անվանաթերթերով, խորանները և կիսախորանները:

Պետրոս բարունապետը, որը «որդի գոլով ազատաց, յազգէն մեծի իշխանացն Գրիգորի եւ Հասանայ Դօրեանց», իր և հարազատ եղբոր՝ Գրիգոր Եպիսկոպոսի հիշատակի համար 1684 թվականին՝ «դառն եւ անբարի ժամանակիս, յորում նեղիմք յանօրէն բռնալորաց ծանր հարկապահանջութեանց» (թ. 470թ), գրչուիի Վառվառէին «ի յերկիրս Ծար Փոքր Սիւնիս՝ կոչեցելոյ՝ ի սուրբ վանս Կուսանաց՝ ընդ հովանեաւ Դադէի Ս. Առաքելոյն եւ Ս. Կաթուղիկէին եւ Ս. Աստուածածնին եւ ամենազօր Ս. Նշանին Մարդադանաց»

⁵²⁵ ՄՄ ձեռ. 7232, թերթ՝ 327, նյութ՝ մագաղաթ, 12× 9,2, զիր՝ բոլորգիր, տող՝ 19-21:

(թ. 471ա) օրինակել է տախս Գրիգոր Տաթևացու «Զարողզիրքը»⁵²⁶: Վառվառեն վարպետ գրիչ է. նա գրում է կոկիկ, գեղեցիկ, մանր գրերով ու համաշափ: Գրչուիին ուշադրություն է դարձրել ոչ միայն ձեռագրի գեղագրությանը, այլև ստուգության վրա՝ խնամքով կատարելով նաև սրբագրումները, «զի օրինակն սիսալ էր եւ անկիրթ գրչաց գրեար»: Խոկ «ոսկիհարան» տեր Բարսեղը ծաղկազարդել է մատյանը գեղեցիկ լուսանցագարդերով ու զարդագրերով և կազմել է այն: Բարսեղին օգնել է Եղբայր՝ Ղազար սարկավագը: Վառվառեն հիշատակարանում հիշում է ծնողներին՝ Մարտիրոսին ու Սովորանային, Եղբորը՝ Հակոբին և հանգուցյալ Եղբորը՝ Աստվածատուրին:

Շամախիում Վլաս վարդապետը Ներսես Լամբրոնացու «Սաղմոսաց մեկնությունը» 1682 թվականին օրինակել է տախս Բարսեղին և Ղազարին: Վլաս վարդապետը Բարսեղին հիշատակարանում անվանում է Բասիլիոս. «Ետու գրել գտառս զայս երկուց հարազատաց Եղբարց Բասիլիոսի քահանայի և Ղազար սարկաւագի, որը Էին կողմանց Գանձակա՝ ի գեղջէ Զարահատ կոչեցելոյ: Եւ ստացայ զսա ի հոգևորական զբոսանս անձին իմոյ և ի միխթարութիւն և ի սպեղանի վիրօք լցեալ իմոյ» (թ. 684ա)⁵²⁷: Բարսեղն օրինակում է ձեռագրի մի մասը և նկարում խորաններն ու կիսախորանները, զարդագրերն ու լուսանցագարդերը: Նա հիշում է ստացողին ու իրեն՝ գրչին. «Զատացող աստուածապատում երգարանիս զՎլաս վարդապետն և զԲարսեղ գրիչս յիշեսչիք»: Գրիչն իրեն անվանում է Բարսեղ: Ձեռագրի գրչությունն ավարտին են հասցնում երկու ուրիշ գրիչներ՝ Թումա քահանան և Բաղրասար դպիրը: Վլաս վարդապետը հիշում է իր ծնողներին՝ հորը՝ մուղտասի Առաքելին, մորը՝ Խանիչային, Եղբայրներին՝ Գայուսին, Մակարին, Միքայելին, նրանց որդիներին, ինչպես նաև արդեն հանգուցյալ Պետրոս

⁵²⁶ ՍՍ ձեռ. 2067, թերթ՝ 474, նյութ՝ թուլյթ, 24,5 × 19, գիր՝ բոլորգիր, տող՝ 44: Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Զ, էջ 1318:

⁵²⁷ ՍՍ ձեռ. 2613, թերթ՝ 687, նյութ՝ թուլյթ, 24,7 × 19,5, գիր՝ բոլորգիր, տող՝ 35-36: Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը, էջ 718:

կաթողիկոսին⁵²⁸, Կիրակոս վարդապետին, հոգևոր եղբայրներ Մարտիրոս և Անտոն վարդապետներին:

Ղազար սարկավագը «ի յերկիրս Գանջա, ի գեօդս Ջարահատ, ընդ հովանեաւ Աստուածածին եւ նորաշն սուրբ տաճարիս» Ղալարքեկի խնդրանքով օրինակում է մի Հայութավուրբ, որն ավարտում է «ՈՇ եւ Խ (1691) ամին ի թագաւորութեան Պարսից Շահ Սուլյմանին և ի հայրապետութեանս տանս Աղուանից տերանցն Սիմօնի եւ Երեմիայի սրբազն կաթողիկոսացն եւ ի եպիսկոպոսութեան երկրիս Շամախու եւ Շիրվանայ երիցս երանեալ եւ երջանիկ ամենիմաստ բարունապետին մերոյ տեառն Վասայ վարդապետաց վարդապետի»⁵²⁹: Մատյանի արտագրության համար իբրև գաղափար օրինակ Ղազարն ունեցել է 1444 թվականի Վյրիվանքում օրինակված Հայութավուրբը, որ մեծ ծախսերով և դժվարությամբ Վյրարատի գավառից բերել էր տվել Վլաս վարդապետը. «Վլաս վարդապետս ի բազում ժամանակաց ցանկացեալ յայլ իմն օրինակս յայսմ Յայսմաւուրքս, որ չկայ յամենայն տեղիս բազում աշխատութեամբ եւ բազում ծախսիք հազիս բերել ետուր զայ ի յերկրեն Վրարատոս»⁵³⁰: Ղալարքեկը մատյանն ստացել է իր ծնողների՝ Պատիի և Աճապի, Եղբայրների՝ Սևումի, Չալապի, Ղարամի, քույրերի՝ Սալվարի, Դատլանի, և որդու՝ Աստվածատուրի հիշատակին: Աստաղոյի անունից գրիչը հիշում է նաև նրա պապին՝ Հակոբին և կենդանի որդիներին՝ Ալին, Օլքամնին և Միրիսանին: Գրչության ժամանակ Ղազարին օգնել է Եղբայրը՝ Բարսեղը, որը նաև կատարել է ծաղկազարդումը: Ղազարը հիշում է նաև իր ծնողներին ու Եղբայրներին: Սա միակ ձեռագիրն է, որտեղ հիշվում են Գրիգոր քահանայի ընտանիքի բոլոր անդամների անունները: Հիշատակարանից իմանում ենք, որ Գրիգոր քահանան ամուսնացել է Նազումի հետ և ունեցել է հինգ որդի՝ Բարսեղը, Հակոբը, Սահակը, Ղազարը և Եվարը, որը մատյանի գրության ժամանակ արդեն հանգույցալ էր:

⁵²⁸ Խոսքն այստեղ Աղվանից Պետրոս Խանձկեցի կաթողիկոսի մասին է (1653-1675), որին փոխարինեց Սիմեոն Դ Խոստրաշենցին (1675-1701):

⁵²⁹ Ա. Վրդ. Ճեմճեմեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Սիմեոնաց ի Վենետիկ, հ. Ե, Վենետիկ, 1995, էջ 241-247:

⁵³⁰ Նույն տեղում:

1691 թվականին վախճանվում է նաև գրիչ Հովհաննես Երեցը, որ սկսել էր մի Ավետարան և հասցրել էր ավարտել միայն Երկու գլուխ՝ Մատթեոսի ու Մարկոսի Ավետարանները։ Հովհաննեսի կիսատ թողած գործը շարունակում է Ղազարը, վերջացնում Ղուկասի ու Հովհաննեսի Ավետարանները, նկարում ավետարանիչների պատկերները, խորաններն ու կիսախորանները, գեղեցիկ զարդամուտիվները, զարդարում ուկով և բազմազան գույներով և կազմում մատյանը⁵³¹։



⁵³¹ ՍՍ ձեռ. 10660, թերթ՝ 251, նյութ՝ մազաղաթ, 17,3 × 12,4, գիր՝ բոլորգիր, սոռը՝ 20-23։

ԳԵՏԱՇԵՆԻ ԱՎԱԳ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ

Գետաշեն գյուղի մասին հիշատակվում է 1626 թվականին գրված մի Գանձարանի պատահիկում վրաց ավարառու բանակի գործողությունների հետ կապված⁵³²: Գյուղը հայտնի էր Ավագ Ս. Նշան կամ Նահատակ մատուռով, որը կառուցվել է 1677 թվականին տանուտեր Քամալ բեկի գիշավորությամբ: Ավագ Ս. Նշան մատրանն են պահվել պրություններ. արծաթյա փոքրիկ խաչով կենաց փայտից մի կտոր, մի արծաթյա ոսկեզօծված աջում Եղիշե առաքյալի բազկից մասունք, որը Իգնատիոս Եպիսկոպոսն էր բերել Կաֆայից, և մի անհայտ սրբի մասունք՝ ամփոփված ակնազարդ խաչով⁵³³: Այստեղ պահվել են նաև ձեռագիր մատյաններ, որոնցից հայտնի է միայն հինգի ճակատագիրը:

Զեռագրերից մեկը արծաթապատ, ոսկեզօծ կողակալներով Ավետարան է եղել՝ գրված ընտիր մագաղաթի վրա: Այս ձեռագիրն այժմ գտնվում է Բաքվի ԳԱ հանրապետական ձեռագրական ֆոնդում և կրում է 8315 համարը⁵³⁴: Զեռագրի մասին տեղեկություններ ենք ստանում Մ. Բարխուդարյանցի նկարագրությունից, ինչից երևում է, որ Ավետարանը գեղեցկազարդ է ու թանկարժեք. «Ընտիր է մագաղաթն, գեղեցիկ թռչնագրերն, սրանչելի ծաղիկներն, հիանալի նախշերն, ուշագրաւ նկարներն, թանկացին ներկերն, ազնիւ ոսկե-

⁵³² «Ազգն Վրաց՝ Մովիաւ ասին անուն նորայ, վասն մեր մեղաց եկեալ բազում հեծելաք հասաւ ի Գանձակ քաղաք, որ այժմ Գանջայ ասի: Եւ ոչ ոք եզ ան ազգեն զգրլպաշի, քանզի յորժամ լուան զան Վրաց՝ փախատական եղեն ի նմանէ: Եւ յանիքաւ ազգն Վրաց արծակեցաւ ի վերա Հայոց ազգին՝ Գետաշենու հետ մինչ ի պարտումեցիք Ա (1) աւոր գերացուցին դաշտ ու սար, հայր և թուրք ի միասին, և ձեռն անկեալն զոմն սպանին, զոմն վիրաւորեցին և բազումս գերի տարան, որ անթիւ, շատ աւերս ածի ի վերայ աշխարհիս»: **Վ. Հակոբյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դար, հ. Բ, էջ 206:

⁵³³ **Մ. Բարխուդարյանց**, Արցախ, էջ 264:

⁵³⁴ **Օ. Եղանեան**, Գետաշենի Ավագ սուրբ Նշան մատրան հայերեն ձեռագրերը, Աշխատություններ, էջ 78:

զօծն և զմայլելի գեղարուեստի նրբագործությունն»⁵³⁵: Ավետարանը Կաֆայում 1667 թվականին ստույգ և ընտիր օրինակից արտագրել և գեղեցիկ ու ճաշակով ծաղկազարդել է Նիկողայոս գրիչը՝ նկարելով չորս ավետարանիշների և Հիսուս Քրիստոսի հրաշագործությունների և թժկության պատկերները: Տարիներ հետո ձեռագիրը հասել է Նախիջևան և պահվել տեղի Ամենափրկիշ եկեղեցում: Անհայտ հանգամանքներում մատյանը գերեվարվել է այլազգիների կողմից: 1753 թվականին մեկիք Աղամը «ի հալալ ընչիւք» գնել է գերված ձեռագիրը, զարդարել արծաթով, ընդելուզել ոսկով և ընծայել Զրվածիկ Եղիշե առաքյալի վանքին: Թե ինչպե՞ս է Ավետարանը հասել Բաքու, չունենք տեղեկություններ⁵³⁶:

Մինչև XX դարի քսանական թվականները Ավագ Ս. Նշան մատրանն է պահվել 1211 թվականին Հաղբատում Հակոբ գրչի օրինակած և Անիի Բեկենց վանքում Մարգարեի ծաղկազարդած Ավետարանը, որը գրչության վայրի անունով կոչվում է «Հաղբատի Ավետարան» (ՄՄ ձեռ. 6288)⁵³⁷: Երկաթագիր մագաղաթյա փառահեղ այս մատյանը գյուղի անունով կոչվել է նաև «Գետաշենի Ավետարան»⁵³⁸:

Երրորդ մատյանը թղթյա բոլորգիր, պատկերազարդ Ավետարան է (ՄՄ ձեռ. 6303): Քանի որ այս ձեռագիրը չունի զիսավոր հիշատակարան, անհայտ են մնում գրիչը, գրչության վայրն ու ժամա-

⁵³⁵ **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 259:

⁵³⁶ Նոյն տեղում, էջ 259-261:

⁵³⁷ **Ա. Մաթևոսյան**, «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 134: Ձեռագիրը գրվել է Հաղբատում կրթություն ստացած անեցի Սահակի պատվերով, որը մատյանը նվիրել էր Արշակունի եկեղեցուն: Հաղբատի Ավետարանի մասին մանրամասն տե՛ս՝ **Ա. Մաթևոսյան**, Նշմարներ Անի քաղաքի գրչության և մանրանկարչության, «Բանրեր Մատենադարանի», թ. 14, 1984, էջ 106-132: **Կ. Մաթևոսյան**, «Հաղբատի Ավետարանը»:

⁵³⁸ Այդ թվականներին Գ. Հովսեփյանը Ավետարանը բերում է Ս. Էջմիածին և դնում է գիտական շրջանառության մեջ՝ հատկապես կարևորելով մատյանի պատկերազարդման առանձնահատկությունները: Իսկ 1984 թ. մատյանը ձեռագրագիտական քննության է ենթարկվում Ա. Մաթևոսյանը: **Գ. Հովսեփյան**, «Հաղբատի դպրոցի մի գլուխգործոց, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, էջ 254-290: **Ա. Մաթևոսյան**, Նշմարներ Անի քաղաքի գրչության և մանրանկարչության, էջ 106-132:

նակը: Ունի չորս ավետարանիշների պատկերներ՝ իրենց անվանաթերթերով ու հետաքրքիր լուծումներով, տերունական պատկերների շարքը, խորաններ, կիսախորաններ, լուսանցագարդեր⁵³⁹: Ծաղկազարդումը հավանաբար կատարել է գրիչը: “Պահպանված հետազայի հիշտակագրությունները Ավետարանի՝ հետազայում մի քանի անգամ վաճառքի ու նորոգությունների մասին են⁵⁴⁰:

Այստեղ են պահվել նաև Դրազարկում Հովսեփի փիլիստիայի խնդրանքով 1295 թվականին երկու գրիշների՝ Ձորոս փիլիստիայի և Յոհանի գրած, Յոհանի ձեռքով նաև ծաղկազարդած մազադարյա Ավետարանը (ՄՄ ձեռ. 6290) և Դաստիփյուր գյուղում Սարգիս երեցի 1671-1673 թվականներին ընդօրինակած գեղեցկազարդ, ակնակուռ և կոստղազարդ Ավետարանը (ՄՄ ձեռ. 6746):



⁵³⁹ Այս ձեռագրի արվեստաբանական քննությունը մանրամասն տալիս է Հակոբյանը: **Հակոբյան, Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII-XIV դդ., Երևան, 1989, էջ 80:**

⁵⁴⁰ **Մ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 261-262:**

ՄԵԾ ԲԱՂՆԱՑ

Ըստ ավանդության՝ Գարդման զավարի Մեծ Բանանց գյուղը հիմնադրվել է Գանձակի հետ նույն ժամանակներում⁵⁴¹, չնայած գյուղի մերձակայքում պահպանված դամբարանաբլուրների պեղումները վկայում են, որ տեղանքը բնակեցված է եղել վաղագույն ժամանակներից⁵⁴²:

1652 թվականին Վերին Զակամի Մելիքզատա գյուղում գրված, հետո բանանցեցի մելիք Ովանեսի գերդաստանի սեփականությունը դարձած մի Ավետարանի⁵⁴³ հետագայի հիշատակարանը տեղեկություններ է հաղորդում 1796-1797 թվականներին Մեծ Բանանցում տեղի ունեցած ահասարսուո դեպքերի և 1811 թվականի համաճարակի մասին⁵⁴⁴: Հիշատակարանը գրել են Աղաջանը և Սարգիսը, որոնք մելիք Ովանեսի թռո մելիք Մատթեոսի թռոներն են:

1796 թվականին Վրաց Հերակլ թագավորը, սուլթան Շամշադինը և Շուշիի Իբրահիմ խանը արշավում են Գանձակի վրա: Զկարողանալով դիմադրություն ցույց տալ՝ Գանձակի Զավադ խանը փախտատի է դիմում: Սուլթան Շամշադինը հարձակվում է Բանանց գյուղի վրա, բնակիչներից ոմանց սրախողիսող անելով սպանում է, ոմանց գերի է տանում: Ապա վրաց զորքը լեզգիների հետ հրո ճարակ է դարձնում գյուղը, որին էլ հաջորդում է անտառելի սովը. «Սուլթան Շամշադին օրօր իւրով և սուտ երդմամբ հանեալ զմեզ կերի վարեցին և սրախողիսող արարին... զօրքն վրաց

⁵⁴¹ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Քարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 593:

⁵⁴² Գերմանացի հնագետ Էմիլ Ոյոստերը 1889 թ. այստեղ կատարել է առաջին հնագիտական հետազոտությունները: Դամբարանաբլուրների պեղումների արդյունքները ցույց են տվել, որ գերեզմանները պատկանում են բրոնզե դարից երկաթե դարին անցնելու ժամանակաշրջանին: Տե՛ս Ս. Կարապետյան, Հյուսիսային Արցախ, էջ 139:

⁵⁴³ Վ. Հակոբյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. գ, էջ 476:

⁵⁴⁴ Մ. Քարխուղարեանց, Արցախ, էջ 282-284:

հանդերձ լեզվիւն եկն և զմնացեալն կերի արարին և Բանանց գիւղս ամեն այրեցին իրով: ՈՄԽօՉ. (1797) թվին սով և մահ եկն ի վերայ մեր. կորեկ ափիրի լիտրն (18 ֆունտ) մթ. ապասի դժուար գտանելով, վասն որոյ ուրացեալ այր զկին և կին զայր իւր, հայր ի որդոյ և որդի ի հօրէ, մայր ի դստերէ և դուստր ի մօրէ իւրմէ բաժանեալ... զի կերակուր մեր էր կադինն և կազնի քլէպ և մեր առեալ զայս սուրբ Աւետարանս մեծաւ զգուշութեամբ և բազում տառապանօք, շնորհօք սուրբ Հոգոյն հասուցանք մինչև ցայսօր: Իսկ ի թվին մերոյ ՈՄԿ. (1811) էր, եկն ի վերայ մեր ժանտամահն»: Սաստիկ ծանր էր բանանցեցիների վիճակը. «Շատ մարդ առանց կին մնաց, շատ կին առանց այր, շատն առանց որդի և շատն առանց դուստր, բազումք առանց քահանայի թաղվեցին, բազում տունք աւեր մնացին»: Ողջ մնացածները թողնում էին զյուղը և հաստատվում մոտակա բնակավայրերում: Սաստիկ սովի ու մահտարաժամի պայմաններում, երբ հարազատը մոռացավ հարազատին, իրենց նախապապի Ավետարանը Աղաջանը և Սարգիսը մեծ դժվարությամբ փրկում ու տալիս են նորոգելու. «Սույն ժամանակիս նորոգել տուինք սուրբ Աւետարանս յիշատակ մեզ և ծնողաց մերո, մեր պապ Մէլիք-Մատթէոսին... գրեալ ի մատեանս ՈՄԿԳ. (1814)»:

Հիշատակարանն ավարտվում է ոուսների կողմից Գանձակի գրավումով. «ՈՄԾԲ (1803)-ին⁵⁴⁵ Ոուսն եկաւ Կանջու վերայ, մէկ ամիս նատաւ, մէկ սիհաթումն առաւ, սիհաթուկէս ԳՌ. (3000) մարդ կոտորեց»:

Հետագայում Ավետարանը տասներկու այլ ձեռագրերի հետ պահվել է Մեծ Բանանցի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում⁵⁴⁶: Ձեռագրի գտնվելու վայրն այժմ անհայտ է:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում է պահվել մեր ձեռագրական ժառանգության արժեքավոր մատյաններից մեկը՝ հնագրությամբ VII դար հասնող երկարագիր Ավետարանը, որը հայտնի է

⁵⁴⁵ Այստեղ գրի սխալ է: Գանձակը Ոուսաստանին է միացել 1804 թվականին, դարձել նահանգի կենտրոնը, որը հետագայում Ելիզավետա թագուհու անունով վերանվանվեց Ելիզավետապոլ:

⁵⁴⁶ **Ս. Բարիուղարեանց**, Վրցախ, էջ 278-284: Տե՛ս նաև **Օ. Եզանեան**, Աշխատութիւններ, Երևան, 2014, էջ 76:

«Վեհամոր Ավետարան» անունով⁵⁴⁷: Այն մեզ հասած հայերեն հնագույն ամրողական ձեռագիրն է: Անհայտ են ձեռագրի գրիչը, գրչության վայրն ու ստույգ ժամանակը: Ըստ հետազայի հիշատակարանների՝ XII դարում Ավետարանը պահվել է Հավուց թարի վանքում, XV դարում Մաքենյաց վանքում, իսկ XVI դարից սկսած՝ Մեծ Բանանց գյուղում, որտեղ արդեն երկու անգամ նորոգված մատյանը (1453 թ. և 1511 թ.) 1625 թվականին երրորդ անգամ գյուղացիների միջոցներով նորոգել է Հովհաննես երեց Շատախեցին: «Զվերջին նորոգի տունող սուրբ զաստուածաշուն ծեր Աւետարանիս Պանանցայ... ճամահարն թվին ՈՀԴ (1625) եր: Նորոգեցաւ ձեռամբ Շատախեցի Յովհաննես երիցու»: Ավետարանի հարդարանքը պարզ է՝ ընդելուզված մի քանի թանկարժեք քարերով ու գամերով և առանց ծաղկազարդման: «Հնության պատճառով Մ. Բարիսուլդարյանցը ձեռագիրն անվանել է «ծեր»⁵⁴⁸, իսկ քանանցեցիները նաև Պահապան կամ Բանանցի Ավետարան են անվանում: Ավելի ուշ մատյանը տարվել է Գանձակի Ս. Գրիգոր եկեղեցի, որտեղից էլ Գանձակի Հայոց թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոս Տերյանը բերել է Ս. Էջմիածին և նվիրել Ամենայն Հայոց հայրապետ Վազգեն Ա-ին: Վազգեն Վեհափառու, անշափ արժևորելով Ավետարանը, այն 1975 թվականին նվիրում է Մատենադարանին՝ ի հիշատակ իր մոր՝ Սիրանուշ Պալճյանի, որից էլ մատյանը ստանում է «Վեհամոր Ավետարան» անունը⁵⁴⁹: Ավետարանը բացառիկ է նաև նրանով, որ երդմնակալության ժամանակ Հայատանի Հանրապետության նախագահները երդվում են այդ Սուրբ մատյանի վրա:

Բանանցի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ձեռագրերի հավաքածուի մեջ են մտել Ուրծ գյուղաբաղարում 1461 թվականին Ներսես քահանայի խնդրանքով Խաչատուր գրի օրինակած և Մալեզկերո անապատում Գրիգոր Շարեցու ծաղկազարդած Ավե-

⁵⁴⁷ ՄՄ ձեռ. 10680, թերթ՝ 257, նյութ՝ մազաղաթ, 33 և 25,7, գիր՝ բոլորագիծ երկարագիր, տող՝ 18:

⁵⁴⁸ Մ. Բարիսուլդարեանց, Արցախ, էջ 279:

⁵⁴⁹ Ա. Մաթեևսյան, Վեհափառական երկու Ավետարան, «Էջմիածին», Թ-Ժ, 1994, էջ 32-34:

տարանը (ՄՄ ձեռ. 6367), XVII դարի գեղեցկագիր և ծաղկազարդ մազադարյա մի Ավետարան, որի գրիչն անհայտ է, իսկ ստացողն է ոմն Պապանան (ՄՄ ձեռ. 6432), 1585 թվականին Տաթևի Մեծ անապատում Հովհաննես Եպիսկոպոսի օրինակած Ավետարանը (ՄՄ ձեռ. 6339), XVII դարի մի Ավետարան, որը 1762 թվականին կազմել է տեր Մխիթարը (ՄՄ ձեռ. 6427), Հաղբատում 1455-ին Ամիրքեկի և Էլիսաթունի խնդրանքով Գրիգոր արեղայի արտագրած Ավետարանը (ՄՄ ձեռ. 6683), Մաքենյաց վանքում 1524-ին Ալեքսանոս արեղայի օրինակած թղթյա Ավետարանը (ՄՄ ձեռ. 8196), 1671 թվականին Վերին Չակամում Եվայի և Ռուկանի համար Մխիթար գրի օրինակած Ավետարանը (ՄՄ ձեռ. 6759), 1451 թվականին Հովհան Երեցի խնդրանքով Հովսեփի օրինակած մազադարյա, բայց ծաղկազարդման արվեստով պարզ մի Ավետարան (ՄՄ ձեռ. 6424), գրչության վայրն ու ժամանակն անհայտ, անհիշատակարան և ավետարանիչների անշուր պատկերներով թղթյա մի Ավետարան, որի գրիչը Աստվածատուրն է (ՄՄ ձեռ. 6667), Ավետիս Քամալեցի արեղայի 1679 թվականին Ղարամուրատի Հարանց անապատում օրինակված թղթյա Ավետարանը (ՄՄ ձեռ. 6705), 1670 թվականին Ավետիք Զուղայեցու օրինակած Ավետարանը, որը Տիֆլիսի Ս. Աստվածածին Եկեղեցում ծաղկազարդել ու կազմել է Զուղայից այստեղ տեղափոխված Աղամալը (ՄՄ ձեռ. 6560):

Բանանց գյուղում պահված տասներեք ձեռագրերից անհայտ է միայն մեկի գտնվելու վայրը, մյուս տասներկու Ավետարանները պահվում են Մաշտոցյան Մատենադարանում:

ԿԱՂԱՆԿԱՏՈՒՅՔ

Կաղանկատույք զյուղաքաղաքը, որից ներկայումս միայն ավելակներն են մնացել, Ուտի Առանձնակ գավառի բնակավայրերից էր, գտնվում էր Տրտու գետի ձախափնյա մասում՝ Դյութական ավանի մոտ: Այն միջնադարում եղել է Դվին-Պարտավ քարավանային ճանապարհի կարևորագույն կայարաններից մեկը: Տեղանունն առաջին անգամ հիշատակում է Մովսես Կաղանկատվացին իր «Աղվանից աշխարհի պատմության» մեջ պարսկա-բյուզանդական դեպքերի առնչությամբ: «Պատմից հաղորդում է նաև, որ Կաղանկատույքն իր ծննդավայրն է. «Եւ իբրեւ իրազգած եղեն թշնամիքն եղելոց՝ պնդեցան զիւտ փախատէիցն եւ հասեալ ի մասն ինչ առ ստորոտով լերինն, որ է յանդիման գեղջն մեծի կողմանն Կաղանկատուաց, որ է ի նմին յՈւտի գաւառի, յորմէ եւ ես»⁵⁵⁰:

Մովսես Կաղանկատվացու կյանքի ու զործունեության մասին սակավաթիվ տեղեկություններ են պահպանվել հենց իր «Պատմության մեջ: Իր իսկ հաղորդածի համաձայն՝ նա ծնվել է Կաղանկատույք զյուղում, որից էլ ստացել է Կաղանկատվացի մականունը:

Մովսես Կաղանկատվացին VII դարի պատմիչ է և, ինչպես ինքն է վկայում, Զիվանշիր իշխանի ժամանակակիցը. «Եւ ի քաներորդի ամի թագաւորութեանն Յազկերտի համարէն ի բաց բառնայր ի միջոյ տերութիւնն Պարսից եւ այն երեսուն եւ մի ամ էր տիեզերամարտութեանն Հազարացւոց եւ տեառն իմոյ Զուանշիրի հնգետասան ամ»⁵⁵¹: Ենթադրվում է, որ Կաղանկատվացին եղել է վանական և Աղվանից Վիրո կաթողիկոսի մերձավորներից մեկը, որը կաթողիկոսի հետ, որպես դեսպան, ներկա է գտնվել խազարների բանակի հրամանատար Շարի հետ հանդիպմանը⁵⁵²:

⁵⁵⁰ Մովսես Կաղանկատուացի, էջ 184:

⁵⁵¹ Նույն տեղում, էջ 236: Զիվանշիրը զահ է բարձրացել 637 թվականին, ուրեմն նրա իշխանության տասնինգերորդ տարին համապատասխանում է 652 թվականին:

⁵⁵² Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, էջ 506:

Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմությունը» մեզ է հասել լնդօրինակությամբ: «Պատմության վաղագույն օրինակը պահպանվել է 1289 թ. Հռվիաննավանքում Համազասպ եպիսկոպոսի խնդրանքով ժողովիկ գրչի օրինակած Ժողովածուի մեջ (ՍՍ ձեռ. 1531, թ. 231ա-377ա):

Քանի որ Կաղանկատվացու «Պատմության մեջ դեպքերի շարադրանքը հասնում է մինչև X դարի կեսերը, հայագիտության մեջ նրա անձի և ապրած ժամանակի վերաբերյալ եղել են տարակարձիքներ: Նրան համարել են X դարի պատմիչ և նույնացրել այդ դարում ապրած Մովսես Դասիուրանցու հետ, որը Ուտի Առանձնակ գավառի Դասիուրան գյուղի էր⁵⁵³: Ենթադրվել է, որ Մովսես Դասիուրանցին Փառիստսի վանքի առաջնորդ Տեր Մովսեսն է, որը հետո դարձավ Աղվանից Մովսես կաթողիկոս (982-988 թթ.)⁵⁵⁴:

«Աղվանից աշխարհի պատմությունը» VIII դարում ծանոթ է եղել Սոլոմոն Մաքենացուն: Ավելի ուշ այն, որպես սկզբնադրյուր, օգտագործել են Մաշտոց Ա Եղվարդեցին (833-898 թթ.), Հռվիաննես Դրասիանակերտցին (840/50-929 թթ.), Անանիա Մոկացին (մահ. 968 թ.), Ուխտանես Եպիսկոպոսը (935-1000 թթ.), սակայն նրանցից և ոչ մենքը չի հիշատակել պատմության հեղինակի անունը: Միիթաք Անեցին զիտի, որ Աղվանից պատմության հեղինակն ապրել ու ստեղծագործել է VII-VIII դարերում և ժամանակակից է Սերենսին ու Ղւտնդ Երեցին. «Սերենսը, որ Հերակլին է, եւ Աղվանից պատմությունը, եւ Ղւտնդ Երեցը...»⁵⁵⁵: Միիթաք Գոշը, որ XII դարում լրացրել է Աղվանից կաթողիկոսների ցանկը, «Աղվանից աշխարհի պատմության» հեղինակ է համարում Մովսես

⁵⁵³ Գյուղանունը հիշատակվում է որպես Մովսես Դասիուրանցու ծննդավայր: Տե՛ս Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, էջ 37: Մ. Բարխունյանց, Արցախ, էջ 419-420:

⁵⁵⁴ Ն. Ակինեան, Մովսես Դասիուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 49: Վ. Եղիազարյան, Գրիգոր Նարեկացին և հայ գրականությունը 10-րդ դարում, Երևան, 2018, էջ 268:

⁵⁵⁵ Միիթաք Անեցի, Հանդիսարանների աշխարհավեպ մատյան, թարգմանությունը գրաքար բնագրից և ծանոթագրությունները՝ Վ. Եղիազարյանի, Երևան, 2001, էջ 14:

Դասխուրանցուն. «Մի ըստ այդմ գրեսցուք պատճառի, երկրորդ՝ զի թէ ոք յաւժարեսցի գրել պատմութիւն զինի գրեցերոյն պատմութեանն Մովսէսի Դասխուրանեցւոյն, որ գրովանդակ պատմէ զտանս Աղուանից, դիրին լիցի յայսմանէ զշար հայրապետացն առնուլ, զի ոչ զամենեցուն՝ անուն ի նորայն գոցէ պատմութեան, բայց զայնոցիկ, զորոց գրեաց»⁵⁵⁶: Վանական Վարդապետը նույնպես այս պատմության հեղինակ համարում է Մովսէս Դասխուրանցուն. «Մովսէս՝ Դասխորեն զիլդէն»⁵⁵⁷:

XIII դարում Կիրակոս Գանձակեցին Աղվանից պատմության հեղինակին կոչում է անունով անվանելով նրան Մովսէս Կաղանկատվացի, հավանաբար, իմանք ընդունելով պատմիչի այն վկայությունը, որ ինքն Ուտիրի Կաղանկատույք գյուղից է: Սակայն Գանձակեցին X դարի պատմիչ է համարում Կաղանկատվացուն՝ նրան դնելով Հովհաննես Դրասխանակերտցուց հետո և Ուխտանես Եպիսկոպոսից առաջ⁵⁵⁸: Դարձյալ XIII դարում Միփթար Այրիվանեցին նկատում է, որ Աղվանից պատմությունը գրվել է տարրեր ժամանակներում նույնանուն երկու տարրեր հեղինակների կողմից, ընդ որում VII դարում այն շարադրել է Մովսէս Աղվանից պատմիչը, իսկ X դարերում նրան շարունակել է Մովսէս Կաղանկատվացին⁵⁵⁹: Երկրորդի դեպքում Միփթար Այրիվանեցին, անկանած, ազդվելով Կիրակոս Գանձակեցուց, Դասխուրանցուն անվանում է Կաղանկատվացի⁵⁶⁰:

Աղվանից պատմությանը և Կաղանկատվացի-Դասխուրանցի հեղինակային խնդրին հայագիտության մեջ շատերն են անդրադարձել⁵⁶¹: Մանրամասների մեջ չխորանալով՝ փաստենք սակայն,

⁵⁵⁶ **Միփթար Գոշ**, Ժամանակագրութիւն, տե՛ս Մատենագիրը Հայոց, հ. Ի, Երևան, 2014, էջ 605:

⁵⁵⁷ **Ն. Պողարեան**, Հայ գրողներ, Ե-ԺԷ դար, Երուսաղէմ, 1971, էջ 172:

⁵⁵⁸ Կիրակոս Գանձակեցի, էջ 7:

⁵⁵⁹ **Միփթար Այրիվանեցւոյ** Պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծայեաց Ք. Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 37, 71:

⁵⁶⁰ **Է. Հարությունյան**, Միփթար Այրիվանեցի, Երևան, 1985, էջ 93-94:

⁵⁶¹ **Մովսէսի Կաղանկատուացւոյ** Պատմութիւն Աղուանից աշխարհի, ի լոյս ընծայեաց **Մ. Էմին**, Մովսէս, 1860: Պատմութիւն Աղուանից, արարեալ Մովսէսի Կաղանկատուացւոյ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթագրու-

որ այսօր հարցը կարելի է լուծված համարել, այն է՝ «Աղվանից աշխարհի պատմությունը» տարբեր հեղինակների գործ է և կազմված է տարբեր միավորներից: Բուն պատմությունը բաղկացած է երեք գրքից⁵⁶²: Առաջին երկու գրքերի հեղինակը VII դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին է Աղվանից երկրի առաջին պատմիչը, որն իր պատմությունը գրել է Միհրանյանների պատվերով:

Մովսես Կաղանկատվացին դեպքերի շարադրանքը սկսում է Աղամի ժամանակներից, Հարեթի սերունդների ծագումնարանությունից և հասցնում է մինչև VII դարի կեսերը: Նրա պատմության համար սկզբնադրյուր են եղել Ազարանգեղոսի, Փավստոս Բուղանդի, Եղիշեի, Մովսես Խորենացու Պատմությունները, Վիրո և

թեամբք Վ. Վոդ. Շահնազարեան, հ. Ա և Բ, Փարիզ, 1860: **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1969: История Агвана Монсея Каганкатваци, писателя X в., пер. К. Патканяна, СПб., 1861: Мовсес Каланкатуаци, История страны Алуанк, пер. с древнеармянского III. Смбатяна, Ереван, 2002: Գ. Զարրիանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, էջ 453: Ղ. Ալիշան, Հեղինակ Աղուանից պատմութեան, «Բազմավկա», 1897, ԾԵ, թիվ 11, էջ 577: Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, 2001, էջ 928: Մ. Արեյյան, Երկեր, հ. Գ, էջ 506: Հր. Աճառյան, Մովսես Կաղանկատվացի, քննութիւն անոր գրութեան ժամանակի վրայ, տե՛ս Բանասիրական ուսումնասիրություններ, Երևան, 1976, էջ 9-18: Կ. Քիպարեան, Պատմութիւն հայ հին գրականութեան, Վենետիկ, 1992, էջ 303: Մ. Մկրյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1987, էջ 303: Ն. Աղոնց, Քննություն Մովսես Կաղանկատվացու, Էջմիածին, 2005, էջ 13-163, Պ. Յովհաննիսեան, Մովսես Կաղանկատվացին եւ իր «Աղուանից աշխարհի պատմութիւն»-ը, Մատենագիրը Հայոց, հ. ԺԵ, Երևան, 2011, էջ 27-31: Հ. Սվայյան, Մովսես Կաղանկատվացու Աղվանից աշխարհի պատմության աղբյուրները, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, թ. 3, էջ 195-205 և այն:

⁵⁶² Ա. Հակոբյանը Աղվանից աշխարհի պատմությունից անջատել և հրատարակել է հատվածներ Վաշագան Աղվանից արքայի, Վիրո կաթողիկոսի, Անանուն Կաղանկատվացու և այլ անանուն հեղինակների անուններով՝ պյուղիսով պատմությունը համարելով տարբեր հեղինակների գործերի հավաքածու: Տես Մատենագիրը Հայոց, հ. Գ, Անդրիխաս-Լիբանան, 2004, էջ 49-112, 125-139, հ. Դ, Անդրիխաս-Լիբանան, 2005, էջ 360-414, հ. Ե, Անդրիխաս-Լիբանան, 2005, էջ 793-895:

Գյուտ կաթողիկոսների թղթերը, Թովմա Վարդապետ Աղվանեցու թուղթը, Վաշագան արքայի կանոնները: Մովսես Կաղանկատվացին տեղեկություններ է հաղորդում Հայոց արևելից կողմանց վաղ շրջանի պատմության վերաբերյալ՝ քրիստոնեության ընդունման, Մեսրոպ Մաշտոցի և նրա աշակերտների լուսավորչական գործունեության ու հայ դպրության սկզբնավորման մասին: Շատ կարևոր են Կաղանկատվացու հաղորդած տեղեկությունները վաղ շրջանի գրի, գրականության, մշակույթի մասին: Գիր ու գրականություն ունեցող հին ժողովուրդների մասին խոսելիս՝ Կաղանկատվացին նշում է նաև հայերին. «Գիր ու գրականություն ունեն հրեաները, լատինները, որոնց գիրը օգտագործում են նաև հռոմեացիները, իսպանացիները, հույները, մարերը, հայերը, աղվանները»⁵⁶³:

Հայոց Վրևելից կողմանց պատմության վաղ շրջանից մեզ ոչ մի ձեռագիր աղբյուր չի հասել, սակավ տեղեկություններ ունենք այդ ժամանակներում այստեղ ստեղծված գրականության, գրչության կենտրոնների վերաբերյալ: Այս տեսանկյունից Կաղանկատվացու աղբյուրը դառնում է չափազանց կարևոր և առաջնային:

Պատմիչը սակավաթիվ տվյալներ է հաղորդում Հայոց արևելից կողմանց վաղագոյն ժամանակներից գոյություն ունեցած գրականության մասին: Կաղանկատվացին խոսում է այրված, ոչնչացված, թագաված գրականության մասին: Նրա Պատմության միջոցով մեզ են ավանդվել V դարի դավանաբանական գրականությանը վերաբերող դրվագներ՝ Աղվանից Վաչէ Բ թագավորին ուղղված Գյուտ կաթողիկոսի թղթերը, որոնք նաև գեղարվեստականի լավագոյն օրինակներ են, Երուսաղեմի Պանդա վանքում ստեղծված Թովմա Վարդապետ Աղվանեցու թղթերը VI դարում Աղվանքում քաղկեդոնականություն տարածելու վերաբերյալ, և սրբն Արա կաթողիկոսի պատասխան թուղթը, Վաշագան Գ-ի կանոնները: Կաղանկատվացին խոսում է նաև այստեղ ստեղծված և մեզ հասած գեղարվեստական գրականության մեկ-երկու պատարիկների մասին: Բանաստեղծական շնչով է գրված «Տէ՛ր իմ, Տէ՛ր,

⁵⁶³ **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1969, էջ 3:

որովհետեւ եղեք անյիշաչար ծառայի քում բազմամեղի» սկզբնատողով աղոթքը, որը պատարագի ժամանակ արտասանել է Զիվանշիր իշխանը Գարդման գավառի իր կառուցած եկեղեցում, որտեղ պահ էր տվել Կոստանդին կայսրից ստացած Քրիստոսի խաչափայտի մասունքը⁵⁶⁴:

Ո՞վ էր Զիվանշիր իշխանը: Վարագ Գրիգորի որդի Զիվանշիրը Ուտիքի և Արցախի գահերեց իշխանն էր, որ իշխանության գահին փոխարինել է հորը 637 թվականին: Բյուզանդական Կոստանդին կայսրը նրան անվանում է «Գարդմանի տեր և Աղվանքի իշխան, պատրիկ ու ապուհիպատ»⁵⁶⁵, իսկ պարսից Հազկերտ արքան՝ «Աղվանքի սպարապետ»⁵⁶⁶: Զիվանշիրը խրոխստ էր, խիզախ, սիզաճեմ ու գեղեցկադեմ, իր քաջությամբ ճանաչվել էր պատերազմներում դեռ պատանի հասակից, երբ «ծնոտին տակավին չեր բուսնել նորածի մորուսը»: Զիվանշիրը հմուտ ռազմագետ էր, ճկուն քաղաքացին: Չորավարական աստիճանին պատշաճ՝ ստացել էր շքանշաններ ու բարձրահունչ փողեր, ոսկյա նիզակներ ու ոսկերանդակ վահաններ, ոսկե գոտի՝ ընդելուզված մարգարիտներով ու ոսկեդաստակ սուր, մարգարիտներով բանված զանգապաններ ու մարգարտաշար մանյակ, զյուղեր ու ձկնառատ գետեր: Վտրպատականի պարսիկ զորապետը նրան կնության էր առաջարկել իր քրոջը, բայց Զիվանշիրը մերժել էր «անօրեն կին» ունենալու առաջարկը և կնության էր առնել Սիսական նահանգի իշխանադուստը Խոսրովանուշին՝ Արուիճան տոհմից:

Կաղանկատվացու Պատմության շնորհիվ մեզ է հասել նաև աշխարհիկ բանաստեղծության մի գրական գրհար՝ Զիվանշիր իշխանի եղերական մահվան ատիթով գրված դամրանականը՝ «Ողբ ի մահն Զևանշերի մեծի իշխանին» վերնազրով: Ողբի հետինակը Դավթակ Ջերթողն է (մոտ 600-670-ից հետո), որի ստեղծագործությամբ առաջին անգամ հայ գրականության մեջ աշխարհիկ թեման դառնում է բանաստեղծության նյութ: Դավթակի Ողբը «մեզ

⁵⁶⁴ **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 244:

⁵⁶⁵ Նույն տեղում, էջ 238:

⁵⁶⁶ Նույն տեղում, էջ 228:

հայտնի առաջին արտապաշտամունքային երգն է»⁵⁶⁷: Ո՞վ էր Դավթակը: Նկատի ունենալով Քերթող մականունը, ենթադրվել է, որ նա կրթություն է ստացել Սյունյաց քերթողական դպրոցում: Դավթակը եղել է օժտված անձնավորություն՝ տեղյակ հունական արվեստին, դիցարանությանը, ճարտասանական կանոններին և իր ողբը գրել է իին հոյսների մշակած կանոններով: Նա քերթության մեջ առաջադեմ էր, գրչության մեջ՝ արագագիր: Հենց այդպես է նրան ներկայացնում է Մովսես Կաղանկատվացին⁵⁶⁸:

Դավթակ Քերթողը Կոստանդին կայսեր կողմից Արևելքի կուսակալ նշանակված, պատրիկ ու ապուհիպատ Զիվանշիր իշխանի ժամանակակիցն է, նրա լավագույն բարեկամը, որ միշտ այցելել է Պարտավ, հյուրընկալվել իշխանի պալատում: Նա ականատեսն է ողբում պատմվող իրադարձությունների և ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է իշխանի նկատմամբ կատարված դավադրությունը: Նա իր երգ-ներբողը ստեղծում է «ըստ ալֆավետաց զիսակարգութեանց», այսինքն՝ տների հաջորդականությունը կառուցում է հայոց այրուենի հաջորդ տառ-ձայրակապով՝ «հետևողությամբ Կոմիտասի «Անձինք նուիրեալը» շարականի, կիրառելով նաև վերջինիս չափը»⁵⁶⁹:

⁵⁶⁷ Հ.Քախչինյան, Շարականի գրապատմական ուղին, 5-14-րդ դարեր, Երևան, 2012, էջ 98:

⁵⁶⁸ «Այդ ժամանակ Դավթակ անունով ճարտասանի մեկը, որ ծանոթ էր տաղաչափական արվեստին, ստեղծագործելու մեջ վարժ ու հաջողակ, քերթողական լընթերցման մեջ առաջադեմ, մեշտե եկավ: Սա առատ խորենի պաճուճանքներով ճարտար կերպով երգում է և շատ լավ գովարանում՝ ունենալով այնպիսի լեզու, ինչպիսին ունենում է արագագիր գրողը: Սա շարունակ գալիս և երկար ժամանակ մնում էր պալատում: Իսկ երբ մեծ զորավարի հանկարծահաս սպանության առթիվ օրհասական շշուկը տարածվեց արևելյան երկրի՝ Աղվանիքի վրա, այդ ժամանակ նա սկսեց երգել այրենական կարգով դասավորված այս ողբը բարյացապարտ Զվանշիրի վրա»: Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 176:


⁵⁶⁹ Գանձարան հայ իին բանաստեղծության, աշխատասիրությամբ՝ Պ. Խաչարյանի, Երևան, 2000, էջ 883:

Պատմության երրորդ գիրքը VII դարի կեսից շարունակել, խմբագրել ու լրացրել է X դարի մատենագիր Մովսես Դաստուրանցին: Երրորդ գիրքն սկսվում է արաբական արշավանքների պատմությունից, հասնում մինչև Աշու Բագրատունու զահակալության ժամանակները (887 թ.) և Համամ Արևելցու՝ Հայոց Արևելից կողմանց թագավոր դառնալը (894-895 թթ.), իսկ վերջին իրադարձությունը, որ հիշում է պատմիչը, 914 թվականին Պարտավ քաղաքի գրավումն է ոուղիկների (ոուսների) կողմից: Գիրքն ավարտվում է Աղվանից կաթողիկոսների անվանացանկով, որը հասնում է մինչև 988 թվականը՝ մինչև Աղվանից Մովսես Գ-ի կաթողիկոսության տարիները: XII դարում Միփիթար Գոշը լրացրել է այս ցանկը, որով ել ամբողջացել է «Աղվանից աշխարհի պատմությունը»:





Անվանաբերթ Մարկոսի, ՄՄ ձեռ. 986,
ձաշոց, 1665 թ., Զարեմա անապատ,
ծաղկող՝ Գրիգոր, 224ա



Ննջումն Աստվածամոր, ՄՄ ձեռ. 986,
Ճաշոց, 1665 թ., Չարեքա անապատ,
ծաղկող՝ Գրիգոր, 421թ



Ղուկաս ավետարանից, ՄՄ ձեռ. 10660,
Ավետարան, 1691 թ.,
Քարահատ, ծաղկող՝ Ղուկաս, 106բ

որին Յավհամես Ուռաւեցոյ Համատաւուս
Տնիաց. Պերիառմենիապողնու Հաւաքեալ.
Գուրդրու աշակեալ.

Ա. Զ. Ե. Ա. Բ. Ա. Խ.

աղոթքի : Ճ Նոյն նախապրականի

Նոյնի և և ակիզիքն գուցդ. Ճ ճ ուսաւ ոսկ ինըն. և
Նեւարուն. այս ակենքն գուցդ առն մէ եւ է բնազնեն
Եռան: Շեանցու ակենքն գուցդ ու զանուն. և շ
ըն, և զան. և զայը նախն յետոյ զորյ թեատրույ.
Եւ նիւ երանն այն ու. ուսաւ. ու ն ձայն նժուն երանն
ին ափան ու զիյ եւ. մ և զայն օւսյու. ու ու հան զանն
և զբայ. Շ յ լ և գիտ սայմբ մ ն ի եւ կուս: Յ ա ս թ ն
ու ն ու ու ցն են. եւ սիտ ան են եւ գուցդ: Յ ե ն կ ո ւ մ տ ո ւ
ա ց ն ե ն ի յ ո ւ ե գ ո ւ ց դ: և ս կ ո ւ ս ա ւ է: Յ ո ւ զ ա յ ո ւ մ կ ա ս է:

Ը լ ի ս. ա յ ս է մ ե ս ը ն ։ զ ե մ ա մ մ է կ ա ս է զ ե ն չ ե ր ա ն ց ո ւ զ ն
ե ւ ։ ը ն ի ն ։ ք ն ե ն ։ զ ե բ ն ն է մ ե կ ս է ն ։ ա մ ե ս ա յ ։ զ ե ւ ե ն
ո ւ զ ո ւ ե ն ։ և ե մ է պ ո ւ ի մ ն ։ ե մ է զ ն ի ն ։ ե մ է ե ր ե ի ի ս կ
